

ՎԵՀԱՓԱՆԵԼ

ԱՐՓԱՓԵՑ

ՄԱԿԱՐԱԳԻ ՔՀԱՅՑ. ԽՍԿԵՐԻՉԵԱՆ

Հազիւու Հովիս Հայոց Զանկի



1946

ՏՊԱՐԱՆ Ո. ՄԱԿԱՐԱԳԻ
Պետական

ԱՐԵՐԻՑ ՔՀՆՅ. ԱՄԿԲԴԳԱՎԵՒԻ ԳՈՐԾԵՐԻ

- | | |
|--|------|
| 1.— Տառապանի Օչերեկի | 1923 |
| 2.— Պատկերազարդ Պատի Օրացոյց | 1924 |
| 3.— » » » | 1925 |
| 4.— Առ ըխահայ Տարեցոյց
Քննիւթեալյուրքանից Մ. Ա. Անձմեանի, Սրբութանի | 1924 |
| 5.— Առ ըխահայ Տարեցոյց
Քննիւթեալյուրքանից Մ. Ա. Անձմեանի, Սրբութանի | 1925 |
| 6.— Առ ըխական Արյոն | 1927 |
| 7.— » » | 1928 |
| 8.— » » | 1929 |
| 9.— Ավգլիկան Ցուցը | 1929 |
| 10.— Անբասիր և Հայրենակե Եկեղեցականը | 1930 |
| 11.— Վեհապառը | 1946 |

281.6

ՀՀ 366

Վ 41

Վեհապառը Հ. Ա.

հծություն Ճ. Տ. Գարեջին...



Երին. 6
մի

յեցաններու, Եկեղեցիներու,
պիեռուրքան:

ՀՐԱՄԱԿՈՒԹԻՒՆ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
Հ. Ե. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱՀԵՔ ՄԱՍՆԱԺԻՂԻՆ

281.6

ՎԵՀԱՓԱՆ

20 Հուն. 1946

44/242/44

Ն. Ս. ՕՇՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՅՈՎԱՆԻՉԵԱՆ

ԴԱՐՁԱԶԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԵՏԻ ՏԱԽ

ԿԻԼԻԿԻՈՑ

ՊՈՅՆԵՐՈՋԱՐԴ

ԱՄՓՈՓԵՑ

ՄԱԼԻՔԻ ՔՀՆԵՑ ՈՍԿԵՐԻՉԱՆ

Հայեանց Հովիտ Հայոց Զամկի

1946

ՏՊԱՐԱՆ Ա.-ՄԱԳԱՍԻՏԵԱՆ

Գյուղը

A 79082



**Նորին Վեհափառութիւն
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՅՈՎԱԿԻՓԵԱՆԻ**

ՇՆՈՐՀԱՉՈՐԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆԻ

Կ Ե Լ Ւ Կ Ի Ո Յ

Ուղիական ակնածանօք
ՄԱՇԹՈՅ ՔՀԵՅ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ
Հոգեւոր Հովիտ Հայոց Զահլէի

1945 Մարտ 23
Զահլէ — Լիբանան

Էւլիք Օքսանիկ Ավագիստ
Եւերական գույքանություն
Յ. Մամայ աշխատակից
Կայսեր
6/Ա . 1960

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌՈՒԻ


Հայ երիտասարդութեան հանդէպ Վեճափառ Տ. Տ. Դարեզին
Ա. Կաթողիկոսին ունեցած հայրական մասնաւոր գուրզուրանքին,
և փոխադարձաբար՝ իրենց Վեճափառ Հօր հանդէպ երիտասարդ
ներուն ունեցած որդիական խոր ակնածանքին հաւաստիքն է
ներկայ հատորին հրատարակութիւնը Հ. Բ. Ը. Միութեան Հայ Ե-
րիտասարդաց Ընկերակցութեան Զանլէի Մամանամիւղին կողմէ:

Գիրքը, որ կը բովանդակէ Կիլիկիոյ Խորքնուիր Կաթողիկոսի
անձին, ազգային եկեղեցական գործունէութեանց ու գրական բա-
նասիրական աշխատութիւններուն մասին բազմաթիւ վկայութիւն-
ներ ժամանակակից Հայ Դրիհներէն, իր տեսակին մէջ նոր է եւ
կու զայ յաւելում ընել կենսագրական գրականութեան շարքին, որ
քիչ մշակուած գրական սեռն է մեր ժամանակներուն:

Նիւթերը հաւաքած եւ դասաւորած է Զանլէի Հոգեւոր Հո-
վի Տ. Մաշնոց քան. Առկերիչեան խղճամիտ աշխատանքով:

Արտօննելով տոյն գիրքի հրատարակութիւնը Հ. Ե. Ը. ի Զան-
լէի մոր Մամանամիւղին կողմէ, որպէս առաջինը Հ. Ե. Ընկերակ-
ցութեան Մատենաշարին, կը յայտնենք մեր հստատ յոյսը՝ թէ
հայ տոհմային աւարինութեանց մարմնացումը եղող մնած Դէմքի
նախալումը այս էջերէն՝ ներշնչումի ազրիւր պիտի ըլլայ Հայ
երիտասարդութեան:

ԿԵՆՔՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Հ. Բ. Ը. Մ. ի Հ. Ե. ԸՆԿԵՐԱԳՑՈՒԹԵԱՆ
Պ Հ Յ Ռ Ո Ւ Բ



ՆԱԽԱՄՈՒՏ

Զանկի Հոգեւոր Հովիտ Արժ. Տ. Մաքրոց հինջ. Ռուկերիչեան, կատարած է կարեւոր աշխատանիք մը, հաւաքելով ու համախմբելով այն յօդուածները, որոնք լոյս տեսան Սփիւռքի Հայկակութիւն մեծագոյն մասին մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արոռուակալ Վեհ. Տ. Տ. Դարեզգին Ա. Կարողիկոսի մասին, Անոր բնուրութեան բուականէն ասդին:

Այս է, կը կարծեմ, տամաբանական պատճառը գրիս միտոսին.—

Գ Ե Զ Ա Ֆ Ա Շ Ը

Արդարեւ, երկ հարկ ըլլար վերլուծումի ենթարկել Մե՛ր Վեհափառին ամբողջ կեանքը, մշակուրային ու վարչական երեսներով, Հայր Մաքրոց պիտի պարտաւորուել սպառածաւալ ու սուլարարի հատուններ նրանքանի այնքան բնուրութեան է մե՛ր Հայրապետին կեանքը:

Այս զիրքը նրանքանի ուզելով նեղինակին միտք բանին եղած է Յուլարձան մը կանգնել այն զերազանցորեն խանդավառ եւ յուսալից երեւոյրին համար, որ Անրիլիսուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տանարին մէջ 1943 Մայիս 10ին կատարուած բնուրութեանն ծնառ ու տարածուեցաւ հանուր աշխարհի Հայուրեան մէջ: Առովիճեւ Ամերիկայի Առաջնորդ Գեր. Տ. Դարեզգին Արժ. Յովուկփեանի միաձայնութեամբ Կիլիկիոյ Արոռին Կարողիկոս բնուրութիւնը՝ վարագոյր հաւեց նախորդ հանի մը տարիններու ընթացին ոսքի ելած կիրեւուն վրայ եւ բացաւ գեսփի յուսաւոր նորիզ ոններ այն սեւաւոր վարագոյրը՝ որ իջած էր երանաւորն Բաբկէն, Սահակ և Պետրոս Կարողիկոսներու յաջորդական մահուլը:

Սփիւռքի ու Մայր Եւկրի մէջ չմնաց նայ սիրտ մը որ չուրախանար այդ բնուրութեան եւ բնուղիներու միանակա-

նուրիւնը ցաւցահանող երեւոյրին գեղեցկուրիւնը դիտելով
կամ լսելով:

Ու Հայր Մաքրոց՝ բլլալով մեկը՝ զործունեայ սպասար-
կուներէն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, որուն՝
այս երկիրներուն մէջ բնակող հաւատացեալներուն Պետք է
Ն. Ս. Օծուրիւն Վեհափառ Տ. Տ. Գարեգին Ա. Կարողիկոս,
չէր կրնար աւելի գեղեցիկ գրաւական մը տալ իր հաւատար-
մուրեան՝ հանդէս Հայրապետին, խան այս զիրեր:

«ՎԵՀԱՓԱԼԻԾ» Վեհափառ Հայրապետին կեանի ծաղ-
կեփունջէն բնուրուած ծաղիկներ կը պարունակէ: Վասամ եմ
որ անհիկա զարդը պիտի կազմէ Հայ բնտանեկան մատենադա-
րաններուն, իբրև զիրք մը՝ որ պիտի զօդէ հայ սիրտերը
Կիլիկիոյ դարաւոր Արռողին, անոր արժանընից Գահակալին,
եւ անոնց միջոցով ալ եջմիածնին ու պատելի Մայր Հայրե-
նիքին՝ Խորհրդային Հայաստանի:

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ

5 Նոյեմբեր 1945

Պեյրուր



Ն. Ա. ՕՇՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՅՈՎԱԿԻՓԵԱՆ
Շնորհազարդ Կարողիկոս Հայոց Մեծի Տաճա Կիլիկիոյ

Digitized by srujanika@gmail.com

ԳԱՐԵԴԻՆ ՆԱԽԱՅ ՅԻՇՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՒ. ԿԱՄՈՒ ԱՍՏՈՒՆՈՅ ԵՒ ԲԵՏՐՈՒԹԵԱՄ ԱԶԴԻՍ ԵՎԻՄԿՈՎՈՍԱՎԵՏ ԵՒ ԿԱՐՈՎԼԻԿՈՍ ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՅ

Ամենալատիւ Տեղակալի Հայրապետութեան Ամենայն
Հայոց Տեառն Գեղրզայ Արքեպիսկոպոսի՝ նոգեւոր հարազա-
տի Մերում, Ամենալատիւ Պատրիարքին Երուսաղէմի Տեառն
Նիւրդի Մայրապոյն Վարդապէտի, և Տեղապահի Պատրիար-
քութեան Կ. Պոլոյ Տեառն Գեղրզայ Արքեպիսկոպոսի, Գերա-
պատիւ Առաջնորդաց, Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց,
Վարդապէտաց, Քահանայից, Ամենայն պատօնութեանց Եկե-
ղեցւոյ և հաւատացեալ Ժողովրդեան, Շնորհ և Խաղաղու-
թիւն ի Տեառն և ողջոյն Եղբայրական և Խայրական ի Մեջ:

Աշունք անդրանիկ կոնդակու Մերով յայտ առնեմք, թէ ի առան մայիսի ի 1943 ամի ընարեցաք ի Կաթողիկո- սութիւն Տանն Կիլիկիոյ, բայց ի Հետեւանս այլ և այլ պատճառաց, զորս ոչ կարեմք մի առ մի թուել առա, յա- պազեցաք ի Միացեալ Նահանգոս, գրեաթէ, զերկուս ամս, շարունակելով զԱռաջնորդութիւնն մինչեւ ի գոլ նորըն- տիր յաջորդին Մերոյ Տեառն Տիրանայ Մ. Վարդապէտիւ և

հազիւ կարողացաք ժամանել յԱթոռ Մեր, որ յԱնթիլիաս,
ի 23ն Մարտ ամսոյ, ընկալեալ վեհաշուք փառաւորութեամբ
և աննկարագրելի խանդավառութեամբ ի հաւատացեալ
ժողովրդոց Մերոց յամենայն անդիս ի ճանապարհն
տաւաք զայրականն Մեր այցելութիւն բարեպաշտ ժողովրդ-
գեանն Հայոց, որք յԵղիպառ, ապա երկիրապաքաք Սրբո-
ջան վայրացն Երուսաղէմի, ողջունելով զնործնամիր Պատ-
րիորքն զՏէր Կիւրեղ Ծ. Վարդապետն և զՄիաբանութիւնն
Սրբոց Յակոբեանց վանացն:

Սրբազան արարոգութիւն Հայրապետական Օձման կո-
տարեցաւ յութն Ապրիլի ներկայ տարւոյս ամենայն հան-
գիսաւորութեամբ ի ձեռն Եպիսկոպոսաց մերոց ըստ աւան-
գութեան Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:
Արդ, աղաչեմք զամենեսեան, զիրիլի եղբարս և զհաւա-
տացեով ժողովուրդ, հայցել ի Տեսանէ, օգնական լինել
նուաստութեանս, առ ի կատարել զնուիրականն Մեր զծա-
ռայութիւն ի առն Տեսան, յայտ դժուարին պաշտօման:

Յետ ընդհանուր յայտարարութեան՝ դառնամք առ
Զեզ, եղբայր Մեր սիրեցեալ, Տ. Գեորգ Արքեպիսկոպոս,
Տեղակալ Հայրապետութեանն Ամենայն Հայոց, և Միաբա-
նութիւն Ա. Աթոռոյ: Թէպէտ ի վաղընջուց հետէ հասասա-
նութիւն է Աթոռ Տանն կիլիկիոյ և յարատենի գարուց ի գարս,
եալ է Աթոռ Տանն կիլիկիոյ և յարատենի գարուց ի գարս,
ըստց չէ այդ արգելք միութեան Հայաստանեաց Եկեղեցւոյ
ըստ վարդապետականին և աւանդութեանց, ըստ ծիսից և
ընդհանուր նպաստակաց: Մանուանդ, ողով Մեր միաբան և
հոգեւոր զաւակ Ա. Էջմիածնի, բազմանք Մեր է, սատար
լինել ըստ կարողութեան և ըստ հնարաւորութեան, պայ-
ծառութեան Ա. Աթոռոյ և Հայրապետին, որում և առցէ
Տէր նատիւ յԱթոռդ այդ նուիրական: Յայտ միսս կամիցք
ի սրտէ մասնակից լինել ընտրութեան Աթոռակալին Մեծի
Տանգ և բերել զջան Մեր և գգործակցութիւն յԱզգային-
Եկեղեցական ժաղավայն:

Շնորհաւորելով զնորոդ ընտրութիւն Զեր յԱթոռ Պատ-
րիորքութեան, Ամենապատիւ եղբայր Տ. Կիւրեղ Ծ. Վար-
դապետ, կրկին ողջունեմք ի Տեսանէ, զի թագաւորեսցէ ի

Մեծի Տանդ Հոգի Տեառն՝ ի շինութիւն և յառաւել պայ-
ծառութիւն Առաքելական Աթոռոյդ, որ է պարծանք Ազ-
գիս և Հայաստաննայցս Եկեղեցւոյ ի շարս քրիստոնէից ի
Սուրբ Քաղաքիդ: Ունիմք յայտնել և զեղբայրականն Մեր
գշնորհակալութիւն, վասն արժանավայել ընդունելութեանց
և հոգածութեանց, յորժամ էաք առ Զեզ առ ի յերկրպա-
գութիւն Ա. Տեղեաց և Ա. Աթոռոյդ Յակոբեանց:

Նոյնպէս և Զեզ, Տ. Գէորգ Արքեպիսկոպոս, Տեղապահ
Պատրիարքութեան կ. Պոլսոյ, հայցեմք ի Տեառնէ, տալ
Զեզ կարողութիւն ընդ ամենայն գործակիցս Զեզ, սիրով և
համբերութեամբ կատարել զպարտիս առ հաւատացեալ ժո-
ղովուրդդ, որ ընդ Զերով հովուութեամբ է:

Ողջունեմք և զամենայն Առաջնորդս, զեպիսկոպոսունս,
զվարդապետս, զքահանայս, զհոգաբարձութիւնս, և զամե-
նայն պաշտօնեայս ի տան Տեառն և Ազգին, մազթեմք
զյաջողութիւն յումենայն գործս և ի ձեռնարկութիւնս,
որք հային ի բարեկարդութիւն և ի բարւոք շինութիւն
հաւատացելոց: Ունիմք յիշատակել, մանաւանդ, զնախկին
Մեր հօտ և զերեափօխանական ժողով, զկեդրոնական վար-
չութիւնն, զՀովիւս և զՀոգաբարձութիւնս, զԹժանդակ և
զԵկեղեցակէր միութիւնս և զամենայն պաշտօնեայս, որք
ոչ միայն օգնական և ձեռնառու եղեն ի կատարման պար-
տեացս ի ժամանակս Առաջնորդութեան Մերոյ, այլ և որ-
դիական սիրով կատարեցին զյիսուն ամեայ Յորելեան
նուաստ աշխատանացս յեկեղեցական և ի գիտական ան-
դաստանի, առաւել գնահատութեամբ, ի մի թերելով իրեն
զնուէր, աւելի քան զքառասուն հինգ հազար դոլարս, բաց
ի սմանէ խոստանալով պահել ի Դպրութանս Մեր սանունս
յանուն բարերարաց, որք ուսանելով առ մեզ, լիցին յա-
պագային պաշտօնեայք Եկեղեցւոյ և Ազգի:

Ունիմք և յայտնել զհայրականն Մեր զոհունակութիւն
առ հաւատացեալս Հայոց, որք յԵգիպտոս, որք ոչ միայն
բարի և արքայաշուք հիւրընկալութեամբ հանգուցին զՄեզ
ի յոդնութեանց յուղեւորութեամբ Մերում, այլ և եղին ընդ-
ծեռամբ Մերով զշօշափելի զումար դրամական, զորոյ ման-

ա հասն, գհացիւ ունիմ հրատարակել, որպէս նուէր ի պայծառութիւն Աթոռոյս և Դարբիվանուց նորու:

Հուսկ ամեննեցուն ուզզեմք զրանս Մեր առ նպիսկու պոսունս, վարդապետու, քահանայայս և առ ամեննայն ժողովուրդս Տանն Կիլիկիոյ: Շնորհիւն Աստուծոյ և ընտրութեամբ ձերալ, կոչեցաք յԱթոս այս նուիրական, աղաշեցուք զԱմենակալին Աստուծոյ, զի ուզզեցէ զգործս Մեր ի բարին և յօդուան Եկեղեցոյս և Ազգիս: Լուարուք, ամեննեքեան, որդես կը իմ, և ի միտ առէք զրանս հայրական սիրոյ, զորս կամիմ տանէ ձեզ: Աստուծութիր օրէնք ին ի ընութեան, զի ամեննայն բայսաք և կենդանիք ինքանք իսկ բաւմն զվերս իւրեանց: Ի հասեւանս անցելոյ համաշխարհային պատերազմի, վիրաւորեցաւ ոզդ մեր համայն, հոգմացրիւ եզեւ և Տունն Կիլիկիոյ, յորմէ մասն մի եղիս զեղբայրականն իւր ասպընջականութիւն աստ, ի զեղեցիկն Աիրիս և ի Լիրանան: Զանացուք բուժել զվերս մեր ի շինարար զործս, առ ի պահպանութիւն և ի զարգացումն հոգեւոր բարեաց, զորս ժառանգեցաք ի նախնեաց. զեկեղեցի մեր տանմք, զիեզու, զգրականութիւն, զմշակոյթ ազգային, զգպրացս և զոյլ աստուծանուայ հասաւառութիւնս, յորս ունիմք յիշատակել, մանուանդ, զմարենգործականն մեր Միութիւն, որոյ մասնուճիւզք զատնին առ մեզ, զԱզգային Բուժարանն Աիրանանի և զԿիւլպէնկեան Մայրանցն ի Հալէպ, ծաւալումն և արդիւնաբերումն որոց ուրախ առնէ զսիրտ Մեր: Յիշեմք զազգայինն մեր զմամուլ և զլրադրութիւն առօրեայ, առաքելութիւն և կոչումն որոյ բարձր է յաչս Մեր ի զործ ժողովրդական զատիքարակութեան. ուսափի և ըղձացող և խնդացող՝ զարգացման և ուզդամիտ յառաջդիմութեան նորու: Յիշեմք և զամեննայն մատառականս, զազգայինն և զեկեղեցական զործիչս, զուսուցիչս և զուսուցչունիս զըպրացաց Մերոց, զինամակալութիւնս, զպաշտօնեայս ամեննայն Միութեանց և կազմակերպութեանց, որք հային ի պահպանութիւն և ի պայծառութիւն Ազգի և Եկեղեցոյ: Օրհնեմք զամեննեսեան յանուն Աստուծոյ և մազթեմք ըստ

աւետաբանական քանին, «զի երթայցէք և պազարեր լինիցիք»:

Մէ՛ մռասցուք, թէ մեք ոստ եմք ի միոյ ծառոյն կենդանութեան Ազգիս Հայոց, որ բնակի ի պատմական Հայրենիս, ի սահմանու Ա. Հայտատանիւ Սիրելով զԱզգ մեր և զՀայրենիս, Ազգիցուք և հաւատարիմ քաղաքացիք նորոյս հայրեննաց՝ զԱմբերիոյ ասեմ և զԼիբրանանի, յորս վիճակիցաւ մեզ բնակիլ բարի ասպնջականութեամբ: Զանացաւք ի մեզ հանգուցանել զՄեր և զհամակրութիւն դրացեաց մերոց յամենայն ընթացս կենաց և ի քաղաքացիական պարաւասրութիւնս: Ծնորնք ունիմք և զՊատուիրակութենէ յառաջադէմ և ազնիւ ազգին ֆրանսական, որ եցոյց առ Մեզ զյառուկ բարեացակամութիւն, տառքելով զներկայացուցիչ իւր ի ժամ մտանելոյն մեր ի սահմանագլուխ Լիբրանանի: Զպատուէք պարաւանաչ քաղաքացիութեան կրկնեմք և վասն հաւատացելոց մերոց, բնակելոց ի Կիպրոս կղզի, ընդ հովանեաւ ազնիւ և լայնախոն ազգին անգլիական:

Ի վերջ բանիր յարդորեմք զամենեսին հայրական սիրով, պահել զաւանգութիւնս հարցն մերոց, սիրել զԱզգ մեր և զԵկնղեցի, լինել երկիւզած և բարեպաշտ ամենայն ընթացս և ի դորձս, պահել զպարկեշտութիւն ընտանեկան, ընկերական, և հրապարակային կենաց, զի փայլեացէ անուն և նկարազիր ժողովրդեանս, ի զբացիս մեր, և ամենայն լեզու խօսեացէ միայն զբանս զովեստից և զգոնութեան զմէնչչ: Ի բաց վանեսցուք, զանանզի և զանօզուտ վիճս, մանաւանդ ընդ յարկաւ սրբոյ եկեղեցւոյ, որ վայր է ազօթից, սիրոյ և եղբայրութեան: Ի միտ առցուք զբան քաղցրախօսիկ մատենուգրին, թէ ՇՄիութիւն է մայր բարեաց, անմիութիւն՝ ծնող չարեացց: Աւսցուք և ի Սուրբ Գրոց, թէ Հոգի Աստուծոյ ոչ երեւի յամպրոպս և ի փաթորիկս, այլ ի խաղաղութեան: Հեռու ի մէնջ նենդութիւնք, բամբասանք և չարախօսութիւնք, յորոց ծազին վեսոք, առելութիւնք և թշնամութիւնք, զի ոչ կորեմք սերմանել զփոթորիկ և հնձել զխաղաղութիւն՝ ըստ ժողովրդական

բանին։ Այլ նկրտեսցուք ի լաւն և ի բարին, զի Աստուած
խաղաղութեան ընդ մեզ եղիցի և զողորմութիւն իւր
ցողեսցէ ի մեզ և ի գործս մեր։

Շնորհք Տեառն եղիցի ընդ ձեզ։ Ամէն։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՏԱՅՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Տռւալ Կոնդակս յԱնթիլիաս
որ ի Էլրանան, յառաջին ամի
աթոռակալութեան մերում
ի թուականութեան Հայոց ՈԶՆԴ
եւ ի Փրկչական 1945։



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Վեհափառ Հայրապետին



Ն. Ա. Օծութիւն Տ. Գարեգին Կաթողիկոս Յովսէփ-
եանց, աւագանի անունով ալ Գարեգին, ծնած է 1867ի
Դեկտեմբերին, Զիւանչիր գուտարի Մազաւուղ (Զարտախլու)
գիւղին մէջ՝ Ծնողքին՝ վարպետ Կարապետի և Խոսրովի
(Խոսրովիգուխա) բուն հայրենիքը եղած է Մարտաղ գիւղը,
որ Գարսկառատանի Ռւբմիտ և Սալմատ գուտառներէն եկած
գաղթականներով հաստատուած էր 1828 թուս Պարսկական
պատերազմին ատեն։ Այդ պատճառու Մարտաղայի լեզուն և
սովորութիւնները բուն Դարաբազէն տարբեր էին։ Մակա-
նունը կու գայ հօրենական պատ՝ Յօվսէփէն, իսկ մօրենա-
կանը՝ Հայսվէրդեանց էր։ Գեղարուենատական ըմբռանումներն
ու զգացումները ժառանգութիւն են հօր կողմէ։

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ. — Հայրը կը լսէ թէ Մազաւուղի
յէջ գպրոց բացուած է, հոն կը փոխադրէ իր որդին։
Մրրազանը յաձախ կը պատմէ հոգերանական նշանակալից
գէպք մը, որ այս տարին պատահած է։ Երբ ծնողական
կարօտով լի, գպրոցին դուրս գալով՝ «Քեաբներցու տունը
կ'երթար հաց ուտելու, ներսէն ձայն մը կ'ըսէ անոր.
«Հայրդ կու գայ, զիւղէն զուրս, կալերու ծայրը կը հան-
գիպիս անորց» Երեխան վազելով կ'երթայ և նոյն տեղը կը
տեսնէ հայրը։ Յետոյ, 17 տարեկանին երբ ձեմարանի Ե.
գաստրանի ուսանող էր, հախազգացած էր նաեւ հօրը մահը։
Մազաւուղի հազիւ մի քանի ամիս տեսող ուսումնէն ետքը՝
պատանին աշնան Մարտաղ՝ ծնողքներուն կը վերադառնայ
և աշակերտ կ'ըլլայ խանութին մէջ Ասլան Ապօր, որ մեծ
վաշխառու մըն էր, զիւղին եկեղեցիին ցմահ «Գանձապե-
տցը, «Երէցփոխը եւայլն»։

Գիւղական վերջին և ամենամեծ վարժապետը կը լլայ
Տէրջաքարիան, որ ուսած էր Ներսէս Վարդապետէն, Գան-
ձասարի վանքին մէջ։ Գրաբար կը հասկնար, Եղիշէ, Խորե-
նացի, Վարդան Պատմիչ կարդացած էր։ Պատանին անոր
քով ժամագիրք կարդալ, Փոխ զոց ընել և ըսել կը ոռովիւ-
Մայրը՝ առաջին փոխառացութեան՝ վառեակ մը նուէր կը
զրկէ վարժապետ—քահանային, Ա. Սարգիսի պահքին վեց
օր ծոմ կը պահէ, որ Աստուած զաւկին չնորհք տայ։

Տէր Զաքար, աշակերտաներէն փոքր զումար մը կը
ստանար իրրեւ ամսաթոշակ, Երբ Գորեգինի հայրը աղ-
քատութեան պատճառու թոշակը չի կրնար վճարել՝ աղան
ալ զպրոց չի կրնար յաճախել։ Բայց Տէր Զաքար կը ան-
զեկանայ պարագան՝ կ'ընդունի զայն ձրիաբար, և հայրը
կը խոստանայ փոխարէնը քանի մը օր մշակութիւն ընել
Տէր Հօր այդիին մէջ։ Այս զպրոցը շատ ալ կանոնաւոր
չէր։ Դասարանական զրութիւն չկար։ Ժամագիրք, Սաղ-
մաս, Աւետարան, մինչեւ Նորեկ կը կարգային, բայց քի-
չերը կը հասկնային։

Արդ 1877ի Ռուս-Մըրքական պատերազմի շրջանն էր,
մեծ յազմութեան մը առթիւ զուառակեղերոն Թարթառ
աւանէն շատ մը պաշտօնեաներ և զիւղացիք Հայովէրդեանց
թթէնիներուն առկ հաւաքառած զիւղին հիւրասիրութիւնը
կը վայելէին, կ'երգէին, կը պարէին և երեխաներն ալ
անոնց ուսել—խմելն ու պարելը կը դիտէին հետուէն։

Հետեւեալ տարին՝ 1878, Մօրեզրայր Անտոն վարդապետ
զայն կը զրկէ Շուշիի Հայոց թեմական հոգեւոր զպրոցը,
ուր կ'ընդունուի նախապատրաստական Բ. զասարանը։ Հայ
Գորեգին հայերէն կ'ուսանի Գարրիէլ Ղուլիքէւխանէ և
ուուսերէն՝ Խվան (Յովհաննէս) Իշխաննանէ։ Իրեն ընակու-
րան նշանակուած էր Տօնուց Ալեքսանի առնը, որ Անտոն
վարդապետի հետ հոգեւոր եղբայրութիւն ունէր, որովհետեւ
Ալեքսանի մայրը Անտոն անունով որդի մը կորսնցուցած և
անզը որդեղբած էր Անտոն վարդապետը։ Ամարաս ուխուա-
զնացութեան առթիւ։

Հան Գորեգինի հետ կ'ուսանէր նաև Ալեքսանի եղբօր-

որդին՝ Բագարատ։ Գարեգին տարի մը կ'ուսանի Շուշիի
մէջ և կարգը կը փոխէ յաջողութեամբ։ Բայց դպրոցը
շարունակել կարելի չ'ըլլար, որպէնառեւ հայրը՝ որ հազիւ
ջուալ մը ալիւր կրնար հասցնել և դպրոցի ծախքն ալ
Անտոն վարդապետը կը հոգար, երկուքն ալ անկարող կ'ըլ-
լան և վարդապետին կարդադրութեամբ Գարեգին կը փո-
խադրուի Զբարերդի կուսապատ զիւղը, ուր Փինաշեան
Յովսէփ վարդապետ՝ Էջմիածնէն հեռանալով զիւղական
դպրոց մը բացած էր, ինքը՝ թուաբանութիւն և ազնուա-
կան ընտանիքէ Բէդզատեան ալ ուսւերէն կ'աւանդէին։
Գարեգին հոս ալ կը բնակէր տանը մէջ Նաւասարդեան-
ներու, որոնց հետ Տօնի Պապեաց կողմէ խնամքիական հեռա-
ւոր կապ ունէր։

Երկար չի տեւեր սակայն. վարդապետը դպրոցը կը
փակէ և կը քաշուի ինն Մասանց կոչուած ուխտատեղին,
Մելիքներու հին զղեսկի մը մէջ, ուր դպրոց շարունակելու
փորձն ալ կը ձախողի։

Օր մըն ալ յանկարծ, վարդապետն ներս կը մտնէ Գառ-
րեգինի հայրը՝ առջեւը էշ մը ձգած։ Պէտք էր զիւղ վերա-
դառնալ, ուստի կը բացնեն Գարեգինի գոյքերը, կը համ-
բուրեն ուսուցչի ձեռքերը և ճամբարյ կ'իյան։

Գարեգին 1880—81ին նորէն Շուշի է, ուր կը մտնէ
թեմական դպրոցի Ա. Պատարանը։ Դպրոցին տեսուչն էր
նշանաւոր մանկավարժ Սեղբակ Մանդինեանը, իսկ Պատա-
րան Ազայեան՝ թուաբանութեան ուսուցիչ։ Այս տարին ու-
սանող Գարեգինի կեանքը զժուարութիւններով կ'անցնի։
Ծնկեր ունէր ուրիշ քանի մը ուսանողներ ալ, ոմանք պե-
տական վարժարանի աշակերաններ, որոնք բոլորն ալ ապա-
գային եղան ուսուցիչներ։ Մայիսի սկիզբը Մաղաւուզ և
Մեծչէն դրացի զիւղերէն գեղջուկներ սայլերով ալիւր կը
բերէին քաղաք՝ ծախսելու համար։ Գարեգին և ընկերը՝
Հայրապետ՝ անոնց ժամանումը իմանալով կը դիմեն տե-
սուչ Մանդինեանին եւ՝ իրենց անձուկ վիճակը նկարագրե-
լով կը խնդրին որ զիրենք արձակէ որ իրենց դրացի զեղ-
ջուկներուն հետ զիւղ վերադառնան։ Տեսուչը կը ջանայ

II
A 79082



համոզել զանոնք որ միան և օգնութիւն ալ կը խոստանա
սակայն, անոնք այդպիսի պատեհութիւն նորէն գտնելու
դժուարութիւնը յայտնելով կը պնդեն: Ուստի, տեսուչը կ'ար-
ձակէ զանոնք առանց սպասելու տարեվերջի քննութիւն-
ներուն:

ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ. — Անտոն վարդապետ
թեմական տեսուչ Տէր Դրիգորեանի, ապագայ էջմիածնի
միաբան վահան վարդապետի միջոցաւ հսկացած էր Գու-
րեգինի ձեմարան ուղարկելու խնդիրը: Բայց երբ Օգոս-
տոսին նորէն Շուշի կու գայ, ընկերոջը Պետրոսին հետ,
հոնկէ էջմիածնին ուղեւորելու համար, աղիտալի ծանր հի-
ւանդութեամբ Կը վարակի գժբախտաբար: Առողջանալէ
ետք կը ստիպուի գիւղ վերադառնալ և գեռ 12 տարեկան,
ուսուցչի պաշտօն կը ստեղծէ իրն համար: Կը հաւաքէ
10—15 երեխաներ, որոնց գրել-կարդալ կը սորվեցնէ, իւ-
րաքանչիւրէն ստանալով 50 կոպէկ: Այս պաշտօնը երկար
չի տեսեր: 1882ին Թարթառ աւանին մէջ գուռառապետի
դիւանապետին տան մէջ ծառայութեան կը մտնէ: Ամիսը
լրանալուն ան իր գործը պիտի թողուր, որովհետեւ, էջ-
միածնին՝ ուր Անտոն վարդապետը Գէորգ Դ. կաթողի-
կոսէ պաշտօնի էր կոչուած, իրրեւ վանական ագարակի
կառավարիչ, հայրը համակ ստացած էր որ Գարեգինը
էջմիածնին՝ զրկէ՝ ձեմարան մանելու համար: Յունիսին
մինչեւ Յուլիսի կէսերը, հայրը պատրաստութիւն կը տես-
նէր զինքը ձեմարան զրկելու: Գէտք էր ճերմակեղէններ և
ճանապարհածախս պատրաստել: Մայրը տեսնելով ամուս-
նոյն այդ մասին մտահոգութիւնը՝ իր ճակատի զարդ չորս
սոկիներէն երկուքը կը կարէ, կու տայ անոր, որ պէտք
եղածները հսկայ: Գարեգին այս առթիւ գրած է իր յու-
շատեարին մէջ: «Են՝ զամայր, ո՞րպիսի զոհողութիւն էր
մի կնոջ համար զրկուիլ իւր ճակատի փոքրիկ զարդերից
անդամ, որդու ուսմանն օգնելու նպատակաւ»:

1882 Օգոստոս 2ին, Գարեգին կը հասնի Երեւան: ուր
օր Գուրգոնով ճամբարդելէ ետք յաջորդ օրը հասած էր
էջմիածնին և իջեւանած Անտոն վարդապետի մօտ:

Օր մը ձեմարանի Տեսուչ Նահապետեան (յետոյ եպիսկոպոս) օսարական մը տեսնելով աշակերտներու շարքին մէջ, կը հարցնէ. «Ինչի՞ եկել ես»; «Եկել եմ ուսունելու» կը պատասխանէ Գարեգին։ «Ապա թէ ոչ չընդունէ՞ք» կը յարէ տեսուչը։ «Ինչի՞ պիտի չընդունէ՞ք» կ'ըսէ ուսումնատենչ պատասխանին, «չէ՞ որ փափաքում եմ ուսունելու»։ Այս պատասխանը դիւր կու գայ տեսուչին և յաջորդ Սեպտեմբերին Գարեգին կը մանէ ձեմարանի Ա. գասարանը և յաջող զուրս գալով՝ կ'անցնի երկրորդը, ուրիէ սկսեալ իրեն գասակից եղած է Ամերիկայի նորիկին Առաջնորդ Տիրայր Արքեպիսկոպոս Տ. Յովհաննիսիսան։ Հայերէնի և թուարանութեան մէջ անպատճառ ըլլալով՝ մտանաւոր դասեր կ'առնէ Եփրեմ վարդապետէն և Գ. դասարանէն սկսեալ մինչեւ ձեմարանը աւարտելը՝ միշտ իր կարգին առաջիններէն մէկը կը հանգիստանայ։ Գ. դասարանէն եաքը՝ անգամ մը միայն իր արձակուրդը կ'անցընէ իր ձնողաց մօտ։

Երբ ինքը Ե. դասարանն էր՝ հայրը կը մեռնի։ Մայրը և երկու կրտսեր քոյրերը ապրեցնելու տենչով, կ'ուզէ ուսումը թողուլ և դործի ոսպարէզ իջնել, բայց ձեմարանի տեսուչը լոսորովեան՝ կը համոզէ զինքը և չի թողուր որ երթայ։ 1886ին կ'աւարտէ Զ. դասարանը և կը մանէ բարան։ Նոյն ամառը Մանուկ Արեգեանի զլխաւորութեամբ և կարապետ Տէր Մկրտիչեանի, Սէթ Յարութիւնեանի և ուրիշներու ընկերակցութեամբ, հազիւ 18 տարեկան, արձակուրդի օրերուն կ'երթայ Արագածի վրայով Անիի հնութիւնները աեսնելու։ Այս 14 օրուան պատյան ու այցելութիւնը շատ խոր տառաւրութիւն կը թողուն ապագայ հընազէտ—բանասէրին վրայ։

ՍԱՐԿԱՀԱԴՐԻԹԻՒԻՆ. — Գարեգին գեռ երրորդ լսարանն էր և կ'ուսունէր՝ երբ տեսուչ Նահապետեանի, կարապետ Տէր Մկրտիչեանի, Մայր Աթոռի այժմու Տեղակալ Գէորգ Զէօրէքնեանի հետ 1889 Յունիսին, Մեծն Ներսէսի տօնին օրը, սարկաւագ կը ձեռնագրուի Մակար կաթողիկոսի հը-

բամանով և կ'ըլլայ միարան էջմիածնայ: Նոյն տարին դեռ
ուսումը չաւարտած կը սկսի իր գրական աշխատանքները՝
ձեմարանի Մոկացի ծառաներէն և Ապարանի գիւղերէն
բանահւութիւններ հաւաքելով, և առաջին յօդուածը տը-
պազրելով էջմիածնի «Արարատին» մէջ, Հուսաւորիչ և Հա-
յասատանեայց Եկեղեցին» վերնագրով: Էջմիածնի Հոգեւոր
ձեմարանի պատմութեան մէջ 1889 թիւը ուշազրութեան
արժանի տարի մըն էր: Օրմանեան Սրբագան 1886—7 ու-
սումնական տարեշրջանին համար գասախօս հրաւիրուած
էր S. Մակոր Կաթողիկոսի կողմէ: Սակայն ան ստիգուե-
ցաւ ձեմարանէն հեռանուլ կառավարութեան պահանջով:
Բայց անոր Կարճաաեւ ներկայութիւն ալ օդտակար հան-
դիսացաւ: Մինչեւ այդ ատենները ձեմարանը, հայ եկեղեց-
ւոյ սպասւորներ տալու կողմէն անպատւղ մնացած էր:
Օրմանեանի ազգեցութեամը վերջին լսարանի ուսանողնե-
րուն մէջ հայրեննասիրական-եկեղեցասիրական շարժում մը
սկսած ըլլալով էր՝ որ վերոյիշեալները, երկու տարի անց-
նելէ ետքը 1889ին Աստուծոյ սեղանին տաջեւ կը ձնրագ-
րէին՝ ուխտելով նուիրուիլ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծա-
ռայութեան: Այս առաջին օրինակը իր բարերար հետեւնքը
կ'ունենար, որովհետեւ հետեւեալ տարին երեք ընկերներ, կոմի-
տաս, Աւտոն Գևոնջէցեան՝ ապագային Եղնիկ վարդապետ,
Լուսեղէն Զօհրապեան՝ ապագայի Յուսիկ վարդապետն ու
եպիսկոպոսը, նաև անոնցմէ կարգ մը բարձր, Գ. Եղիազար-
եան, ապագայի Բենիկ վարդապետը, նոյնարէս սարկաւագ
կը ձեմարանին, մնալով ձեմարանի ուսանողներ: Յետոյ
ասոնց վրայ կ'աւելնան Տիրայր Արքեպիսկոպոս և յետո-
գային նաեւ ուրիշներ: Կարապետ S. Մկրտիչեան և Գէորգ
Զէօրէքնեան 1889ի ամսուր Գերմանիս կ'ուղարկուին, ա-
ռաջինը ասառուածարանութիւն, իսկ երկրորդը երաժշտու-
թիւն ուսանելու: Առաջինէն Մագիստրոսութեան և Տոք-
թորութեան աշխատութիւնը Պաւղիկեաններու մասին, ձե-
ռագրական գիւղերը, «Արարատի մէջ գրած յօդուածները
զինքը նշանաւոր կ'ընեն Եւրոպական մաքով:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ.— Մակար կաթողիկոսի 1890ին վախճանումը պատճառ կ'ըլլայ, որ Գարեգին սարկաւագի ուսման համար Եւրոպա զրկուիլը կ'ուշանայ: Կաթողիկոսին վախճանումէն ետքը Երեմիա Արքեպոս. Գառլըստեան, իրրեւ Սինոդականներու, կամ ինչպէս հիմայ կ'ըսենք Գերազոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներու աւագը, Տեղակալ կ'ըլլայ: Նահապետեան կը հեռանայ Ճեմարանէն և կը զրկուի Կարս: Երեմիա Արքեպոս. և Արքատակէս Սինօրակետն իշխանութեան զլուխներն էին և հակառակ էին Մակար կաթողիկոսի և Նահապետեանի մտայնութեան:

Գարեգին սարկաւագ իրրեւ Նահապետեանի աշակերտ՝ յատուկ շնորհ չեր վայելեր: Բայց Խրիմեանի ընտրութեան առթիւ, 1892ին՝ Օրմանեանի զլիստորութեամբ՝ Տաճկահայոց կողմէ պատգամաւորներու բազմութիւն մը կուզայ: Գարեգին Սարկաւագ նախապէս կը ներկայանայ Սրբագանին և կը պատգամէ արտասահման երթալու զժուարութիւնները, թէեւ նիւթական միջոցները պատրաստ էին և Կովկասեան Հայոց Բարեկործականը ընտրած էր զինքը իրրեւ սան՝ Աստուածաբանութիւն ուսանելու համար: Նաև կը յայտնէ այդ կարգադրութեան համար օգտակար եղած էր իրր ուսուցիչ Փիլիպպոս վարդապետի ներկայութիւնը՝ իրրեւ վարչութեան անդամ և իր Սասմայ Ծուեց ու Փերանենց ու պակումն ու տպուիլը Հրատ. Ընկերութեան ծախքով: Օրմանեան ձկուն միտքը այս մասին օգտակար կ'ըլլայ: Գարեգին Սարկաւագի: Երբ ան պաշտօնական այցելութեան կ'երթայ Տեղակալին, խօսքը տեղը բերելով կ'ըսէ «Երեմիա Սրբագան», կը շնորհաւորեմ Զեր զեղեցիկ որոշումը Գարեգին Սարկաւագը արտասահման զրկելու համար: Այդ պատիւ կը բերէ Զեր և օգտակար կ'ըլլայ Աթոռին համար»: Տեղակալը կը ստիպուի պատասխանել. «Երբաժանարդ է, յոյս ունեմ, նրա առաքումը օգտակար կը լինի»: Այս խօսակցութենէն ետքը Օրմանեան Սրբագան կը կանչէ Գարեգին Սարկաւագը և կը հաղորդէ խօսակցութեան բովանդակութիւնը և կը պատուիրէ Տեղակալին երթալ շնորհակալութիւն յայտնել: Եւ այդ կը կատարէ Գարեգին Սարկաւագ: Պատ-

գամաւորներու մէջ լուր կը տարածուի և շատեր կը շնորհաւորեն զինքը, առաջումը ընդունելով իրրեւ իրողութիւն:

Ընդունելութեան վերջանալէն ետքը Գարեգին Սարկաւագ հաստամուտ կ'ըլլայ պաշտօնական թուղթ ստանալու և նահանգապետին գիմելու անցազրի համար: Աստուածայս կերպով կ'օգնէ անոր այս գործին մէջ: Նոյն տարւոյն Օգոստոս Յին Գարեգին Սարկաւագ Գերլին կը հասնի ցնծութեամբ, ուր էր իր մտերիմ ընկերը՝ Կարապետ Սարկաւագ Տէր Մկրտիչեան:

Կարապետ Սարկաւագ օդատակար կը համարէ որ Գարեգին Սարկաւագ առաջին վեցամսեաններու (Սէմիսթը) համար հաստատուի Լայպցիկ ուր էին նաև Գէորգ Սարկաւագ և ուրիշ քանի մը հայ ուսանողներ: Գէորգ Սարկաւագ զինքը կը տեղաւորէ «բանսիոնի» մը (ճաշ և սենեակ վարձու տուող ընտանիք): մէջ, որպէսզի հասրաւորութիւն ունենայ գերմաներէն լսել և լեզուն չուտ սորփիլ: Հոն էին նաև՝ ուրիշ ճեմարանականներու հետ՝ Յովհաննէս Խաչումեան, ապագայ խոսացող մտաւորական մը, որ յետոյ Ամերիկա գալով կարեւոր զործ կը կատարէ Հայասէրներու միութիւնն կազմելով: Մե՛քք որ, քաղցկեղի զոհ կ'ըլլայ ծաղիկ հասակին Լայպցիկի մէջ: Հոն էր նաև Աստուածատուր Խաչատուրեան, Սանտարեանի ապագայ հանրածանօթ ուսուցիչը և Պոլսոյ Կելքրոնականի տեսուչը, որ նշանաւոր եղաւ Հայաստանի Ուրարտուական և նախառարարական շրջանի պատմութեան ուսումնասիրութեամբ: Նաև Մանուկ Արեգեան, «Սամայ Ծուերու» հին աւանդավէսիերու ուսումնասիրող, կարեւոր երկերու, նոր ուղղագըրութեան հեղինակ հանրածանօթ զիտնականը, ու Գէորգ Սարկաւագի իջմիածին վերապառնալէն ետքը՝ գաղափարակից ընկեր և յետոյ Ճեմարանի մէջ պաշտօնակից եղուծ է Գարեգին Սարկաւագի:

Ուսանողութեան շրջանին չորրորդ վեցամսեան վերջանալէն ետքը, 1894ի ամռաը, Գարեգին Սարկաւագ կը վագիաքի արձակուրդը Բարիդ անցնել, Փրանսերէնի մէջ աւելի վարժուելու համար: Իրեն ճանապարհածախք և

ապրուստի միջոց պիտի ունենար կովկասեան Բարեգործականէն ամսական 50 բուպլի թոշակը, Անտոն վարդապետէն ստացած 100 բուպլի նուէրը և քիչ մըն ալ իր ըրած խնայողութիւնը: Սակայն, Կարապետ Սարկաւագ որ ընթացաւարտ եղած էր և կը պատրաստուէր էջմիածին մեկնիլ, պատճառ կ'ըլլայ որ այդ ծրագիրը փոխուի: Ինքը քիչ առաջ, խումբ մը գերման ուսանողներու հետ այցելած էր Վէսթֆալիայի Բիլէֆիլտ քաղաքին մօտ Քրիստոնէական գիտութեան և բարեսիրական մեծ հաստատութիւնը, որուն տեսուչն էր նշանաւոր պասթոր Գոն Բդիշգենդ: Ան հաստատութիւնը փոքրէն սկսած, սակայն, համաշխարհային հռչակի արժանացած էր, հիմնելով հոգեկան ախտերու համար հիւանդանոցներ, որբանոցներ, միսիոնարներ և զթութեան քոյրեր պատրաստող դպրոցներ, բանւորական զասին օգնելու համար ընկերային ուրիշ հաստատութիւններ և այլն. 132 շէնքերու մէջ հաստատուած այդ հաստատութեան խնամքին տակ էին 7000 հոգիէ աւելի: Կարապետ Սարկաւագ այսպիսի ոգեւորութեամբ կը պատմէ այդ նշանաւոր հաստատութեան մասին, որ Գարեգին Սարկաւագ ալ կ'այցելէ և երկուքուկէս ամիս կ'ուսումնասիրէ այդ սքանչելի հաստատութիւնը և մեծապէս կ'օգտըւի թէ հոն տեսածներէն, թէ կարդացած գրքերէն:

Այսպէս որ երկուքուկէս ամսուան այդ ուսումնասիրութենէն այնչափ կ'օգտուի, որչափ պիտի չօգտուէր այդ նիւթերուն մասին երկուքուկէս տարի զիրքեր կարգալով: Հաստատութեան վարչութիւնը այնքան ոգնիւ կը զտնուի իրեն որ՝ իր Սարկաւագ և օտար եկեղեցիի պատկանող մէկը ըլլալը նկատի ունենալով 300 մարգի չափ վճարելի ամսականները չընդունիր զնահատելով հոն եղած շրջանին կատարած աշխատանքները: Այս մասին յետոյ յօդուածարք մը կը զրէ «Արարատ»ի մէջ «Եկեղեցին և խնամատարութեան գործը» վերնադրով: Գարեգին Սարկաւագ յետոյ միշտ օրհնած է իր թանկազին ընկերոջ յիշատակը անոր համար որ, պատճառ եղած է իր այդ այցելութեան:

Գարեգին Սարկաւագ համալսարանական ուսման
շրջանին և յետոյ պատրաստուած հոգեւորականներ գերա-
դանցապէս օգտակար կը հանգիսանան՝ վանքն ու ճեմորա-
նը եկեղեցական մտաւոր կեղրոն մը ընելու, քահանայու-
թեան մակարդակը բարձրացնելու, և եկեղեցւոյ դաստիա-
րակչական գործին զարկ տալու համար: Այս միտքը աւել-
լի կանուխ յդացուած էր, առկայն անոր զարկ: առաջը
կ'ըլլայ Օրմանեան Սրբազն, իսկ առաջնորդ և գործադ-
րողը՝ Տեսուչ Արշակ Նահապետեան, (յետոյ Նահապետ ե-
պիսկոպոս), և ուսուցիչներ՝ Ստեփանոս Պալասանեան,
կ. Կոստանեան, Սեղբակ Մանդինեան, և Փիլիպպոս Վար-
դանեան:

Երբ կոմիտաս, Եղնիկ, Յուսիկ վարդապեաններ յե-
տոյ Գերլին կ'երթան ուսանելու, ինչպէս կարապեան Սար-
կաւագ իրեն ըրած էր, ինքն ալ կ'օգնէ կրտսեր ընկերնե-
րուն:

Գարեգին Սարկաւագ, երկու՝ Լայփցիկի և երկու քու-
կէս աւրի ալ Հալէի և Գերլինի համարաբաններուն մէջ
կ'ուսունի Աստուածարանութեան Փիլիսոփայութեան ճիշդե-
րը, ուսուցիչ ունենալով Լայփցիկի մէջ Հայնրիցէ՝ Նոր
կարապեանի, Գութէ՝ Հին կատակարանի, Հառէ՝ Եկեղեցա-
կան պատմութեան, ինչպէս նաև Վունդ՝ Փիլիսոփայութեան.
Համէի Համալսարանին մէջ Լոփօ՝ Եկեղեցական պատմու-
թեան, Գերլինի մէջ Հառնոք՝ Դաւանաբանութեան պատ-
մութեան, Գաֆթան և ուրիշ նշանաւոր ուսուցչուպեաններ: 1897ի սկիզբը՝ յետ քննութեան կը ստանայ Լայփցիկի հա-
մարաբանին Փիլիսոփայութեան Տաքթորի աստիճան, իր-
բեւ աւարտական թէղ ներկայացնելով՝ «Մի կամքի վար-
դապետութեան ծագումը՝ Հայ և Յոյն Աղբիւրների Քըն-
նապատութեամբ»:

Եկեղեցականը Եի ՌԻՍՈՒՑԻՉԻ ՝ Գարեգին Սարկա-
ւագ 1897ին ոչնան Երջանկայիշատակ Մկրտիչ երիմեան
կաթողիկոսի կարդաղութեամբ Արեգայ կը ձեռնադրուի
Սուքիս Արքեպոս. Պարզեանցէ՝ Էջմիածնայ Մայր Տաճա-
րին մօտ Գայիանէի վանքին մէջ:

Գարեգին աբեղայ ճեմարանի Աստուածաբանական ճիշդերու դասախոս կը կարգուի, աւանդելով նաև Հայոց Մատենագրութիւն։ Իր սովորական դասախոսութիւններէն դատ, զորս կանխառ գրաւոր կը պատրաստէր, ուսանողներու մէջ հայերէնի հնութիւններու համար սէր արթնցնելու, և անոնց պատմութեան, արուեստի և մշակոյթի ունեցած արժեքը զործնականապէս բացարելու համար հնագիտական ճամբարդութիւններ կը կարգադրէր։ Այսպիսի ճամբարդութիւն մը կ'ունենայ 1898 ամառուան արձակուրդին, 12 ուսանողներու հետ, որոնք բոլորն ալ հետիւան էին, ինքը միայն ձի մը ունէր իր տրամադրութեան տակ, ինչպէս նաև բնանակիր գրաստ մը՝ պլանքէթները և ուրիշ անհըրածիշտ իրերը կրելու համար։ Ճամբարդութիւնը կը աեւէ զրեթէ ամիս մը։ Կը տեսնեն Օրբէլեան և Պոօշեանց իշխանական տոհմերուն շինած քազմաթիւ շին, բայց առաւելապէս աւերակ վանքերը։ Թէ՛ ինքը և թէ ուսանողները կը տպաւորուին մեծապէս, թէւ ուսանողները կանոնի և ծրագրի համաձայն զեկավարելն ալ դժուար զործ էր։ Ասկայն, բոլորին համար մեծ վիշտ կը պատճառէ Քրիստոնու Տէր Միքայէլեանի, յայտնի Աստուածաբան և քազմաթիւ աշխատութիւններու հեղինակ Արշակ Տ. Միքայէլեանի եղբօր՝ մահը բծաւոր ժանատանդի հետեւանքով։ Վայոց Զորը կը շրջագային՝ կ'անցնին Նոր Բայազէտի դաւառէն Նորագուս գիւղը որ պատմական աւերակներով հարուստ է։ Հոս ձեռք կը բերեն կորըլէն մը (Քրանտական ծագկենկար գորգ՝ շինող գործարանի անունով կոչուած) Ժէ. գարէն որ իրեւ անպէտ և հնացած վարագոյր ձգուած էր եկեղեցւոյ կողքի զգեստարանը և փոխարինուած էր չիթէ վարագոյրով մը։

Վարդավառի տօնին հոն կ'ըլլան և կը տեսնեն ուխտաւորներու ուրախութիւնները, երգերն ու պարերը։ Գիւղացիներ զիրենք կը զգուշացնեն թէ ճաշէն ետքը՝ իրիկւան զէմ լինը անհանգիստ կ'ըլլայ առաստրակ, և թէ նըշաններէն այնպէս կ'երեւի որ փոթորիկ պիտի ըլլայ, սակայն Գարեգին վարդավառ թուլութիւնը կ'ունենայ զիջե-

լու աշակերտներու խնդրանքին և նաւակ մը վարձելով կը տեղաւորուին մէջը: Ժամ մը չանցած կը սկսի ահեղ փոթորկի, աշակերտներ կը փռուին նաւակին յատակը, սիրտ խառնուք, փսխում: Նաւավարները վախ կը յայտնեն թէ հովը հարու—արեւելքին փշելուն պատճառաւ՝ կը բնայ նաւակը ցից ժայռերով ափի ուղղութեամբ քշել տանիլ: Երկու անգամ նաւակը ժայռերու կը զարնուի, բայց անփորձ կ'անցնի: Կ'աղօթէ Աստուծոյ որ փրկէ զիրենք, ինչպէս իր Որդին փրկեց իր աշակերտները: Վերջապէս կ'անցնին վըտանդաւոր շրջաններէն և իրիկուան ժամը 9ին կը հասնին Սեւան, մոռնալով բոլոր նեղութիւններն ու սարսափիները: Վեհափառին «Եաղբակեանք կամ Պռօշեանք» աշխատութեան յղացումը այս ճամբորդութեան կապուած է:

Այս առթիւ բաւական թիւով անթիք դրամներ ձեռք կ'անցնեն, որոնց մէջ Արտաշէսի և Տիգրան Մեծի երկու պղնձադրամներ՝ հազուագիւտ տեսակէն վերեւ յիշուած կորրընի հետ: *

Այս կերպով ուսանողներ առիթ կ'ունենան անձամբ անսնալու և անջնջելի տպաւորութիւններ ստանալու հայրենի աւերակներէն՝ գործնական դասեր առնելով մերպատմութենէն:

Տարուան ընթացքին կատարուած մշակութային հանդէսով մը՝ ճանապարհորդակից ուսանողներու հետ, կը հաղորդեն նաեւ իրենց տպաւորութիւնները, և ձեռք բերւած արդիւնքները կը ցուցադրեն ամբողջ ձեմարտանին:

Ուսուցական այս շրջանին գործունէութիւններէն էր նաեւ Մեծ պահքին էջմիածնական աւանդութեան համաձայն վարդապետները գաւունները ցրուել քարոզչութեան համար, իսկ էջմիածնայ և մօտաւոր զիւղերու քարոզչութիւնն ալ ինքը կը ստանձնէր, միշտ հետը առնելով փափառող ուսանողները:

Ճեմարտանի մէջ աշխատանքը շատ էր և իրեւ առաջին աարիներու զասախօս պէտք էր ուսումնասիրէր իր ուսուցանելիքները, զրէր դասախոսութիւններ: Առանց առնց ալ, յոզնած վերագարձած էր արտասահմանէն, և

առողջ հետեւանքը կ'ըլլայ նետրդներու բաւական ծանր հիւանդութիւն մը, և բժիշկի ու բարեկամներու խորհրդով կը ստիպուի ընդհատել գասախօսութիւնները:

Խրիմեան Հայրիկ այս հանգամանքներէն օդտուելով զինքը կը նշանակէ Թիֆլիսի Առաջնորդարանին փոխանորդ, 1900ին. Գէորգ Արքեպոս. Սուրէնեանցը (ապագայ Գէորգ Ե. Կաթողիկոս) հրաւիրելով էջմիածին:

Թիֆլիսի Մէջ.— Թիֆլիսի Առաջնորդական Տեղապահութեան կեանքէն և գործունէութենէն յիշատակելի դէպքեր շատ են: Հոն ընդհանուր համակրութեան հետ կը վաստըկի նաեւ քանի մը թշնամիներ որոնք միջոցներու մէջ խորութիւն չէին դներ վարկաբեկելու զինքը: Յիշատակելի է Ալիշանի հոգեհանգստեան շուրջ բացուած վէճը, որ կը վերջանայ իր փափաքած ձեւով: Այդ առթիւ Յովհաննէս Թումանեան յանպատրաստից գեղեցիկ երգիծարանական ոստնաւոր մը զրած է, Սրբազնի և Շիրվանզադէի ներկայութեամբ, և որ զեռ հրատարակուած չէ իր գործերուն մէջ: Յիշատակելի են նաեւ մտաւորականներու հաւաքոյթները Առաջնորդարանի մէջ, ուր Յովհաննէս Թումանեան առաջին անգամ կը կարդայ իր զրած Սասունցի Դաւիրը, Մուրացանը՝ իր մէկ գործը: Միաքերու փոխանակութիւններ տեղի կ'ունենային ազգային—եկեղեցական խնդիրներու մասին, երբ երկիւզալի էր տիրող բէժմիմին տակ ունէ աեզ հաւաքուիլ: Մեր այս նշանաւոր բանաստեղծները զըրոցերը, խմբագիրները՝ Ղազարոս Աղայեան, Յովհաննէս Թումանեան, Մուրացան, Արասխաննեան, Նիկոլ Աղբալինան և ուրիշներ, 12—15 հոգի, կը հաւաքուէին շաբթուան մէջ օր մը իր մօտ, զրական ընթերցումներէ, որնէ հարցի շուրջ մտքերու փոխանակութիւններէ կամ գասախօսութիւններէ ետքը, ընթրելու կը նստէին՝ Յովհաննէս Թումանեանի թամատայութեամբ և հիանալի ժամանակի կ'անցնէին:

Ախալցխայի եկեղեցական կալուածներու կապարի բարձրացումը տարին 5000 բուրլիի, և որ կարեւորն է երեւանի թեմական գպրոցի անունով երած 120.000 բուրլիի

աւելի կտակին փրկութիւնը ժառանգորդներու ձեռքէն՝ իր շնորհիւ յաջողած են։ Յիշատակելի են Ներսիսեան Դպրանցի տեսչութեան շուրջ եղած վէճերը։ Եւ այս բոլորը առանցքից ամսուան մէջ եղած են։

Մատարականներու, վաճառականական դասին և ժաղովուրդի համակրութիւնը այնքան մեծ էր, որ հանրագրութիւնը կը կազմուի անոնց ստորագրութիւններով և զիմում կ'ըլլայ Մկրտիչ Կաթողիկոսի, որ զինք Առաջնորդ նշանակէ Եպիսկոպոս ձեռնադրելով։ Բայց Երիմեանը ուրիշ ծրագիրներ ունէր և վարաժամ կը նկատէ երիտասարդ վարդապետի մը եպիսկոպոսացումը և Առաջնորդութիւնը Թիֆլիսի նման առաջնակարգ թեմի։

Այդ միջոցին, Էջմիածնի կալուածներուն գրաւման տարիներուն, Երեւանէն ընտրուած է Թեմական Դպրանցի վերատեսչութեան, զոր կը վարէ 1901—4 թուականը, առանց ազմուկի և խոսովութիւններու, որոնք այդ դպրոցի համար սովորական էին։ Ինք կը դասաւանդէր միեւնոյն առեն Հայ Եկեղեցիի պատմութեան ճիւղը։

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ԱՅԻ ՊԱՇՏՈՆՆԵՐ. Գարեգին վարդապետ 1905ին կը նշանակուի վերատեսուչ Գէորգեան ճեմարանի՝ միաժամանակ աւանդելով Աստուածարանական և հնագիտական ճիւղերը։ 1906—1907 կը վարէ «Արարաց հանդէսի խմբագրութիւնը, ըլլուլով նաև մեայուն աշխատակից Մայր Աթոռի այդ պաշտօնաթերթին։

Երիմեանի վախճանուածէն ետքը, Ա. Հոփիսիմէի վանահայրութեան շրջանին, զրադան գրադած է արժէքաւոր գիրքերու պատրաստութեամբ։ Խակ Խզմիրեանի Կաթողիկոսութեան օրով վարած է խորհրդականի պաշտօնը, և աքսորուելու սպառնալիքը անտեսելով՝ հողային խնդրի պատճառաւ Օրթոսոքսութեան դիմոզ կեչուլու գիւղաքաղաքի դաւանագուխ համայնքը՝ երեք շարթուայ ընթացքին Մայր Եկեղեցիին ծոցը վերակարձուցած է, զզչման թուղթ ըստորագրել տալով, և սուացած է յատուկ օրհնութեան դիր իդմիրլեան կաթողիկոսէ։

Ան ժամանակցած է Գոռանիի, «Տրդատայ թախտօփ պեղումներուն և այդ շրջանի հնագիտական վայրերու ուսումնասիրութեան» իրքեւ անդամ փրոֆ. Մառի կազմած արշաւանքին: Այս շրջանին կատարած արձանագրական կարեւոր գիւտերէն մէկն էր Տրդատ թագաւորի յունարէն արձանագրութիւնը՝ Արագածի արեւելեան կողմը՝ Գնթունեանց նախարարութեան մէջ, Քացախ գետի ակտունքներուն մօտ, և այս առթիւ կ'ըլլայ երեք նշանաւոր գիտնականներուն: Մառի, Ռուսովզենիի, Ամիրնովի հետ, զբազուելու անոր լուսաբանութեամբ և յատաւկ գիրք գրելու:

Այս և ուրիշ գիտական աշխատանքներու համար՝ փրոֆ. Մառի առաջարկութեամբ ընդունուած է որպէս իսկական անդամ կայսերական Հնագիտական Ընկերութեան, որու կ'անդամակցէին միայն փրոֆեսօրներ և Ակադեմականներ:

1911ին ճամբարդած է Երուսաղէմ և Պոլիս՝ նկարիչ Եղիշէ Թագէոսեանի հետ և ընդօրինակուծ է Ս. Յակոբեանց վանքի և Պոլսոյ Աղջ. Մատեղարանի ձեռագիրներէն կարեւոր մանրանկարները, մանաւանդ հայ թագաւորական և իշխանակուն ընտանիքներու դիմանկարները: Գործօն մտանակցութիւն բերած է Օրմաննեանի կաթողիկոսական թեկնածութեան շուրջ յարուցուած պայքարին՝ յատուկ գրքոյկով: Գիրերու գիւտի հազար հինգ հարիւր ամենակին առթիւ հրատարակուած նորակար՝ մեծ հաւաքածոյին և Պատմագիրէ Հայոց նարքին խմբագիրներէն մէկը ըլլալով հանդերձ՝ կտարարած է Հնագիտական շտամ մը ճամբարդութիւններ, որոնց արգիւնքն է Խալբակեան կամ Պոօսեան Հայոց պատմութեան մէջ նշանաւոր երկասիրութիւնը երեք հատորէ բազկացած:

Առաջին համաշխարային պատերազմին սկսելէն առաջ, 1914ին, իր ամենակարեւոր հեղինակութիւնը Մանրանկարչական Խարէկը՝ կը տանի Պերլին տպագրելու համար, ստկայն պատերազմը սկսելուն կը ստիպուի հեռանալ, հոն թողլով նաեւ 5000 մարգի գումար մը, զոր վճարած էր պատգրութեան ծախսի իրը նախավճար: Գերմանիային

վերադարձը կը կատարէ Պոլիս—Սամսոն—Ամասիա—Թուքաս—Սերաստիա ճամբով՝ որ ատեն, ուսումնասիրելով Հայոց և կեղեցիներու մէջ պահուած ձեռագիրներն ու հնութիւնները, կ'երթայ մինչեւ Խանդալ, մտադրելով այցելել նաեւ Խարբերդ և Կարին, սակայն Թուրքիոյ պատերազմին մուտքով փութով կը վերադառնայ իջմիածին, և կը ստանձնէ Ճեմարանի վերատեսչութիւնը մինչեւ այդ հրոշակաւոր կրթական հաստատութեան փակումը՝ 1917ին։ Ամենադժուարին պայմաններու մէջ, 1916—1917 ին, ճեմարանը նիւթական անձկութեան մատնուելով՝ ինքը եղած է միայն, որ յանձն առած է Ռուսաստանի Թիմերուն մէջ հանգանակութիւն կատարել՝ Մայր Աթոռին քերելով 180.000 բուզլիի պատկառելի գումար մը։

Պատերազմի ամբողջ տեւզութեան՝ անդամ, և տարի մըն ալ նախագահ եղած է Եղբայրական Յանձնախումբին, որ պատերազմի և զինադադարի շրջանին ալ շարունակելով՝ ինքն եղած է բարեգութ հայր մը գաղթականութեան, մինչեւ իսկ 1915ին վարակուելով թիֆոյի հիւանդութեամբ։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՈՒԽՄ.— Իբրեւ վարձք իր ծառայութեանց, Գարեգին վարդապետ 1917 Մայիսին՝ Զաւէն, Գէորգ Զէօրէքնեան և Տիրայր Յովհաննիսեանի հետ եպիսկոպոս կը ձեռնադրուի Գէորգ Ե. Կաթողիկոսէն։ Յաջորդաարին իսկ Տաճկաց պատերազմի միջոցին իր հոետորական ձիրքերը սպաս դնելով, Հայ բանակը և ժողովուրդը կը խրախուսէ հայրենիքի պաշտպանութեան համար։

Հայաստանի համալսարանին բացման ժամանակ 1920ին ուսուցչապետ կը կարգուի հայ արուեստի և հնագիտութեան աթոռներուն։ Նոյն տարւոյ Հոկտեմբերին գործոն մասնակցութիւն բերած է ընդդէմ Տաճկաց երկրորդ պատերազմին, և կարսի անկումի օրերուն՝ յատուկ բանագնաց եղած է, ազատելով կարսի ժողովուրդը վերահանձարդէ։ Այդ շրջանին գիտական աշխատանքի մեծ ասպարէզ մը բացուած էր իրեն, Հայաստանի տաղանդաւոր և

մեծ ճարտարապետ թամանեանի և Աշխարքէդ Գալանթառի հետ, ինք եւս ըլլալով երրորդ անդամ մը Հայաստանի Հնութեանց պահպանութեան կոմիտէին:

Եսորհրդային Հայաստանի հաստատութենէն ետքը՝ Գարեգին Եպիսկոպոս կը վերադառնայ էջմիածին, 1921ին և կը նշանակուի Հայաստանի Գիտութեանց ինստիտուտի գիտնական անդամ, հրատարակելով նոյն կաճառի անդամներուն հետ Բանբեր ժողովածուի առաջին մեծ հատորը, որուն մէջ ունի երեք յօդուածներ:

Երբ 1924ին էջմիածնայ Մայր Աթոռը նիւթական ծանր կացութեան մատնուած էր՝ կրկին իրեն կը վիճակի՝ կաթողիկոսի խնդրանքով, հանգանակութեան ելնել Եսորհրդային Միութեան թեմերը և գոյացնել 12.000 ոսկի բուլղի, ապահովելով վանքի մէկ տարուան ելեւմուտքը; 1925ին կը բարձրանայ Արտօնածի գագաթը; Այդ պատմական վերեւքի գեղեցիկ նկարագրութիւնը «Արագածի զագարին» ի խնդիր Լուսաւորչի Կանքի կանոնագրութիւնը պատարակած է նաև «Հայաստանեայ Եկեղեցիաին մէջ, և յետոյ «Նոր Դիրքի Գարուն—ամառ թիւերուն մէջ 1941ին» Ապա հըրատարակուած է առանձին գրքոյկով:

Գէորգ Ե. Կաթողիկոսի օրով եղած է Գերագոյն Եսորհուրդի անդամ, և Միաբանական ժողովի նախագահ:

Լենինականի մեծ երկրաշարժին ժամանակ հարկ համարուած էր որ Կաթողիկոսի կողմէ մէկը երթայ՝ ժողովուրդին սիրո տալու և մխիթարելու: Այդ վտանգաւոր գործը վիճակուած էր կատարել Գարեգին Եպիսկոպոսին, տանելով էջմիածնայ նիւթական փոքրիկ օժանդակութիւնը: Նա եղաւ որ քարոզեց ո՛չ միայն քաղաքին հրապարակներուն վրայ խռնուած ժողովուրդին, այլ և այցի գնաց հեռուաւոր գիւղերը, գիշերները միշտ ահ ու սարսափի մէջ: 1927ին միաձայնութեամբ կ'ընտրուի Ռուսաստանի, Երիմի և Նոր Նախիջեան թեմին առաջնորդ: Խակ Եսորէն Կաթողիկոսի ընտրութեան ատեն կը պաշտպանէ անոր թեկնածութիւնը և կ'աշխատի որ ան ընտրուի Կաթողիկոս: 62 քուէ ստանալով կ'ընտրուի Գերագոյն Հոգեւոր Եսորհուրդի

անդամ և Հայրապետի փոխարէն հախտագահող կը նշանակեւի անոր նիստերուն։ Մինչեւ Էջմիածնէն հռուանալը՝ Խորէն կաթողիկոսին բոլոր կանգակները ինքը զրած է։ 1934ին նշանակուած է Լիազօր Նուիրակ և ներկայացուցիչ Հայրապետի՝ սիմիռքի մէջ և այցելած է Ռումանիա, Պուլկարիա, Վիեննա, Փարիզ, Երուսաղէմ, Եգիպտոս, Սուրիա, Իրազ, Կրկին Եգիպտոս, Յունաստան, Ֆրանսա, Լոնտոն, և Ամերիկայի Միացնեալ Նահանգները։ Միշտ քարոզելով, դասախոսութիւններ տալով, յօդուածներ գրելով՝ մեծապէս նպաստած է Հայրենիքի և Մայր Աթոռի հանդէպ սիմիռքի հայութեան սէրը արծարծելու և վառ պահելու։ Էջմիածնայ Մայր Տաճարին նորոգութեան համար հանգանակած է աւելի քան 35000 տոլար, որ ապահով դրուած է Ամերիկայի և Լոնտոնի դրամատուններուն մէջ և Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան մօտ։

Գարեգին Արքեպիսկոպոս, հանգանակութեան դըրամէն ոչ մէկ սենթ յատկացուցած է իր անձնական կարիքներուն, զորս հոգացած է իր հասոյթներով և ստացած նուէրներով։

ԱՄԵՐԻԿԱՆԱՅՈՒԹ. — ԱՄԵՐԻԿԱՆԱՅՈԳ Առաջնորդութիւնը նոր ասպարէզ մը կը բանայ տաղանդաւոր եկեղեցականին առջեւ։ Գարեգին Արքեպիսկոպոս 1936 ապրիլ 8ին Ամերիկա կը ժամանէ իրրեւ Հայրապետական լիազօր Նուիրակ։ Ազգ. երեսփոխանական ժողովը 1938 սեպտ. 4ին զինք կ'ընտրէ իրրեւ Առաջնորդ։ Թէեւ հաստատումը կը յապազի մինչեւ 1939 մայիս 5, սակայն նոյն տարւոյն յունիսի սկիզբը ան եռանդագին կը ձեռնարկէ իր պաշտօնին։ Նախ կը բարեզարդէ Առաջնորդարանը։ Ամէն տարի պարբերաբ հովուական այցելութիւններով կը քաջալերէ Համայնքները, Հոգաբարձութիւնները, Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնները, այս կերպով կը յաջողի այրել տալ թրոյի, Պինկէմթնի, Պրիճփորթի, Պութոնի, Լովէլի և Ռոթըրթանունի եկեղեցիներուն պարտամուհակները։ Նոր եկեղեցիներ կը գնուին խրախուսուած հոգաբարձութեանց կողմէ և իր

ձեռքով կ'օծուին նորթհ Ֆիլայի, Ռւէսթ Էլիսի և Նիւ Գրիթէնի եկեղեցիները: Կը նորոգուին և կը բարեգարգուին Փրովֆիտէնսի, Պաութոնի և Փէթըրսընի եկեղեցիները: Նիւ-Եորքի Ս. Խաչ եկեղեցին արդէն օծած էր նախքան Առաջնորդ ընտրութիւրը: Առաջնորդարանի շատ մը հազարի հասնող երկարումեայ պարտքը գրեթէ ամբողջութեամբ կը բառնայ, և կը հաստատէ Լուսաւորչի լումայի և Առաջնորդարանի Օժանդակ Միութեան Մի տոյար իւրաքանչիւր Անհատէ տարեկան տուրքերը:

Քառամեայ պաշտօնավարութեան շրջանի նիւթեական այս կարեւոր գործերէն զատ՝ աւելի հիմնական և տեւական աշխատութիւններով կը բարեզարդէ Առաջնորդական Աթոռը: Կը վերակազմէ Ազգ. կեդրոնական Վարչութեան Խորհուրդները.—Ռւտումնական, Տնտեսական: Կը նշանակէ այցելու հավիւներ, կրթական տեսուչ, Օժանդակ Միութիւն: Կը հրատարակէ Հայաստանեայց Խկեղեցի պաշտօնաթերթը, կը հաստատէ Ժողովրդական լսարան, Եկեղեցականներու համագումար, և հիմը կը զնէ բարձրագոյն վարժարանի մը՝ պատրաստելու համար ուսուցիչներ և եկեղեցականներ:

Աւելի համազգային բնոյթով գործերուն մէջ նըշանակելի է Հայկական Յանձնախումբի կազմակերպութիւնը որ մէկ տարուան ընթացքին աւելի քան 120.000 տոլար հանգանակած է կարմիր բանակի և պատերազմէ ազիտեալ ազգակիցներու և գումարին 45.000 տոլարը փոխանցուած է Հ. Բ. Ը. Միութեան՝ ափիւռքի կարօտութեանց համար: Սասունցի Դաւիթ Հաւալլերու Զօրախւնին համար ալ հանգանակած է աւելի քան 85000 տոլար: Հանգանակուած գումարին 25000ը Գալիքորնիայէն է: Արբազանը անձամբ նախագահած է և իր ատենախօսութեանց շնորհիւ մեծ մզում տուած է անոնց:

ԳՐԱԿԱՆ.—ԳԻՒՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.— Դրչի այս բազմարդիւն մշակին գրական գիտական երկասիրութիւնները բազմութիւ են: Կը բաւէ յիշել թէ առանձին գրքոյկ-

ներով և հատորներով իր աշխատութիւնները երեսունէն
աւելի են: Խակ գիտական, բանասիրական յօդուածնները ա-
ւելի քան հարիւր, որոնց ցուցակը կազմած է հանգուցեալ
Արտակ եպիսկոպոս, Հաշուելով շատ մը յիշուածնները:

Առաջին յօդուածը գրած է 1890ին, էջմիածնի
Ալրարատ, ամսագրի մարտի թիւին մէջ, Ս. Լուսաւորիչ և
Հայաստանեայց Եկեղեցին վերնագրով, երբ դեռ Սարկաւագ
էր և ուսանող վերջին Լսարանի, արժանանալով Տ. Մակար
կաթողիկոսի Հայրապետական գնահատութեան և օրհնու-
թեան:

Դարձեալ դեռ նոյն Լսարանին ուսանող եղած ատեն,
1889—1890 հաւաքուծ է ժողովրդական բանահիւութեան
նիւթեր, որոնք հրատարակուած են թիֆլիսի հրատարակ-
չական ընկերութեան կողմէ, արժանանալով 300 րուպլի
նուէրի: Այդ գրքերն են Սասմայ Ծուերն և Գերանիներ ծո-
դովլրդական բանահիւութիւնից, որոնք նշանակելի դեր կա-
տարեցին, իրեն ապացոյց ապագայ խոստացող երիտա-
սարդի, ընտարուիլը կովկասեան Բարեգործական ընկերու-
թեան սան, արտասահման զրկուելու: որպէսզի Աստուածա-
բանութիւն ուսանի:

Իր երկերը կարելի է բաժնել չորս խումբերու: —

Ա. — Ժողովրդական բանահիւութեան վերաբերեալ
նիւթերու հրատարակութիւն: Բացի վերոյիշեաններէն Ռու-
սամ Զալ, ուսումնասիրուած և հրատարակուած 1905ին,
բայց ինք զայն զրի առած էր 1889—1890ին:

Բ. — Կրօնական—Եկեղեցական յօդուածներու երկար
շարքը, Մայր Աթոռի Ալրարատանին, Նիւ-Եսորքի «Հայաստան-
եայց Եկեղեցիներն, ինչպէս նաև ուրիշ պարբերականներու
և օրաթերթերու մէջ»:

Գ. — Պատմական—բանասիրական և մատենագրական
ուսումնասիրութիւններ և հրատարակութիւններ, որոնցմէ
յիշտակելի են Խոսրովիկ Թարգմանիչ, Մխիրաց Սանեցի,
Զագականից Ժողովը, Թովմա Մեծոփացու Կեանիք, Մխիրաց
Ալրիվանեցի:

Դ. — Պատմա—Հնագիտական կամ Հայ Արուեստի և

Մշակոյթի վերաբերեալ ուսումնասիրութիւններ, որոնց նըւիրած է Յորելեարը իր ոռ վերջին տասնեակ տարիները։ Ասոնցմէ յիշատակելի են։—

1.—Գրչորեան Արուեսք Հին Հայոց Մէջ՝ նուիրուած Հայ Գիրերու Գիւտի 1500ամեակին։ Այս աշխատութեան պատմական ուսումնասիրութիւնը թէեւ պատրաստ է, բայց տպագրուած չէ։

2.—Մի էջ Հայ Արուեսի եւ Մշակոյրի Պատմութիւնից։

3.—Հաւուց Թառի Ամենափրկիչից։

4.—Նիւթերու Ռւսումնասիրութիւններ Հայ Արուեսի եւ Մշակոյրի Պատմութեան Ա. պրակը տպուած Երուսաղէմ և Երկրորդը գեռ նոր լոյս տեսած Նիւ-Եորքի մէջ։

Բայց ամեննէն ընդարձակ'ն կարեւոր աշխատութիւնն է «Խաղբակեանի կամ Պոօսեանի Հայոց Պատմութեան մէջ», երեք հատոր, առաջինը՝ էջմիածին, երկրորդը՝ Երուսաղէմ և երրորդը՝ Նիւ-Եորք տպագրուած։ Վերջին երկու հատորները պատկուած են Երուսաղէմի թարգմանչաց — Դուրեան մրցանակով։

Երկու գերմաններէն և 4 ռուսներէն փոքր աշխատութիւններէն զատ՝ ունի նաև նոյն լեզուներով գրած կարեւոր յօդուածներ։

Այս բոլոր հեղինակութիւններուն թագն ու պսակը Մանրանկարչական Քարտու մեծածախս գլուխ գործոցը, տպագրել յանձն առած է Լենինկրատի Նիւթական Մշակոյթի Պատմութեան Ակադեմիան։ Զեռագրական Ցիւատակարաններու Հաւաքածոն, երկու մեծ հատոր, պիտի հատարակուէր Մելիքնեան Ֆոնտովի Խաղբակեանի կամ Պոօսեանց առնմի մասին իր երկասիրութեան Բ. և Գ. հատորները հըրատարակուած են Պրիւքսէլ հաստատուած Տիկ. Արմենունի Միսիրեանի ծախքով։

Ամերիկայի Առաջնորդութեան շրջանին ալ՝ իր աշխատութիւններէն զատ՝ մասնաւոր հատորներով հրատարակուծ է հանգուցեալ Խորէն Կաթողիկոսի «Նարականի եւ Հոգեւոր Երգի» հատորը, Արամ Երամեանի «Նոր Զողայի Ժկ. զարու Արմանկարչական Ցոււարձանը, Տօքթ. Յովհ. Մո-


վիկեանի «Հայաստանեայց Ակեդեմիան և Օր. Զապէլ Պօյտաձեւանի «Էջմիածին» թատերգութիւնը՝ անդլիւրէն:

Ամերիկացի անհատներ և հաստատութիւններ ինչպէս օրինակ, Պ. Սթորա անուամբ հրեայի մը հայերէն մէկ ձեռագիրը, Շիգակոյի համալսարանը իր գնահատութեան յանձնած է և Սրբազանը այդ գրչազրին մասին իր գաղափարը յայտնած է: Ուոշինկթընի Free Gallery of Արքառաջարկած է իր հայերէն ձեռագիրներու ուսումնասիրութիւնը տպել, խոսանալով շքեղ, նաև գոնազարդ հրատարակութիւն:

Այնպէս որ իր Ամերիկայի մէջ անցուցած մօտ վեց տարիներու կարճ ժամանակամիջոցին՝ անխոնջ և զիշերաշան տքնութեամբ ունեցած է ճիւղուորուած գործունէութիւն մը, հիացուցիչ և հեւասպառ վազքով, որ պաշտելի գարձուցած է զինքը:

(Պէյրութի «Ազգակրօնական արաթերածին»)





ԳԵՐԾ. ՏԱՎԻՐԵԳԻՆ Ս. ԱՐՔԵՊՈՍ. ՅՈՎԱՆԻԿԵԱՆՑ
Առաջնորդ Հայոց Հիւսիսային Ամերիկայի

Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդ
ԳԵՐ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐՔԵՎՈՅ. ՅՈՎՈՒԹԵԱՆՑ
ԿԱՐՈՂԻԿՈՍ ԸՆՏՐՈՒԵՑԱԿ

Կաթ. Ընտրութեանց Պատգ. ժողովը, շաբաթ և կիրակի. օրերու գումարումներէն յևոյ վերջին նիստը գումարեց երկուշաբթի 10 մայիս 1943 կ. վ. ժամը 4էն 5.50 Անթիւհասի Մայր Տաճարին մէջ:

44 պատգամաւորներէն 5ը կը բացակայէին, որոնց մէ երկուքը իջմիածնի պատգամաւորներ, իսկ երեքը կիրկիոյ թեմէն:

Տեղապահ Տ. Խաղ. Արքեպիսկոպոս Աջապահեանի աշոթքով ժողովը բացուած յայտարարւեցաւ:

Տեղապահ Մըրազանը որ կը նախագահէր ժողովին, ըրաւ իր բարի գալուստի խօսքը, աւելցնելով.

— « Յարգելի պատգամաւորներ, այսօր հոս հաւաքուած Միաբանութեան հրաւերով, գուք տեսաք սեւ քողը որ ծածկեց ամբողջ երկու տարի կաթողիկոսական Աթոռը: Այսօր հաւաքուած էք դուք հոս՝ վերցնելու զայն:

Անցեալի խնդիրները հարթուած են բարեբախտաբար չնորհիւ Արք. Կեդր. Վարչութեան աշխատանքներուն:

Կոչ կ'ընամ ձեզի, ձեր խզճին և զգացութեամբ մօտենալ, ամենայն ողջմառութեամբ հարցին: Ընտրել ամենէն արժէքաւորը որ պիտի կրնայ ստատարել մեծագոյն չափով կիրկիոյ կաթողիկոսարանին ու ազգին բարգաւաճման և ծագկումին: Մանաւանդ պիտի գիտնայ լաւազոյն կերպով առաջնորդել եկեղեցին և մշակոյթը:

Արք, երբ այս խզճամիտ մտահոգութեամբ իւրաքանչիւր պատգամաւոր երկարէ իր ձեռքը քուէատուիին, մենք վստահ ենք որ ան պիտի ըլլայ ազգընտիր ու մենք պիտի կրնանք զայն ողջունել մէկ սրտով, մէկ յոյսով: Յաջողութիւն և կարողութիւն բոլորիդ:

Մըրազանի բացման խօսքէն յևոյ, ժողովի առենապետ Պ. Ֆըստըքճեան հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան

յոտնկայս լռութեամբ յարգել յիշատակը նախկին կաթ . Տեղապահ Եղիշէ Արքեպիսկոպոս Կարոյեանի:

Վերջապէս առենապետը խօսք առնելով, հակիրճ ձեւով մը անցեալ շրջանի պարագաները ներկայացուց անգամ մըն ալ, Սրբազնն Տեղապահն յետոյ, և խնդրեց պատգամաւորներէն, ըլլալ խղճամիտ և արժեցնել իրենց վրայ դրուած յոյսերը : «Ըլլանք միասին բոլորս ու ընտրեալ Գառհակալը ըլլայ ազգընտիր : Եւ հետեւաբար ան ունենայ մեր բոլորին սիրած» :

Պատգամաւորներու ընտրութեան ճշգումէն յետոյ, հարցուեցաւ թէ՝ կիմիածին տեղեակ մնացած է այս օրուան պատգամաւորական ժողովէն :

Տեղապահ Սրբազնը բացատրեց թէ — Մարտ 18ին հեռազրեցի կիմիածին, բայց դժբախտաբար մինչեւ այսօր պատասխան մը չեմ ստացած :

Ասոնցմէ անմիջապէս յետոյ աշխատանքները սկսան եռանուն ցանկի մը պատրաստութեան :

Միաբանութիւնը ներկայացուցած էր հնգանուն ցանկ մը՝ կազմուած

Վեր. Տ. Կաղ. Ա. Արք. Աջապահէնէ

»	»	Եփրեմ	»	»	Տոհմունիէ
»	»	Գարեգին	»	»	Յովսէփեանէ
»	»	Մեսրոպ	»	»	Նարոյեանէ
»	»	Մամրէ	»	»	Սիրունեանէ

Այս միջոցին կարդացուեցաւ Գեր. Տ. Եփրեմ Ա. Արք. Տոհմունիի մէկ համակը պատգամաւորական ժողովին, ուր Սրբազնը մէկ ամփոփ պատմութիւնը ընելէ յետոյ Կիլիկիոյ կաթողիկոսութեան գերին ու անոր արժէքին, կը հըստւիրէր պատգամաւորները, մեծագոյն լրջութեամբ մօտենալ հարցին և անօրինել լաւագոյնը :

Եփրեմ Սրբազն՝ այս ընթերցումէն անմիջապէս յետոյ խնդրեց պատգամաւորներէն զինք ջնջել եռանուն ցանկին մէջէն, հակառակ անոր որ Միաբանութիւնը իր թեկնածութիւնը ներկայացուցած էր :

Պ. Մորլեան խօսք առնելով յանձնաբարեց Պատգ.

Ժողովին և առանուն ցանկի կազմութեան համար որպէս մեր
եկեղեցին լաւագոյն և ամենակարող եկեղեցականը՝ Գու-
րեգին Ա. Արքեպիսկոպոս Յովոէֆեանը, որ իր կջմիածնի
հանդէպ մշակած ամենաողջամբին յարաբերութիւններով
պիտի կրնայ մեծագոյն օգտակարութիւնը բերել այս դա-
զութին, ստեղծելով Հայոթնիքին մէջ և հաս փափաքուած
մթնոլորտը:

Անմիջապէս, գաղանի քուէտրկութեամբ կազմուեցաւ
և առանուն ցանկ մը հետեւեալ ձեւով.

Գուրեգին Արքեպիսկոպոս Յովոէֆեան . 37 ձայնով

Գուրեգին » Խաչատուրեան 31 »

Խադ. » Աջապահեան 30 »

Ասկից յետոյ անդի ունեցաւ վերջին ընտրութիւնը.

Գուրեգին Արքեպիսկոպոս Յովոէֆեան ստացաւ 36 քուէ

Խադ. » Աջապահեան » 2 »

Գուրեգին » Խաչատուրեան » 1 »

Անմիջապէս Մայր Տաճարի զանգակները սկսան զո-
գանջել, սեւ քողը վերցուեցաւ Գանձն ու դպրաց դասը եր-
գեց «Շւրախ լերը».

Եւ Տ. Գուրեգին Արքեպիսկոպոս հոչակուեցաւ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Ընտրութիւնը հեռագրով հազորդուեցաւ Արքազանին Ամե-
րիկա, Երուսաղէմ, Լիճմիածին, այլ կեզրաններ, ինչպէս նույն
Տեղական և Դաշնակից իշխանութեանց:

Գէյրութի մեաթօն, իրիկունը Քրնու, և հայ լեզուներով
ընտրութեան լուրը ձայնափակեց:

2 օրերշաբթի 12 Մայիս 1943

«Զարթօնք» Գէյրութ.

Կիլիկիոյ Նորընիր Կարտլիկուս

Ասկէ չորս շաբաթ առաջ Անթիլիասէն Նիւ—Եորք հասած հեռագիր մը կը ծանուցանէր թէ տեղւոյն Մայր Տաճարին մէջ Մայիս 10ին գումարուած Պատղամաւորական ժողովը միահայնութեամբ կիլիկիոյ կաթողիկոս ընտրուծ է Ամերիկայի Առաջնորդը, Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Յալսէփեանը: Այս լուրը, այնչափ անակնաւնելի որչափ ծափահարելի, հրձուանք պատճառեց ամէն անոնց որ կը շահազրդուուին հայ ժողովրդի ազգային, եկեղեցական և մըշտկութային հարցերով:

Տ. Գարեգին Արքեպիսկոպոս, իջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին անդամ, Մայր Աթոռի Հայրապետական Ընտրելիներու ցանկին գլուխը պիտի գտնուէր անշուշտ, երբ համագումարի օրը հասնէր: Կիլիկիոյ վանական միուրաններուն և թեմական ներկայացուցիչներուն միացեալ ձայնը, սակայն գէպքերուն տուաւ բոլորովին տարբեր ուղղութիւն մը, որ կը խոստանայ բազմազան բարիքներ:

Սովիէթ Միութեան վարչաձեւին ներքեւ Ա. իջմիածնի, կը յուսանք իրեն նախակին գիրքին պիտի արժանանայ, և մինչեւ այդ ցանկալի թուականին բացումը՝ կիլիկիոյ կաթողիկոսարանին վիճակուած պիտի ըլլայ գերագոյն գիրք մը, մեր հոգեւոր, մտաւոր և բարոյական կեանքին մէջ:

Եր երբեմն, ասկէ 60—70 տարի առաջ որ հայ գեկավարներէ ամանց համար՝ Սսոյ կիլիկեան Աթոռը կարծես աչքի փուշ էր: Կ. Պոլսոյ մէջ ունէինք կզերական և աշխարհական մեծաւորներ, որ իրեն իջմիածնի փառքին նախանձախնդիր՝ այդ մասնաւոր կաթողիկոսութիւնը կը նկատէին «Հետաեալ և հակաթոռ», և անոր իսպառ բարձումը կը պահանջէին: Բարեբախտաբար միեւնոյն ատեն գտնուեցան երեսփոխաններ, աւելի՝ հեռատես,— Տոքթ. Նահապետ Ռուսինեանի և Գ. Օտեանի նման, որ զօրեզապէս և յաջողապէս ջատագովեցին Սսոյ Աթոռին պահպանումը, նոյնիսկ իջմիածնի պաշտպանութեան սիրոյն:

Ժամանակն է ուրեմն որ Անթիլիաս վերածուի բարոյական ոյժերու նոր ամրոցի մը: Բարեբախտաբար՝ նոր ընտիր կաթողիկոսն իր անձին վրայ կը միացնէ հոգեկան և իմացական այնպիսի յատկութիւններ որ զինք կը հանդիսացնեն զերազանցօքէն արժանաւոր, այդ պատմական Աթոռին վրայ բազմելու:

Այս ընտրութեամբ՝ Ամերիկայի թեմը պիտի ունենայ մեծ կորուոտ: Ասոր տարակոյս չկայ: Բայց ազգին բարձրագոյն շահը մեզ կը պարագրէ սիրայօժար զոհողութիւն: Նորին Սրբազնութեան ծրագիրներուն ոմանց գործադրութիւնն ալ աւելի դիւրին պիտի ըլլայ հոն թէ հոս: Զորօրինակ և կեղեցականներու պատրաստութիւնը, որ անհրաժեշտ և անյետաձելի պէտք մըն է այլիւս: Յո՞յժ բազձալի է որ Անթիլիասէն մշակներ համանին, ո՛չ միայն Սուրբոյ և Լիբանանի համար, հազար նաև ամբողջ սփիւռքի գաղութներուն բաւարարող: Դարենվանքին ընթացաւարտները կրնան օգտուիլ Պէյրութի ամերիկեան և ֆրանսական համալսարաններէն ալ:

Տ. Գարեգին Սրբազնի երբեմնի առաքելութիւնը իրեւ Հայրապետական նույիրակ, և վերջին չորս տարիներու պաշտօնավարութիւնը իրեւ Ամերիկայի Առաջնորդ, անշուշտ առաւել ևս աճեցուցին իր ծանօթութեանց և փորձառութեանց ճշխ գանձարանը:

Կը մեայ միայն՝ Ամերիկայի հայերուս գնահատական զգացումին դրական ապացույցը:

Մեր ժամանակակից շրջանի մշակութային կեդրոնները — էջմիածին, Երուսալէմ, Վենետիկ, Արմաշ, ևայլն, արդիւնաւոր եղան՝ հնաւոր և մերձաւոր ազգայիններու նիւթական օգնութեանց չնորհիւ: Այս երկրին մէջ ունինք մեծ ու պղտիկ բազմաթիւ ունեւորներ: Կը յուսանք թէ անոնց կողմէ նորընտիր կաթողիկոսին պիտի ընծայուի արժանավայել աջակցութիւն, և հնարաւոր պիտի դառնայ մեր այլ և այլ բարի բազմանքներուն իրականացումը, զեղեցիկ յոյսերուն պատմումը:

Ի բոլոր սրան՝ Նորին Ամենապատռութեան կը մաղ-
թենք երկար կեանք, յաւելեալ կարողութիւն և կատար-
եալ յաջողութիւն։

Խմբագրական
«Հայուսանի Կոչնակրի
1943 Յունիս 12, թիւ 24
Նիւ Եղիշ

Ի Պատիւ Կիլիկիոյ Կարողիկոսին

Առաջնորդ բարձրաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկո-
պոս Յավաշվեանի Քահանայութեան 50-ամեայ և եպիսկո-
պոսութեան 25ամեայ Յորելեանը, որ Ն. Սրբազնութեան
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընտրութեան զուգադիսկեցաւ,
Ամերիկայի մէկ ծայրէն միւսը, բոլոր հայուսատ կերոննե-
րու մէջ տօնուեցաւ պատշաճ հանգիսութեամբ։

Այս նպատակաւ Մարտ 26ին յառակ եկեղեցական
պաշտամունք և նոյն օրուան երեկոյին ալ Յորելինական
ճաշկերոյթ անզի պիտի ունենան Նիւ-Եղիշ մէջ։

Տ. Գարեգին Արքեպիսկոպոս, հայ բարձրատափան
եկեղեցականութեան խոր հմտութեամբ և փորձառութեամբ
ճոխացած ու բազմաշխատ դէմքերէն մէկն է։ Ուր որ գըտ-
նուած է, թողած է բեղուն զործունէութեան յիշատակներ
և արդիւնք; Մեծ եղած է իր նախանձախնդրութիւնը Հայց.
Եկեղեցւոյ շինութեան և ազգույին ու հոգեւոր արժէքնե-
րուն զարգացման ու պահպանութեան մասին։ Այդ տեսա-
կէտով իր կատարած գործը կրնայ անզուգական կոչուիլ։

Իրեւ Կաթողիկոսական պատուիրակ, և ապա Առաջ-
նորդ, անմռուանալի պիտի մնայ Ն. Սրբազնութեան պատ-
կառելի անձնաւորութիւնն և օգտաշատ պաշտօնավարու-
թիւնը այս երկրի հայութեան մէջ։

Հակառակ իր յառաջացեալ տարիքին, ամէն յոդ-
նութիւն անտեսելով, անիկա անընդհատ ու անխռնջ շրջե-
ցաւ թեմերու մէջ գութաց հոն, ուր որ խորհեցաւ թէ իր

Ներկայութեան պէտք կայ: Ասորհուրդով, կարգադրութիւն-
ներով քաջալերեց ու գործունելութեան մղեց ժողովները, և
հոգեշան քարոզութիւններով մխիթարեց ամէնքը: Տ. Գա-
րեգին Սրբազնին մեկնումը կորուսա մըն է Ամերիկայի
հայութեան համար:

Կիլիկիոյ Աթոռին կարեւորութիւնն ու պէտքերն են
որ կը պարտաւորեն համակերպի իր բաժանման:

Բարեգէպ որոշումով մը, Յորելինական հանդէսներու
առթիւ ամէն տեղ սրտաբուխ նուիրատուութիւններ եղան
Կիլիկիան Աթոռին պէտքերուն յանկացուելու համար: Այդ
մասին խօսք ու բացարութիւններ աւելորդ են: Բոլորին
գլուխը կը գտնուի և ամենին կենականն է, ուսիսլ և նը-
ւիրեալ եկեղեցականներու պատրաստութիւնը, որու համար
Ամիրիկայի Առաջնորդութեան շրջանին ալ յարատել մըտա-
հոգ ու հետամուտ եղաւ Տ. Գարեգին Սրբազն:

Անթիլիաս արդէն ունի իր Դպրեվանքը, որ տարա-
կոյս չկայ թէ իր Կաթողիկոսութեան օրով, յատուկ հոգա-
ծութեան առարկայ պիտի ըլլայ ու արդիւնաւորի ամէն
տեսակէտով, և արժանաւոր մշակներ պիտի հասցնէ Հայց.
Եկեղեցին: Շատ գաղութներ իրենցմէ ակնկալուոծ զումա-
րէն աւելին գոյացուցին, և իր սրտին այնքան մօտիկ նը-
պատակի մը օժանդակութեամբ մեծարեցին Նորին Սրբազ-
նութիւնը: Կարգն ու խօսքը այժմ Նիւ-Եորքի հայութեանն
է: Զենք խորհիր որ պէտք է անոնց պարզել ու յիշեցնել
իրենց պարտականութիւնը:

Խմբազրաման

«Հայաստանի Կոչուակը»

1944 մարտ 25 թիւ 13

Կիւ Եորք

Միծի Տաճան Կիլիկիոյ Ազգական Կրդ Դարեկին Յովսէփիանցի **Պ Ա Տ Գ Ա Մ Բ**

Մըքազան Առաջնորդի Վերջին Խօսքը
Յոբելենական Հանդէսներու Փակման Առքի.

Այսօր վերջին հանդէսն է կատարւում մեր Յորելինական տօնակատարութենների: Պարտականութիւն ունինք շնորհակալութեան խօսք ուղղել մեր Ժողովուրդին, որ առաւելին գնահատութեամբ մասնակից եղաւ և հանդէսներ կազմակերպեց մեր բոլոր փոքր ի շատէ հայաշատ քաղաքներում Նիւ-Եորքից մինչեւ Կալիֆորնիա:

Մեր շնորհակալութիւնը Երեսփոխանական ժողովին և կեդրոնական վարչութեան, որոնք այս տօնակատարութեան յացողովն ու կարգադրողը եղան: Շնորհակալութիւն Նիւ-Եորքի կեդրոնական Յանձնաժողովին և բոլոր քաղաքների Յանձնաժողովներին, որոնք ջերմեանդ սիրով կազմակերպեցին և կատարեցին հանդէսները, ստանալով և ժողովուրդի սրտաթօւխ նուէրները յօդուտ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի և նրա Դպրեվանքի, որի համար հաշիւ կը տրուի մամուլի մէջ: Շնորհակալութիւն ճառախօսներին և արուեստագէտներին, որոնք իրենց մասնակցութիւնը բերին այս հանդէսները դարձնելու հետաքրքրական և դաստիարակիչ:

Մենք կարող ենք այս բնմից յայտարարել, թէ առանց բացառութեան այս հանդէսները եղան արդիւնաւոր նիւթապէս և բարոյապէս, յուզիչ և շինիչ՝ կեանքի համար:

Մեր շնորհակալութիւնը ունինք յայտնելու նաեւ Մամուլին, որ իւր էջերը լայն բաց արաւ գնահատական յօդաւածների, հանդէսների նկարագրութեան՝ նպաստելու համար գործի յաջողութեան: Շնորհակալութեան հետ կը կամ հնայինք մեր վերջին խօսքն արտասանել այստեղ հաւաքուած ժողովուրդին, ուղղուած նաեւ մեր Ամերիկայի և Սփիւռքի հայութեան:

Հարուս անցեալ ունի հայր

Ամենայն ազգ զօրաւոր է, իր բնակուած է իւր Հայրենի երկրի մէջ։ Առանց Հայրենիքի կարող չէ ոչ մի ազգ հաւաքական ամբողջութիւն, պետական, եկեղեցական և մըշակութային կեանք և ընդհանուր պատկեր ստեղծել։ Եթէ պատմական ձախորդ պայմանների հետեւանքով հայրենագուրի դառնայ և ցրուի այլ և այլ ազգերի մէջ՝ կը կորունցնէ հետզհետէ իւր դէմքը, մարմնաւոր և հոգեւոր առանձնայատկաւթիւնները։ Բայց կարող է նոյն իսկ այզպիսի պայմանների մէջ պահել իւր գոյութիւնը՝ եթէ ուժեղ է եղել նորա անցեալը ու ստեղծագործութիւնը հոգեւոր կեանքի մարզի մէջ և գիտակցութիւն ունի այդ մասին։ Այզպիսի մի ազգ է օրինակ՝ Հրեայ ժողովուրդը։ Գիտակցութիւնն ու ստեղծագործական կեանքը, մշակոյթն ու արուեստը, կրօնն ու լեզուն՝ մայրն է յարտահետութեան և նորա յաւիտենականութեան։

Այդ մասին բարերախտ կարող ենք մեզ համարել որ հարուստ անցեալ ունինք, քաղաքականապէս ոչ հզօր, ոչ տիրապետութեան և աշխարհակալական տենչերով տարուած, բայց հզօր մեր ստեղծագործութեամբ, լեզուով, գըրականութեամբ, արուեստով և եկեղեցական ուրոյն կեանքով։

Ինչպէս անհատը մեռնում է, ազգն ալ կարող է մեռնիլ։ Բայց ինչպէս անհատը իր կեանքով, ձգտումներով, գործով կարող է անմահանալ, այնպէս էլ մի ազգ։ Անհատկան հոգու, անձի անմահութեան գաղափարն ու հաւատը՝ աղբիւրն է և հաւաքականութեան, յարատեւութեան գաղափարն ու ձգտումն է։ Մարդուն չի բաւարարում միայն արտաքին կեանքի տեւողութիւնը։ Մեր մէջ մի տենչ կայ ապրելու, ապրելու երկրաւոր կեանքի սահմաններից էլ գուրու կամենում ենք մեր յիշատակը անմոռաց մնաց, յաւերժ և գնահատելի։

Ազգը կը յարատեէ երկ...

Ինչո՞ւ ենք բարիք գործում, դպրոց հիմում, եկեղեցի լինում, գիրք տպում, քարոզում, գրում, նիւթական

զոհողութիւններ անում, որովհետեւ հաւատում ենք, որ դրանով, մեր և մեր շրջապատի յարատեւութեան, պայծառութեան օգտին ենք ծառայում, կատարելութեան, յաւետենականութեան ճանապարհին։ Այսպէս է հաւաքական կեանքի մէջ։ Ինչո՞ւ էք հուաքուել այս տեղ, ի՞նձ համար Ո՞վ եմ ես. Արցախի մի յիտին գիւղում ծնած մի աղքատ ընտանիքի զաւակ։

Զեզ բերել է ազգի և եկեղեցու ծառայութեան, նորա պայծառութեան և յարատեւութեան գաղափարը, որին կարծում էք, թէ մենք օգտակար ենք եղել մեր կարողութեան չափ։ Այո՛, ինչպէս անհատը մեռնում է մարմնով, ազգն ալ կարող է մեռնիլ։ Ո՞ւր են հին Եգիպտացիք, Հիստիտները, Ասորեստանցիք, Յոյներն ու Հռոմայեցիք։ Մեռել են նրանք, մեռել են մարմնով, բայց անմահ են հոգւով։ Նոյնիսկ այդ մեռած ազգերը կարող են յարութիւն առնել և ներգործել մեր հոգիների վրայ, գաստիարակել, ուսուցանել մեզ։

Սորանից հարիւր, հարիւր յիսուն տարի առաջ ի՞նչ զիտէինք մենք Եղիպտացիների, Հիստիտների, Ասորեստանցիների, և Բարելացիների մասին։ Նինուէի աւերակները ծածկուած էին աւազով և հողով, ուր հովիւներն իրենց հօտերն են արածում, բայց գիտնականների կատարած պեղումներով՝ աղիւսէ ընդարձակ մասնակարաններ գտնըւեցան, ուր նրանց կեանքը, կրօնն ու պատմութիւնն է արձանագրուած։ Տքնաջան գիտնականներ կարգացին Եգիպտացիների հերուլիֆները, Ասորեստանցիների բեւեռագիրները, ուսումնասիրեցին նրանց գրականութիւնն ու արուեստը, կրօնը և անյայտութեան մէջ կորած ազգերը յարութիւն առին և խօսում են մեզ հետ։ Համարսարանների մէջ աթոռներ կան սահմանուած այժմ այդ ազգերի պատմութեան, կրօնի և քաղաքակրթութեան մասին։

Եւ այսպէս, ազգերի տաեզծագործութիւնը հոգեւոր, արուեստը, կրօնը յաւիտենական արժէքներ են և յաւիտենական երաշխիքներ են նրանց համար։ Նրանց թողած աւերակները, քանդակներն ու արձանները, պապիւրոսի կամ

մաղաղաթի վրայ գրութիւնները, քարի կտորներ չեն, անշունչ նիւթ, այլ խօսուն, հրաշալի և յուզիչ լեզուվ, երգ ու նուագ, սրտի ամենանուրը լարերի վրայ երգուած: Ասորեստանեայց կրօնական սազմոսները իրենց վսեմութեամբ և խոր կրօնականութեամբ յետ չեն մնում Դաւթի անունով մեզ հասած Խորայէլի ամենագեղեցիկ սազմոսներից: «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ զողացայց», կամ «Տէր հովուեսցէ դիս, և ինձ ինչ ոչ պահասեսցի»:

Մեր աշխերը սեւեռած են...

Մեր ազգը, գոհանալ կարող ենք, որ մեռած չէ, ճշգակառ եղած բախտի հարուածների տակ, բայց ոչ արմատախիլ եղած: Մեր Հայրենիքի մի կարեւոր մասը, Խորհրդային Հայուսատանի սահմանների մէջ, Աստուած շնորհնել է մեզ, թէեւ ժողովրդի երկու երրորդ մասն ապրում է Հայրենիքից գուրս: Դորա կէսը ցրուած է Պարսկաստանից, ինչաքից սկսած մինչեւ Ամերիկայի արևեմեռան սահմանները: Ի՞նչպէս պէտք է պահպաննենք Սիփիւռքի, գրեթէ միլիոնի չափ Հայութիւնը, մի խնդիր է ազգային տեսակէտով որ զբաղեցնում է մեր մտքերը և մտահոգութիւն պատճառում ամենիքս: Եկեղեցին, Բարեգործականը, մամուլը, կուսակցական կազմակերպութիւններն և հայրենակցականները, իւրաքանչիւրը իւր շրջանի մէջ և իւր տեսակէտով մըտահոգուած է այդ խնդրով, ազգապահպանութեան նուրիւական խնդրով:

Ամենից առաջ, մեր աշքերն ուղղուած են զէպի ի. Հայուսատան, որ օրէ ցօ'ր զարգանում է նիւթապէս և իուրաւրատպէս, ծաղկում շինարարութիւնը նիւթական և անտեսական, զբական-գեղարուեստական մարզերի մէջ, և այժմ էլ լարած իւր բոլոր ուժերը Խորհ. ուրիշ ազգերի հետ, մաքառում է իւր գոյութեան պահպանութեան և ազատութեան ապահովութեան համար: 'Նա' և մեր կենդանութեան աղբիւրը եւ յարաւեւթեան երաժիշտը. բայց մենք այլ մեր անելիքն ունինք, մեր գժուար պարտականութիւնը, այս ցրուած հայութեան զանազան պետութիւնների և ազ-

գութիւնների մէջ, ենթակայ են նրանց լեզուի, օրէնքի և
քաղաքակրթութեան զօրեղ ազգեցութեան, միութեան, ամ-
բողջական գաղափարը պահել: Նախ և առաջ մենք պար-
աւոր ենք հաւատարիմ և օգտակար քաղաքացիներ հան-
դիսանալ այն երկիրներին, որոնց հիւրբնկալութիւնն ենք
վայելում, բայց և պարտականութիւն ունինք հաւատարիմ
մնալու այն գարաւոր ժառանգութեան, որ ստացել ենք
մեր հայրերից, որ մեր լեզուն, է, մեր գրականութիւնը, մեր
ժամկոյթն ու պատմութեան գիտակցութիւնը, մեր ազգա-
յին եկեղեցին, մի խօսքով՝ մեր հոգեւոր Հայրենիքը:

Հայ հողի եւ Զրի մասին

Հայ ժողովուրիցք հայրենի հոգի և ջրի մասին մի
գեղեցիկ աւանդութիւն ունի հիւսած: Արշակ Բ., երկար
պատերազմներից յետոյ յաղթուած պարսից Շապուհ թու-
զաւորից և զերի ընկած, կանգնեցնուամ են յաղթողի գանի
առաջ: Արշակ խօսում է հեզութեան և խոնարհութեան լեզ-
ուով և յայտնում, որ կը կատարէ յաղթողի կամքը, կը լի-
նի հնագանդ ըստ ամենայնի նորա հրամաններին, եթէ ա-
զատ արձակէ իրեն:

Բայց խորհրդականներին լսելով, Հայաստանից քե-
րել է տալիս երկու քեռ հոգ և երկու սափոր ջուր. հոգը
փռում գահոյքի առաջ և ջրուն էլ որսկում վնրան:

Եւ երբ հարցաքննութեան էր ընթուած գերի թագու-
սորը, խօսում էր զարձեալ և պատրաստակամութիւն յայտ-
նուամ ենթարկուելու նորա բոլոր հրամաններին, բայց հէնց
որ աննկատելի անցնուամ էր հայ հոգի վերայ, սկսում էր
խրոխտալ, Շապուհին համարելով իւր ազգական Արշակու-
նիների գանի յափշտակիչ, և պատուիրում էր իշնել գանից,
որ վայել էր իրեն նստել:

Ահա՝ հայրենի հոգի և ջրի սիմպոլիկ նշանակութիւնը
ժողովրդական այս գեղեցիկ նշանակութեամբ:

Մեր նպատակը

Բայց անցնինք մի քանի խօսք ևս մեր պաշտօնի

հետ կապուած խնդիրների վրայ: Խնչո՞ւ ենք յանձն առել
կիլիկիոյ կաթողիկոսութեան ծանր և գժուարին պաշտօնն
ու Աթոռը: Մենք չենք գնում այստեղ մեր ծերութեան
օրերը հանգիստ վայելելու. մենք գնում ենք այստեղ մի
նոր կեանք սկսելու, աւելի ճիշդ մեր վերջին նախորդների
Տ. Առաջի, Բարզէն և Պետրոս կաթողիկոսների օրով ըսկը-
սած կեանքը բարգաւանելու:

Մեր նպաստակն է Անթիլիսափ կաթողիկոսարանը կը-
րօնական կեդրոնի հետ, եթէ կամենոյ Աստուած, գարձնել
և մշակոյթի կեդրոն լոյն հասկացողութեամբ: Աւենիալ
արդիսկան ապարան, ուր ոչ միայն մեր «Հասկը» տրպա-
գրուի, այլ և գրական-գեղարուեատկան գրքեր, մեր Միա-
րոնների և գրսի բանաէրների և գրական աշխատաւորնե-
րի գործեր: Մեր նպատակն է կաթողիկոսարանի դպրեանքը
գարձնել բարձրագոյն դպրոց, որի սաները ժամանակի պա-
հանչների համաձայն բարձր ուսում ստանան, ազգային եկե-
ղեցական տաճանաների մէջ, որպէսզի այնտեղից մենք կա-
րողանանք պատրաստաւած վարդապետներ, քահանաներ և
ուսուցիչներ ստանալ, մեր ազգային եկեղեցական անդաս-
տանների համար մշակներ: Մենք կը կամենայինք մեր կա-
թողիկոսարանը հոգեւոր մի շարժման կեդրոն գարձնել
Սփիռքի հայութեան համար: Պատմական գժուար հանգա-
մանքների թերթամբ, մեր եկեղեցին այսօր պատրաստուած
պաշտօնայի մեծ կարիք ունի, և այդ ոչ միայն Ամերի-
կայում, այլ և մեր միւս գաղութեանու մէջ քահանայացու-
ներ հասցնել մեր եկեղեցիների համար, և ուսուցիչներ մեր
գորոցները բարեկարգելու կամ բազմացնելու, հրատապ
խնդիր է ներկայացնում: Եւ այսպէս անսահման ասպարէզ
կայ բացուած մեր առաջ, եթէ աջակիցներ ունենանք եթէ
ազգը մեզ աջակից լինի և Աստուած օրհնէ մեր գործը:

Մենք կամենում ենք ձեր տուած նուէրներով Կիլի-
կիոյ Աթոռը՝ կրօնականի հետ՝ լուսաւորութեան ու ջերմու-
թեան «Օջախ» գարձնել:

Աստուծոյ շնորհն ու օրհնութիւնը ամէնքիդ, վերայ:
«Հայաստ Եկեղեցին»
Նիւ-Նորը

Մեծի Տաճին Կիլիկիոյ Արժանիքիցիր Վեհափառ Կարողիկոսը

Ամբողջ երեք տարի Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ս. Աթոռը սեւապատ և թագուր մնալէ վերջ, Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ծնարելնաց Պատղամաւորական Ժողովը ամենալաւոզոյն և պատշաճ կարգադրութիւնն էր որ ըրաւ, և Կիլիկիոյ Ս. Աթոռին համար կաթողիկոս ընտրեց Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Գարեգին Ս. Արքեպիսկոպոս Յայտչիկանցը՝ ամենանմատ, անրասիր, և միջազգային համբաւի արժանացած բարձրաստիճան եկեղեցականը: Կաթողիկոսի ընտրութիւնն վերջ, հեռագրով ամէն կողմ աւետուեցաւ բերկրասիթ լուրը և մեծ ցընծութեամբ: Անթիվասի մայր Տաճարին, Լիքանանի և Սուրբոյ եկեղեցիներուն զանգակները զօղունցըցին: Նորընամիր վեհափառ կաթողիկոսը՝ ընդունած ըլլաւը հեռագրով ծանուց, և էջմիածնայ Ամենույն Հայոց կաթողիկոսութեան Տեղակալը և չնորհաւորեց կաթողիկոսական ընտրութիւնը: Եւ ըստ Ամերիկան անգեկատու գիւանին յայտարարութեան, յառաջիկայ աշնան ակիցըը, վեհափառ կաթողիկոսը, Գեր. Տերենիկ վարդապետին հետ պիտի ժամանէ Անթիվաս, բարձենու համար Սահակ Խապայեան, Բարզէն Կիւլէսէրեան և Գեարս Սարանեան կաթողիկոսներու Ս. Աթոռին վրայ:

Շատ հաւանական է որ, վեհափառ Հայրապեար Եղիպատոսի զծով եկած տաեն ընդունելութեան առաջի բաժինը պիտի առնէ եղիպատոնայ զաղութը և Անթիվաս ժամանելէ վերջ ևս Լիքանանի և Սուրբոյ հայութիւնը մեծ և ըստանչելի ընդունելութիւններ պիտի կազմակերպին: Անթիվասի Մայր Տաճարին մէջ թագաւորավոյցի օծում տեղի պիտի ունենայ օտար բարձրաստիճան հրաւիրեալներու ներկայութեան: Ճառեր, ծախողջոյններ իրարու պիտի յաջոր-

գին, գովասանքի խօսքեր և ամէն ինչ անթերի կերպով
տեղի պիտի ունենան. առոր համար ընու կասկած չունինք,
որովհետեւ ճառ խօսելու և ընդունելութիւն ընելու համար
ամենաամեն մրցանիշին արժանացած ենք մենք՝ Հայերս:

Բայց պէտք է զիտնալ որ, ճառերու և խօսքերու
պահերը շատ շուտով կ'անցնին. ամենակարեւորը այն է որ,
այդ ցնծառանգէսները անցնելէն վերջ, ազգովին բոլորուինք
արժանընտիր նոր կաթողիկոսին շուրջը, թեւ և թիկունք
հանդիսանալու համար Ն. Վեհափառութեան:

Որովհետեւ կատարուելիք շատ գործեր կան. բարո-
յական և նիւթական օժանդակութիւն ամէն կողմէ, այն ալ
սրատրուի և ազգասիրար որ, կ'ողեւորեն կաթողիկոսը և
գործը կ'ըլլայ արդիւնաւոր:

Ելբանանի և Սուրբոյ Հայութեան անձանօթ գէմք
մը չէ Յալսէփեանց կաթողիկոսը: Ն. Արքազնութիւնը, իրը
Ամենայն Հայոց կաթողիկոսական պատուիրակ, Ամերիկա
մեկնելէ առաջ երկար տան մեոց մեր մօար, քարոզեց, խօ-
սեցաւ Ելբանանի և Սուրբոյ կեդրոն քաղաքներու եկեղեցի
ներուն և լսարաններուն մէջ. մեծ անուն և յիշատակներ
ձգելէ վերջ բաժնուեցաւ, և երկար տարիներէ ի վեր իմաս-
տուն և խաղազ կերպով կը վարէ Ամերիկանայոց Առաջ-
նորդական, եկեղեցական և կրթական գործերը, և իրեն
վարչազիստկան կարողութիւններուն համար արժանացած
է բոլորին համակրանքին:

Բացըորշ է որ, Ամերիկանայոց համար շատ գժուար
պիտի ըլլայ բաժնուելի իրենց սիրելի և հայրագործ Առաջ-
նորդէն. բայց մարդ է որ զարձէ զերկիր: Կելիիկիոյ Ա. Ա-
թուր պէտք ունի ներկայիս քաջ և անձնուեր հայուապեսի
մը, իրեն մականին տակ տանելու համար ժաղավորդ մը, և
այս մասին շատ մեծ բաներ կ'ապասուին Յալսէփեանց կա-
թողիկոսէն:

Յալսէփեանց կաթողիկոս իրաւամք ճանչցուած է
զրչի և մտքի տէր կարկառուն մի եկեղեցական, բազմա-
թիւ հասարաներու հեղինակ, մանրանկարչութեան. հազի-
տութեան և բանասիրութեան քարպետ, և մենք այն հաս-

տատ համոզումը ունինք թէ՝ նոր կաթողիկոսին համար ամենալաւագոյն դաշտը պիտի ըլլայ հայ ժողովուրդը, անոր որտին մէջ ցանելու համար եկեղեցասիրութեան ոզգուսիրութեան, կրթասիրութեան և սիրոյ սերմերը՝ առաքացած, հասկեր կարենալ առաջ բերելու համար, որպէսզի ժողովուրդը կապուած մնայ իր փարախին, աջ և ձախ չթերելու համար։ «Հովիւ քաջ զանձն զնէ, ի վերայ ոչխարաց»։

Այս բոլոր բաները որ կ'ակնկալինք Յովոէփեանց կաթողիկոսէն, կրօնան իրականանալ, երբ հայ ժողովուրդը եւս՝ Մերձաւոր Արեւելքի և արտասահմանի, իր կարելին չզլանայ, Ն. Վեհափառութեան վաստանուած, Կիլիկիոյ պատմական և պատուական Ս. Աթոռը կանգուն և անուական կարենալ պահելու համար։

Անթիլիստի կիլիկիոյ կաթողիկոսարանի նիւթական բոլոր շէնքերը իրենց յարմարութիւններով և կաթողիկոսութեան մը վայել՝ արգէն պատրաստ են, կը մնայ բարույական շէնքին կառուցումը՝ նոր և զարգացեալ Հոգ. Հովիւներ պատրաստելու։ Վանք մը՝ որուն համանիին առկ, Բարգէնի և Շահէի շունչով պատանիներ հասուկ առին և առաքացան, պէտք է որ նոր շրջան մը ևս սկսի նոր կաթողիկոսին հովանիին տակ։

Ս. Լուսաւորչի պլազմազաղ կանիմեզը պէտք է անմար մնայ, անա՛ այս է մեր բաւն բազմանքը։ Առ այս, ի սրաէ ուժ, կարողութիւն և արեւշատութիւն կը մազթենք Մեծի Տանն, Կիլիկիոյ արժանիքների Շնորհազարդ Տ. Տ. Գարեգին Յովոէփեանց կաթողիկոսին։

Հոգ. Հովիւ Հայոց Զանկէի
ՄԱՃԹՈՑ ՔՀՆՅ. ԱՄԿԵՐԻՉԶԵԱՆ

«Հայաստանի Կունակը
1948 թիւր. 11, թիւ 50
Նիւ-նորը

«Տերը իր Հիւ»

Առլանտեանի ալիքներուն հետ խաղացո՞ղ թէ անոնց զէմ կոռուզ նաւու մը վրայ է, այս տողերը զրուած պահուն, կիլիկիոյ ընտրեալ կաթողիկոս Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէվինան:

Երկո՞ր առու այս լուրը հաղորդելու համար, երկար՝ համբերութիւնը ապառելու և փորձի զարնելու աստիճան անոնց, որ զինքը ընտրած էին և վայրկեանները կը համբերին զինքը իրենց մէջ տեսնելու համար, մինչդեռ վայրկեանները ամիսներու, ու նոյնիսկ տարիի կը փոխուէին և ընտրեալ կաթողիկոսը տակաւին իրենց մէջ չէր:

Իրողութիւնը որ ան մեկնեցաւ, ամենէն մեծ ապացոյցն է թէ Գարեգին Արքեպիսկոպոս ինք պատասխանառու չէր այս փորձիչ ուշացումին. իր կարողութենէն վեր ազգակներ ու հանգամանքներ միջամտեցին այդ կացութիւնն առեղծելով, և անմիջապէս որ ատոնք յաղթահարուեցան, ան մեկնեցաւ, և վատան ենք մեկնեցաւ կոկանքի մէջ անոնց պէս որ այլեւս զինք չեն տեսներ հիմա, չեն լսեր իր խօսքը, չեն զգար իր առինքնող անհատականութենէն ծարող ընթարութիւնը, և իր սեփական խանգավառութեան մէջ որ այլեւս կրնայ երթաւ դէպի դաշտը՝ ուր պիտի պատկուի իր երկարաւուեւ ծառայութիւնը այս ժողովուրդին, որքան անոր եկեղեցին, նոյնքան անոր քաղաքական ճակատագրին, նոյնքան անոր մշակոյթին, բանասիրութեան, պատմութեան:

Հազուագէպ է որ մարդ մը այդքան յառկութիւններ միացնէ իր վրայ, բայց իրողութիւն է որ էջմիածնի գիտուն ու անվեներ Միաբանը որ հիմա կիլիկիոյ Աթոռը ըարձրանալ կ'երթայ, այդպէս էր: Ժամանակակիցներու համար աւելի գիւրին է չափազանցել ամենափոքր թերութիւններուն հետ: Կիլիկիոյ ընտրեալ կաթողիկոսը իր ետին

ձգեց այդ տեսակ արձագանգ մը. բայց պատմական հայեւին իրաւունք առաջ է անաչառ զատողներուն որ զինքը տեսնեն հիմա, Աղլանտեանի մէջ նաև արկողներուն վրայ, առրուած իր նոր պարտականութեան որքան հոգերավ նոյնքան փայլուն երազներովը։ Հիմու ան սորսուան ու տենչանքն չափանիշին զոր Ներսէս Շնորհալիներուն հաստատուած են իր գրաւելիք Գահին համար, և որդիական պարտականութեան մը խարազանը Ներսէս Աշտարակեցիներու Գահին հանդէպ, որուն շուքին տակ առաւ իր առաջին կրթութիւնը և ուսացաւ ու մեծացաւ զրուելով ազգային առաջնակարգ դէմքի մը տեղը։

Այդ երկու զգացումներուն միջնեւ ան վազը պիտի գտնէ իր երջանկութիւնը, տալով ուղղակի ծառայութիւնը իր Աթոռին և անուղղակի ծառայութիւնը Մայր Աթոռին, և Հայ ժողովուրդը անգամ մըն ալ երջանիկ պիտի ըլլայ տեսնելով այդ տեսակ ծառայ մը իր պատմական Աթոռին վրայ, այս տեսակ շրջանի մը մէջ,

Այս վստահութեամբ «Պայրար» կ'ըսէ. «Տէրը հետը» Հայ ազգի և Հայ եկեղեցիի այս արժանաւոր զաւկին։

«Պայրար» Ամերիկա
1945 Յունվար 24

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Դեպի Էցմիածին

Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Ամերիկային եզիստու նամբուրդուրեան ընթացքին, ծովու վրայ գրի առած է իր խորհրդառութիւնները և թելադրութիւնները ու յանձնած եզիստահայ մամուլին։

Գերազույն խորհուրդը, Տէր Տեղակալի գլխաւորութեամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընարութիւնը նշանակել է գարունը կամ գարնան վերջերին։ Որքան էլ շատերին կարելի է, քիչ անյարմար թուի, պատերազմական

այս թու ու բոհի ժամանակ այսպիսի մի գործի ձեռնարկել, և միջոցն ալ կարճ համարել նախապատրաստութեան համար, բայց երբ այդպիսի մի որոշումն է եղել, անշուշտ, իր հիմնաւոր պատճառներն ունի և մենք պէտք է օգտըւինք զեղեցիկ պատեհութիւնից:

Շատ երկար ժամանակ է Ամենայն Հայոց կաթողիկոսի Աթոռը թափուր է, Եպիսկոպոսներ Մայր Աթոռում չկան, եղածները ցրուած են թեմերում, քիչ են և միարանները: Եկեղեցու Պետք ներկայութիւնը կարող է զգալի չափով մեզմել այս վիճակը: Ապա ի վաղուց ծրագրուած են և ուղանի վրայ դրուած նաև ներքին բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ, որոնք լուծման են սպասում: Նախընթաց պատերազմից յետոյ շատ են փոխուել պարագաները, որ պիտի նկատի առնուին: Այս և այսպիսի բազմաթիւ պատճառներ սովորված են դարձնում Աղքային-եկեղեցական ժողովի դումարումք:

Արդ, ի՞նչ ունինք ժաղավից առաջ կատարելու: Նախ, Առաջնորդի հետ որ ի պաշտօնի իրաւունք ունի մասնակցելու ժողովին, պիտի ընարուին մի կամ աւելի աշխարհիկ պատգամաւորներ, թեմի մեծութեան համեմատ: Պէտք է մատծել պատգամաւորների ճանապարհածախսի՝ համար, որ պիտի հոգան ժողովուրդն ու եկեղեցիները, եթէ պատգամաւորներուն իրենք յանձն չառնեն կամ չկարողանան իրենց գրաբնից հոգալ:

- Բայց ո՞յլ բաւական չէ: Յայտնի է Մայր Աթոռի նիւթական վիճակը, զնացող Եպիսկոպոսներն ու Պատգամաւորները պէտք է մատծեն ոչ միայն թեթեցնելու Մայր Աթոռի վրայ ընկնելիք ծախսերը, ընդունելութիւն, հիւրասիրութիւն և այլն, այլ և օգնել՝ նրա անձուկ վիճակն ի նը-կատի ունենալով: Արտասահմանի թեմերից Հիւսիսային եւ Հարուային Ամերիֆայի երեք թեմերը, Եղիպտոսի հետ ընականաբար, ծանրութեան մեծ մասը իրենց վրայ պիտի առնեն, ապա Երուսաղէմի, Իրաքի և Պարսկաստանի երկու թեմերը նոյնպէս, իսկ Ֆրանսայի և Բալկանեան գետութիւնների թեմերը ըստ հնարաւորութեան և կարողութեան:

Դալով կիլիկիոյ կաթողիկոսութեան, մեր ի սրտէ ցանկութիւնն է, մի քանի եպիսկոպոսներով մասնակից լինել ընտըրութեան և ժողովին։ Մեր թեմերից միայն Հալէպն ու Բէյրութն են և պէտք է մասնակից լինեն այդ ծախսերին։ Դամակոսն ու կիպրոսը նուազ չափով։

Փոքր ինչ յաջող պայմաններում, ուզում ենք առել՝ ոչ-պատերազմուկան՝ առ բաւագոյն առիթն էր, ոչ միայն պատգամաւորներով այլեւ հայրենաբազմ անհամաների խըմքերով ուխտի զնալ դէպի Ա. Հայաստանը և դէպի Հայաստանեայց եկեղեցու հինուուրց Մայր Աթոռը, հարուստ պատմական, և սրբազան յիշատակներով։

Ուրախ ենք և շատ երախտապարտ Ա. Հայաստանի կառավարութեան որ լայնախոն կերպով արտօնել է այսպիսի գժուարին պայմանների մէջ անգամ կաթողիկոսուկան ընտրութիւն կատարել, զիւրութիւններ ընծայելով, անշուշտ պատգամաւորների ճանապարհորդութեան համար։

Պէտք է օգտուիլ այս զեղեցիկ պատեհութիւնից եւ ըստ կարելոյն մեծ թուով զնալ, անսնել աւերակների տուկից նոր զերակենդանացող Հայրենիքի վերելքը, մշակութային ամենատեսակ հաստատութիւնները; Համաշխարհ, մասնագիտական, երկրորդական և ժողովրդական գպրոցների ծաղկումը, հայ գրականութեան, արտևեստի այլ և այնիցից ճարտարապետութեան, երաժշտութեան, նկարչութեան, արձանագործութեան նոր և յառաջադէմ ընթացքը։ Տեսնել պետական կեանքով ապրիլ սկսող ժողովուրդի կենցազը, քաղաքների վերաշնուրմ ու յարդարումը։ Ամէն տեսակ հաստատութիւնների մէջ, գպրոցներում, խանութներում ամենուրեք տեսնել մայրենի լեզուի տիրապետութիւնը, որպիսի ուրախութիւն է հայրենասէր անձերի համար։

Պակաս ուրախութիւն կը լինի⁵ տեսնել մեր թանկագին Հայրենիքի բնական զեղեցկութիւնները՝ Արարատն ու Արագածը, Արարատեան դաշտի և երկրի երփներանդ և թուզիչ տեսարանները՝ շուրջը պար բռնած լեռներով, տեսնել բարձունքների վրայ Հայաստանի ամենամեծ զեղեցկու-

թիւնից մէկը՝ Անեանայ լիճը։ Ապա նախնեաց թողած չէն կամ աւերակ, բայց միշտ խօսուն կոթողները, նրանց սահզ-ձագործութեան և բարեպաշտութեան կենդանի վկաները, Զուարթնոցը, Հախիսիմէի զողորիկ վանքը, Գեղարդացայ վի-մափորները, Գոռանիի Տրդատայ թախար Յունա-Հռոմէական ոնոլ։ Անիի աւերակները գոնէ հեռուից անոնելով, իւր անմասն մայր եկեղեցիով և հրաշալի, բարձր աշտարակնե-րով պարիսպները, Զորագետի Հաղպատան ու Սանահինը իրենց բազմանեսակ չէնքերով և կատարած գերով մեր արուես-տի, զրչութեան և մշակոյթի պատմութեան մէջ։

Որպիսի խորը իրական ապուորութիւններով և ան-զեկութիւններով կը վերագառնան նրանք իրենց անզերը՝ զեկուցումներով, յօդուածներով, և առօրեայ խօսակցու-թիւններով ընթերցողների և ունկնդիրների մէջ պայծա-զիսակցութիւն և նորա հետ կոպուած զգացմունք զար-թեցնելով զէպի Հայրենիքն ու Եկեղեցին։

Բայց զազութերից զնացած պատգամաւորների ներ-կայութիւնը ընտրութեան և ժողովին, կունենայ կարեւոր նշանակութիւն և Հայաստանի հայութեան համար։

Նոքա կը զգան և կը անսնեն մեր եղբայրական կա-պը ազգի ամբողջութեան հետ, որի արմատն ու բոյրը Հայ-րենիքի հայութիւնն է բայց նուե հաւատացնալ հայութեան համար, եկեղեցու Միութեան անուակէտով։

Հաւատացած ենք, որ մեր պատգամաւորների ներ-կայութիւնը Երեւանում, Էջմիածնում անսահման ուրա-խութեան և ոգեւորութեան պատճառ կը լինի և բուն Հայ-րենիքի հայութեան համար։

Աւրեմ զէպի Հայաստան և Էջմիածին, որքան կո-րելի է մեծ թուով։

ԴԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
Ընտեալ Կարողիկոս Տանը Կիլիկիոյ

Փետրուար, 1945
Միջերկրական ծովի վերայ

Վեհ. Հայրապետը Եղիպտոսի մէջ

Վեհ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Կիլիկիոյ Նորընտիր Կաթողիկոս Վեհ. Տ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեան Ամերիկայէն Անթրիպաս ճամբռուն վրայ, Բոր-Մայիս ժամանած ըլլալով շոգենաւով, զինք դիմաւորելու և Գահիրէ առաջնորդելու համար հանգացած են Գերշ. Տ. Մամրրէ Ա. և Գահիրէի Քաղք. Ժողովէն Տեսարք Խօսէն Բարագեան և Մ. Զրաքեան և հինգշաբթի ժամը 1.15ին Գահիրէ հասնող ճեպընթացով հասած են կայարան, ուր վեհ. Կաթողիկոսը ընդունուած է մեծ պատիւներով և տասնեակ մը ինքնաշարժներու թափորով զացած Առաջնորդարան և «Հրաշափառավագ մուտք գործած եկեղեցի, ուր ազգած և օրնած ժողովրդեան ստուար բաղմութիւնը որ հաւաքուած էր ողջունելու համար վեհափառը: Ամերիկայէն Կաթողիկոսին կ'ընկերանար Հոգ. Դերենիկ վրդ: Յետ այնու Գարեգին Կաթ. առաջնորդուեցաւ Առաջնորդարանի գահիբճը ուր եղան ուղերձներ:

Մասնաւորապէս հրաւէր ուղղուած ըլլալով Աղէքսանդրիոյ թեմի և Քաղաքի Ատենապետներուն, տեղւոյս գաղութը ներկայացնելու վեհ.ին ընդունելութեան, թեմի Ատենապետ Տիար Մելքի Գլըճեան միայն փութացած էր Գահիրէ և ընդառաջ զացած կայտրանը, իսկ պատահարար Գահիրէ գտնուող Աղեքս. Քաղք.ի մէկ անգամն ալ հըրաւիրուած էր, փոխանակելու իր բացակայ Ատենապետը:

Երեկոյին Առաջնորդարանի գահիբճն մէջ ճաշկերոյթ մը արուեցաւ ի պատիւ Գարեգին Կաթ.ի. ներկայ էին ազգ. իշխանութեան անդամներ, Քահանայ հայրեր և մամլոյ ներկայացուցիչներ: Խօսեցան Գեր. Մամրրէ Ա. և Տիարք Շանիկ Չաքըր, Մելքի Գլըճեան, Գ. Միթարեան, է. Փափազեան, կ. Կօկանեան, Ա. Պասմանեան և Դերենիկ վրդ: Վեհ.ը. յայտնեց իր շնորհակալութիւնը:

Արարա. 24 Փ. 1945

Աղեքսանդրիա

Վեհութիւն մը

Ինը տարի տռաջ՝ տռաջին անգամն ըլլալով՝ շփում
կ'ունենայինք այդ վեհութեան հետ, կը տեսնէինք ու կը
լսէինք զինքը. այս օրերս գարձեալ շփում կ'ունենանք
նո՞յն վեհութեան հետ ու կը տեսնենք և կը լսնք զինքը
վերստին: Հայրապետական Նորիրակէ էր այն ժամանակ,
1936ին, երբ իր առաջին օրնաբեր այցը տռաւ մեզի.
Հայրապետ է այսօր: Նո՞յն վեհութիւնը իր վրայ, նոյն վե-
հութիւնը ինք Պաշտօնը և հանգամանքը չեն անտա-
րակոյս որ այսպէս կ'ընծայեն զինքը — ո՛չքան յանկուցիչ,
սիրելի և պատկանի միանգամայն: Ապահովաբար այդ-
պէս էր, երբ դեռ երիտասարդ վարդապետ մըն էր միայն,
չուրջ 50 տարի տռաջ:

Ինը տարիները քիչ մը տւելի ալեւորած են զինքը,
այդքան միայն:

Անձ մը չէ ան կարծէք, այլ ոգի՛ մը. հողեղէն չէ ան
կարծէք, այլ ոգեղէն էութիւն մը, մահկանացու էակ մը չէ
ան կարծէք, այլ խորհրդանիշ մը անմահ. ոգի՛ն, ոգեղինա-
ցումը, խորհրդանի՛շը չորս հազարամեայ մեր մեծ և խորչ
հրդառը ժողովուրդին, մեր հազարվեց հարիւրամեայ Հա-
յաստանեայց Աստուածարեալ եկեղեցիին, մեր հազարհինգ-
հորիւրամեայ հմայքոտ մշակոյթին . . .

Բախտաւոր է ժողովուրդ մը որ նման որդիներ կը
ծնի, որդինե՛ր որոնք կը մարմացնեն ինչ որ այդ ժողո-
վուրդը ունի մեծ ու լուսաւոր, վեհ ու շքեղ, որդիներ ո-
րոնք մարմացեալ վեհութիւն իսկ կը դառնան, խրոխտ և
ընտանի միանգամայն, վեհութիւն որուն խօսքը և զործը,
որուն լուկի ներկայութիւնը մինչեւ իսկ իր վեհութինէն
վեհութիւն կը սփաէ ժողովուրդին վրայ, կուառյ անոր
պայծառ ու բարձր ազգումներ, ներշնչումներ . . .

Ամէն Եղիպատահայ որ լսեց զինքը ինը տարի տռաջ,
երբ իրը ցայտազրիւր կը յորդէր իր խօսքը մեր համա-
խմբումներն մէջ, պերճ, վճիռ և իմաստայեց իր խօսքը,

Հայոց Աստուածը, Հայոց Հայրենիքը, Հայոց Ս. Էջմիած-
նինը, Հայոց Արուեստը տարփողող և ոգեկոչող իր խօսքը,
ինքզինքը զգաց տւելի մերձ Աստուածոյ, այսինքն բարորու-
թեան և սրբութեան, տւելի բարձրօրէն մարդ, տւելի խո-
րապէս Հայ, տւելի փափկօրէն գեղասէր և արուեստասէր
քան ոեւէ ժամանակ:

Այզպէս է այս օրերուն:

«Հասկանում էք անշուշա ինչ որ անում եմ», կ'ըսէր
Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը Հինգշարթի օր, եկեղեց-
ւոյ բնմէն, երր կը խորհէր թէ իր մէկ առումը կամ ակ-
նարկութիւնը լիովին չէր ըմբռնուած ունկնդիր ժողովուր-
դին ամբողջութեան կազմէ:

«Հասկանում» է անտարակոյս ամէն ընթերցող թէ
զերբնական էտի մը վրայ չէ որ կը խօսինք այսպէս, թէն
այնքան բազմապան առաքինութեանց և կարողութեանց
մէկտեղումը մէկ անձի մէջ՝ զերբնական կարենայ թուի:
կը խօսինք իրական, շօշափելի, տեսանելի անձի մը մո-
սին — Կիլիկիոյ ընտրեալ Հայրապետին, որ մեր սիրելի
հիւրն է այս օրերուն:

Այնպէս է Գարեգին Արքապանը, ինչպէս Եղիպատա-
հայ զանգուածները ճանչցան զինքը ինը տարի առաջ, նոյն
արեգարդ բայց առոյգ և ուղղամէջ եկեղեցւոյ իշխանը,
նոյն շնորհալի, նոյն թրթուն, հազարդական Հայ
սիրանը թունդ հանող ձայնը, նոյն պերճաբան քա-
րոզիչը և պողպատեայ բնմբասացը, նոյն ոգելից հասա-
րակական գործիչը, որուն «սրտին մէկ կէսը Հայաստանն է
իսկ միւսը՝ Ս. Էջմիածնինը» ինչպէս կը վկայէր բարձրա-
բարբառ և հրապարակաւ Ս. Էջմիածնայ պատուիրակը,
Բրօֆ. Աշոտ Արքահամեան, քանի մը ամիս առաջ:

Խօսեցաւ մեղի գարձեալ եկեղեցւոյ բնմէն և Առաջ-
նորդարանի գահինիմէն մէջ, և իր խօսքերը գարձեալ շունչ,
ոգի և բոց էին, երանդ և իմաստ՝ ամբողջ: Խօսեցաւ մեղի,
և իր խօսքերուն մէկ կէսը Մայր-Հայաստանին էր, իսկ
միւս կէսը՝ Ս. Էջմիածնինը, վասնզի իր խօսքերը կը բը-
խէին իր սրտէն:

Կը սիրէր Ս. Էջմիածնինը և կը տարփողէր զայն կը

Ս. կչմիածնայ նուիրակ էր։ Այժմ ևս երբ գահակալն է Մեծի Տանն Կիլիկիոյ, նախակին կչմիածնականին սէրը և հաւատարմութիւնը հանգէպ Մայր-Աթոռին մնացած են անայլայլ։ Ս. կչմիածին ամէն բանէ առաջ, Ս. կչմիածին ամէն բանէ զերիվներ, այս է նշանաբանը։

Ան, իր ընտրութեան վաղորդայնին «Հայաստանեայց Եկեղեցի» սիւնակներէն պարզեց իր առաջամտութիւնները իր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, և հոն առաջին տեղը տուած էր «Նախամեծածար Ս. Աթոռին Ամենայն Հայոց Հայրապետութեան» նոյնը կը մնայ իր վարքագիծը իր հաւատոյ հանգանակը։

Կը զրէինք այս սիւնակներուն մէջ, շուրջ մէկ ու կէս տարի տուաջ, այն օրերուն Ամերիկայի մէջ տօնախըմբուող իր քահանացութեան յիսնամեայ յորելեանին առթիւ խմբագրուած առաջնորդողի մը մէջ, ոգեկոչելով Տ. Գարեգին Ս. Ի. 1936ի ներկայութիւնը մեր մէջ։

«Հայոց պատմութեան խորերէն յառնած մեր երանաշնորհ Հայրապետութիւնը մէկն էր կարծէք, մեծ և զրաւիչ։

... Անձնաւորութիւն մը, զոր Եղիպատահայութիւնը սիրեց բապէաբար, առաջին իսկ շփումին անոր հետ զոր Եղիպատահայութիւնը «Հայրագրեց» անմիջապէս՝ կաթողին զորովով և խորունկ յարգանքով միանգամայն։

Որքան իրաւունք ունէինք։

Զաւակի այդ զգացումը իրական է, և, ինչպէս վըկայեց Տէր Մամրէ Սրբազն՝ Եղիպատահայոց առաջնորդը, Եղիպատահայութիւնը անձկալից և կարօտագին կը սպասէր Հայրապետին այս նոր այցին, և իր սիրոյ ջերմութիւնը ցոյց տուաւ, այնքան տառար և այնքան յուղումնահար ներկայ գտնուելով վեհին ընդունելութեան։

Նոյն զգացմամբ ապահովաբար՝ կը սպասեն իրենց հովուապետին Կիլիկիեան թեմերու մեր եղբայրներն ու քոյրերը։ Եւ մեր ջերմ բազմանքն ու մաղթանքն է որ Հայրապետը երկա՞ր տարիներ կարենայ հովուել զանոնք։

Եւ Եղիպատահայութիւնը հանգամանօրէն կրնանք ըսել

ասիկա իր սրտով և քառկով Հայրապետին տրամադրութեան տակ է միշտ, իրեն ըլլալիք ունէ զիմումի յօժարափոյթ պատասխանելու պատրաստակամութեամբ:

Բախտաւոր է ժողովուրդ մը որ ունի Գարեգին Ա.ի պէս օժանեալ և օրհնեալ զէմքեր: Անման է ժողովուրդ մը որ ունի Գարեգին Ա.ի պէս անմահներ:

Բախտաւոր և անման է Հայոց ժողովուրդը:

Յ.Ա.

Ալբետ 24 Փետր. 1945

Գանձիրէ.՝

Վեհ Գարեգին Կարողիկոս մեր մէջ

ԽԱՆԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Եղիպատահութիւնը, գարձեալ կապրի համազգուցին խանգամառութեան օր, նման անոնց զորս ունեցուինը տարի տառչ երբ մեր մէջ էր Գերաշնորհ Գարեգին Արքապիսկոպոս՝ Ա. Էջմիածնայ նուիրակի հանգամանքավ, և նման անոնց զորս վայելեցինք հինգ ամիս տառչ, երբ այցի եկաւ մեզի Ա. Էջմիածնայ կողմէ իրը պատուիրակ Բրօֆ. Աշոա Արքահամեան: Հայոց Հայրենիքը, Հայուսառանեայց Եկեղեցին, Հայ Մշակոյթը, պանծացուեցան նոյն օրերուն, և նոյնը կը լլայ այս օրերուն, երբ մեր մէջ ունինք գարձեալ Գարեգին Սրբազնը, այս անգամ որպէս Հայրապետ Մեծի Տանն կիլիկիոյ:

Թէ Եղիպատահութիւնը որքա՞ն կապուած էր իր յանկուցիչ անձնաւորութեան և որքա՞ն ժողովրդականութիւն կը վայելէր ինք մեր համայնքին մէջ, տար ապացոյցը ունեցու երէկ երբ հասաւ Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, կայարանէն իրեն ընկերացող տառնեակ մը ինքնաշարժներու թափօրով մը:

Եկեղեցիին բակը և ներքնամասը լեցուած էր ծովածաւակ բազմութեամբ մը, նման այն բազմութիւններուն մերտի և խանգամառ, որոնց ականատես կը լլայնք տօնա-

կան մեծ օրերուն։ Մինչ զանդակները կը զօղանջէին զուարթաձայն, վեհափառը՝ զգնստաւորեալ, «Հրաշափառաշամլ, կ'առաջնորդուէր Ակնզեցիէն ներս, ամպհովանիի մը տակ շրջապատռուած Գեր։ Մամբրէ Սրբազնէ, Հոգ։ Գերենիկ վարդապետէ, քահանայ հայրերէ և զպրաց դասէն։ Ներկայ էին Ազգ։ Խշանութեանց ։ Ներկայացուցիչները, ազգ և անհատական հայ վարժարաններու տեսուչները, ուսուցիչները, աշակերտաներէն մաս մը և անհաշուելի թիւով ժաղովուրդ։

Կրօն, արարողութիւններէ և գոհաբանական մաղթանքներէ ետք՝ Առոջն. Փոխ. Մամբրէ Սրբազն, ջերմ և խանդավառ խօսքերով Եզիպատահայութեան Հայրապետին հանդէպ, ինչպէս Մայր-Հայրենիքին և Մայրենի եկեղեցիին հանդէպ որդիսկան յորդ սիրոյն և հաւասարմութեան թարգման հանդիսացաւ։

Ազա խօսք տառ վեհափառը՝ մինչ ժողովուրդը՝ արրշիք և պակաւցեալ կախուած էր իր շրթներէն, և ճախօսութեամբ մը, որուն ընտելացուած էինք իր առաջին այցելութեան, տարիներ տառջ, խօսեցու մէկը իր հոգեշունչ և Հայ Եկեղեցւոյ, Հայ Հայրենիքի և Հայ Մշակոյթի սէրովը թաթառուն և այդ սէրը բարէարար իր ունկնդիրներուն փախանցող և զանոնք խանդավառութեամբ թըրթացնող ուղերձններէն։ Գոչեց Եզիպատահայութիւնը, զոր «Տիեզած էր անսած ըլլալէ առաջ»։ Այսինքն ծանօթ էր անոր հայրենասիրութեան, Ակնզեցասիրութեան և նուրիրումին դեռ մեղի չայցելած տարիներ առաջ, և զոր յետոյ անսած էր նիւթական աշքերով եւս։ Յորդորեց զմեզ, Սարմոսերգուին մէկ խօսքը իրը ընարան առնելով, մեր «գուռը» և «քաղաքը» պաշտպանել Աստուծով, այլապէս ի զուր ըլլալով ամէն ճիզ, Աստուծով, այսինքն՝ բարօրութեամբ, եղբայրութեամբ, հայրենասիրութեամբ, Ակնզեցասիրութեամբ։ Մեծարանք ընծայեց Մայր Աթոռին, այդ աւելի քան 1650 տարուան հնութեամբ համազգային մեծ հասաւառութեան, որուն անսասան պահուելուն և նշանաւոր նուաճումներ արձանագրելուն համար սրտաբուխ և

սրտաթունդ մաղթանքներ ըրաւ։ Աղեկոչեց մեր Մայր-Հայրենիքը, որուն սէրը և կարօտանքը գերարծածեց հայրենաբազմ սրտերու մէջ . . .

Ապա վեհափառը, եկեղեցականներու և դպրոց թափօրով առաջնորդուեցաւ Առաջնորդարանի դահլիճը, ուր կը ոպասէին իրեն ազգ։ իշխանութեանց անդամները և ուրիշ մեծ թիւավ ազգայիններ, Հան երգուեցան «Երբոր բացւին գոներն յուսոյց», «Հայ ապրինք, եղբա՛րք» և «Տէր կեցո» ազգ։ երգերը, որոնցմէ ներշնչուած նոր ուղերձներ խօսեցան Մամբրէ Ս. և վեհափառը։

Ներկաններէն շատեր հրաժեշտ առին հնատզնետէ աջահամբոյրէ հետք, և մնացին Ազգ։ իշխանութեանց և մամուլի ներկայացուցիչները միայն, որոնց հետ վեհափառը ընդհանուր խօսակցութիւններ ունեցաւ, յորդորներ տուաւանոնց և կառակարանութիւններ ըրաւ։

Վեհափառին մտքի և մարմնոյ առողջութիւնը և զուարթախոռնութիւնը՝ հակառակ իր 77 տարիններուն, ցընծութեամբ լեցուցին ներկաններուն որդիական սիրտերը և անոնք ակամայ բաժնուեցան վեհափառէն։

Կիլիկիու Վեհ. Հայրապետին Քարոզ

(Կիրակի, 25 Փետր. 1945, Դանիք.)

Անառակին կիրակին, Վեհ. Հայրապետը ծովածաւալ բազմութեան մը ներկայութեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ խորանին առջեւ, բարձրախօսի մը դիմաց բազմած, խօսեցաւ քրիստոնէաչունչ քարոզ մը։ Եկեղեցւոյ կամարները զարմացած կը դիմէին հայորդինները՝ որոնք թերեւս քանի տարիններէ ի վեր ոտք կոխած չէին եկեղեցի։ Հայրապետը առինքնած էր բոյորը։

Հայրապետը, յանուն Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ողջունելէ վերջ իր Հօտը, բնարան առաջի ծագելին արեգական կորնչին ասանդք» խօսքը և շարու-

Նաևեց: «Երկնից աստղերէն իւրաքանչիւրը իւրայատուկ գեղեցկութիւն ունի, միոյն պապդումը այլ է և միւսինը այլ: Սակայն բոլորը միասին կ'անհետին երը կը ծագի արեգակը: Այդպէս է պարագան մտաւոր և իմացական ասազենոյլին համար: Եզիպտոս տուած է հոգւոյ անմահութեան գաղափարը, հոգ չէ թէ թանձրոցեալ: Յանական միտքը տուած է իմաստասիրական խոյանքը իր Սոկրատէսով, Պղատոնով և Արիստոտէլով»: Ապա Վեհափառը արագ հպանցումով մը յիշեց միջնադարեան շրջաններէն Տանթէն, Շեյքսփիրը և այլն, իւրաքանչիւրին հանճարին տուրքը թուելով:

«Այս բալորը սակայն, կ'անհետին իսկոյն պատմութեան այն մեծ իրողութեան քով, որ է Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի երեւումը: Գիանական մը չէր, իմաստասէր մը չէր Ան, այլ Աստուծոյ սէրը սրտին մէջ, Տիրոջ օծեալն էր որ կուգար այդ սիրովն իսկ պատարագուիլ մեղաւորին համար: Եւ իր երեւումէն ի վեր մարդկային ո՞ր հաստատութիւնը չէ ազգուած Անոր ներշնչումներէն: Երկիրը լեցուեցու բարեսիրական հաստատութիւններով, հիւանդանցներով, որբանոցներով, ուրուկանոցներով, սիրոյ և զթութեան տուններով: Հռոմէացիք ալ ունէին հիւանդանոցներ, բայց անոնք զինուարական էին միայն, և բուժուողը կ'երթար գարձեալ սպանդի: Հապա համարարաննե՞րը, պատմութեան տաննողները զիտեն որ անոնք եկեղեցւոյ նախաձեռնութեան ծնունդ են: Եկեղեցւոյ վարդապետներն եղած են դաստիարակներն ու մայրը եւրոպական քաղաքակրթութեան:

Եւ այս բալորը կը բղիսին այն վեհ բմբանումէն որ Քրիստոնէութիւնը կը տածէ ունիտ հոգիին հանդէպ:

Այսօրուան ունետարաններն իննուուն և ինն ոչխարի և մոլորելոյն ինչպէս նուն. Անառակին՝ կուգան շեշտել այն անսահման արժէքը որ Քրիստոնէութիւնը կուտոյ մէն մի հոգիի: Յաչո Աստուծոյ, անդին է մարդկային հոգին: Սոկրատէս եւս չեշտած է նոյն բանը իր անոնքիր զքեզառվ, բայց այս իմաստասէրի մը մարտնչումն է միայն, առանց բովանդակութեան:

Մինչ Տէրն մեր բերաւ այն ուժանակութիւնը որով

անհատին մեզաւոր հոգին զզջումով կը դառնայ իր Երկնաւոր Հօրը և կ'ողջազուրուի Անկէ սիրով և համբուրիւ կը զգենու փառաց պատմումանը, կ'ըլլայ հաղորդ երկնային ուրախութեան, ի ցնծութիւն հրեշտակաց:

Ես կը մազթեմ որ Տիրոջ կենարար Հոգին ներգործէր իր Շունչովն Հայ Եկեղեցւոյն վրայ, և մեր եկեղեցւոյ զաւակները ըլլան Աստուածատէր, օրինապահ քաղաքացիներ իրենց գանուած երկիրներուն և մամուլը զիտակից իր կոչումին, որ է առաքելական և շինիչ:

Վեհափառը վերջացուց իր քարոզը, որ զերծ պոռոտ ազգայնամոլութենէ, կը բուրէր մեր երանաշնորհ և Քրիստոսակրօն նախնեաց հաւատոյ շունչը, իմաստասիրական խորքերով ամրապինդ:

Բ. Կ.

Ապրիլ 27 Փետր. 1945

Գանիրէ..

Ճաշկերոյք

Երէկ Երեկոյ Ազգ. Առաջնորդարանի դահլիճին մէջ Ազգ. իշխանութեանց կողմէ ճաշկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ կիլիկիոյ կաթողիկոսին:

Ներկայ էին Թիեմական և Քաղաք. Ժողովի անդամները՝ իրենց ամերիկաց Ազերանդրիոյ թեմականի Ատենապետը և Քաղաք. էն Պ. Կ. Պօղաճեան, Քահանայ Հայրեր և մամուլի ներկայացուցիչներ:

Տէրունական ազօթքէն վերջ Տ. Մամբրէ Արքազան խօսք առնելով յայտնեց Եղիպտահայութեան ուրախութիւնը կարենալ պատուասիրելուն Վեհափառը, և յարդանք մասուցանելէ յետոյ անոր բազմապիսի կարողութիւններուն և առաքինութիւններուն, չեշտեց թէ Ազգը մեծ պէտք ունի հմուտ և հաւատաւոր եկեղեցականներու՝ որոնց հազուազիւտ ներկայացուցիչներէն մին է Վեհափառը: Հետզհետէ խօսք առին Պ. Պ. Ճանիկ Զագըր, Մելքի Գլըճեան, կայձակ Պօ-

զանեան, Գուրգէն Մխիթարեան, Էօժէն Փափազեան, Կայձ
կոկանեան և Արտ Գամմանեան, և ամէնքն ով յարդանք
յայտնելէ ետք Գարեգին Կաթողիկոսի կարողութիւններուն,
կարովին, եռանդին, շնչանցին՝ անոր առաքելութեան կարե-
ւորութիւնը իր նոր պաշտօնին մէջ և արեւշատութիւն
մաղթեցին իրեն:

Դերենիկ վարդապետ վեր առաւ Վեհափառին հա-
ւատքի մարդ Ըլլալը և զանազան օրինակներով շեշտեց
հաւատքին անհրաժեշտութիւնը ունեէ գործի կատարման մէջ:
Գարեգին Կաթողիկոս շնօրհակալութիւն յայտնեց իր անձին
մասին եղած գնահատական արտայայտութիւններուն համար
և երկարօրէն պարզելէ ետք իր ստանձնած գործին զբա-
ւարութիւնները՝ ըստ թէ կարելի էր դրուխ հանել զայն
եթէ ժողովուրդը թեւ և թիկունք կանգնէր իրեն, ուստի
կոչ ըրաւ ներկաներուն և Եզրիպտահայութեան իրենց բա-
րոյական և նիւթական օժանդակութիւնը ընձեռելու:

Պ. Ճանեթիկ Զագըր անդրադառնարէ ետք որ Վեհա-
փառին Եզրիպտահայութեան առթիւ ժողովուրդը
բերած էր իր օժանդակութիւնը, պատրաստակամութիւն
յայտնեց՝ յանուն ժողովականներուն և Եզրիպտահայութեան,
թէ այս անդամ եւս Վեհափառը պիտի զանէ լայն աջակ-
ցութիւն իր գժուարին գործը յաջողութեամբ տանելու
համար:

Մամբրէ Արքազան կրկին խօսք առաւ և արեւշատու-
թիւն մաղթեց Գարեգին Կաթողիկոսին, մայր Աթոռոյ Ազ-
գընափր Տեղակալ Գէորգ Արտ. Զէօրէքճեանի և Եզրիպտո-
սի Վեհափառ Ֆարուք Ա. թագաւորին, որուն հովանիին
տակ խազադորէն կ'ապրի մեր ժողովուրդը

Վեհափառին Հայր-Աշերով և «Պահպանիչ» ով վերջ զբ-
առ այս խիստ հաճելի երեկոյին:

Ամբեւ Գանիքը.
1945 Փետր. 22

Ուղերձ առ Վեհ Գարեգին Ա. Կարողիկոս

Վեհափառ Տէր,

Ինձ համար անսահման երջանկութիւն մըն է յայտնել Զեր օրբազնութեան, յանուն Ազեքսանդրիոյ հայութեան և իր թիմական ժողովոյ, բարի գալուստի պրոտքին բարեմազմութիւններ Զեր օրհնաբեր այցելութեանը համար այս երանելի երկրին, ուր հնձ թիւով մեր գազութը կը վայելէ հանգստակա և անդորր կեանք մը չնորհիւ մեր Օգոստափառ թագաւորին Ֆարուզ Ա. ին և Անոր բարեխնամ կուսազարութեան ազնիւ հոգածութեան:

Այդ երջանկութիւնը կը վայելիմ, մասնաւորաբար, ես ինքս շատ աւելի բուռն կերպով, տեսնելով թէ՛ իմ տարաբախտ հայրենիքիս տարազիր զաւակներուն բախտակից՝ Մեծի Տանն Կիլիկիոյ գարաւոր Ա. Աթոռին վրայ պիտի բազմի Զեր նման արժանաւոր, անբասիր, եղական իմացականութեան և բարձր անհատականութեան տէր, փորձառու և գաղափարապաշտ Հովուապես մը:

Տարազիր հայորդիները որոնց կ'երթաք կազմակերպելու և առաջնորդելու կրօնական, բարոյական, մտաւորական և ֆիզիքական կեանքը, մեծ մասամբ զոհերն են, ինչպէս զիտէք, անաստուած սոսիներու կողմէ չարակերտըած անարգարութեանց վատթարագոյնին: 1921ին, Լիբրանան ճամբորդութեան մը ընթացքին, երբ առաջին անգամ ականատես եղայ անոր սրահամլիկ թշու առութեան, անսնք որ արմատախիլ եղած իրենց շէն և հարուստ օճախներէն, զատապարտուած էին քարշ տալու իրենց տառապակոծ գոյութիւնը քարիւզի թիթեղներէ շինուած ոզորմելի հիւզակներու մէջ, սիրոս փղձկեցաւ և անկարոզ եղայ զըսպել արտասուրու: Սակայն հայտն աննկուն ու անպարտելի կորովով ու կամքով շաղախուած տարիներու յարատեւ աշ-

խառութեան շնորհիւ, անոնք այսօր ոչ միայն տուն տեղ և
հանգստաւէտ կացութիւն մը դարբնած են իրենց համար,
այլ անոնք անտեսական նախանձելի նուաճումներ կատա-
րած են և կը շարունակեն կատարել Աբրահամի և Սիւրիոյ
բոլոր շրջաններուն մէջ:

Վեհափառ Տէր, արիւնի և արհաւիրքի ժամանակա-
շրջանը, որուն մէջ գժրախտ մարզկութիւնը կը տուայսի
հինգ տարիներէ ի վեր անըմբոնելի խելագարութեամբ, իր
ճգնաժամին մէջ է: Օրերը բախտորոշ են և ես համոզւած
եմ, արդարութեան անպայման և վերջնական տիրագիտու-
թեան հաւատացեալի անխախտ նախազգացումով թէ մեր
փառապահծ ցեղին խորչականար զանգուածին համար ալ
լու օրերու արշալոյսը պիտի ծաղի մօտ տանիէն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին Հոյը շատ բան
կ'ակնկալէ Զեղ նման բարի և քաջ Հովիւէն, մանաւանդ
երբ նու գիտէ թէ զուք իրեն կ'երթաք զօտեպնդուած նու-
և աշխարհի ամենէն կազմակերպուած ու յառաջադէմ
երկրին Միացեալ Նահանգներու մէջ Զեր ապրած երկար
տարիներու անսահման ու զործնական փորձառութիւնով,
ու կազմակերպական հմտութիւնով, կրնաք օդտակար ըլլալ:

Բացէք Զեր ծրագրած Դպրելանքը, տուէք մեր ժո-
ղովուրդին անկաշառ, անձնուէր, անհատականութեան տէր,
անբասիր, եկեղեցաէր, անկեզծ և ճշմարտախօս կղերական-
ներ: Զարգացուցէք Զեր ոգեշունչ քարոզներով հայ զան-
գըւածին մէջ հայրենասիրութեան, կրօնական, փոխազարձ
սիրոյ, մեծերու հանդէպ յարզանքի, հանրային անձնուէր
և վաստակաւոր զործիչներու հանդէպ գնահատումի և ե-
րախագիտութեան ու ազնուացման համար զոհարերու-
թեան ոգին:

Զեր այս սրբազան աշխատութեանց կատարման ըն-
թացքին, վատահ եղէք թէ մենք միահամուռ պատրաստ ենք
ուրախութեամբ զօրավիզ հանդիսանալու Զեղի և աշխա-
տելու որ Զեր Զանքերը պատկուին լիակատար յաջողու-
թեամբ յօգուած մեր ժողովուրդին որ լիուլի արժանի է այն
փայլուն ապագային որ Զերմ բազծանքն է մեր բոլորին:

Սրբազնն Հայր, սրտանց կը մաղթեմ որ Բարձրեալն
ըլլոյ Զեր առաջնորդը և պարզեւէ Զեզի երջանիկ և խիստ
երկար կեանք մը:

Ազեքսանդրիոյ թեմականի

Առենապետ

ՄԵԼԻՔԻ ԳԼՈՋԵԱՆ

«Արարա» Յ Մարտ 1945

Աղիքանդրիա

Վեհ Դարեզին Հայրապետին ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼԻՒԹԻՒՆԵՐ

Կիլիկիոյ թեմին ընտրեալ Հայրապետը՝ Ամեն. Տ.
Դարեզին Սրբ. Արքեպո. Յովուչիեան, ընկերակցութեամբ
Առաջն. փոխ. Սրբազնն Հօր, թեմական ժողովի Առենա-
պետ Տիգր Ճանիկ Զագըրի և Հոգ. Դերենիկ Վարդապետի,
շաբաթ օր, 24 փետր. Աղօսինի պալատը երթալով ստորա-
գրեց այցելութեանց մասնաւոր տամարին մէջ։ Ապան. Ա-
մենապատութիւնը այցելութիւն տաւու Սովիէթ գեսպա-
նատան, ուր սիրալիքը ընդունելութեան տառկայ եղաւ Ն.
Վահեմ. զեսպան Շէպարինի կողմէ. տեսակցութիւնը աեզր
ունեցու ուռւսերէն լիզւով։

Ն. Ամենապատութիւնը յետոյ այցելեց Յունաց
Պատրիարքին։ Երկու հազեւոր պետերը ողջագուրուեցան
Պատրիարքարանի մուտքին առջեւ, Ամեն։ Քրիստոֆորոս
Հնորհակալութիւն յայտնեց իրեն եղած այս պատիին հա-
մար և տեղեկութիւններ հազորդեց վերջերս գէպի Մոս-
կուա իր կատարած ճամբարգութեան մասին։ Փոխազարձ
մաղթանքներ եղան երկու քոյր նկեղեցիներուն պայծառու-
թեան, բարօրութեան և աշխարհի խաղաղութեան համար։

Մեկնումի պահուն Յունաց Պատրիարքը փափաք
յայտնեց երկուշաբթի փոխագարձ այցելութիւն տալ, ան-
գամ մը եւս վայելելու համար զինքը։

Կիրակի օր, Առաջնորդարանի գահինին մէջ վեհա-

փառը ընդունեց այցելութիւնը Հայ կաթողիկէ Հազ. Պետին՝ Գերապայծառ Յակոբ Արք. Նեսիմեանի և բազմաթիւ ազգայիններու:

Յունաց Պատրիարքը այցելեց Վեհափառին նշանակուած օրը:

Արեւ. 27 փետր. 1945

Գանիբէ..

Պաշտօնական այցելութիւն

Երեքշաբթի, 27 փետր. Կիլիկիոյ Աթոռին ընտրեալ Հայրապետը՝ Ամեն. Տ. Պարեզին Ա. Արք. Յովսէփեան, ընկերակցութեամբ Առաջն. փոխ. Սրբազնան Հօր և Տիար ձանիկ Զագըրի, այցելութիւն տառաւ Ղայտաց Ամեն. Պատրիարքին և ունեցաւ շատ սիրութիր տեսակցութիւն մը: Ն. Ամենապատուութիւնը յայ յայտնեց սր, ինչպէս եղած է անցելլին նոյնաբէս ուրժմ և ապագային ալ երկու, հինուուրց և բարեկամ եկեղեցիներու յարաբերութիւնները կը մնան միշտ սիրալիր: Մազթանքներ եղան երկուստեք երկու եկեղեցւոյ պայծառութեան և քրիստոնէուկան ողիի տարածման համար: Կէս ժամուան սիրալիր տեսակցութիւնէ վերջ, Վեհափառը բաժնուեցաւ:

Ապա, Վեհափառը, ընկերակցութեամբ Առաջն. փոխ. Հօր և Տէր և Տիկին Մերձանեաններու, այցելեց Մերձանեան մանկապարտէզը, ուր Տնօրէն Տիւրկէրեան, Հոգաբարձութեան կողմէ Տօքթ. Առղիկեան պէյ և հաստատութեան վարժունի՛ Տիկ. Թէրզեան, Ժանկապարտէզի արտաքին դըռնէն ընդունեցին Վեհափառը, իսկ հաստատութեան աանիկները մանկապարտէզի մեծ սրահին մէջ իրենց երգերով և որոտանութիւններով ամենամեծ հաճոյքը պատճառեցին Ն. Ամենապատուութեան: Ա. Հայրապետը զգածուած այս զեղեցիկ տեսարանէն, օրնեց հաստատութեան նուիրատունները՝ Տէր և Տիկ. Մերձանեանը, ուսուցչական կազմը

և սանիկները, որոնց ուղղեց հարցումներ և ստացաւ խելացի պատասխաններ:

Ապա այցելեց Նոռապարեան վարժարանը, ուր սաներ ընդունեցին Ն. Ամենապատռութիւնը դպրոցի պարտէզին մէջ: Սանուհի մը կարգաց խնամեալ ուղերձ մը յայտնելով աշակերտութեան ուրախութիւնը եղած այս չնորհարեր այցելութեան առթիւ: Ն. Ամենապատռութիւնը բարձրագոյն կարգի աշակերտուներուն ուղղեց հարցումներ և զո՞ն մնաց արուած խելացի պատասխաններէն: Յեսոյ խօսեցաւ զեղեցիկ խրառական մը և յանձնարարեց որ իրենք ըլլան իրենց ուսուցիչը և մատիկ ընեն իրենց խղճմտանքի ձայնին, որպէսզի ապագային դասնան ծնողացը, աղջին և հայրենիքին համար պատուարեր երխասարդներ և օրիօդներ: Վեհափառը օրհնեց յիշատակը բարերար Պօղոս Փաշա Նուպարի, և հասասառութեան բոլոր աշխատաւորները: Վեհափառը, հասասառութեան բոլոր բաժանմունքները այցելելէ վերջ մեկնեցաւ:

Վեհափառը, ընկերակցութեամբ Արբազանին և Տիար ձանիկ Զաղըրի այցելեց Գալուստեան Ազգ վարժարանը, ուր պարտէզի զուանէն պատիւներով ընդունուեցան, Ուսումնական Ասորուրդի, Հոգարարձութեան և ուսուցչական կազմին կողմէ: Աշակերտուներէն մէկը կարգաց ուղերձ մը, որուն պատասխաննեց Վեհափառը՝ իմաստովից խրառականով մը, և օրհնեց յիշատակը վարժարանի հիմնադիր բարերար՝ կարապետ Գալուստի:

Վեհ. յաջորդաբար այցելեց հասասառութեան դասարանները, գարմանատունը, ճաշարանը, լուսանկարուեցաւ փոքրիկներուն հետ և զո՞ն ապաւորութեան ասկ մեկնեցաւ:

Վեհափառը այցելեց Շուպրոյի Գալուստեան վարժարանը և արժանացաւ սիրալիր ընդունելութեան:

Ն. Ամենապատռութիւնը այցելեց նաև Մանիսալեան քոյրերու վարժարանը և արժանացաւ խանդավառ ընդունելութեան:

Վեհափառը՝ ընկերակցութեամբ Մամբրէ Արբազանին և Տիար ձանիկ Զաղըրի այցելութիւն առաւ Ամերիկեան

Դեսպանին: Տեսակցութիւնը եղաւ շատ սիրալիք և վասմ։ Դեսպանը իր ուրախութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց իրեն եղած պատիւին համար։ Վեհափառը մազթանքներ ըրաւ Ամերիկեան ժողովուրդին, անոր Եղիպատոսի ներկայացնեցին առաջնութեան և բարօրութեան համար և բաժնընեցաւ շատ հաճելի տպաւորութեան տակ։

Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ Մամրէ Սրբազնի և Թեմականի Ամենապետն Տիար ձանիկ Չազըրի, մասնաւոր ժամագրութեամբ այցելեց Լիբանանի դեսպանառունը և շատ սիրալիք կերպով ընդունուեցաւ Ն. Վ. Սալիմի և ուստի խորհրդական Պ. Թագէտաին Էլ Սոլի կողմէ։ Նոյն պահուն հոն ներկայ էր նաև Տիար Տիգրան Մերձանեան, որ Պ. Էլ Սոլի անձնական բարեկամն է։

Նոյնպէս հոն հասած է նաև Լիբանանի Արա. Գործոց նախարար՝ Ն. Վ. Հանրի Ֆարաոն, որ Արարական Կարհրդաժողովին մասնակցելու համար Եղիպատոս կը գանուէր։ Խօսակցութիւնը տեւած է կէս ժամ և շատ սիրալիք։

Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցութեամբ Մամրէ Սրբազնի և Տիար ձանիկ Չազըրի այցելութիւն առևառ Անդլիական դեսպանին՝ Ն. Վահմ. Լորտ Քելլըսնի, որ սիրալիք ընդունելութիւն մը ըրաւ Ն. Ամենապատուութեան, տեղեկութիւններ ուզեց Կիլիկիոյ թեմին և մասնաւորապէս Կիպրոսի Հայ գազութիւն նիւթական և կրօնական կացութեան մասին։

Նոյն կողմով Վեհափառը այցելեց Ֆրանսական գետպանին, որ նոյնպէս սիրալիք ընդունելութիւն մը ըրաւ Վեհափառին։ Դեսպանը հետաքրքրուեցաւ Հայաստանեաց Եկեղեցւոյ նուիրապետութեանց հարցով և անզիկութիւններ ուզեց Հայ Կոթողիկաներու, Պատրիարքներու դերին և պաշտօններուն մասին։

Հայ Մշտիկյթի Բարեկամներու Մարմոյն Վարչական Կարհրդի անդամներէն Պ. Երուանդ Տրենց Մարգարեան և Յակոբ Արամեան ներկայացնեց Վեհափառ Կաթողիկոսին, Տիար ձանիկ Չազըրի բնակարանը և ընծայեցին իրեն այդ Մարմոյն հրատարակած «Հայաստան դարերու ընդմէջէն»

ալպոմին Հայերէն, Արտօներէն, Թրանսերէն և Անդլիերէն
օրինակներէն, առաջինը՝ ձօնագրով:

Ընծայցին նաև հայկ. ճարտարապետութեան և ման-
րանկարչութեան մասին նոյն մարմարոյն Հայ արտէեիտի
ցուցահանդէսին առթիւ երկու տարի առաջ հրատարակած
եռալեզունան գեղատիպ հատորը, ուր ի մէջ այլոց յիշա-
տակուած էր նաև Տ. Գարեգին Սրբազն՝ իրր միջազգա-
յին կշիռով հեղինակութիւն մանրանկարչական արտեստին
մէջ: Վեհափառը օրհնեց այս Մարմարոյն դործն ու զործող-
ները:

Ալբեւ Գանիկ:

Քարոզ Մեծի Պահոց

ԵՆՈՐՃԱԶԱՐԴ Յ. Յ. ԳԱՐԵԳԻՆ Յ. ՀԱՅՐԱՎԵՅԻ
ԱԽԱՆԴՈՒԱՆ ԳԱՀԻՒԲԻ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
(Ի Ս. ԱՍՏՈՒԱՆԱՇԻՆ-ԳԵ. 28 ՓԵՏՐՈՒԱՐ. ԵՐԵԿՈՅԻ ՀՍԿՈՒՄԻՒՆ)

Ենորմ ընդ Զեզ ու Խաղաղութիւն Տեառն Մերոյ և
Փրկչին Յիսուսի Քրիստոսի Եղիցի ընդ Զեզ և ընդ Ամենեսեանող
Ամեն:

Հաւատացեալ ժողովուրդ: Մեր Տէրը երը երիքովից
անցնում էր գէպի երաւագէմ, իւր կեանքի վերջին օրերը
և վերջին մեծ և բարդանդակալից վարդապետութեան մա-
սերը մատչելի դարձնելու իւր աշուկերաներին և կատարե-
լու իւր երկրաւոր ընթացքը մինչեւ Գոզզոթայի բարձունք-
ները, ճանապարհին ինչպէս սովոր է Արեւելքում, աղքատ-
ներ և ողորմութիւն հաւաքողներ նատում էին անցորդներէն
ողորմութիւն ուզելու: Այսպէս երկու կոյրեր լսում են որ
Յիսուս Նազարեցին պէտք է անցնէր ճանապարհում գէպի
երաւագէմ գնոլու, նատում են ճանապարհի եզերքին և
սպառում:

Երբ գալիս է Տէրը և մօտենում է բարձր ձայնով
աղաղակում են և սպառում: — «Տէ՛ր, ողորմեա՛ մեզ»:

Մօտենում է Փրկիչը և հարցնում. «Ի՞նչ էք կամ ենում
ինձանից որ առնեմ ձեզ» Եսքա պատախանում են. — «Տէ՛ր,
զի բացցեն աչք մեր». մեր խաւար և կոյր աչքերի բացու-
մը խնդրում ենք ձեզանից:

Ի՞մ սիրելիք: Ձեզ համար հասկնալի պէտք է լինի
այս խեղճ կոյրերի խնդրանքի արժէքը: Ինչքա՞ն գեղեցիկ
է աշխարհը. երկնակամարը, արեգակը, ինչքա՞ն գեղեցիկ
հովիտները, ձորերը, անտառները, կարկաջանս առուակը:
Ինչքա՞ն գեղեցիկ է աշխարհը իր ծառերով, ծաղիկներով,
զարդարանքներով:

Բայց այդ երկու կոյրերը զրկուած էին վայելելու
այդ ամէնը զոր Աստուած առեղծել էք մարդկանց համար,
և առա խնդրում են տեսնել այդ ամէնը և Տէրը թժկեց
նրանց և տեսան նոյն ժամանակ ինչ որ չէին տեսած: Ես
կը կամենայի՝ որ մենք ամէնքս նոյնպէս զիմէէինք մեր
Տիրոջ, մեր Փրկչին. «Տէ՛ր, Բոզ բացուին մեր աչքերը, թոզ
տեսնենք»:

Բնականաբար մեր մարմառոր աչքերի համար չէ
մեր խնդրանքը: Ինչպէս որ մարմառոր աչքերը երբ խա-
ւարած են՝ խաւարին է պատում, զրիկուած են աշխարհի և
Աստուծոյ ստեղծած զեղեցկութիւններից, աւա՛զ, կոյ և
հոգւոյ աչքերի կուրութիւնն որ չի տեսնում ճշմարտութեան
բարոյական լոյսը, հոգւոյ և կեանքի բարոյական գեղեց-
կութիւնը. ճանապարհը, որ տանում են գէպի կեանք, գէ-
պի յաւիտենակունութիւն:

Հոգւոյ աչքերի թժկութիւնն է որ կը կամենայի մեր
հաւատացնեալներին, որ կարենանք անսնել Յիսուսը անձնու-
սորած, ապրած մեր հոգւոյ և անձի մէջ: Ի՞նչ է հարկաւոր
դրա համար: Աստուած անտեսանելի է: Բայց մեր Տէրը
ցոյց է տուել ճանապարհը: «Ես եմ ծանապարհ, ծըչմար-
տութիւն և կեանք»:

Կամենում ենք գտնել այն ուզիղ ճանապարհը որ
հաւատացնեալներին առաջնորդում է զէպի կեանք: Մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի կենդանի ներկայութիւնը պէտք է լի-
նի մեր մէջ, մեր սրտի, հոգւոյ մէջ, որպէսզի կոըրզանանք

անսնել ճանապարհը որ տանում է դէպի իսկական հոգեւոր կեանքը, իսկական ապրումը:

Ե՞մ սիրելիք: Մարդկային հոգեւոր կեանքը մենք կարող ենք երեք մասի բաժնել, ամփոփել երեք կէտերի մէջ: Առաջինը՝ գիտութեան ճանապարհով: Գիտութիւնը նոյնարկու իր գերբնական նպատակու ճշմարտութիւնը փընտառում է, փորատում է մաքի խուարը այդ կերպով. գիտութիւնը շատ հզօր և կարեւոր բան է մարդոց համար: Տեսէ՛ք դիտութեան ստեղծած միջոցներով մենք երկիւղ չունենք փոթորիկի վտանգներից:

Հոգենաւը կարող է կարել ալիքները, ընթանալ իր ճանապարհը: Հեռագիրը ի՞նչ հրաշալի է: Մենք կարող ենք մեր միտքը յայտնել մէկ օրուան մէջ մինչեւ հեռաւոր աշխարհները: Սրանից եթէ հինգ հարիւր տարի առաջ ասէինք թէ այդպիսի բաներ կարելի էին, մեզի յիմարի տեղ էին դնելու:

Հեռախօսը ի՞նչ սքանչելիք է. կարող ենք հազար մղոններով հեռու խօսել մէկ ժամուան մէջ: Ինչպէս օդապարիկները թռչում են երկինքի վրայով, առանց վախենալու: Մարդկային հանձարը զաել է միջոցներ թռչելու արագ տելի քան երկինքի թռչունները: Զեղանից ով որ ճանապարհորդել է, իմանում է որ թռչունները չեն երթում հեռուները, որովհետեւ կերակուր չեն գտնում. բայց մարդը կարող է թռչել շատ հեռունները և շատ արագ: Ուրեմն մարդկային կարողութեան ստեղծագործութեան և դիտութեան հետեւանք: Օրհնեա՛լ լինին բոլոր նրանք որ ըստեղծագործում են այդ բոլորը՝ յօդուա մարդկութեան:

Առարկայի հոգեւոր երկրորդ կէաը Արուեստն է, իւր բոլոր ձիւղերում. Մեծ քաղաքի մէջ ապրում էք. Հռոմում, Բարիզում, Լոնտոնում, անօնում էք թէ մարդկային հանձարը ինչպիսի՝ զարգացման հասել է: Եթէ մտել էք վիեննայի մայր եկեղեցին կաթոլիկաց, նրա գեղեցկութիւնն ու հմայքը անօնում էք թէ ստեղծագործութեան հրաշալիք են: Ա՛յ որ եղել է Բարիզում, անօն է Նոթր Տամբ, հիանում է թէ ինչպիսի՝ կառուցուած է, կամ եթէ եղել էք Լոնտոնում,

տեսել էք Քէնթըրպրիի Արրայարանը. Ս. Պօղոսի տաճարը, կամ եթէ ձեզանից մին որ Հայուսանում տեսել է մեր Մայր Ակնդեցին Անիի, քարերը միայն մնացած, սքանչանում է մարգկային հոգուն որ քարերի կենդանութիւն է տուել, և երախտաւորութիւն աղջում է նախնեաց որ լեզու է տուել քարին և խօսում մեր հոգւոյն:

Ապա նկարչութիւնը: Դուք ծանօթ էք Ռաֆայէլին որու մասնագիտութիւնն էր Մատոնայի գեղեցկութիւնը նը-կարել, և որ իր վրձինի տակ այլպէս կարողացել է կեն-դանացնել գոյների նիւթը և սահզեն կենդանի էութիւնը որ խօսում է հոգւոյ ամենանուրը թելերի հետ:

Ապա երածշտութիւնը: Զեղանից ով որ լուն է զէթհո-վէնի եօթներորդ սիմֆոնին, որ վերացնում է զէպի երկինք, հաւատում է թէ արուեստը՝ ուրեմն հանճարների վերացնող կարողութիւնն է.

Խմ սիրելիք: Բայց պէտք է տսել, անոնց Նրբարդ կէտին: Անարժէք են դառնում այդ երկու կարողութիւնները. գիտութիւնը չէ կարող տսել թէ ինչո՞ւ եմ ձնած, ա-ճում եմ, զարդանում, մեռնում: Խնչի՞ համար գիտութիւնը չի կարող իմ հոգեկան աշխարհի խօսիլ կամ հոգւոյ թելերը շարժել, զարձի բերել, զիմնել տալ երկինք: Փրկութեան գոր-ծը կրօնի գործն է: Առանց կրօնի անարժէք է գիտութեան բերած, արուեստի հնարած արժէքները: Կրօնն է որ հա-ւասարապէս մատչելի է անուսին և գիտնականին: Գիտու-թիւնը չի կարող խօսիլ եմ ներքին աշխարհին հետ. ար-ուեստը չի կարող տառաջարկել զիս զէպի հաւաստ, փրկու-թիւն: Առանց կրօնի՝ մարդկութիւնը զէպի կորուստ կ'եր-թայ, առանց կրօնի՝ մարդը զազանի կը նմանի: Կրօնն է իսկական կեանքի և փրկութեան ձանապարհը, կրկնում եմ, սխալ հնասկնանք: Ես ի՞նքս էլ ծառայել եմ գիտութեան, բայց գիտութիւնը չէ որ իմ հոգիս բարձրացնում է առ Աս-տուած: Հապա՞ կրօնը: Նրանով է որ ձշմարիս հայրենա-սիրութիւնը նոյնպէս ծագում է մեր մէջ, և այդ է որ հա-ճելի է Աստուծոյ և մարդկանց:

Ապա ուրեմն իմ սիրելիք. եթէ մենք բարեմաղթութիւնն ունինք մեր ժողովուրդին համար, ձեռք բերելիք զիտու-

թեան, լուսաւորութեան, արուեստի միջոցները ունինք, եթէ
հնարաւոր է հետեւեցէք. գա մարդկային հոգւոյ ազնուաց-
ման ձանապարհն է: Բայց ամենակարեւորը որ կը մաղ-
թինք մեր յողովուրդին, հոգեւոր վերածնութեան ձանա-
պարհն է,— Աւետարանի գաղափարը: Եւ այդ գաղափարը
մատչելի է մեր Տէր Յիսուս Քրիստոսով. «Ես եմ ձանա-
պարհ: Իմ անձու, կենցազս ձեզ համար պէտք է օրինակ
լինի:

Ով որ ծանօթ է մարդկային պատմութեան, լու. Կ'ի-
մանայ թէ կրօնը ինչպիսի արժէք ունի: Կրօնը ստեղծա-
գործութեան ազրիւրն է: Ահա՝ ձեզ եղիպատու հին. կը
տեսնէք Լուքսոր, Գարնադ: Ինչպիսի՞ ճարտարապետութիւն,
զերեզմանատաներ, մեհեաններ, կը տեսնէք ինչպէս քան-
գակուած, նկարազարդուած են յաւիտենական գաղափա-
րով: Գնացէք, Յունատառանի պատմութիւնը քրքրեցէք, յու-
նական ասանարները, արձանագրութիւնները: Ով որ ծանօթ
է յայն ազդի ստեղծագործութեան, բանատեղծութեան, կը
հաստատէ թէ ատոնք բոլորը կապուած են իրենց կրօնական
հայեցների հետ: Քիչ առաջ ասացի ես, Քրիստոնէական
մեծ ասանարների մասին: Մտէք մեծ քաղաքները, կրօնա-
կած մեծ շինութիւններն որ տեղ են բանում: Տեսէք Գահի-
րէի հայեկապ մէսաթիւնները, անզացիի իրենց կրօնական ըմ-
բռնման համաձայն ստեղծել են այն բոլորը:

Լուսաւորեալ մարդկութիւնը որ քրիստոնեայ աշխար-
հըն է, ունի իր եկեղեցինները, իր վերածնունդի գարը, նը-
կարչութիւնը, նուրբ, հոգիացած: Միքէլ Անձէլոն, զարդա-
նկարիչներից մէկը, որու գործերը մասամբ կրօնական են:
Տեսէլ էք թանգարանում իր մարդարէի ստեղծագործու-
թիւնը, ինչ կեանք, նստել է ոզբում իր հայրենի կորուս-
ար: Ոզբացեալ Երեմեան մարմնաւորում է: Աէսնարտո Տա-
վինչին, նոյնպէս մեծ ստեղծագործներից իսկ Ռաֆայէլը,
որուն ամենամեծ արուեստը, գործեալ աստուածային, կրօ-
նական մտքով է որ այնպիսի ձեւ է առացած:

Եթէ մօտենանք մեր կրօնի պատմութեան, Հայ ճար-
տարապետութեան, մենք ո՞ւր ենք եղել: Տեսնում ենք մեր

Հայրենի ստեղծագործութիւնը որ մինչև այժմ չէին հասկըցուած, ճանչցուել են մեծ գիտնականների կարծիքով. ինչպիսին է Սթրջիկովսքի, ծագումով լին գերմանացի գիտնականը, որ երկու մեծ հատորներով, հաստատում է որ Հայազգը ստեղծել է քրիստոնէական մեծ ճարտարարութառը, որ Գոթական, Բիւզանդական արուեստի գով նոյնքան կարեւոր տեղ ունի:

Երօն, եկեղեցի, Աւետարան, կեանքի ամենամեծ էութիւնն է: Նարեկացուն, Շնորհալիի, Ասհակ Պարթեւի և Մեսրոպ վարդապետի նման էտիներ եկեղեցն ստեղծագործող միտքերը Հայ եկեղեցւոյ: Իմ մազթանքս է, ինչպէս ըստ, և կուզեմ որ դուք ալ ինձ հետս ազօթէք. — «Զի բացին աչք մեր»: Թող մեր հոգեւոր աչքերը բացուին, տեսնենք լոյսը, ճշմարտութիւնը և ճանապարհը որ կը տանի գէպի կեանք, զէպի յաւիտենականութիւն:

Ծնորի Տեառն եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսին ամեն:

Ս. Հայրապետի չորրորդ քարոզն է այս՝ խօսուած դահիրէի մէջ: Առաջինը՝ իր բարի գարտահան առթիւ Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ, Եշ. օր, 22 փետր. Սաղմոսէն «եթէ Տէր ոչ շինէ զտուն՝ ի նանիր վաստակին շինողք նորա, եթէ Տէր ոչ պահէ զքաղաքն՝ ի նանիր արքնին պահապանք նորա» բնաբանով:

Երկրորդը՝ ուր. 23 փետր. Երեկոյեան հսկումին դարձեալ նոյն եկեղեցւոյն մէջ՝ «Մառայք անպիտան եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք» (Ղուկ. մէ. 10) աւետարանական խօսքով:

Երրորդը՝ կիր. 25 փետր. գարձեալ ի Ա. Գրիգոր Լուսաւորիչ, Ա. Պատարագի պահուն, «ի ծագել արեգական կորնչին աստեղք» բնաբանով, բոլորը աւանդուած հոգեպար իմաստով և պատկերացումով:

Գրի առաւ
ՊԱԱԿ ԳՀՆՅ. ԽԱՉԻԿԵԼՆ

«Արարտ» 3 Մարտ 1945
Ազերանդրիա

20Ն

ԱԽՈ ԳԱՐԵՂԻ ԿԱՐՈՂԻԼՈՒԻ

ՄԵՄՆ ՏԱՆՏ ԿՈԼԻԿՈՒՅՑ

Հայուրինն ահա ոռպէս վարդասան,
Մրժին բուրալիր վարդերն իր նաման
Սկսած Զեր ուղին կը զոչ. ողջո՞յն
Զեզի, Վեհափա՛ռ, Հայր Մրբագնազոյն:

Վարզած լովիք լով թեւերն Հօգիին,
Կը կազմէ չենաղ այս ամսինվանին
Վեհափառութեանդ զերը երկնակամար,
Պննելու նամար Զեր փառն անմար:

Դուք, բարեխնամ Հայրն իվ Հայուրեան.
Յուղահոս զետք սիրոյ խողցութեան,
Եր խաղաղութեան սրտովն մշամառ,
Մտին փառոք, ո՞վ Հայր Վեհափառ:

Տուք՝ օրինուրինն Հայրական բարի,
Գարենան պէս աղւոր, ամրան պէս բերի,
Մաղիկովն յոյսի, սիրոյ, միութեան
Յաւիտեան բերկի Հայն ու Հայաստան:

ՇԱԲԼ ՄԵՐԾՆԵԱՆ

*Արարտ 10 մարտ 1945
Աղեքոանդրիաս

Թէյասեղանի և Պատիւ

ԱՄԵՆ. ԳԱՐԵԴԻՆ ԱՐՔԵՊՈՅ. ՅԱՎԱԼԻՓԵԱՆԻ
6500 ՌԱԿԻ ԱՆԹԻԱԼԱՍԻ ՀԱՄԱՐ

Խանդավառութեան օրեր կ'առջրի կրկին Եգիպտահան-
յաթիւնը՝ այն օրերէն ուր սիրան ու հոգին կը լիցուին
Հայրենասիրական ու Եկեղեցասիրական յորդ զգացումներով։

Եւ ասիկա՝ անոր համար որ իր մէջ հիւրասիրելու
պատեհութիւնը տրուած է իրեն, բարձր Եկեղեցական մը,
օժտուած՝ բազմապիսի տուաքիւնութիւններով և լիցուած մա-
նաւանդ անհուն հաւատքով, մեր Հայրենիքին Ազգին և Ե-
կեղեցին ապագային նկատմամբ, հուատք մը՝ որ իրը չէ
միայն և զոր կը փոխանցէ ուրիշներուն, որուն հազարդա-
կից կ'ընէ իր շարքինները եւս։

Իր հոգեշտուն պերճ քարոզները, իր հայրենասիրա-
կան յորդորները, իր անսահման խանդավառութիւնը՝ հա-
կառակ տարիններու բեռոն, իր անձը համակ, կը յուզեն ա-
մենանատարիերներն իսկ, կը թափանցեն անոնց հոգիններէն
ներս, ու կը կատարեն իրենց բարերար ազգեցութիւնը։

Եգիպտահանյութիւնը տաիթը ունեցած էր տակէ ինը
տուրիններ առաջ վայելելու զինք իր ծոցին մէջ, առանելու և
զգայելու իր հոգենկան և մասային կարողութիւններուն, զը-
րաւուելու իր վահմ խօսքովն և անձովը, երբ իրը կաթո-
ղիկոսական Նութիրակ կողմար մեզի ան, հոսկէ Ամերիկա և
ամենութեք տանելու համար իր խօսքը, հաւատքը և խան-
դավառութիւնը։

Այսօր ան կուզայ մեզի իրը Ընարկեալ կաթողիկոս
Մեծի Տանն կիլիկիոյ, աւելի առայդ, աւելի խանդավառ քան
երբեք, նոր ձագիրներով և հեռանկարներով, իր Աթոռը
օժտելու մշակութային և հոգեւորական վառարանով մը
ուրիէ ջերմութիւնը պիտի փոխանցէ համայն Ափիւռքի։

Եւ այդ վաեմ զարձը՝ որուն համար անխօնջ կ'աշ-
խատի ինք, վասահ ենք որ, իրականութիւն պիտի դառնայ,

պիտի մեծնայ և ուռանանայ, քանի որ անհրաժեշտ պակաս մըն է որ, կուգայ լիցնել մեր իրականութեան մէջ և անոր համար՝ որ այդ աշխատանքին ձեռնարկողը՝ Գարեգին Արքեպիփիս, Յավաէփեան, անխափիր կը վայելէ բոլորին հիացումը, սէրն ու համականքը, որոնք խօսքով չեն արտայայտուիր միայն, այլ և գործնականի կը վերածուին, ինչպէս առիթը ունեցաւ եղիպահանայութեան մէկ ընտրեալ մասը՝ մաս երկու հարփւր հոգի, անանելու երեկ երեկոյ Տէր և Տիկանիթիկ Չազքըրի բնակարանին մէջ, ուր վեհափառին մասնաւու մեկնումին առթիւ թէյանեղան մը արուած էր Ազգ Իշխանութեան կողմէ:

Գարեգին Արք. ուրախութիւն յայտնելէ եռք թէ կրկին առիթը կ'ունենար շմման մէջ մանելու եղիպահանայութեան հետ, խօսեցաւ իր ազգասիրական և հոգեշունչ սարիչ աներէն մին ուր շեշտեց անհրաժեշտութիւնը Սփիւռքի Հայութեան կողունելու իր Մայր Հայրենիքին և Եկեղեցին, և գորգուրալու իր լեզուին և գարաւոր աւանդութեանց վրայ:

Ընդհ. ակնորկ մը նետելէ եռք Հայաստանի և Հայաստանեայց եկեղեցւոյ անցեալի մասին, խօսեցաւ Առքարդային Հայաստանի իրականութեան, անոր կատարած հակայ նուանութներուն՝ մշակութային, զեզարուեատական և այլ մարգերու մէջ, զայն իրեն միասկ կուտանը ներկայացրնելով համայն Հայութեան վերագարթնումին և վերիւքին։ Ազա խօսեցաւ Հայաստանեայց եկեղեցւոյ վասմ զերին իւ առաքելութեան, ազգապահանպանման տեսակէտէ անցեալ գարերուն անոր կատարած զերին մասին և շեշտեց ներկայիս ևս անոր շուրջ բոլորունելու անհրաժեշտութիւնը, անոր միջոցաւ մեր հոգիները, մեր մշակոյթը, մեր աւանդութիւնները, մեր լեզուն կենդանի պահելու համար միշտ, մանաւանդ գաղութներուն մէջ։

Ու եղբակացուց ան ըսելով թէ ինչպէս ծառ մը կը չորնայ երբ կարուի իր բունէն, հոգ չէ թէ առաւել կամ նուազ ժամանակի մը մէջ, նոյնը վերապահուած է գաղութներուն, եթէ արեւածազիկին նման անոնք

իրենց ակնտրկները չսևեռան մինչեւ մեր Մայր Հայութ-
նիքին ու մեայուն կերպով անկէ չօտանան իրենց ներ-
շընչումները, հաւատարիմ մեալով հանգերծ և կատարելով
իրենց քաղաքացիական պարտականութիւնները իրենց ընդ-
գըրկած նոր հայրենիքներուն մէջ:

Պ. Արակն երկաթ կարդաց վեհափառին առզգուած
հայակապ ձօն մը, ուր երեւան կուգայ վեհափառին անձին
հանգէպ ժողովուրդին ունեցած մէրը, անոր տաւաքինու-
թիւններուն և մատառուրակոն ու հոգեկան կարողութիւննե-
րուն հանգէպ սքանչացումը և իրմէ սպասուած ակնկալու-
թիւնները:

Խօսք առաւ Մամբրիէ Սրբազան և ընդհանուր կեր-
պով պատկերացնելէ ետք մեր ազգային և եկեղեցական
կացութիւնը և ըսնէլէ ետք թէ մեր գարաւոր եկեղեցին, որ
գժուարին շրջան մը անցընչու վրայ է ներկայիս, յաճախ
ունեցած է տագնապալի վայրիկեաններ, սակայն միշտ ալ
կրցած է զօրաւոր զուրս զալ այդ տագնուապներէն, շնորհիւ իր
պետերուն անձնագոնութեան և կարողութեան, ոգեկոչեց մեր
մեծ Հայրապետաներուն յիշատակը և վեհափառ Գարեգին
Սրբազանը նկատեց անոնց աժանաւոր յաջորդներէն մին:

Յետոյ ընդգծեց անոր կարողութիւնները, վեր առաւ
անոր մէջ հաւատաքի և ջերմեռանդութեան առաքինութիւն-
ները, ծանրացաւ՝ իրեւ Ծնարեալ կաթողիկոս Մեծի Տանն
Կիլիկիոյ՝ անոր ստանձնած ծանր պատասխանատուութիւն-
ներուն վրայ և յոյս յայտնեց որ, վեհափառը, իր ծրագիր-
ներով՝ որոնց իրականացումին համար անխօնչ աշխատող
մը և հաւատացող մըն է, մեզի պիտի տայ իր անձին օրի-
նակովը մնած, իր հաւատաքի և առաքինութիւններով օժ-
արւած նոր եկեղեցականներ:

Հուսկ ուրեմն հրաւէր ըրաւ ներկաններուն որ աջակ-
ցին վեհափառին վեն նպատակներուն իրազործման և իրեւ
գործնական մարդ խօսքը փախանցեց Թեմականի Ասենա-
պետ Պ. Ճանիկ Զագըրի՝ ինքն իսկ օրինակը տալու համար
ներկաններուն:

Պ. Ճանիկ Զագըր անդրազառարէ ետք վեհափառին

նախորդ այցելութեան և ըսելէ ետք թէ՝ ինչպէս եղիպատ-
հայ համայնքը սիրայօժար իր օժանդակութիւնը բերած էր
կչմիածնայ զմբէթին նորոգման քար քարի վրայ դնելու
գործին, ըստ թէ հիմայ չէ որ պիտի զլանանք մեր օժան-
դակութիւնը երբ խօսք կ'րլլայ հոգիներ շինելու, հոգեկան
զմբէթներ՝ այսինքն բարձր հոգեւորականներ և մտաւորա-
կաններ պատրաստելու համար, և հրապարակու յանձնաւ-
ռու եզու վեհափառ Հայրապետին կողմէ որոշուելիք գու-
մարը գնել անոր արամադրութեան տակ:

Ներկանները փափաք յայտնած ըլլալով որ աւելի
մանրամասնութիւններ արուին վեհափառին ծրագիրներուն
մասին, Գարեգին Արք մանրամասնորէն պարզեց իր առա-
ջազրութիւնները, Անթիլիստի մէջ Ծնծայարանի, Մատե-
նագրարանի և Տպարանի հարցերուն վերաբերեալ

Յետոյ Մամբրէ Սրբազն ներկայացուց Դերենիկ
վրդ. Փոլատեանը՝ որ նմանապէս անզրադառ վեհ. Կա-
թողիկոսի ծրագիրներուն և իրենց ակնկալութիւններուն
մասին:

Ապա խօսք առին «Յուսաբեր»ի և «Արեւ»ի խըմբա-
գիրները Պ. Պ. Պ. Մխիթարեան և Յ. Արամեան, որոնցմէ
առաջինը շնչաց վեհ. Հայրապետին ծրագիրներուն կարե-
առութիւնը և առազութիւնը, իսկ երկրորդը յարզանք մա-
տուցանելէ ետք Գարեգին Սրբազնին՝ թելազրեց խօսքին
գործի անցնիլ և անմիջապէս հանգանակութեան սկսիլ,
Ամենապահ մինուլորակ մը մէջ սկսու արձանագը-
րութիւնը նուիրատուներուն:

Վեհափառ Հայրապետին շնորհակալութեան և օրէ-
նութեան խօսքով հաւաքարութիւնը վերջ գտառ:

Վ. Պ.

«Արեւ» Գաճիրէ:

1945 մարտ 3

Վեհափառին Հայրենաշունչ ձառը

«ԱՌԱՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԴ Չ ՏԻ ԿՐՆԱՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ
ՈՒՆԵՆԱԼ» ԿՐՄԱՆ ԱՊՐԻՆՑԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ

1945 Մարտ 2ին Դանիկի ազգային իշխանութեան կողմէ ի պատճի իրեն տրուած թէլյասեղանի ընթացքին Վեհափառը հնտեւեալ հայրենասիրական նատը Խոսած է:

Առանց Հայրենիքի ազգ չի կրնար գոյութիւն ունենալ, ըստ Վեհափառը: Ինչպէս ծառը չի կրնար ապրիլ առանց արմատի, ինչպէս տունը չի մնար առանց հմմի, նոյնպէս ալ ազգ մը չի կրնար ապրել ու աեւել առանց Հայրենիքի: Դուք դիտէք արեւածագիկը, որ արեւեին հետ կը գտանայ միշտ, որ կողմը որ կը գտանայ արեւը, արեւածագիկն ալ կը գտանայ այն կողմը: Մեր հայրենիքը իր պատմութեամբ և աւանդութիւններով, իր ձիւնապատ լեռներով, իր կանաչագարդ հովիաներով ու գաշտերով, իր օդով ու ջուրով, իր կեանքով կրնայ սնուցանել Հայ ժողովուրդը, որպէսողի ան պահէ իր ազգային դիմագծութիւնը: Մեր Խորհրդային Հայրենիքի հոյութեան համար վախ չկայ այլեւս: Բայց Սփիւռքի հայութիւնը, եթէ գաղրի ներշնչուելէ այդ հայրենիքով, անոր հերոսութիւններով, անոր սուրբերովն ու սրբավայրերովը՝ անպայման կը կորչի: Սակայն հայրենիքը, ինչպէս ասկէ առաջ ալ ըսեր եմ, միայն հոգ ու ջուր, լիռ ու գետ, որբավայրեր և յիշատակարաններ չեն: Հայրենիքը նաև Հոգի է: Կարելի է զայն ապրիլ հոգիներու խորքը:

Հայաստանեայց եկեղեցին այն միակ ու գերազոյն ազդակն է, որ կենդանի կը պահէ այդ հոգեկան հայրենիքը, կը պայծառացնէ զայն:

Հայրենիքին հեռու մանաւանդ, Հայաստանեայց եկեղեցին պաշտպանն է Հայ մշակոյթին, հայ արուեստին, հայ խորհին: Պիտի ուղէի որ իմ ժողովուրդս Սփիւռքի մէջ փա-

բան մեար Հայրենիքի խորհրդանիշ, Հայրենիքը մարմեա
ցընող Եկեղեցին, մշակոյթին:

Ներկաներէն Պ. Օ. Մաճառեանի խնդրանքին վրայ,
Վեհափառը խօսեցաւ Անթիլիասի իր ծրագիրներուն վրայ:

Կը խորհիմ, ըստ ան, Աստուծոյ կամքով և ժողովուրդին օժանդակութեամբ, Անթիլիասը վերածել տիպար
գպրեվանքի մը: Նպատակս է հասցնել բարձր կրթութեամբ
և կեղծեցականներ, ուսուցիչներ, որովհետեւ այս ազգը պէտք
ունի անոնց: Գիտի կուզմակերպեմ Անթիլիասի տպարանը:
Հայրենակից մը, Ամերիկայէն, ամբողջ կազմով տպարան
մը նուիրած է մեզի:

Յեսոյ զարկ պիտի առաջ հրատարակչական գործին:
Ժողովրդական «Հասկ»ին քով կ'ուզեմ հիմնել զիտական
«Հասկ» մը, կամ ուրիշ պարբերագիրք մը, որուն աշխատակցող յօդուածագիրները ըլլան հեղինակաւոր զրիչներ,
որոնց կարծիքը նշանակութիւն մը ունի մեր պատմութեան
և որուեսաներուն համար: Գրական պարզեւներ պիտի փորձ
ձեմ հաստատել, գործեր հրատարակելով և զիրքերուն կէսը
հեղինակներուն տալով և կամ այլ կարգադրութիւններ
ընկլույ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին մէջ՝ «Տնտեսի կիրակիչին իր քարտով՝ վեհ, կոթողիկոսը, պատմելի եաք
Աւետարանի ծանօթ առակը, ըստաւ:

Խնչպէս մեծասան կողմէ կարգուած կալուածոց տընտեսը,
նոյնպէս և ձեզմէ ամէն մէկը պէտք է մտածէ, իր
առօրեան ապրած ժամանակ, թէ ի՞նչ ընէ, որ ծառայէ յաւ-
շիտենականութեան: Ասօրեայի նիւթականէն անդին պէտք
է աշխատիլ աննիւթական բաներուն համար:

Գիտնականներու կարծիքով՝ արգար չէ որ, պաշտօնեայ
մը իր տիրոջ հաշույն ապրի ապագայի համար: Բայց
Քրիստոնէութիւնը կ'ընդունի որ այդ է մարդկային կոչումը:
Դուք, Աստուծոյ կալուածին՝ աշխարհին մէջ, կեանքին մէջ
անտեսներ էք, ու պիտի վնասէք այնուղ ինչ որ յաւիտենական է:

Ոմանք կ'ըսեն, «Մենք հարաւստ չենք, մենք տաղանդ

չունինք որ օգտակար ըլլանք մեր ազգին և նմաններուն։
Սխալ է այսպէս մտածել։ Ամէն մարդ զեր մը ունի կա-
տարելիք այս ընկերութեան մէջ։ Եւ այդ զերը՝ նախ ապ-
րին է հոգեւոր ներքին կեանք մը, ապա զայն հազորդելը
ուրիշներուն, զանոնք։

Գիտէք, իմ սիրելի հաւատացնալներ, որ յաւիտենա-
կան պիտի ըլլան ձեր ապրութիւնը, եթէ ձեր մտածութիւնը
ուղղուին Հայրենիքին, ազգին և եկեղեցիին։

Մարդիկ արտաքինով կը դառն ամէն ինչ, բայց
Աստուած՝ ներքինով, Աստուած կը նայի մարդոց անձնուի-
րութեան չափին՝ ընծայելու համար անոնց արժանաւորու-
թեան։ Մանր երեւյթներ կան, որոնց չենք անդրադառ-
նար կեանքի մէջ, մայրերուն օրինակը թող ձեզ առաջնոր-
դէ։ Ո՞չ ոք կը սախովէ մայր մը՝ որ զոհուի, տառապի իր
զուկին համար, առաջնորդէ զայն։ Մեզմէ ամէն մէկը
պէտք է ունենայ պարտականութեան գիտակցութիւնը բնազ-
դական կերպով, ինչպէս մայրիկը։

Հասերեւոյթին՝ պիտիկ զործ է մօր գործը։ Բայց
մեծ է անոր նշանակութիւնը։ Պզափիկ զործ չկայ կեանքին
մէջ։ Մէկ բաժակ ջուր, արուած ծարաւին, մեծ զործ է։
Մեր նախահայրերը և իրենց գործերը թող առաջնորդեն
մեղ, աւանդութիւններն ըլլան մեր ներշնչառանը, և մենք
ապրինք, հոգինով, ոչ միայն մարմնով։ Որովհետեւ հոգեկան
կեանքն է որ պիտի սնուցանէ մանաւանդ Ափիւռքի հա-
յութիւնը և կենդանի պահէ զայն։ Հեռու Հայրենիքին,
զուրկ ներքին ապրութիւնը, Ափիւռքը պիտի կորսուէր, ինչ-
պէս ծառի մը ճիւղը պոկուած իր բանէն։ Ամէն մէկ Հայ
պիտի բերէ իր օժանդակութիւնը ազգային եկեղեցիին և
մշակոյթին իր կարազութեան չափով, պարտաճանաչու-
թեամբ։ Միրոյ և եղբայրական զգացումը վառ պիտի ըլլայ
մեր մէջ։ Աւ մենք պիտի քայինք լուսուոր ճամրէն
որ կը տանի կատարելութեան։ Ես երազներ ունիմ, կ'ուզեմ
որ օգնէք ինձի, խրախուաէք զիս իրականացնելու զանոնք։
Եգիպտահայութեան առասաձեռնութիւնը վստահ եմ, որ
վարակիչ պիտի ըլլայ բոլորին համար։

«Ազգակը Պէյրութ 17 մարտ 1945

Երևի Հուրրա

«Մասիսը, Մասիսը, դա՛րձեալ Մասիսը... ամէն տեղ
ի՞նքն է, ալեւոր հսկան», կը գրէ տեղ մը մեր զբական ար-
ձակին իշխաններէն մէկը:

Մասիսը բառը փոխարինենք «վեհափառ» բառով և
առումը կրնանք կրկնել մեր մեծանուն հիւրին՝ Մեծի Տանն
Կիլիկիոյ Ծնորեալ Կաթողիկոսին համար, անոր Եղիպատոս
Բնակութեան շուրջ տասնեհինգօրեայ շրջանին կապակցու-
թեամբ:

Ամէն տեղ ի՞նքն է, «Ալեւոր հսկան»:

«Ալեւոր» է, այո՛, եօթանասուն ութնամեայ այս
առոյզ Նահապետը, սպիտակափառ վարս ու մօրուսով, սի-
րելի և պատկառելի միանգամայն: Եւ հսկայ մը իրօք:
Հսկայ մը՝ հաւատաքի և ազգասիրութեան, հմտութեան և
պերճարանութեան:

Ամէն տեղ ի՞նքն է: Ամէն տեղ և առաջին հերթին,
ու ամէն օր, Հայ մամուլին էջերուն վրայ, իր ներկայու-
թեան թելադրած խորհրդածութիւններով և զգացումներով,
իր այցելութեանց արձագանգներով, իր քարոզներուն և
հառերուն ամփոփումներով, իր ընտանի և հայրական կեր-
պարանքին պատկերներով...

Ամէն տեղ ի՞նքն է: Ամէն տեղ՝ Հայ եկեղեցիներուն
բեմերուն վրայ, ուրկէ Բանն Աստուծոյ, աստուծաշնչական
պատուիրանները և Աւետերանին լոյսը կը քարոզէ հաւա-
տացեալ բազմութեանց. Ազգ Առաջնորդարաններու դահլիճ-
ներուն մէջ, ուր Հայ Հայրենիքին, Հայաստանեայց Եկե-
ղեցւոյ, հայկական մշակույթին և առ հասարակ Հայոց ժողո-
վուրդին արժէքներուն և արժանիքներուն մասին այնքան
որառուուչ և սրտագրու բանիր կ'ըսէ մեզի: Հայ վարժա-

բաններու մէջ, ուր իր ներկայութիւնը և իր հայրական խօսքերն ու յորդորները այնքան անջնջելի տպաւորութիւններ առաջ կը բերեն մասազ աշակերտութեան հոգիներուն մէջ և այնքան խրախուսիչ կ'ըլլան ուսուցչութեան համար, անհատ Հայերու տաւներու մէջ, ուր հովուագետին և հօտին միջեւ կապերը կ'ամրապնդուին սիրոյ, նուիրումի ամրակուռ օգտակներով և, վերջապէս, օտար Պատրիարքարաննեներու և գեսպանատանց մէջ, ուր Հայութիւնը այնքան պատուաւորապէս և նպաստաւորապէս ներկայացուած կ'ըլլայ յանձին Հայտատանեաց հինուուրց եկեղեցւոյն մէկ պատկառելի և համակրելի դէմքին:

Ան, վեհափառը, «Ալեւոր հական» առինքնած, համագրաւած է սիրուերը և մտածումները համօրէն եղիսպատահայոց, առանց յարանուանական և հատուածական խարութեան, մեր մէջ բնակութեան այս օրննեալ օրերուն:

Սիրոյ և հիացման այս զգացումները հանգէպ մեծ հովուագետին և հանգէպ այն թուալներուն և հաստատութեանց սրոնց գրոշակիրն ու առաքեալն է ինք, պատահական չեն միայն, և կրնան շշափելի պառւղներ առլ:

Եւ տուի՞ն:

Երկու հարիւր անձի միջեւ կատարուած հանգանակութիւն մը՝ յօգուա հայրապետին գեղեցիկ և ազգաշէն առաջադրութեանց, կէս ժամուան մէջ յառաջ ըերաւ աւելի քան 6500 սոկիի գումար մը:

Հոգելացք կար հոն: Վեհափառին ներկայութեամբը, անոր լուսեղէն և հրեղէն խօսքերովը վերարծարծ բորբոքուն սիրոյ և զոհոզութեան ոզի՛ կար հոն. դարաւոր մեր հայրենիքին և աստուածարեալ մեր եկեղեցիին շունչն ու օծութիւնը կը ներգործէին հոն հոյակապօրէն:

Ծքեղ մէկ արտայարութիւնն էր արդ՝ հայրենիքին և Սփիւռքի հատուածներուն միջեւ համերաշխութեան, իրար ձեռք մեկնելու անհրաժեշտութեան, որոնց մեծ ջատագովն է Գարեգին վեհափառը:

Մատ երկու տարի առաջ, եղիսպատահայութիւնը դեռ չէր կատարած իրեն պարտականութիւնը հանգէպ Մայր

Հայրենիքին՝ ի պատասխան Ա. Էջմիածնայ կոչին (Հայաստանի օգնութեան ֆօնտին) հանդէպ գարձեալ հայրենիքին և Սփիւռքի կարօտութեանց (Բարեգործականի համազգային հանդանակութեան) և հանդէպ Կիլիկիան Աթոռին, Ամերիկայի մեր պաշտօնակից «Պայքար» խօսելով եղիպատահայութեան անցնալին մէջ ունեցած մեծ ժեսթերուն և այդ օրերուն ի յայտ ընթած կենսունակութեան և կարգ մը զոհութեանց մասին «Երեք Հուրբա» կառաջարկէր եղիպատահայութեան համար։ Այն ժամանակ այս սիւնակներէն մենք մերժեցինք այդ Հուրբաները, կանխառաս նկատելով զանանք և հրաւիրեցինք մեր համայնքը արժանի ըլլալու համար։

Եւ ահա ժամանակը եկած ըլլալով, եղիպատահայութիւնը Հայրապետին արժամագրութեան տակ դրաւ աչքառուդումար մը, որպէսզի ան տայ մեզի մարդեր, պատրաստուած եկեղեցականներ, ուսուցիչներ և մասնարականներ։

Եւ այժմ առանց անհամեստութեան կրնանք ընդունիլ մեր պաշտօնակից «Պայքար»ի առաջարկութ Երեք Հուրբաները։

Եղիպատահայութիւնը արժանի՛ է անոնց։
Յ. Ա.

*Արեւա Գանիրէ:
1945 Մարտ 3

ԳԵՂՈՆ

Նորմանիկ Կարոլիկոսի մը համար

Ա. Ն. Ս. ԳԱՐԵԳԻՆ ՅՈՒՄԻՔԱՆ

Քեզ բնիւեցին՝ աչերը մեր սեւեռուն
Հայրենիքի ծիւնալիտակ լիռներուն,
Եւ ունենդիր իր զետերուն մոնշաձայն՝
Մեր հոգւոյն մէջ բու անունիդ բազմացան
Տառերն ուկի պայծառութեամբ ռողըողուն:

Քեզ բնիւեցին՝ արխնազեղ վարդերուն
Ռ. խորհուրդի ռուշաններուն պահապան.
Քեզ խաւարի նամբաներէն անցուցին,
Եւ ահա՛ լոյսը կամարուած է՝ երկին
Գլխուդ վերեւ ասուածօրէն երմական...

Ահա՛ եկար, ու տաճարները վընիս
Կամարներով ասեղատուն են նիմա,
Ամէն խարի մէջ կ'անցնի նևէր որտիդ,
Եւ ամէն աչ իր ծիրին մէջ կը բանա
Վսեմ տեսիլք որտառոչ նասակիդ:

Քեզ բնիւեցին՝ Արարական զաւերուն
Լուսապայծառ զեղեցկութեան դառնալով,
Պաւատնին մէջ մեր ծիւնալիտակ լիռներուն.
Քեզ բնիւեցին՝ մեր սուրբերուն անունով
Երեւ յաջորդը յուսաղբիւր սուրբերուն...

Եկա՛ր մեզի երկնանրաւէր առաժեայ,
Հարականի եւ աղօրի փոխասաց.
Եւ ննչեցին մեր կոչնակները դարձեալ,
Մեր յոյսերուն աղաւնեսունն ահա՛ բաց,
Մեր զաւերուն սկսան անձեւը տեղալ:

Խաչին նես սուր ու վարդին նես բե՛ր մեզի
Տառասկ, յօսի մոխտին նես բնդվզում.
Թող լու ձայնուիդ արդարութիւնը խօսի
Ազատութեան իբրև նշաւէք ու եւզում...

Քեզ բնսրեցին յանուն այն սուրբ արիւնին,
Որով բնդմի՛ւս Եկեղեցին Հայկական
Զգեցած է վարդակարմիւր ծիրանին.
Պիտի բերես մեզի օնու ապազան
Առուազայրող արեւներէն անցեալին:

Եղի՛ր մեզի ժխորին մեջ օրերուն
Աւճայն խօսին դեմ՝ լոռորին աղամանդ.
Աւ մարմնացո՞ւր իր տեսիլքին մեջ անհուն
Ցեղին ողին, զոր մեզ բողած են առանց
Դիւցազունները փառապան զարերուն:

Քեզ բնսրեցին մեր որբերուն անունով.
Աւ մեր խաչուած երազներուն բնդմէջէն.
Հաւատացին, նեզ օգնութեան կանչելով.
Աւ ձեռներող աղօրքն է մեզ ապսէն,
Աւ նու ձեռներդ մեզ ձիրենի կը բերին:

Եղի՛ր վահան նիզակներուն դեմ Զարին,
Աւ մարմնացո՞ւր մեր ասնարներն նրաւալի.
Քեզ բնսրեցին, որ մեր նրազները վառին,
Պղսոր արցունքը մեր աչքն ա'լ դադրի,
Աւ ոյձներուն մեջ արիւնոս մեր Հողին
Նորահրած նունձներուն սերմք ծրիի...
ԱՐՄԵՆ ԵՐԿԱՐ

*Արևո Գառիքը:
1945 մարտ 3

Կիլիկիոյ Կարտիկոսը

ԵՒ ԻՐ Ա.Ո.Ռ.ՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Արդարեւ, ասուպային անցք մը ռանեցաւ Ամեն. Տ.
Գարեգին Արքաս. Յովսէփեան Աղեքանագրիոյ մեր գաղու-
թէն: Երեք օր միայն և այդ սուզ ժամանակամիջոցին եր-
կու անգամ քարցը պատեհութիւնը արուեցաւ մեղի ունկըն-
դըրելու և ըմբոշիւնելու գրագէտ և գիտուն Հայուապետին
պերճաշունչ խօսքերը, քարոզ մը և ճառ մը բաւական եղան
մեր հոգիներուն թմրիրը ցրուելու, ցնցելու և ողեւորելու
մեզ հայրենիքի, հաւատքի և տահմային սրբութիւններու
զգայութիւններով և բանալու մեր առջեւ բիւրեզ հորիզոն-
ները այն բարձրագոյն կեանքին, որուն կը նկրտին ու կը
հասնին միայն հաւատքի ու հայրենիքի տեսիլներով զրաւ-
ուած զաղափարապաշտ հոգիները:

Հրաշքի մը պատկերացումով կը հետեւէինք իր խօս-
քերուն ու շարժումներուն: Տարիներուն մեծ թիւը, ոչ
միայն չէր կրցած ստուերել անոր գիտակցութեան պայծա-
ռութիւնը, այլ նաև չէր կրցած ճկել անոր մարմինը, որ
սրբութեամբ, զաղափարապական ներշնչութեներով ապրուած
առոյդ կենցաղի մը ապացոյցը կը բերէր մեզի:

Տարիգալուստի թէյասեղանին՝ մերժեց բարձրախօսին
առջեւ խօսք առնելը՝ «Եթէ ունկնդիրներուն մէջ — ըստ —
կայ մէկը օր գտուարութիւն կը կրէ խօսքերս լսելու՝ թող
բարեհամի իմացնել ինք, ես իմ ձայնս կը բարձրացնեմ:»

Իր առաջին բառերը եթէ կարգ մը հեռուն նստող-
ներու ականջին չհասան, սակայն պահ մը վերջ, ներշնչու-
մէն տաքցած հոգին ներազգող ուժզնութեամբ լիցուց ու
ելեքտրականացուց մթնոլորտը, բառերու և պարբերութիւն-
ներու հստանքովը: Բոլոր հայուածքները յափշտակուած
կեղրոնացան իր վրայ, յաւզումը կը յորդէր իր խօսքերէն,
իր շեշտերէն, իր աչքերէն ու շարժումներէն. կը զգայինք

որ մեծ արուեստագէտի մը սիրառ կը բարախէր այդ հզօր հաւատքի մարդու մէջ:

Վեհափառը ամբողջ ժամ մը մնաց ոտքի վրայ, յարուաւ ցնցումի մէջ: Տիրական ձայնով մը խօսեցաւ առանց դոյզն ինչ յագնութիւն զգալու, առանց իր բոցաշունչ թեմբուսացի ոգեւորութեան մէջ նուազումի նշաններ ցոյց տաւու: Պարզեց մեր տաջե Հայ Ազգին փառքը կազմող հոգեւոր և մշակութային արժէքներու գանձարանը, պանծացուց վերածազկազ հայրենիքին մշառոյզ վերելքը՝ մեր պատմական կեանքին մէջ իրական և անհախընդոց հաչակելով հոն կատարուած հոյակապ նուաճումները. ապա երկարուէն խօսեցաւ իր տառքելութեան, իր աննուազ եռանդին ու կորպին, իր բազմանքներուն և ծրագիրներուն մտախն:

Կուտանք ամփոփումը իր ճառին, զոր խօսեցաւ Մերքոնեան մանկապարտէզի որանին մէջ 8 մարտին, Ազգ Իշխանութեան անզամներուն և զազութիւն ընտրանիին ներկայութեան:

«Իմ սիրելի եղբայրներ և քոյրեր.

«Ինչպէս զիտէք, մեր ժողովուրդի 1/3ը հայրենիքէն զուրս կ'ապրի այսօր, հեռաւոր Հնդկաստանէն մինչև Մերձուոր Արևելքի երկիրներ, Պալքաններէն մինչև Ֆրանսա, Հարուային և Հիւսիւսային Ամերիկաներու միջեւ ցրուած է ան: Մեր ժողովուրդի այդ տարագիր ու պանզուխտ հատուածին վիճակուած է ապրիլ այլազան պետութիւններու հովանիքին տակ և այդ պատճառով մեր վրայ պարագանութիւն կը ծանրանայ որպէս պարագանաչ քաղաքացիներ կատարել մեր պարտքը այդ հիւրենկող երկիրներուն հանդէպ:

«Այս՝ տարագիր ու ցրուած ժողովուրդ մըն ենք, բայց ունինք քաղաքական անցեալ, մանաւանդ հոգեւոր և մշակութային տեսակէտով շատ հարուստ անցեալ մը, այս տեսակ տեսուկ պայմաններու մէջ պէտք է զիտանք ապրիլ այնպիսի կերպող մը որ մեր հաւաքական գոյութիւնը չվասանգուի, պէտք է ապրիլք միեւնոյն գաղափարով, միեւնոյն ձգտումով, միեւնոյն հոգիով և մշակոյթով, վերջա-

պէս միեւնոյն հեռանկարներէն ներշնչուելու և ոգեւորուելու ենք ամէնքս ալ:

«Ճիշդ է թէ միութեան, ազգայնութեան, պետութեան, մշակոյթի իրողութեան գաղափարները յանկարծակի չեն երեւան գար, այլ կ'աճին ու կը զարդանան ատոնք աստիճանաբար հողի, ջուրի և հոգեւոր ազդակներու շարքին, կը ոտեղծուի ժողովուրդի մը մէջ միատեսակ զզացում, միատեսակ ձգուում և ըմբանում, որոնք հետզհետէ գօրանալով կը խորանան և հաւաքական կետնք կը ստեղծնի:

«Առանց հողի և ջուրի ազգ մը չի կրնար յառաջդիմել ու յարատեւել:

«Ինչ պէտք է ընեն՝ուրեմն ապրելու և տեւելու համար այն ժողովուրդները որոնք հայրենիքէ զրկուած են աշխարհի չորս ծագերը Խնչպէս պիտի պահեն իրենց Ազգային Միութիւնը. ահա խիստ կարեւոր հարցում մը, զոր մեզմէ իւրաքանչիւրը պատրաստ է ուզգել ինքզինքին:

«Մեր ժողովուրդը տեղանան եղաւ իր պատմական հոգերէն, ենթարկուեցաւ անսպորայն հարուածներու և հաւածանքներու, բայց այդ երկիրը իր աւանդութիւններով կը շարունակէ խանգավառել մեզ, անցեալ փառաւոր շըրջաններու յուշարարն է ան: «Լուսաւորչի կանթեղը» խորհրդանշանն է մեր նախնեաց խորունկ հուստոքին և զիտակցութեան: Մեր երկրին մէկ մասը Աորհրդային սահմաններուն մէջ կը բարգաւաճի այսօր հարշալի վերելքով, մեր ժողովուրդը որ պետական և քաղաքական ուրոյն կեսուքով մը կը չնչէ, նոր կենցազին նոր պայմաններու և նոր պատմաթեան համաձայն ստեղծագործելով զբականութիւն, գեղարուեստ, գիտութիւն, ճարտարապետութիւն, երբ մանաւանդ կը տեսնենք ու կը լսենք Հայ գիրը, Հայ լեզուն ամէն տեղ և ամենուն բներնին մէջ, այս երեւոյթը, սիրելիք, մեծ անհախընթաց նորութիւն է մեր պատմական կեանքին մէջ:

«Զենուացնենք մեր հոգու նայուածքները Աորհրդային Հայաստանէն. այս օտար ափերուն վրայ մեր ազգային կեանքին ապահովութիւնը, կենսունակութիւնն ու յառաջ-

դիմութիւնը կախում ունի այն յարաքերութիւններէն զորս
պիտի պահնենք մեր ծագկող և զօրացող հայրենիքին հետ:

«Հայրենիքը լոկ հոգ ու ջուր չէ, այս ալ պէտք է
լու հասկնանք բոլորս ալ, հայրենիքը մեր լեզուն է, մեր
եկեղեցին է, մեր զպրոցն ու դպրութիւնն է, մեր երգն է,
այս բոլորին միութիւնը կը կազմէ մեր հոգեւոր հայրենիքը:

«Եթէ գաղութահայութիւնը կ'ուզէ Հայ մեալ, պէտք
է դիմուայ զնահատել այս արժէքները: Մարգ չ'ապրիր աշ-
խարհի վրայ մանը աչքի առջեւ ունենալով, այլ յախա-
նակոնութիւնը, այս դիմակցութեամբ և հաւաքով կ'ու-
զէի որ մեր մտաւարականները ներշնչուէին իրենց զործե-
րուն մէջ, այս արժէքներով աշխատէին լեցնել և հարսաւ-
ցընել Հայ հոգիները:

Պատմութեան գիտակցութիւնը ամենէն մեծ զօրու-
թիւնն է, կեանքի մէջ յառաջդիմելու համար, անցեալի
զնահատութեան գաղափարն է որ մեզ պիտի առաջնորդէ
ւուագոյն կեանքի մը պայմաններուն:

«Գործելու խանգն ու արամազրութիւնը չեն պակսիր
ինձի, ընդունելով մեր ժողովուրդի որոշումը կ'երգնում
ծառայելու, նոր ու սրբազն գործի մը գլուխոր անցնելու,
բայց անսնք անձի մը կամքն ու քարազը բաւական չէ
ոյցպիսի հակոյ գործ մը առանձինն իրագործելու, ես պէտք
ունիմ ձեր բարոյական գրական խրախուսանքին:

... Խնչպէս ըստ, մեր ժողովուրդի որոշումոց և Աս-
տածոյ կամքով կ'երթամ նստելու Կիլիկիոյ մեր պատմա-
կան Աթոռին վրայ, ո՛չ իրեւ վեհափառ, այլ իրեւ մէկ
ակար աշխատաւոր իմ չարչարուած ժաղովուրդիս:

«Եղած եմ զիւզացիի զաւակ, Աստած օգներ է ին-
ձի որ ուսանիմ, զարգանամ և այս դիրքին հասնիմ, դրա-
մի ամեննեւին կարևորութիւն առած չեմ կեանքիս մէջ,
ոչինչ ունիմ այսօր, իմ յորելինական հանգիստութիւններէն
զայացած գումարները մերմեցի անձիս համար ընդունիլ,
ես ի՞նչ պիտի ընեմ զրամը, շատ դրամը մտասանջութիւն
է, հոգ է, երբեմն մարդ կը շաւարի ու չի դիմեր ուր պա-
հէ զայն, այս՝ զբամ ունենալ և անով կենդանի մարդ պա-

աքրատառել, այս է իմ համոզումն, այս ըմբռնումով լայն-օրէն բացին իրենց սիրան ու քսակը մեր Ամերիկայի եղ-բայրները, նոյն ոգիով և հասկացողութեամբ իրենց առա-տաձեռն փաստը տուին Գոհիրէի մեր հարազաները և կը յուսամ որ դուք ալ մեր սրբազն գործին հաւատքով լրց-ուած պիտի բերէք ձեր բաժինը ի փառս Հայուսանեաց եկեղեցւոյ և Հայ ժողովուրդին»:

Անվերջ և գզրդազին ծափերով գնահատուեցաւ Վե-հափառին խօսքերը: Կարճ դադարէ մը ետք Գեր. Տ. Մամբրէ եպու. Սիրունեան սրտազին շնորհակալութիւն յայտ-նելով վեհափառին իր ըրտ այնքան զեղեցիկ խօսքերուն համար բառւ. «Շատեր վեհափառ Տիտղոսի կոչումը Զեր Սրբազնութեան Օծումէն առաջ դիտել տուին թէ ձիշդ չէ. բայց ես կ'ըսեմ որ Զեր բովանդակ կեանքը փառաւոր գոր-ծերու բեղուն շրջան մը եղուծ է, հետեւարար սխալ կամ անժամանակ կոչում մը չէ երբեք ատեկա»:

Այս խօնդովառ արտայարտութիւններէն ետք Գեր. Առաջնորդ Հօր հրաւերին պատասխանելով կէս ժամուան մէջ ներկաները ի նպաստ Անթիլիսուի Հայրապետանոցին գոյացուցին շուրջ 6000 և. ոսկի:

ԹղթԱկից

Ալբետ Դանիրէ

1945 Մարտ 15

Կիլիկիոյ Կարողիկոսը

Մանօթ և ընտանի գէմք մը Եգիպտահայութեան հա-մար, որ լաւագոյն խոր յուշեր կը պահէ Սրբազն հիւ-րէն, երբ քանի մը ասարի առաջ (1936) Եգիպտասէն անցաւ ան զէպի Ամերիկա, իրեւ Կաթողիկոսական Պատուիրակ:

Տարիներ հեռու եղաւ մեր զաղութէն, բայց մեաց իր պատկերը զաղութին մէջ, իր բարոյական ու զաղափա-րական մարդու պատկերը, որ ժամանակի ընթացքին չեղ-

ծանրցաւ բնոււ: Անիկու շարունակեց գործել հեռուն, մեծ
դաղութի մը մէջ հաւատարիմ իր կաչումին ու գաղափա-
րականին և շարունակեց հմայել ո՛չ միայն մեր գաղութը,
այլ բովանդակ գաղութն ու հայութիւնը, իրքեւ անբասիր
եկեղեցական, իրքեւ գաղափարապաշտ ու հայրենասէր մը-
տաւորական և հաւատքի մարդ: Հմայեց, որովհետեւ հա-
ւատաց հայ հայրենիքի բարօրութեան, հայ ժողովուրդի
ստեղծագործող հանձարին, անոր ճակատազրին և անոր
լուսաւոր ապագային: Բայց չգոնացաւ միայն հաւատքով,
այլ գործեց անհուն նուիրումով և սիրով:

Այսօր կը վերագաւնայ մեր գաղութը, շուրջ տաս-
նեակ մը տարիներու ըեռը աւելի ծանրցած իր վանդա-
կաւոր ուսուբուն, բայց կը դառնայ՝ ո՛չ թէ յոզնած, այլ
աւելի խոր հաւատքով, աւելի մեծ խանդով և գործունէ-
ութեամբ, կրնանք ըստ սահեղծագործութեան նոր հեռանկար-
ներով: Դէմք մըն է Գարեգին Արքազան, որ հայրենիքի
շունչը կը բերէր մեկի՞ տարիներ առաջ, այժմ, ան ծանօթ
գաղութահայութեան, մաերիմ անոր ցաւերուն, հոգերուն և
կարօտագին ըղձանքներուն, ամբազական կերպարանք մը
կ'առնէ դառնախով կացութեան բացառիկ կերպարանքնե-
րէն: Էջմիածնէն կուգար հայրենիքի ու Մայր Աթոռի օ-
ծութեամբը, կը վերագաւնայ Կիլիկեան Աթոռը, ամբողջ
գաղութահայութեան երազներուն ու բազմանքներուն պր-
բոշմը իր վրան, երկու պատմական մեծ Աթոռներու ողիո-
վը տաջորսուն, նուիրաւելու համար կացութեան ու անոր յա-
ւերժական ողիին մշակման: Դէպի իր Աթոռը կ'երթայ,
ո՛չ թէ փառաւորուելու համար, այլ փառքով ծածկելու
համար գայն, գործնելով Աթոռը հոգեւոր ու մշակութային
նոր կեսանքի մը տաճարը:

«ՅՈՒՍԱՐԻՔ» Գանիք:
1945 վենը. 24

Մեծի Տաճի Կիլիկիոյ Կարտիկոս

Ա. Յ. Յ. ԳԱՐԵԳԻՆ Ս. Ա. Ջ. ՅՈՒԹԵԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Երկուշաբթի, 12 Մարտ, կէպընթացով, Տաճի Կիլիկիոյ վեհական կամաց ազգական ժողովը Ազեքանդրիա ժամանեց ընկերակցութեամբ Եղիպատահայոց Առաջնորդ Գերշ. Մամրէ Եպ. Սիրանեանի, Հոգ. Դերմենիկ Վլոդ. ի և Ազեք. Թիմ. ի առենապետ Տ. Մելքի Գլըճեանի: Նոյն կառախումքով վերագրձան նուեւ համագումարի դացող երեսփոխաններէն ոմանք:

Ազեքս. կայարանին մէջ կաթողիկոսը ընդունուեցաւ աեղւոյ Առաջն. փոխ. Հոգ. Պատկ. վ. ի, Արժ. Տ. Մեսորոպ հօր և հոն փութացող ազգայիններու կողմէ, մինչ պօյըսքառուաներու խումբ մը պատիւներ կ'ընծայէր: Վեհափառ կայարանէն ինքնաշարժներու թափօրով առաջնորդուեցաւ Ա. Պօղոս - Պետրոս եկեղեցին սրուն արտաքին դրան առջեւն մինչեւ մուտքը զգեստաւորուած դպրուհիներ և դպիրներ կարգաւ շարուած և ժողովրդեան հոծ բազմութիւն մը կ'սպասէին:

Հոն ամպհովանիի մը տակ Գարեգին Արքազան ըգգեստաւորուելով և եկեղեցական դասէն շրջապատճած, «Արքախ լեր» շարականութ տաճար մուտք դործեց, և գոհարանական մազմանք մասուցանելէ յետոյ ժողովուրդին խօսեցաւ կարձ բայց զեղեցիկ խրատական մը, համերաշխութեան, սիրոյ և խաղաղութեան յորդորով: Յետոյ ժողովուրդին աւետեց Առաջնորդի ընարութիւնը յանձին Մամրէ Ս. ի, միաձայնութեամբ:

Եկեղեցական արտարպութենէն յետոյ թափօրը «Երրոր բացուին զաներն յուսոյ» երգով և ծափահարութիւններու մէջ բարձրացաւ Առաջնորդարանի դահլիճը ուր տեղի ունեցաւ ընդունելութիւն, երգուեցան երգեր զեկովարու-

թեսամբ Արժ. Տ. Ղեւոնդ Քհ.ի և Հայր Մերը: Մամբրէ
Սրբագան զեղեցիկ ուղերձով մը Ազեքսանդրիանայութեան
կողմէ բարիքալուստ մազթեց կաթողիկոսին, որ հակիրճ
կերպով խօսեցաւ, չնորհակալութիւն յայտնելով իրեն հան-
գէոց ցայց տրուած համակրանքին համար, և ապա նախ
Ազգ. վարժարանի աշակերտանիներուն և յետոյ արինե-
րուն խօսեցաւ Խրատականներ:

Ներկաները, կրօնական գասն ամբողջութեամբ, Ազգ-
իշխանութեան անդամներէն, ի մէջ այլոց թեմ.ի Ասմենա-
պիտ Տ. Մելքի Գլըթեան, Տիարք Մեթր Քայարեան, Մ.
Թօղաթիւնան, Ա. Մալխատեան, Կ. Մկրտիչեան, եկեղեցւոյ,
վարժարանի և այլ հոգաբարձութեանց անդամներ, երկնեւ
ուսուցչութիւնը և հանրածանօթ ազգայիններ Աջը առին
Ն. Վեհ. Կաթողիկոսին: Տեղի ունեցաւ պատուասիրութիւն
մը և ամէն ոք հրաժեշտ առնելով մեկնեցաւ:

Գարեգին կաթողիկոս իջեւանեցաւ թեմ.ի անդամ Քա-
յարեանի ընտեղարանը, երեքարթի երեկոյ Ն. Վեհ.ը պատ-
ուասիրուեցաւ Տիարք Մ. Գլըթեանի ընտեղարանին մէջ թէ-
յանեղանալ մը, ուր ներկայ եղան կրօնական գասը, Ազգա-
յին Իշխանութեան ներկայացուցիչներ և խումբ մը արի-
ներ: Զարեքարթի գիշեր Առաջնորդարանի սրանին մէջ Ազգ. Իշխանութեան կողմէ արուեցաւ ձաշանեղան մը կրօ-
նական գասուն և Ազգ. Իշխանութեան անդամներուն: Աւ-
ղերձներ ըրբինլումբրէ Ա., Պատկ Վրդ., Դերենիկ Վրդ., Թեմ.ի
կողմէ Մ. Գլըթեան, խօսեցաւ նույ Վեհ.ը:

Դ. առաւուս պերճարարքու քարոզ մը խօսեցաւ Դ.
Վրդ. Ներկայ էր խուռն բազմութիւն մը: Կէսօրէն վերջ ժա-
մը 4ին արուեցաւ թէյասեղան մը Մելքոննեան մանկապար-
տէզին մէջ հրաւիրատամով: Վեհ. Գարեգին կաթ. քառա-
սուն վայրեւան իմաստալից բանախօսութեամբ մը պարզեց
իր նպատակն ու առաջադրութիւնները, որոնց իրազործման
ուխտովը առցցան և Սփիւռքի Հայութեան և նիւթական ու
բարյական աջակցութեամբը զօնեպնդուած կ'երթայ Ան-
թիւֆաս, Ազգին կողմէ իրեն վասահուած Աթոռը զրուելու և
իր կեանքին մնացեալ առրիները նուիրելու ազդապահ-

պանման զործին, որուն համար պէտք է պատրաստել զարգացնել կրօնականներ, հմուտ պատրիարքներ, վերջապէս կատարեալ մարդեր:

Մենք, ըստ վեհափառը, մեր ստացած դրամները շըրջելով պիտի փոխակերպենք մարդու: Մըքան տեղին էր վեհափառին ակնարկութիւնը բայրը անոնց որոնք դրամը կը նախընարեն մարդէն: Խօսեցաւ նաև Մամրէ Ա. և բացաւ հանգանակութիւնը յօդուտ Անթիլիասի կաթողիկոսութեան, արդիւնքը եղաւ 5497 եղ. ոսկի: Հանգանակութիւնը պիտի շարունակուի գուրար: Գարեգին Ա. չնորհակալութիւն յայտնեց նույիրատաներուն և մասնաւորապէս Մամրէ Ա.ի որ ինչպէս Գանձիրէ ուրի ևս հանգանակուեցաւ 7000 ոսկի և կը շարունակուի:

Թէյասեզանէն յետոյ եկեսցէի արարողութեանց քարոզեց Գարեգին կաթողիկոս, ներկայ էր մեծ բազմութիւն մը որոնք ունկընդբեցին բարձրախօսութ:

Ժամամբ Տին Մելքոնեանի որանին մէջ «Լամք»ի վարչութեան հրաւերով դասախոսութիւն մը ըրաւ Դ. վրդ. որ զանազան հարցումներու պատասխանեց շահնեկան բացաւրութիւններով:

Վեհ. կաթողիկոսը այցելեց Պօղոսեան վարժարանը և Հայկազեան նույիրակրթարանը և իր Հայրական օրհնութիւնները բաշխեց աշակերտաներուն: Բարի գալուստի այցելութիւն տուին վեհ. ին, Հայ կաթ. Առաջն. փոխ. Գեր. Առաջիկ վրդ. Աթանասեան և Միսիթարեաններէն վերատեսուչ Հայր Զրադեան, Հ. Գէորգ և Միքայէլ վարդապետները:

Եշ. կոսորին վեհ. Մամրէ Ա.ի և Դ. վրդ.ի հետ մեկնեցան: Մինչև Սիսի կատէր ընկերացաւ Ա. Գլըձեան:

Վեհ. և Դ. վրդ. Եշ. իրիկուն մեկնեցան Երուսաղէմ:

Ալբաքառ Աղեքոսանդրիա

Մարտ 10, 1945

ԹԵՂԱՍԻՂԱՆ ի պատիւ

ԱՄԵՆ. ԳԱՐԵԳԻՆ ՎՐՔՊՈՅ. ԾՈՎՍԵՓԵԱՆԻ
ԱՂԵՐԱՍԱՆԴՐԻԱ.

Զորեքշաբթի, 7 մարտ կ. զ. ժամը 3,30ին Մելքոն-
եան սրահին մէջ տեղի ունեցաւ ի պատիւ Կիլիկիոյ վեհ.
Կաթողիկոսին Ազգ. Խշխանութեանց կողմէ կազմակերպուած
թէյտսեղանը՝ շուրջ 200 հրատիրեալներու ներկայութեան:
Վեհապատին պերճախօս ճառէն վերջ Անթիլիասի Հոյրա-
պետանոցին համար բացուած հանգանակութենէն գոյացաւ
մօտաւորապէս 6000 եզ. ոսկի:

Գեր. Տ. Մամբրէ Եպիսկ. Արքունեան խանդավառ-
օրէն յայտարարեց թէ հանգանակութիւնը բաց պահելով
քանի մը օրուան համար՝ կը յուսայ մինչև 10,000 ոսկիի
բարձրացնել գումարը:

Բազարական ժողովոյ Ատենապետ Տիար. Յակոբ Թօ-
փալեան բացաւ հանգանակութիւնը որդեգրելով

2 սաներ(*) 1000 ե.ո.

Թեմակոնի Ատենապետ Տ. Մելքի Գլըճեան

1 սան	500	»
-------	-----	---

Մեթր Քայարեան	1	»	500	»
---------------	---	---	-----	---

Տիար Մ. Զարինանէլեան	1	»	500	»
----------------------	---	---	-----	---

» Յրթ. Արէնչեան	1	»	500	»
-----------------	---	---	-----	---

(*) Գահիրէի ազգայիններէն հետեւեալները Անթիլիասի
Դպրեկանքին համար կ'որդեգրեն սաներ.—

Տիար կարապետ Սարբեան	մշտնջենական սան	մը՝
----------------------	-----------------	-----

Տէր և Տիկ. Շանիկ Զագըր	500 ե.ո.	1
------------------------	----------	---

» Լեւոն Կոկանեան	1000	»	2
------------------	------	---	---

» Տիգրան Մերմանեան	500	»	1
--------------------	-----	---	---

» Աւ. Զագըճեան	500	»	1
----------------	-----	---	---

» Զ. Քէշիշեան	500	»	1
---------------	-----	---	---

» Լոժէն Բարագեան	500	»	1
------------------	-----	---	---

» Մ. Լիթմէքճեան	500	»	1
-----------------	-----	---	---

Տիգր Ա.	Կամսարական	1 առն	500 հ. ո.
Ներկաներէն շատեր	100, 50 և 25 հ.	առկազ	մասնակցեցան հանդանակութեան:
«Տիգրան Երկամ» Հ.	Ե.	Միութիւնը	50 հ. ո.
Հ.	Մ.	»	50 »
«Յառաջդիմառէր»			50 »
Հայ Արքներու		Միութիւն	50 »
Աւելցնենք թէ Ազեքանդրիա իր բնակութեան ամբողջ շրջանին, Վեհափառ հիւրասիրուած էր, թէմականի անդամ Մեմր Գ. Բայարեանի բնակարանը, ուստակայ ջերմ հոգածութեան և խնամքներու: Թղթվայից			

«Արքեւ» Գանձրի: 1945 մարտ 9

ՈՒՂԵՐՁ ԱՌ

Վեհ Գարեգին Ս. Կարողիկոս

Վեհափառ Տէր,

Բժբաշխնել առէլ յետոյ Գահիրէի խանդավառ հայութեան մեր մայրենի սպեզնիկ լիզուին արեւու լուսին նման ջինջ ու պայծառ բառերով և նախագահութիւններով պահապարդուած մեր իմաստալից և հոգերզմայլ յարգուններն ու քարոզները:

Վայերել առէլ յետոյ նուի մեր այն առանձնաշնորհեալ քոյլ գաղութին համակրանքով ու քաղցրութեամբ օծուն Զեր հաճելի, շնչող ու հոգեզուարձ ներկայութիւնն ու ընկերութիւնը, կը բարեհածիք այս անդամ Զեր այցելութեամբ անհամբեր սպասող Ազեքանդրիանայութիւնն ալ մասնակից ընել այդ մեծ երջանկութեան:

Թոյլ առէլ Վեհափառ Տէր, որ յանուն թեմական ժողովի ընկերներուն ու մեր բոլոր քայլերուն ու եղբայրներուն, մասուցանեմ Զեզի բարիզալուատի ջերմագին մազ-

թանքներավ մեր խորին շնորհակալութիւնն ու երախտաւ-
դիսութիւնը Զեր սոյն ազնուութեանն ու պատոյն համար:

Մենքը որ այս բացառիկ վայելքը, ինչպէս սովորա-
բար կարձ կ'ըլլան երջանկութեան վայրկեանները, պիտի
հազիւ տեւէ մի քանի օր միայն, հակառակ Զեր վեհափա-
ռութիւնը մեր մօտ երկար պահելու մեր ընդհանուր ան-
զուստ փափաքին: Սակայն միւս կողմէ, կը մխիթարուինք
մտածելավ որ, եթէ չէք կրնար զոհացում տալ մեր բազմա-
քին, պատճառը սա է թէ՝ դուք քաջ, բարի և խոճամիտ
Հայութագետ, կը սիրեք ժամ տաջ երթալ և փարիլ Մեծի
Տանն Կիլիկիոյ պանծալի և անսատան Ա. Աթոռոյ, տարա-
չիր հատին հոգեկան, մտաւորական և Գիզիքական պահ-
պանման, կրթութեան, կազմակերպութեան և յառաջդիմու-
թեան սրբազն առաջնորդութեան:

1936ին երբ տառջին անգամ եզիպտահայութիւնը
վայելից Զեր ներկայութիւնը, ես Եզիպտոս չէի և, հետե-
ւարար, բարեբախտութիւնը չունեցայ այն առեն վայելիու
Զեղ անձամբ ճանչնալու պատիւը:

Փրութիւններն և երկնը զաղափար կրնան տալ վեր
ի վերոյ հեղինակի և մաւորականի մը անհատականութեան
մտին, ուկայն անոնք յածախ ազօտ և երբեմն ալ խարէտ-
կան են: Մտաւորական մը, զրադէտ կամ հանրային զործիչ
մը աւելի հեշտ և դիւրին է մատէն ճանչնալ երբ անձնա-
րին հետ, և մանաւանդ, լոյս աշխերով կը տեսնէք անոր
կենդանի աչքերն ու կ'զգաք ու կը զննէք անոր անհատա-
կանութեան արտացոլացումն ու ապաւորութիւնը:

Այս վերջին օրերուն, երբ զերազանց հաճոյքն ունե-
ցայ վայելելու նախ Գահիրէի զանազան ընդունելութիւն-
ներու ընթացքին, Զեր սքանչելի, զործնական և հանձարեղ
բարողներն ու խորհրդածութիւնները և երէկ, երբ մեր Գա-
հիրէն, Աղեքսանդրիս ձամբորդութեան անմտանալի ու
մտերմիկ, քաղցրացունչ խօսակցութեանց ընթացքին, հա-
րուգակից եղայ Զերմօրէն Զեր եղական անհատականութեան,
զորդակից եղայ Զերմօրէն Զեր եղական անհատականութեան,
զորդակից եղայ Զերմօրէն Զեր եղական անհատականութեան,

միայն Հայ ժողովուրդի կողմէ ընտրուած էք Մեծի Տանն
Կիլիկիոյ Ար. Աթոռին վրայ բազմելու, այլ Հայոց Աս-
տուածն է որ իր խանգարանի և անսահման բարութիւ-
նով պարզեւած է Զեզ մեր ժողովուրդին, որպէսզի Զեր
խելացի և բաւաշող Հովուապետութիւնով տառջորդէք
Զեր տառապեալ տարագիր հօառ իր անցեալի պատմական
հանգրուանին և վասաքին:

Վեհափառ Տէր, ևս բացարձակապէս համազուած ևմ,
մարգարէի մը նախազգացումով թէ դուք շնորհիւ այս
աննաման խոր հաւատքին և անպարտելի կամքին, որոնք
Զեր մեծ հայրենասէրի և անբասիր կրօնականի անհատա-
կան մեծապայծառ յատկանչերն են, կատարեալ յաջողու-
թիւնով պիտի պատկուիք Զեր Սրբադան ուռաքելութեան մէջ
և Զեր արդէն խնկելի անունը պիտի յաւերժանայ մեր ցե-
ղին պանծալի պատմութեան էջերան մէջ, Սոհակ Պարթե-
սի, Մեսրոպ Մաշթոցի, Ներսէց Շնորհալիի և Ներսէս Լամ-
բըրոնացիի նման քոջ և պաշտելի հայրապետներու կարգին:

Կ'զգամ թէ դուք փոքր մատանգութիւն մը անիք
Զեր պատկանելի տարիքի մասին, ի՞նչ փոյթ մատանել, վե-
հափառ Տէր, տարիներու մասին երբ դուք լու գիտէք թէ՝
մարգեցին կեանքին տեւողութիւնը կը անօրինուի ամենա-
բարձր Աստուծոյ կամքով ։ Քանի տարեկան երիտասարդի
վայել Զեր կենաւունակութիւնը, Զեր ժիր ու աշխայժ բնա-
ւորութիւնն ու անսահման կորութ ու խանգարակութիւնը
մի՞թէ բացայաց ապացոյցներ չեն թէ՝ Հայոց Հզօր Աստո-
ւածը կը սիրէ որ դուք ապրիք երկոր ու երկար յօդուա
մեր գարաւոր եկեղեցին, պաշտելի կրօնքին և փառապանձ
ցեղին։ Վեհափառ Տէր, վասահ եղէք, դուք պիտի ապրիք
և պիտի մնաք առողջ զեռ շատ երկար տարիներ, մանու-
ւանդ երբ կը մատաքիրէք թէ բավանդակ' հայութիւն մը կ'ա-
զօթէ շարունակ Զեզ համար։

Գացէ՞ք, Աստուծոյ օրնութեամբ Զեր Ա. Աթոռին
լծուեցէք ուրախութեամբ Զեր իտէալին իրազորձման, առ-
լով մեր ժողովուրդին անբասիր և անձնուէր, անշահախըն-
դիր, հայրենասէր, գաղափարապաշտ և անսայթաք անհա-

տականութեան տէր հովիւներ, մտաւորականներ և դաս-
տիւրակներ:

Անչուշտ այս ուղղութեամբ դուք պէտք ունիք մեր
բոլորանուէր բարոյական և մանաւանդ նիւթական օժան-
դակութեան:

Ինչպէս Գահիրէի մեր հայրենակիցները արգէն նու-
խօրեակը տուին այդ աշակցութեան, մենք ալ, կարող եմ
յայտնաբերել իրեւ թարգմանը Աղեքսանդրիանայութեան,
պատրաստ ենք սիրով կատարելու մեր պարտականութիւնը:

Վեհափառ Տէր, վերստին կը մազթեմ ջերմօրէն որ
Բարձրեալը պարզեւէ Զեզի Զեր բոլոր բաղձանքներուն լիա-
կատար իրականացումը:

Միեւնոյն ատեն պիտի խնդրէի, սիրելի հայրենակից-
ներ, որ ըմպէինք մեր բաժակները Մեծի Տանն Կիլիկիոյ
Ս. Աթոռին բարօրութեան և անսասան պահպանման բարե-
մազթութիւններով:

ՄԵԼՔԻ ԳԵԼԲԵԱՆ

«Արարտ» Ազերաանդրիա

10 մարտ 1945

— o —

Վեհին մեկնումը Աղեխանդրիայէն

Հինգշաբթի 8 մարտ, առաւօտեան ժամը 11ին, Կիլի-
կիոյ Ըստրեալ կաթողիկոսը Մէթր Գէորգ Քայարեանի ըն-
կերակցութեամբ եկաւ Առաջնորդարան իր հրաժեշտի այ-
ցելութիւնը տալու:

Գեր. Տ. Մամբրէ Եպս. Սիրունեան, Հոգ. Տ. Պատկ
վրդ. Թումայեան և Թեմականի ու Քաղաքականի Ատենա-
պետներն ու անդամները, Պօղոսեան վարժարանի Տնօրէն
ու ուսուցչները մեծ պատիւներով ընդունեցին Վեհա-
փառը և խմբանկարուեցան:

Ժամանակի սղութեան պատճառով Ն. Սրբութիւնը
ցաւ յայտնեց որ երկար պիտի չկրնար մեալ և խօսիլ, բա-

ւականացաւ միայն հետեւեալ մաղթանքներն ընկելով։ «Առառածուծոյ Օրհնութիւնը կը հայցեմ Ազեքսանդրահայութեան վրայ, մեր եկեղեցիին վրայ, նուե ձեր բոլոր բարի և զեղեցիկ ձեռնարկութիւններուն վրայ, ամէն»։

Վեհափառին մինչև կայտրան ընկերացան Հոգ. փոխ. Հայր Առաքը և Ազգ. իշխանութեանց անդամները։

Կայարան եկած էին նոյնպէս հայ արքները հրաժեշտի իրենց յարգանքը մասուցանելու մեծանուն եկեղեցականին։

Ժամը 12ին, Կիլիկիոյ կաթողիկոսը, Գեր. Առաջնորդ Սրբազնութեան և Հոգ. Դերենիկ վրդ. Թողուցին Ազեքսանդրիան։

ԹՂԹԱԿԻՑ

Ալբետ Դանիել

1945 մարտ 9

— o —

Վեհափառը Երուաստիմ Մելիքնեցաւ

Վեհ. Գարեգին կաթողիկոս, ընկերակցութեամբ եղիպատահայոց Առաջնորդին և Հոգ. Դերենիկի վրդ. ի երէկ կեսօրէ վերջ ժամը 4.30ին, նոր վերապարձած Ազեքսանդրիայէն, ժամանաց Գառհիրէի Ազգ. Առաջնորդարանը, ուր ընդունուեցաւ Ազգ. իշխանութեանց անդամներուն և մամուլի ներկայացուցիչներուն կողմէ և ուր, թէյտեղանի մը շուրջ, վերջին հանդիպում մը անզի ունեցաւ վեհափառին նետ, հրաժեշտի հանդիպում։

Թէյտեղանի ընթացքին Ազգ. երեսփոխան Տիար Մանուէլ Պէլլէրեան կարգաց զրուոր ուղերձ մը և Արք. Տ. Պատկ Քննյ. Առաջիկեան խօսեցաւ որիչ մը՝ ի զիմաց քահանայական դատուն։

Ազա խօսք առաւ Հայրապետը՝ «Որ որագին շնորհակարաթիւն յայտնեց Եղիպատահայութեան՝ իրեն հանդէպ ցոյց տրուած խորունկ յարգանքին և ֆերմ սիրոյն համար, զորս ընդունեց ոչ թէ իր անքին համար, այլ ի հաշիւ

Հայուստանեաց հնաւանդ և սիրելի եկնզեցին «որուն մէկ ծառայողն եմ ևս միայն» ըստու։ Ծնորնակալութիւն յայտնեց նաև Եգիպտահայութեան՝ իր ազգային, կրօնական և մշակութային առաջազրութեանց իրազործման համար ևս Դահիրէի հայութիւնը իր արածագրութեան տակ դրած էր շուրջ 7000 ոսկի, որուն մէջ 11 սանի համար յանձն տանը ուժ գումարներ։

Վեհափառը բաղձանք յայտնեց որ մէկ կողմէ մեր Երեւան մայրաքաղաքին և մեր Մայր-Աթոռին և միւս կողմէ Անթիլիոսի և Հայ Երուսաղէմի վրայ խարսխած և անոնց վրայ կամարած ողեկան կամուրջը աւելի եւս ամրապնդուի և հայութիւնը Մայր-Երկրին թէ Սփիռոքի մէջ ըլլոյ մի և միարան։

Ապա ինքնաշարժներու թափօրով Վեհ. ը առաջնորդուեցաւ կայսրան և հայր Դերենիկին հետ մեկնեցան Երուսաղէմ ։ Բարի հանապարհ մեծանուն Վեհափառին։

«Արև» Դահիրէ

1945 մարտ 9

Վեհափառ Երուսաղէմի մէջ

Աւրբաթ, 9 մարտ 1945, առաւօտեան Ժամը 9.25ին «վակօն-լիւազ Գահիրէն» Լիտուայի կայարանը ժամանեց Կիւմակիոյ Ընարեւու Վեհափառը, ընկերազցութեամբ Հոգ. Դերենիկ վրդ. Փոլսաւեանի Նախապէս Երուսաղէմէն Լիտուա գացած էին գիմաւորելու (Լիտուա կայարանը Երուսաղէմէն 65 քիմ. է), Երուսաղէմի Պատրիարքութեան կողմէ՝ Լուսարատակեան Հոգ. Տ. Եղիշէ վարդապետը և Տնօրէն Ժողովոյ Երկու ներկայացուցիչները, Դամասկոսի թեմին Կաթ. Փոխ. Դեր. Եփրեմ Արք. Տահմունի և Նազարէթ Եազտապեան պէտ (որոնք քանի մը օր առաջ Երուսաղէմ ժամանած էին, նույն Հաղէպի Առաջնորդ Հոգ. Զարեհ Մ. վրդ. Հալէպի Քաղաք. Ժողովի Առենապեան՝ Տիրու Յակոբ Պատրիարք, ի դիմաց Կիւմակիոյ Կոթողիկոսութեան։

Խակ Երուսաղէմի գաղութին կողմէ ներկայացուցիչներ զրկած էին Ռ. Ազատ. Կուսակցութիւնը, Հայ Երիտասարդաց Միութիւնը, ինչպէս նաև Երիտասարդունեացը, Հայկական Միութիւնը (Հնչակեան), Մարտի, Զէյթունի Հայրենակցական Միութիւնը, «Զարթօնք»ի և «Արևելի թրդթակիցը, Երուսաղէմի Հայերուն, Թարգմանչաց վարժարանի, Շրջանաւարտից Միութեան ներկայացուցիչները: Հանէին Եափոյի վանքին Տեսուչը, Հոգեւոր Հայրենը, Կրեւելի անձնաւորութիւններ և Ռամբէի ներկայացուցիչները:

Վեհ. Հիւրը կայարանին մէջ, Եափոյի Հեմի Հայկացէնի սկառաւտեներէն կազմուած պատուոյ պահանձներու կողմէ և եկար ծափերու մէջ առաջնորդուեցաւ դէպի ինքնաշարժները:

Տասնըեսթը ինքնաշարժներէ կազմուած խումբը համբայ երաւ դէպի Երուսաղէմ: Սուրբ քաղաքը մօնելէ տառջ, երկու Անգլիացի մօթօսիքլիստներ առաջնորդեցին վեհափառը: Երբ ինքնաշարժներու խումբը հասու Եափոյի դռուը, Վեհ. Ծիմաւորուեցաւ բոլոր ազգերու կրօնակետաց ներկայացուցիչներուն կողմէ և Ս. Աթոռոյն Միարանութեան կողմէ «Հրաշափառով» առաջնորդուեցաւ Ս. Յակոբայ Տաճարը: Հան կ'սպասէր Պատրիարք Հայրը, դրան առջեւ ողջազուրուելէ ետքը, Վեհ. Ծտաւ: Ս: Գլխադիր ու իր ուխտը ընելէ վերջ, բարձրացաւ սեղան, խօսեցաւ կարձ քարոզ մը ազգային հոգեկան արժէքներուն մասին: Անկէ վերջ ժողովուղը և հիւրենը ելան Պատրիարքարան և Պատրիաք Հայրը յանուն միաբանութեան և ժողովուրդին բարի գալուստ մազթեց վեհափառին:

Աչահամբոյրէ յետոյ ժողովուրդը ստացաւ Վեհ. ին օրնութիւնը և մեկնեցան:

ԹՂԹԱԿԻՑ

«Զարթօնք» Պէյթութ

10 մարտ 1945

Վեհափառ Հայրապետը Երուսաղեմի մէջ

(ՄԱՆՐԱՄԱՄՆՈՒԹԻՒՆԻ)

Իիւդ կայարանէն վեհափառը նոտաւ Պատրիարքաւանի ինքնաշարժը, որուն մօտ քառասուն ինքնաշարժներ հետևեցան: Երուսաղէմի արևարձանին մօտ անգլիացի ուստիկաններ մօթօսիքը, թներով առաջնորդեցին թափորը մինչեւ Դաւթի Բերդը, Ս. Քաղաքին երթեւեկութիւնը գաղրեցաւ, կառավարութիւնը ամէն անզ սատիկաններ զրած էր, ժողովուրդը փողոցներուն մէջ կիլիկիոյ վեհ. ին գալուստը կը դիտէր: Դաւթի բերդին առաջ Միաբանութիւնը շուրջուազգեատ կ'ապասէր օտար հոգեւորականներու և կառավարութեաններու հերկոյացուցիչներու: Հետո վեհ. ը առաջ նղթայակիրի ժամանակէն շուրջառ մը, իր քովէն կը քառէին Եփրեմ Ս. և Լուսարարապետ Հայր Եղիշէ, առջևէն վարդապետներ, և Ժառանդաւորաց վարժարանի աշակերտութիւնը, անոնց առջևէն թարգմանչոց վարժարանի առուակներ և մարզիկներ, անոնց առջևէն պատրիարքարանի գեղադցեատ բարապանները և նաև ուրիշ բարուապաններ զանազան պատրիարքարաններու: Վեհ. ին կը հեպահներ մարզիկներ և մարզիկներ առջևէն պատրիարքարաններու: Վեհ. ին կը հեպահներ մարզիկներ և մարզիկներ առջևէն պատրիարքարաններու: Վեհ. ին կը հեպահներ մարզիկներ և մարզիկներ առջևէն պատրիարքարաններու: Վեհ. ին կը հեպահներ մարզիկներ և մարզիկներ առջևէն պատրիարքարաններու: Վեհ. ին կը հեպահներ մարզիկներ և մարզիկներ առջևէն պատրիարքարաններու:

Ապա նոյն թափորով առաջնորդուեցաւ պատրիարքարան: Ալեհ. սկիզբեցիէն գուրս ելաւ Պատրիարք. Հօր քարտան: Ալեհ. ը եկեղեցիէն գուրս ելաւ Պատրիարք. Հօր քարտան: Ալեհ. ը եկեղեցիէն գուրս ելաւ Պատրիարք. Հօր քարտան: Ալեհ. ը եկեղեցիէն գուրս ելաւ Պատրիարք. Հօր քարտան:

և կենդեցւոյ միասնականութիւնը և նուիրապետական Աթոռաներուն փոխադարձ եղբայրական սէրն ու յարդանքը իրարու հանդէպ:

Ժառանգաւորներ երգեցին «Երրոր բացուին գաներն յուսոյց»: Պատրիարքը ըրաւ ուղերձ մը ի միջի այլոց ըսեւլով. — «Աստուած բացաւ Կիլիկիոյ յոյսի գաները, երրոր զուք բացիք ձեր օրտին գաները»: Վեհ.ը ի պատասխան Ամենապատիւ Հօր, մազբեց պայծառութիւն Մայր Աթոռոյ, Մայր Հայաստանի, Երուսաղէմի, կ. Պալոսյ պատրիարքական Աթոռներուն, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Հայ եկեղեցւոյ՝ ընդհանուրն: Նոյն օրը կէսօրէ վերջ Լատինաց պատրիարքին փոխանորդը այցելութեան եկաւ իր հետորդներով:

Վեհ.ը, իրեն ընկերացող Հոգ. Դիերենիկ վրդ.ին հետ հիւրոսիրուեցաւ հին պատրիարքարանի շէնքին մէջ որ պատշաճօրէն կահաւորուած էր:

Շարաթ օր մարտ 10ին, Երուսաղէմի կոստովարիչը Պրի. Փօլաք այցի եկաւ Վեհ.ին իր հետեւորդներով: Կիրակի առաւօտեան Ա. Պատարազի միջոցին քարոզեց ժողովուրդին:

Միարանութիւնը գլխաւորութեամբ պատրիարք Հօր ճաշկերոյթ մը տուաւ ի պատիւ իրեն: Պատրիարք Հայրը բաժակ տառջարկեց Վեհ.ին կենաց. ոս փոխադարձեց մեր նուիրապետական Աթոռներուն պայծառութեան համար:

Խօսք առին Եփրեմ Ա., Նորայր, Զարեհ, Հայկազուն, Դիերենիկ և Աերովքէ վարդապետներ ։ Երգուեցան «Երրոր բացուին», «Օրհնեցէք զՏէր» Ա. Աթոռոյ կրօնական պաշտօնական երգը, «Էջմիածին ի Հօրէ»:

Բ. Վեհ.ը այցելութեան դնաց Երուսաղէմի կոստովարիչին, ընդունելութիւնը եղաւ շատ սիրուիիր, հրամեցափ ժամանակ կոստովարիչը մինչեւ շէնքին արտաքին մուտքը եկաւ:

Կանխաւ եղած հրաւէրին համաձայն. ընկերակցութեամբ Պատրիարք Հօր, Վեհ.ը ճաշի դնաց Պաղեսամինի և Անդրյորդանանի կոստովարիչին ապարանքը:

Երթու դարձի ժամանակ մօթօսիքլէթներով առաջ-նորդուեցաւ վեհ. ին ինքնաշարժը: Այրալիր տեսակցութենէ վերջ, ճաշեց Նորին վանմութեան հետ Ճաշին ներկայ էին բարձրաստիճան պաշտօնաւարներ: Ն. Վանմութիւնը սիրա-միր խօսակցութեան միջոցին ծանօթանութիւն վեհ. ին գիտ-նական աշխատաւթեանց՝ շատ հնաաքրքրուած է անացմով և փափաք յայտնուած է զինք նորէն անսնել Գաղեասինի մէջ:

Մարտ 13ին, Հայրապեար Յունաց Պատրիարքարարանը գնաց ընկերուակցութեամբ Պատրիարք Հօր և ընդունուեցաւ արտակարգ պատիւներով: Նոյն օրը կեսօրէ վերջ «Հրաշա-փառչով մուտք գործեց Ս. Յորութեան Տաճարին մէջ:

Այցելեց նուև Պատրիարքոց վերեգմանասունը ի Ա. Փրկիչ և «Հազրոց» բառ հանդուցեալ Դուռեւոն, Թորդու և Մեարու Պատրիարքներու հոգւոց խաղաղութեան համար:

Մարտ 14ին, Յունաց Պատրիարքը հիւանդ ըլլալով, իր տեղ փոխադարձ այցելութեան եկան երկու եղիսկապոս, հինգ վարդապետներ և երեք սարկաւագ:

Վեհ.ը նախագահեց երեկոյեան վարդանանց Նախա-տօնակին: Հոյր Զարեհ իր առջևէն բանեց Հեթուած թո-դաւորի թանկարժէք մականը:

Երեկոյեան, Տօքթ. վահան Պալպեանի տան մէջ ի պատիւ իրեն թէյտանզան մը արուեցաւ: Ներկայ էին Պատ-րիարք Հայրը, Լուսարարապետը, Տնօրէն Ժողովոյ, Միա-բանութեան անդամներ, և հրաւիրակները և բազմաթիւ Ե-րուսաղիմացի պատ. ազգայիններ:

Մարտ 22ին Երուսաղէմի միաբանութեան հետ նկար-ուելէ վերջ վեհ.ը մեկնեցաւ Հայֆա: Իրեն կ'ընկերանային, Դերենիկ վրդ. կիլիկեան թեմի հրաւիրակները և Լուսարա-րապետ Տ. Եղիշէ վրդ.: Հայֆայի ազգայինները, զիման-րութեամբ իրենց Հոգ. հովիւին՝ Տ. Յակոս Արեգայ Վար-դանեանի, մօտ երեսուն ինքնաշարժներով ճամբան դիմա-ւորութեան եկած էին: Թափօրը զնաց ուղղակի եկեղեցի, ժողովուրդը խուռաներամ փողոցներուն վրայ և եկեղեցոյ բակին մէջ՝ ի տես վեհապահուին: Խանզավառութեամբ ծա-փահարեց և ծաղիկներ սփռեց իր ճամբուն վրայ: Արիներ

և վարժարանի աշակերտներ փողոցէն մինչև եկեղեցւոյ մռւտքը կարգի կանգնած էին, անոնց բոլորին զէմքին վըրայ դիտելի էր կարգապահութիւն և Արքութիւն։ Դռնաբանական ազօթքէն վերջ Ն. Սրբագնութիւնը Առաջնորդարանի պատշգամէն առւտա իր ներշնչիչ պատգամը հաւատացեալ ժողովուրդին։ Ապա իր հետեւորդներով հիւրասիրուեցաւ Հօթէլ Ռեխնազըր, ուր այցի եկան փոխ Քաղաքապետը, նահանգային օգնական կառավարիչը, քաղաքապետարանի օգնական քարտուղարը, գաւառապետը, Արքայի, Հայֆայի և Գալիլիայ Արքեպիսկոպոսը, Անգլիքան, Յոյն, և Կաթոլիկ եկեղեցւոյ ներկայացուցիչները, Ազգային իշխանութեան անդամներ և այլ ազգայիններ։

Երեկոյեան ժամը 8 30ին, Ն. Սրբագնութիւնը իր հետեւորդներով այցելեց Լիբանանի Հանրապետութեան Նախագահ Ն. Վ. Պշարտ Էլ-Խուուրիի։ Նախագահը ուրախութիւն յայտնեց որ Վեհակ նման հմուտ և բազմակողմանի առաջինութիւններով օժտուած եկեղեցական մը կը զրաւէ կիլիկիոյ Աթոռը։ Մարտ 23ին, ժամը 9ին Վեհակ իր հետեւորդներով մեկնեցաւ Լիբանան։

ՈՒՂԵԿԻՑ

*Համկա Անթիլիաս
Մարտ-մայիս, 1945,

Կիլիկիոյ Վեհակապետը
ԱՄԵՆ. Յ. Յ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԵՐԱԽԱՍՏԱԿԵՄԻ ՄԷՋ
ԱԲԱԶԱՆ ՊԱՏԻՒԱՐՔ ՀՕՐ ՈՒՂԵԿԻՑ

Կիլիկիոյ Վեհակ Հայրապետը հանդիսաւորապէս Երուսաղէմ Ա. Քաղաքը մռւտք գործելէ վերջ, Վեհափառը Ա. Յակոբայ Տաճարին բեմէն իր չնորհակալութիւնը յայտնեց Պատրիարք Հօր, միաբանութեան, օսար յարանուանութեանց, կառավարութեան ներկայացուցիչներուն, որոնք փութացած էին այս մեծավայելուչ ընդունելութեան բերելու իրենց ալ սրտագին մասնակցութիւնը։

Սրտառուչ էր տպաւորութիւնը երբ վեհափառը Պատրիարք Հօր թիւը մտած, «Երբոր Բացուին» երգով առաջնորդուեցան պատրիարքարան։ Ժողովուրդը ի ահս այս պատրիարքին՝ ուժքին ծախահարեց։

Պատրիարքարանի գահին մէջ Պատրիարք Հայոց
ըրաւ արտազին և տպաւորիչ բարի գլուխտի իր խօսքը
շահնք կը հաւատանք, ըստ, Շնորհագարդ Տէր. թէ Աս-
տաւած, ինչպէս միշտ, այս անգամ եւս իր յուսոյ գուռները
բացաւ կիլիկեցւոց առջեւ, երբ զուք բացիք ձեր սրտի
գուռները եւ ընզունեցիք անոնց սիրոյ և վստահութեան
հրաւերը՝ բազմելու Մեծի Տանն կիլիկիոյ պատմական Ա-
թոռք: Անոնք որ կը հանչնան Զեղի, գիտեն թէ Արագածի
կատարէն կախուած աւանդուկան կանթեղին նման կանթեղ
մնն է Զեր հոգին ազգին ու եկեղեցիին համար լոյս առողջ
եւ այդ ոգին էր որ Զեղ երէկ կարսի լեռները մագլցիւ կու-
տար, մեր հաւաքարեան արժէքներուն այցելութեան կառուց-
նարգէր, եւ այսօր հոկտոսակ օրերու արտմութեան և զժուա-
րութեանց կուգաք անգամ մը եւս Հայ ժողովուրդի հրա-
ւերին:

Ահա թէ ինչո՞ւ վեհափառ Տէր, բոլոր Հոյ սիրակը Զիր
ձամբաւն վրայ, Զիր գլխուն վերե սիրոյ յաղթական կոմար-
նիր ևն կոպեր-Նեղոսի ափերուն քով, անմահութեան կոթող-
ներուն տաջն և այժմ հս Անմահ Անելին յաւիտենական
կենաց յուսի կոթողներուն տաջնթեր:

Այդ կոթողները, ազը պիտի ըլլան աւելի բարձր ու
գեղեցիկ լիքանանի փէշերուն վրայ: Մենք, վեհ. Տէր, մեր
Սրբազն Ռւխտի զաւակներով և ժողովուրդով ցնծազին
կ'երգենք, ողջոյն Զեզի, յոյսի և լոյսի առաքենալ և Հայ-
րազետ Միհել Տանն Կիլիկիոյ, Բարի ըլլայ ձեր գալուստը:

Մարտ 11ին, Ա. Յակովոսյ Տաճարին մէջ ի ներկայացնելուն բառական բազմութեան, Վեհափառը խօսեցաւ իր հայոց գեցունց քարոզներին մին. «Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զաշխարհն շահեցի և զանձս իւր տուժեցէ» բնարանին շարք, վեր առնելով մարդկային հոգիի արժէքը, մարդուն՝ կերպարութեան և իր ընկերին նկատմամբ ունենալիք սիրոյ

սկզբանքը, ու եղբակացուց թէ այս գողափարներով միայն
մարդոց ընկերին եւ Աստվածոյ նկատմամբ կրնայ ճշգել ու-
զիդ կեցուածքը: Երեկոյեան ի պատիւ Վեհափառին և հրա-
ւիրեալներուն, վանքի սեղանատան մէջ արուեցաւ փառա-
ւոր ձաշ մը: Խօսեցան Գեր. Տոհմանի Սրբազնը, Հոգ. Տ.
Տ. Նորայր, Զարեհ, Հայկազուն, Սերսվեէ և Դերենիկ վար-
դապեաները, Վեհափառի արեւշատաթեան, Կիլիկիոյ փառ-
քին և Ա. Յակոբոյ հաստատաթեան համար ընելով սրբա-
գին մազթանքներ:

13. Մարտ Գչ. Կէսօրէ վերջ, Վեհափառը հրաշափա-
ռով մուտք զործեց ի Մարր Յարաթիւն ի համրայր և
յուխա Ա. Գերեզմանին:

Վեհափառը Ա. Աթոռ Ժամանելէն ի վեր նուիրուե-
ցաւ հեւ ի հեւ և անգողքում աշխատանքի: Պաշտօնական
այցելութիւններէ և պարտականութիւններէն զուրս, օրուան
ամենամեծ մասը անցուց ձեռազրաց քննութեամբ ու ման-
րանկարչութեան ուսումնառիրութեամբ:

Մարտ 22ին, Վեհափառը հրաժեշտ տաւ Պատրիարք
Հօրմէն և մեկնեցաւ Հայֆա, անկից երթալու համար Լի-
բանան իր Ա. Աթոռը՝ Անթիլիսու:

«Այսու» Մարտ-Ապրիլ 1945
Երասագիւմ

Վեհաշնորհ Հայրապետը

Երկու տարի առաջ՝ 1943 Մայիս 10ին Կիլիկիոյ թեմերու Ընդհանուր կամաց ամառորական ժողովը միաձայնութեամբ կաթողիկոս ընտրեց Գարեգին Արքեպիսկոպոս։ Յովոչփեան Սըրբազանը։ Այսօր, ծերունազարդ Հայրապետը Պէտքութ պիտի հասնի, ու հայութիւնը հոգեկան մեծ հրատանքով պիտի դիմաւորէ իր արժանաւոր Հայրը։

Ի պաշտօնէ գործածական մեծ որակականներ կան, որոնք հազուազէպ պարագաներուն կը պատշաճին այս անձին, որուն կ'ուղղուին պարտաւորիչ կերպով։ Սակայն Կիլիկիոյ Ընտրեալ կաթողիկոսը խկապէս Սրբազան է, իսկապէս Վեհաչնորհ է, իսկապէս Աստուծոյ մարդն է։

Ու որպէս Աստուծոյ մարդը անիկա 78 տարիներու ընթացքին ապրեցաւ հոգիի ախրապետութեան տակ, ու մարմինը ծառայ դարձուց հոգեղին ապրումներուն և ձգումներուն, ճիշդ հինաւուրց ճգնաւորներուն պէս, որոնք Աստուծոյ շնորհն ընդունեցին լիառատ, և այդ շնորհները բաշխեցին իրենց ժողովուրդին։ Հայ եկեղեցիի հին սուրբերու և մտաւոր մեծ մշակներու շառաւիղներէն մէկն է Գարեգին կաթողիկոսը, որ կէս գարէ աւելի սրբութեամբ և զիտակցութեամբ ծառայեց Հայաստանեայց եկեղեցիին և ընդունեց Սրբազան տիտղոսը, առանց ամէնալու սուրբերէն։ Կէս գարէն աւելի դարձաւ գրականագէտ, գիտուն, պատմաբան և մտածող Աստուծոյ տուած շնորհները անընդհատ աշխատանքով ձեւաւորեց, արձանացուց և այսօր Հայ մտքի և մշակոյթի պատկանելի հարսաւութեամբ մը կը կենայ Հայ ժողովուրդի և Աստուծոյ դատաստանին առջեւ, ճակատը պայծառ և բարձր, որուն վրայ քանդակուած է, Գերաւորնը և Վեհաչնորհը Ահա մարդը, որ ածականի պէտք չունի, և իր պարզութեան մէջ վեհափառ է։

Կիլիկիոյ նոր կաթողիկոսը սակայն, գործունեայ և ժրաֆան ճգնակեաց մը եղած է։ Իր ճգնութիւնը իր անձին պահած է, իսկ իր ուժն ու կորովը ամէն օր տրամադրած է Հայաստանեայց եկեղեցիին և Հայ հայրենիքին։ Շինարար

գործունէութեան մեծ անցեալով մըն է որ նոր Հայրապետութիւն կը ստանձնէ Ներսէս Շնորհալիի աթոռը, որ այնքան ոկտօք ունի վերելքի մը:

Հայոց եկեղեցին մեծ տաղնապ մը կ'անցնէ: Այդ եկեղեցին տակաւին մեծ զեռ մը ունի Հայ կեսարին մէջ, մինչդեռ կղերի մտաւոր մակարդակը այդ զերին համապատասխան չէ: Խոկ հասասատութիւնը անսասան պահելու հոգեցէն կրօնականութիւնը շատ մաշտած է, դիմանալու համար միջոզգային եկեղեցիներու մրցագուշտին վրայ: Եռութնաիր կաթողիկոսի առաջին տառքերութիւնը եկեղեցական ընտրու դասու մը պատրաստութիւնն է: Աւելի բա ըմբռունումով, վեհաջնորհ Հայրապետը մեր միջազգայրին մէջ պիտի փոխառուէ զիսութեան, Աստուածային Սրբութեան, մրատաւոր-հոգեկան զարգացման կենարար շունչ մը, հիմնեկան և փորձուած մեթանաներով, վերանորսօք կեանք մը տալու իր հայուած եկեղեցին և մեր պատմական ու կրօնական գպրութեան:

Երկրորդ մեծ տառքերութիւնը համազգային ընույթ ունի: Հայ ժողովուրդը, ներկայ քաղաքական վերիվայրութեամբ ընթացքին կը բարտիսէ անհաւան հայրենասիրութեամբ և թախիծն ունի հայրենի կարօտի: Մէծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը նոյնպէս հայրենասէր է, հայրենիքի անցեսլով, ներկայով և ապագայով բարախոզ սիրա մըն է, յուսազբազ և առաջնորդոզ հոգի մը ունի: Կը յուսանք թէ Հայ եկեղեցիին հետ հաւասար ոգեւորութեամբ պիտի մրատանգուի և պիտի վառ պահէ Հայրենասիրութեան կրօնկը այս ժողովուրդին մէջ, որ կ'ապրի ու կը դիմանայ ուսուր ափերուն վրայ մայն այդ ոգիով: Կիլիկիոյ արժանաւոր կաթողիկոսը կուգայ Սուրիոյ և Լիբանանի հոծ զաղութներուն մէջ, անսնց բոլորի միաձայն փափաքով: Այս զողութները այսօր խաղաղ վիճակ մը ունին և ազգային կեանքին մէջ համազործակցելու ընդհանուր փափաք մը տիրական է: Բայոր պարբանները նպասաւոր են որ մեր ժողովուրդը կարենայ օգտուիլ շինարար կաթողիկոսէն:

«Ազգակ» Նարաթօրնակի Խմբագրականը

16 մարտ 1945 Գելութ

Խնչպէս պիտի շնորհունուի Վեհափառը

Ա. — Կաթողիկոսը սահմանագլուխ պիտի հասնի ուրբաթ օր, 23 մարտ, ժամը 10ին, ուր պիտի ընդունուի հարաւ. Այսահանի կառավարիչին կողմէ:

Արտաքին գործոց նախարարի ինքնաշարժով կառավարիչը վեհափառին պիտի ընկերունույ մինչեւ Անթիլիաս, իր հետ ունենալով սատիկան մը:

Բ. — Կաթողիկոսը Պատի մէջ պիտի կենայ 15 վայրկեան, դէպի Սուր բաժնուող ձամբաւն վրայ, ուր սատիկան զինուորներ զինք պիտի ընդունին զինուորական պատիւով:

Գ. — Սայսայի մէջ պիտի կենայ 5 վայրկեան, ուր սատիկան զինուորներ պիտի հակեն կարգապահութեան:

Դ. — Վեհափառը պիտի հասնի Պէյրութ, Ֆուստ Էլ Ամալ փողոցի ծայրը կէսօրէ վերջ ժամը երկուքին, հոն պիտի սպասեն քաղաքապետութեան սատիկան զինուորները, ուրիշ վեհափառի ինքնաշարժին պիտի ընկերունուն մօթօսիքիստ սատիկաններ:

Ե. — Թափօրը պիտի հասնի Տէպոտս հրապարակը, ուր վեհափառը պիտի ընդունուի զինուորական պատիւով, Ներքին Գործոց նախարարութեան կողմէ:

Զ. — Քաղաքին թրանվայներու շրջագայութիւնը պիտի դազրի ժամը երկուքին երեք:

Է. — Թափօրը Տէպոտսի հրապարակէն պիտի անցնի Պուրճ, յետոյ Անդր - Նոհր:

Ը. — Թափօրը 5 վայրկեան պիտի կենայ Պուրճ - Համաւարի մուտքին առջեւ, ուր կարգապահութեան պիտի հըսկեն սատիկան - զինուորներ:

Թ. — Կաթողիկոսուորանի մուտքին առջեւ զինուորական պատիւներ պիտի ընծայուին սատիկան - զինուորներու կողմէ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Ազգքնիքի Կարողիկոս
Տ. Տ. Դաւթեղին Արմենակոպոս Յավուկիեանցի
փառառու բնդունելու րիւնը

Բնդունելու թեան կը մասնակցին բազմահազար հայեր,
Սուրիոյ և Լիբանանի բոլոր օջաններեն—Լիբանանցի
Գիւղացիներ, ծաղիկներ կը նետեն Վեհափառի
Ամերուն տակ— Վեհափառը կը յօրդուէ Հօր. —
«Եղիշ հաւատարիմ զաւակները այս նիւրընկալ երկին»

Վեհափառը Լիբանանի մէջ

Մարտ 23ի ուրբաթ օրը, անմռուանալի էջ մը պիտի
կազմէ Լիբանանի Հայութեան և մանաւանդ Մեծի Տանն
Կիլիկիոյ Հայրապետական Ս. Աթոռի պատմութեան մէջ:

Սուրիոյ և Լիբանանի բոլոր շրջաններէն հայեր, ազ-
գային մարմիններ, կրօնական պետեր, յարանուանութեանց
ներկայացուցիչներ, կուսակցականներ, օտար բարձրաստիճան
անձնաւորութիւններ հռուզեսի մէջ էին, բարի գալուստ
մաղթելու համար Վեհափառին Անկասկած՝ Սուրիոյ և Լի-
բանանի Հայութեան առաջին անգամն էր, որ առիթ կը
տրուէր անտարակարծիք և զերծ ժանր հաշիւներէ, մէկ
մարդու պէս խանդովալառուելու, բռվանդակ անկիղծութեամբ
և գոհունակութեամբ. սրովհնետեւ Հայրապետի անձին մէջ
անսանք սովորական վէճերէն, մտահոգութիւններէն վեր
վիճութիւն մը, սրբութիւն մը ամէն հայու համար, սեւեռ-
ման կէտ մը, ոգեւորութեան դրաւական մը: Երանի թէ
այսպէս տեւէր միշտ...

Աւանդական արարողութեամբ

Վեհափառը անգլիական Նազուրա ժամանեց, առա-
ւանեան ժամը 10ին, ընկերակցութեամբ Ս. Յակոբի Լուսա-
րարապետ Եղիշէ վարդապետի, Հայֆայի Հովիւ Հայր Յա-
կոբի, Տօքթ. Թորեւոնի և այլ Պաղեստինահայ ազգային
կարեւոր գիմքերու:

Վեհափառը գիմաւորելու համար անգլիական Նա-

գուրա հասան, սահմանային ապահովութեան պետ. Պ. Ան-
թուան Աքլի բարեհած արտօնութեամբ և ընկերակցութեամբ,
Կաթ. Փոխ. Արտաւազդ. Ս.ի և Ազգ. կեդր. Վարչութեան
Առենապետ Տիար Տաճատ Արապեանի, Երթնական և Քաղաք.
Ժողովի ներկայացուցիչները, Հայ երեափախանները և պատ-
շիրի յաւձնախումբը Տօքթօրներ Թապուրեան և Ճիտէնան:

Յանուն Լիբանանի կառավարութեան, Հարաւային
Լիբանանի կառավարիչ Պ. Մազյիս, և յանուն Գրանտա-
կակ իշխանութեան՝ Սայտայի տեղեկատու դիւանին պետը,
Բարիդալուստ մաղթեցին վեհափառին: Արմէ վերջ Արտա-
ւազդ Ս. ըստ աւանդական սովորութեան, բոյրով օծոց ծե-
րունազարդ Հայրապետի ձեռքերը, ու անոր ներկայացուց
պնակի մէջ կառը մը հաց և ազ, որպէսզի Ազգընտիրը ճա-
շակէ:

«Հիանալի բնուրիւն, սահնչելի երկիր»

Լիբանանի Արտաքին նախարարի ինքնաշարժով և
Ընկերացութեամբ Հարաւային Լիբանանի կառավարիչին,
Վեհափառը սուք գրու Լիբանաննեան Նազուրա, ուր արգէն
շատ կանուխէն, աւելի քան հազար երեւելի և բարեպաշտ
Հայեր անձկութեամբ կը սպասէին:

Ներկաններէն շատեր, ուրախութեան ու թաքուն վրշ-
տի մը հետեւանք եղաղ արցունքներով օծուն աշքեր աւնէ-
ին, երը Վեհափառը, տարիններու դաստան սպասումներէ ետք,
կանգնած էր Հօտին մէջ: Անոր առաջին բառերը եղան. «Հիա-
նալի բնութիւն, սքանչելի երկիր»:

Արտաւազդ Ս. ամբողջ Սուրիոյ և Լիբանանի Հայու-
թեան կողմէ, Բարիդալուստ մաղթեց Վեհափառին և Հայ-
ցեց Անոր օրհնութիւնը:

«Այն պատիւնները որ կընծայէք, ինձի համար չեմ
սեպեր, այլ Հայաստանեայց Եկեղեցիին: Չեզ հոս բերողը
Հայ եկեղեցիի հանգէտ ունեցած խորունկ սէրն է: Եւ իմ
ներկայութիւնս ձեր մէջ, ուրիշ բանի չի ձգտիր, եթէ ոչ
զօրացնելու, խորացնելու այդ սէրը, հաւատքը, ամէն ահզ,
Դպրոցներու մէջ և եկեղեցիին, որպէսզի գառնանք գիտա-

կից հայեր ու տիպար քաղաքացիներ այս հիւրընկալ երկիրներուն: Աւրախ ևմ յայտնելու որ Երուսաղէմ զանուած միջոցիս, այցելեցի Ն. Վ. Նախագահ Պշտրա Էլ-Եյուրիի և արժանացայ արտակարգ ընդունելութեան:

Մասդիկներ Վեհափառի նամբուն վրայ

Աւելի քան հարիւր ինքնաշարժներու ընկերակցութեամբ, վեհափառը զէպի Անթիլիոս կ'ուզզուի: Սակայն անհրաժեշտ է կանգ տանել ձամբան: Սուրի փաքրաթիւ Հայ Համայնքը առանց պատանանքի խորսոթեան վերապահած է թանկագին ընդունելութիւն մը: Յոզեֆական կամարին տակ տեղ գրաւած են, Խուսաւորչական, Կաթոլիկ և Բողոքական Համայնքներու կրօնական պետերը, զպրոցի աշակերտութիւնը՝ ծաղկեփունջերով և համարեա՛ ամբողջ Սուրի Հայութիւնը:

Վեհափառը կը շրջապատուի հաւատացեալիներով և կ'ունկնդրէ ազնակի մը սրտառուչ ուղերձը և կ'ընդունի ծաղկեփունջեր: Հայրապետը յուզուած՝ քաղցր շեշտով կը յայտարարէ:

«Եղէ՛ք հաւատարիմ զաւակները այս հիւրընկալ երկին, որ մեր ժազովուրդի թեկորները պատապուրեց իր յարկին տակ, տաքուկ անկիւն մը տալով: Եղէ՛ք հաւատարիմ, որպէսզի հարթութին ձեր առջեւ յայտնուող դժուարութիւնները, ու բախտաւոր ապրիք մինչեւ զան յաւ օրեր և մէկդի թողած գաղթականի ցուզը հաստատուինք մեր սեփական հողին վրայ:

Խանդապառ ծափերու մէջէն վեհափառի ինքնաշարժը կը շարունակէ ձամբան: Սայայի մէջ, կառավարիչ Սավայիայի կողմէ կը հիւրասիրուի օչարակով: Այսաեղ ալ Հայ Համայնքը ներկայ է: Այսաեղ ալ մինւնոյն ուղերձները: Մաղկեփունջեր, երգեր...

Անիրաւ պիտի ըլլայ մոռնալ, Լիրանացի գիւղացիներու յարդանքը: Նազուրայէն մինչեւ Պէյրութ, արտէն վերադարձող այրերը, կամ գոներուն առջեւ յատնկայս պայտազ կիները, ուրախութեամբ ծափահարեցին և ծաղկե-



Ն. Ա. Օծուրինը Հայուսավիլ Լիքամանի Մահաթերին ին նկ
գելը բ լսած օրը, Պարբի առջ:

ներ նկացքին վեհափառի ինքնաշարժին առջեւ, ի նշան
բարիդալուստի:

Աղօրք նահատակներու յուշարձանին առջեւ

Ժամը 2.30ին վեհափառը հասաւ Տէպպասի հրապա-
րակը: Բազմահազար ժողովուրդ: Մարգկային ծով մըն էր
որ կ'ալեկոծէր վեհափառը տեսնելու ճիգերով:

Այլ վարժարաններու կողքին տեղ գրաւած էին
Ա. Նշանի և Շեմարանի աշակերտութիւնը՝ ուսուցչական
կողման: Ա. Նշանի աշակերտութեան կողմէ ծագկեփունչ
մը նույիրուեցաւ վեհափառին:

Պուրճի մէջ, վեհափառը ազօթեց մարտիրոսներու
յուշարձանին առջեւ: Ի խորոց սրտի, սուրբ բառեր մընթեց
Եկեղեցանի ազատութեան ճամբուն ինկած նահատակներու
հոգիին համար և մազթեց որ Աստուած հաշտ և սիրալիք
կեանք պարզեւէ Հայուն և տեղացիին, սրոնք երկու փոք-
րիկ ազդեր են իտէալներով տոգորուած:

Պուրճ - Համուտ տանող ճամբու ամբողջ երկայնքին,
պատշգամներուն, մայթերուն հայ և օտար բազմութիւն մը,
ծափերով, ծաղիկներով և բոյրեր սրսկելով բարի գալուստ
կը մազթէր վեհափառին: Տուներու պատշգամներէն կախ-
ւած էին թանկարժէք գորգեր և կանաչութիւն:

Մատադ վեհափառին առջեւ

Սակայն, ամենէն աւելի մեծ, խանդավառ ու կանու-
նաւոր ընդունելութիւնը կազմակերպուած էր Պուրճ-Համու-
տի մեր ազգակիցներուն կողմէ: Ծովածաւալ, անաւոր բազ-
մութիւն... թանկարժէք գորգեր վեհափառին ճամբուն
վրայ: Մազդիկներ, և մանաւանդ արցունք շատերու աչքե-
րուն... երկու ոչխոր կը մորթուի վեհափառին ոտքերուն
տակ: Ազաւնիներ կ'արձակուին: Հրեշտակի տարագով փոք-
րիկ մը կը մօտենայ վեհափառին և ահա, ծաղիկներ,
վարդ, մանուշակ ամէն կողմէ կը տեղան:

Բուն Տանարը նորեկան Տանարն է

վեհափառը երբ Անթիլիս հասաւ, դպրեվանքին բա-
կին, շրջակայ պարտէզներուն և շուկայի մէջ հսկայ բազ-



Ն. Ա. Օծուրիւնը Անրիլիասի Մայր Տաճարին մեջ Հայրապետականի իր օրհնուրիւնները տուած պահուն,
Պէյրուր ժամանած օրը:

Մութիւն մը կար: Եւ կոչնակի զօղոնչները կը հասնէին
հեռուները աւետելու համար Հայրապետի գալուստը:
Տաճարին մէջ բարեպաշտ ժողովուրդին որպէս սփոփոնք կարճ ու զուսպ քարոզ մը պատգամեց, թէ «բան
Տաճարը հոգեկան Տաճարն է, քարերով շաղտխով բարձրաւ-
սած Տաճար մը դատապարտուած է, օր մը, փուլ դալու,

ասկայն երբ ներքին աշխարհն է, բարոյական, քրիստոնեական հիմունքներով Տաճարի վերածուած, կրնանք վստահ ըլլալ որ չենք կորնչիք երկրիս երևուէնք:

Հրաշափառի թափօրէն վերջ, վեհափառը վեհարան առաջնորդուեցաւ, ուր գաղութիս երեւելիներէն, յարանուանութեանց պետերէն, Աղդ. Խշունութեանց ներկայացուցիչներէն ընդունուեցաւ հանդիսաւորապէս: Հայ կաթողիկէ Պատրիարքարանի կողմէ ներկայ էր Գեր. Քէտիքնեան Գերապայծուա:

Խադ Սրբազն կարգաց ուզերձ մը վեհափառ Հօր ուզգուած, կը ներկայացնենք հասուած մը.

— Վեհափառ Տէ՛ր, կիլիկենն Աթոռը, որուն վրայ արժանագայել կերպով բազմելու հրաւիրուած էք ջախջախուած Աթոռ մը չէ, և աղդին ձոյնը չէ կանչած Զեր բարձրաշնորհ Սրբազնութիւնը թագուորելու աւերակաց վըրաց: Զեր նախորդներէն երջանկայիշտատկ Սահակ Հայրապետի և Ն. Ա. Օձ. Աթոռակից Բարգէն և վերջինը՝ Պետրոսի, մեծազործ ու շինարար կաթողիկոսներու Աթոռանուէր ջանքներուն և տքնաջան աշխատաւթեանց շնորհի կաթողիկոսարանը կարձ ժամանակի մը մէջ հասած է ձազկումի և բարգաւահաման:

Սրբազնէն եաք Աղդ. ընդհանուուր Ժողովի Ասենապետը՝ Տիար Նազարէթ Ֆըրաւրզնեան վեհափառին ուզգեց իր խօսքերը:

Ի՞նչ յուսազրիչ երեւոյթ էր: Ամէն հասուածէ, ամէն զաւանանքէ Հայեր նոյն երկիւլզածութեամբ մօսեցան Նորին վեհափառութեան Աջը համբաւրելու համար:

Բացայացաւ էր որ ամէն Հայ մեծ զանունակութեամբ, անտարակարծիք, անվարան և խոր վաստանութեամբ կը մատենար վեհափառին: Խցիւ թէ անէր ընդ միշտ ու մեզի համար բացուած կ'ըլլար մէկ նոր շրջան:

Բարիկալուս

(Պարզացուած Կաթողիկոսարանի դահլիճին մէջ՝ վեհ. Կաթ.ի
ժամանման առթիւ)

Ամենապատիւ Սրբազնն Տէր,

Տարիներու երկա՛ր սպասումէ յետոյ վերջապէս Զեր
Բարձրաշնորհ Սրբազնութեան ներկայութիւնը մեր մէջ՝
անպատում և անստանման ուրախութեամբ կը լիցնէ մեր
բոլորին սրտերը։ Երջանիկ այս պահուս թարգման հանդի-
սանալով Ս. Աթոռոյս Միաբանութեան, ինչպէս նաև Զեր
հաւատարիմ հօտին ջերմ զգացումներուն, բնրկրալից որր-
տով կ'ողջունեմ Զեր Ամեն. Սրբազնութեան օրնարեր գա-
լուսորւ։

Սրբազնն Տէր, Կիլիկիեան Աթոռը՝ որուն վրայ ար-
ժանավայել կերպով բազմիլ հրաւիրուած էք, ջախջախուած
աթոռ մը չէ և ազգին ձայնը չէ կանչած Զեր բարձր Սրբ-
ազնութիւնը թագաւորելու աւերակաց վրայ։ Աւթզարեան
պատմական անցեալ ունեցող Կիլիկիեան պանծալի Աթոռը,
քաղաքական դժբախտ պարագաներու քերումով թէև ասկէ
երեքտասանեակ տարիներ առաջ ցանկալի Կիլիկիայէն տեղա-
հան ըլլալու չար բախտին արժանացած և ժամանակ մը
Սուրբոյ և Լիբանանի հիւրընկալ հոգին վրայ աստանդական
թափառելէ յետոյ՝ վերջապէս յաջողած է հաստատուիլ Ան-
թիլիասի ծովափին վրայ։ Զեր նախորդներէն երջանկայի-
շատակ Սահակ Հայրապետի և Ն. Ս. Օծութեան Աթոռակից
Բարգչէնի և վերջինը Գետրոսի մեծագործ ու շինարար Կաչ-
թողիկոսներու Աթոռանուէր ջանքերուն և տքնաջան աշ-
խատութեանց չնորհիւ կաթողիկոսարանը կարճ ժամանակա-
միջոցին հասած է իր ծագկումի և բարգաւաճման շրջանին,
հոյակապ Մայր Տաճարով, շքեղ իր վեհարանով և գպրե-
վանքով, իր թէև առկաւին փոքրաթիւ՝ սակայն Ս. Կոչու-
մին գիտակից և նուիրումի ոգիով վարձատրուած միարա-

հական ուխտով, ներքին կարգ ու սարքով և թեմական կողմակը:

Սրբազն Տէր, մենք, միաբանական ուխտ Տանն Կիլիկիոյ և Համայն հարազատ որդիք Զեր, կը խռանանք թեւ ու թիկունք ու զօրավիզ Հանդիսանալ Ամեն. Զերդ Սրբազնութեան, Աթոռոյն ազգապարձանք ձեր բոլոր ձեռնարկներուն յաջողութեան համար՝ բնրելով մեր անվերապահ աջակցութիւնը:

Յուստից ենք ու Զեր Բարձրչ. Սրբազնութեան գահակալութեան օրավ նոր գարադրուխ մը պիտի բացուի Կիլիկիուն Աթոռին համար, յօդուա անոր շինութեան ու բարեզարդութեան, Զեր կողմէն յայտնուած իշմերուն ու բարձանքներուն լուսագոյն պատկումով:

Խոհեմագարդ Տէր, այս քանի մը հակիրճ խօսքերէն յետոյ, իսոյ առեւէք ինձ ուրախ այս առիթով ի բոլոր սրան մազթել Զերդ Սրբազնութեան կոր ու կարսզութիւն, քաջառողջ կեանք և արեւշտառութիւն, Հովուապետական Զեր մականին տակ երկար առինքներ քաջալերուած ու միսիթարուած անսնելու. Զեր հօտն համայն:

Խօսքս վերջացնելէ առաջ խօսահարար կուղամ խընդրուել Զեր Ամեն. Սրբազնութեանէն, որպէս գորովալիր Հայր, արապետուել Հանաւ մեր սրաներէն ու հոգիներէն ներս՝ թագըն ու պատկն ուլարով Զեր զիսուն և այս խնդրանքով կը բարձրացնեմ ձայնս:

Կեցցէ՛ Գարեգին Արքեպո. Յովսէփեանց Ընտրեալ կաթողիկոս Տանն Կիլիկիոյ:

Կաթ. Տեղապահ Տանն Կիլիկիոյ
ԿԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ

«Հասկա մարտ-մայիս
1945 Անթիվաս»

Ուղերձ Վեհափառին

Վեհափառ Տէր

Այս աննախընթաց ընդունելութիւնը որուն տառարկոյ եղաւ Զեր Վեհափառութիւնը Հայ ժաղովուրդին կողմէ, արդիւնքն է այն ժողովրդականութեան, որուն իրապէս արժանին է Զեր Սրբազնութիւնը: Զեր Վեհափառութեան Հայ եկեղեցին և Հայ ժողովուրդին 50 երկար տարիներէ ի վեր մասուցած ծառայութիւնները իրաւունք կուտան այս փառաշուրջ ընդունելութեան, որուն ցարդ քիչը արժանացած են: Թերեւս հասկնալի ըլլայ ժողովուրդի մը սիրոյ և գնահատանքի այս անօրինակ պոռթկումը, երբ խորհինք թէ նոյն այս ժողովուրդը հովուելու, այս ժողովուրդը կառավարելու առաջնորդելու ամենանուիրական և բարձր պաշտօնին կոչուեցաք, բայց ես պիտի աւելցընեմ թէ այս խանդաղատանքով որով պարուրել կ'ուզէ Զեզ Հայ ժողովուրդը, միայն Սուրբիոյ և Լիբանանի հայութեան կողմէ չէ որ կ'արտայայտուի այլ ան ամենուրեք և ամէն տեղ Զեր քայլերուն կը հետեւի:

Ամերիկայի մէջ արեւելքէն արեւմուտք Զեր այցելութեան շրջանին, Ամերիկայէն մինչեւ Միջին Արեւելք Զեր համբորդութեան ընթացքին՝ ամէն տեղ ուր հանդիպեցաք հայու, հոն գտաք սիրալիր ընդունելութիւն, անպիտակ հայու, ու ամէն գաղտութ փութաց ընդառաջի Զեր կոչին ու Զեր պահանջին և ուրեմն այս ժողովը դականութիւնը ոչ թէ աեզային հանգամանք մը ունի այլ և է ընդհանուր և համահայկական:

Վեհափառ Տէր, այս՝ այն համակրութիւնը և սէրը որ այս ժողովուրդը ցոյց առւառ ու պիտի տայ, արուեստական չէ այլ ինքնարութ և իրական Սրկու տարի առաջ հոս Մայր Տաճարին մէջ հաւաքուած Պատգամաւորական ժողովին ուղղելով խօսքս, կը խնդրէի արժանաւորագոյնին ժողովին ուղղելով իրենց քուէնները, կը խնդրէի որ միավայ կեղրուացնել իրենց քուէնները,

ձայնութեամբ ընտրէին Գահակալը, որպէսողի ան գիտնայ և
զգայ թէ անխափի մեր ամենուն սիրոյն արժանի գառաւած
է, և յանուն Սուրբոյ և Լիքանանի Հայութեան կը խստաւա-
նայի ամէն կերպով բարոյապէս և նիւթապէս աջակցիւ
նոր գահակալին: Ես ուրախ եմ այսօր որ այս հսկայածա-
ւալ և ծովածաւալ ընդունելու թենէն վերջ այս անգամ եւս
հոս յանուն նոյն ժողովուրդեան յայտարարնեւ ու ըսել թէ՝
Վեհափառ Տէր Դուք ոչ թէ պատգամաւորական ժողովին
միաձայնութեամբ իրքն գահակալ ընտրուեցաք պատմա-
կան այս Աթոռին, այլ եւ հայ ժողովուրդին ամբազժու-
թեամը, ամենուն կողմէ հրաւիրուեցաք գրաւելու այս Ա-
թոռը, իրքն արժանընտիր գահակալ և հայ ժողովուրդեան
հայրապետ:

Զմբան թմբիրէն ու քունէն վերջ նորաբաց զարնան
տաքուկ շողերը սկսան շոյել Լիքանանի բարձրաբերձ լեռ-
ներն ու սարալանջերը, ամէն կողմ կենդանութեան անուշ
ձայն մը տիրել սկսաւ: Չորս տարիէ ի վեր քունի մէջ մը-
տած և այրիացած կիլիկեան Աթոռն ալ թմբիրի մէջ էր,
այսօր Զեր Վեհափառութեան գալուստը զարնան տաքուկ
շողերուն պէս կենդանութեան ուրիշն է որ մացուց: Հոս ալ
շաղը ձեր տաքուկ ու օծուն շաւնչին տակ հայ եկեղեցին
պիտի պայծառանայ, հայ գարոցն ու մշակոյթը իրենց թը-
ռիչքը պիտի առնեն ու ամէն ոք պիտի լծուի աշխատանքի
մը աւելի պայծառացնելու հայ եկեղեցին, աւելի բարձրա-
ցընելու հայ գպրոցը, զիրն ու գրականութիւնը տարածե-
լու հայ ժողովուրդին մէջ: Մէկ բառով նոր Գարեգիններ,
նոր Բարզէններ, նոր կրթական մշակներ պիտի գան պըճ-
նազարդելու հայ ժողովուրդին աւանդատունը: Վեհափառ
Տէր, ազգի մը մեծութիւնը կը չափուի իր ծոցէն ելած մեծ
զաւակներով, այն ազգը որ ծնունդ տաւած է Զեր Սրբազ-
նութեան, իրաւունք ունի պարծենալու Զեզմով:

Արար աշխարհ երկունք մը կանցնէ, այս երկունքէն է
որ պիտի ծնի նոր աշխարհ մը: Մեզի համար մեծ բարե-
բախտութիւն մըն է, պատմական այս օրերուն Զեր Վեհա-
փառութեան նման Հայրապետի մը ներկայութիւնը:

Թոյլ տուէք ուրեմն վեհափառ Տէր որ յանուն Սուրիոյ
և Լիբանանի հայութեան բարիգալուստ մազթեմ Զերդ
Սըրազնութեան:

Ազգ ժողովոյ Ասենապես
ՆԱԶԱՐԵԹ ՖՀԱՍԼԳՃԵԱՆ

Ալղյակա Գլյուք
27 մարտ, 1945

Զօնիրզ (')

Բարեա՛ եկիր առ մեզ, բարեա՛ վեհափառ
Հայրապետ Մեծի Տաճն Կիլիկեան
Մեղ բերելու ուր ու ընորի անսպառ
Ցուրախուրին որտից մերոց մանկական

Ի զալուստ Տեառնդ ընորհաբեր

Ցնծամֆ հոգւով բերկրական

Skr Գարեզին Յովսէփեան:

Հայրապետիդ Հայկեան Զարմեն Կիլիկիոյ
Մեկ խոնարհեալ մատչիմք նամբոյր Ս. Ազոյն
իւ բաջ նովուեկ անձնուեր, անձնազմ
Առնումք զուր իւ զիրաւունք սուրբ զողոյն:

Ի զալուս Տեառն ընորհաբեր.

Ցնծամֆ հոգւով բերկրական

Գոյեմք, կեցցէ՛ նայրն մեր

Skr Գարեզին Յովսէփեան:

Հ. ԳրԱՆԵԱՆ

«Հայկ» Անթիլիաս
1945

(*) Եղանակաւորուած երաժիշտ Պ. Հրանդ Գէորգեանի կողմէ եւ երգուած Դարուհի Յակոբեան աղջկանց վարժարանի սանուհիներուն կողմէ:

ՈՒՂԵՐՁ

Ա.Թ. ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՅՆՈՐՃ ՄՐԲԱՉՆՈՒԹԻՒՆ
Տ.Տ. Գարեգին Արքայիսկ. Յովսէկիւանի

ՆՈՐԾՆՏԻՐ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Հայոց Մեծի Տաճե Կիլիկիոյ
Յաւուր Գալստեան յԱմերիկայէ յԱնդիլիաս

Առաջ ի վառ տաբին ծաղկունք նոյլ ի նոյլ, ընդ ոտիս Նորա,
Կամար կրօնի կայ՝ Ամպհովանին՝ Դիխոյն ի վերայ.
Միածան ծագեալ ի վեհ Տանարէն Սուրբ Էջմիածնայ
Մինչեւ ի Տանարն Գահուն Կիլիկիոյ յօդի միանայ.

Երկինք եւ երկիր եղեալ զուգակիր զովեն միաբար
Ըզնոր Գահակայն Սոյ Առոռույն զՀայր մեր Վեհափառ,
Հանկ զսեւարոյց որդարց իւր սրբոյ Կիլիկեան Տանար,
Արկանէ զիւրեւ զՀանդերձ ծիրանի, զուկենուռ ուրցառ:

Ճրով Հայկական վառեալ սիրտ որդւոց՝ իբրև ըզբուրվառ
Շարժին ընդ առաջ նոր Լուսաւորչի իւրեանց Վեհափառ,
Խնդայ Հայ Կրօն, ցնծայ դպրուրիւն, Դպրեվանք Տանար,
Վասն Գալստեան Նոր Հովուապետին եւ սուրբ, եւ հանճար:

Արդ զաւեր միուրեան եւ զեղբայրուրեան մատուցում նըշան,
Զանրառամ մի փունչ կազմեալ Հայ սիրոյ ի վարդ ի ուռւան,
Զի նոր Վեհափառն զերդ Լուսաւորիչ և մեծանեան.
Հայրենեայց սիրոյ եւ սուրբ կրօնի Ակն եւ Աւրուան.

Փառք ի բարձունքս զօշեն բիւր բերանք Հայոց Գաղրական,
Լուեալ բզփառս եղբարց դիւցազանց իւրեանց յաղրական,
Հանրապետուրեան - Հայրապետուրեան զլոյս միասնական,
Ըզյաղրանքօր վեն վերածնունդ Ազգի Հայկական,

Ազգային ողի, կորովի կենցաղ եւ Գանձք դպրուրեան,
Հասանան յանկարծ զերաշխիս յուսոյ եւ աս՝ Յարուրեան
Եւ խորհրդարան, ակումբ եւ մամուլ, ժամ եւ վարժարան,
Մափրս նարկանեն վերանորոգչին բնդդէմ Գալստեան:

Պահանորդ նրգօր նոր Շնորհալի, Հայրի կ Վեհափառ,
Հոգւով եւ մարմնով ողջազուրեանք զ Քեզ. սիրով նրափառ,
Մաղրեանք զի երկինք պարզեւեցեն Քեզ զկեանքս եւ զկար,
Զի տարշիք բզմեզ ի Հայրենիս մեր, յերկիրն դրախտափայր,
Գյումըշիւռ.

*Արարտ 10 մարտ 1945
Աղեքանդիա

Զօն առ Վեհափառ

ՈՐԴԻԱԿԱՆ ՌԻԹՅ

Տեսով վեհառով սրտով անարա,
Հայրապետական զերը լեռն Արարա,
Մեր սկըն խանդաբորբ ու անապական,
Պիտի տարածենի նովանի վրադ:

Ալեւոր ճանշնայ աւխարնը զմեղ,
Դարաւոր ազգին նոզւոյն մեջ զտնես,
Մեր Ս. ճախանարց՝ մեծ ժառանգ ձգած
Համերաշխութեան սիրոյ նոզին նեղ:

Լոյս խաչիւ փոխան սուր իսկ քէ բաշխ
Խանակին պէս նլու ենք մենք մեզ,
Մրտենիս նեղինս, վասան պիտի ըլլանի,
Թէ նոն հաւասե, սկր, լոյս պիտի դնես:

Տիրոջ զալուստին պէս յանկարծանաս,
«Մետասան» ժամուն անզամ մեզի զաս,
Արբուն պիտ զտնես մեզ և իմաստուն,
Մեր անցած «Կարմիր ծովեն» առած զաս...:

Անձուկ կարօսով կը սպասէինի մեզ
Մեսիա մը նոր, անոր նմանն ես,
Բայց երեւ Աւխարնն նմանդ ըլլար,
Չկինի յոզնեցներ մինչեւ այսեղ մեզ...:
Գ. Վ.

«Արարատ» 24 մարտ
1945 Պէյրութ

Վեհափառն ու իր ծրագիրները

Երկար և անձկագին սպասումէ մը ետք՝ հումկէ համազգային այսօրուան կուգայ, կը հասնի մեղի մեր ժողովուրդին սիրեցեալ Հայրապետը, արժանընտիր Հովուազեաւը: Փառաշուք այս ընդունելութիւնը, ա՛յսչոփ համազգային, հոգեբուխ և խոնդավառ առանց պատճառի չէ: Ժողովուրդը՝ իր նոր Մեսիա, անոր գալուն կապած է իր խորունկ մուրազները:

Արդարեւ Ազգընտիր Վեհափառը ինքնատիպ դարձնող և զինքը այլ եկեղեցականներէ զատորոշող ստորեղելին՝ Ազգային Միութեան հաւատաւոր առաքեալ մը ԸՄալու հանգամանքն է: Իր բեղմնաւոր ու վաստակալից կեանքի երկար տեւողութեան ընթացքին՝ Վեհափառը եղած է կենդանի տիպարը համահայ եղբայրութեան, համազգային գործակցութեան, իրարասիրութեան և միութեան: Անոր մէջ կ'ապրի վերյառնող Նահապետը՝ Արքիմետն ու Ալիշան Հայրեկներուն, որոնք դաւանական ու հատուածական նրբերանզներուն, որոնք պաւանական ու հատուածական նրբերանզներէն վեր՝ մայրենի հողին ու հայրենիքին, տոհմային ընդուռ վերյառնող Նահապետը՝ Արքիմետն ու Արքիմետն, մեր փառաշունչութիւններուն ու բարքերուն, մեր կրօնին ու շուք անցեալին ու վարդագոյն ապագային, մեր կրօնին ու Եղանակին, պատմութեան ու գոպրութեան, համազգային սեպականութիւնն ու ուխտապահութիւնը քարոզեցին ու ապհականութիւնն ու ուխտապահութիւնը քարոզեցին է Մայր Հայրենիքին և այս մոլորակին վրայ ցրուած բոլոր հայրուն միացման ու եղբայրացման և համահայ արժէքներուն գոյտաեւման:

Վեհափառ Հայրապետը ծրագրած է, Անթիլիասը դարձրնել Հայ լուսուոր փարոսի մը, մամուլին և հրատարակչանել Հայ լուսուոր փարոսի մը, մեր կիրութիւնը կորուատէ փրկել մեր երգերը: Գործիական երաժշտութեան քաջալիբութեան համար՝ շուտով պիտի հասնին գըպելավանք, այս երաժշտական գործիքները, որոնք նուիրուած

են Ամերիկահայ կանանց Միութեան կողմէ, այս նպատակին համար:

Մասնակցիլ էջմիածնի համագումարին, ծրագիրներէն մին է վեհափառ Հայրապետին: Յունիսին էջմիածնի մէջ գումարուելիք եկեղեցական և ազգային այս համաժողովը, ո՛չ միայն Ամենայն Հայոց Աթուը պիտի օժաէ արժանաւոր գահակալով մը, այլ և ան կոչուած է ըլլալու հայրենիքին ու արտասահմանի վայրապատին Հայութեան կամուրջը: Հայ Առաքելակոն եկեղեցիի արդիականացման արխագումար, ինչպէս և համազգային հակատագրի մնացման քուրան և ներգաղթի կարգադիրը: Այս անսակէտէն վեհափառը պիտի արդարացնէ իր վրայ զրուած յայսերը:

Յանձին Նորընտիր Կաթողիկոսին, մենք կ'ողջունենք Հայ պայծառատես և փորձառու միաբը, վաստակաւոր զարծիչը, հոգեշունչ հանտոր, իրատես և ճամփուկ քաղաքագիւտը, Հայ գաղթական ժողովուրդի ապագային աննկուն կերտիչը, մեծ բարեկարգիչը, յոգնաջան աշխատանքի հերոս և եթէ հարկ ըլլայ, իր կեանքը զահարերող դիւցազնը:

Ահա՛, այս հանգամանքներով է որ մենք սիրով ու խանդագատանքով կ'ողջունենք Ազգընտիր Հայրապետը և կ'ըսենք՝ բարի եկաք:

Ա. Էլաննեան

Ամբարատա Գէյրոյ
24 մարտ 1945

—ο—

Գաղուստի բարի, Վեհափառ

Երկու տարուան սպասումէն ետք ընտրեալ Կաթողիկոս Տ. Գարեգին Յովսէփիեանցի ժամանումը Առւրիոյ և Լիբանանի հայութեան համար ընդհանուր ոգեւորութեան և հրճուանքի օր մը եղաւ:

Հայութեան բոլոր խաւերը, բոլոր հոսանքները, բոլոր յարանուանութիւնները յարգանքի և սիրոյ զգացումներով ողջագուրեցին իրենց Հայրապետը, ընդունելութեան տալով

տոնակատարութեան մը երեւյթը: Եւ ինչ որ երախտագիտութեամբ և հպարտութեամբ կը համակէր զիրենք, յարգանքի արտայայտութիւնն էր Իիր սնանի կառավարութեան որ Հանրապետութեան Նախագահին Հայֆայի մէջ վեհափառին ըրած ջերմագին ընդունելութիւնէն ետք, պաշտօնապէս, և ամէն կարգի պատիւներով մասնակցեցաւ ընդունելութեան հանդիսութիւններուն:

Իր այս ընդունելութիւնով, Հայ ժողովուրդը կուգար ըսել կիլիկիոյ Աթոռին Գանձկային թէ պատմութեան մեծ արջադարձի այս պահուն, երբ Հայուսանի մեր եղբայրներն ու քոյրերը, պատերազմական, անսեսական ու մըշակութային մարզերու մէջ նուաճումէ նուաճում կ'երթան, երբ այսահզ կը վերածնի Հայ ազգը և եկեղեցին իր կոչումին բարձրութեան վրայ՝ անմասն չի մնար Ազգին մաքառութերուն և նուաճումներուն, ու կը կողմակերպէ իր հոգեւորական գործունելութիւնը, կը վերահաստարակէ «Եջմիածին»ը և նախաքայլերը կը նետէ բազմակողմանի պատրաստութիւնով հոգեւորական սերունդ մը արտադրելու համար, Սուրբոյ և Լիրանանի հայ ժողովուրդը կը սպառէ որ ազգ. իշխանութիւնները, վերանորոգուած, օգտուին իրեւ Սուրբոյ և Լիրանանի իրաւուցը քաղաքացիներու, հայերու ընծայուած բոլոր կարելիութիւններէն, կազմակերպելու համար իրենց եկեղեցական և մշակութային կենանքը:

Ազգընափիր Հայրապետը իր վրայ կը միացնէ բազմահմուտ մասուրականի, անրասիր Հոգեւորականի, Հայրենակութիւնների և գործի մարդու բոլոր յատկութիւնները: Եւ արդէն Բարգէն վեհափառէն վերջիրն պէս զէմք մը կը սպասէր կիլիկիուն Աթոռը, որ կարգ կանոնը վերահաստատէր մեր եկեղեցական կեանքին մէջ, կանոնը վերահաստացնէր զարեւվանքը, արտադրելու համար պատրակենդանացնէր զարեւվանքը, արտադրելու համար պարագաներու հոգեւորական և կրթական մշակներ, ի պէտա մեր մշակութի ծարաւի բազմութիւններուն, զարկ տար հրատարակութիւններու, և արժանի բարձրութեան վրայ դնէր հայ զպրոցը, որ կոչում ունի արտադրելու մեր Մայր Հայուսանին և մեզ հիւրընկալոց՝ երկրորդ հայրենիքին

Նուիրուած սերունդ մը: Վերջապէս վեհ. Տ. Գորեղին
կաթողիկոս Յալուէֆեանց այն գէմքն է որ կը վայելէ էջ-
միածնայ Մայր Աթոռի անվերապահ համակրանքը և իրը
այդպիսին կոչուած է արժէքաւոր աշխատանք մը տանելու
կիլիկեան Աթոռի և Մայր Աթոռի կապերու սերտացման
համար:

Ահա այս բալորին գիտակցութիւնն է որ Սուրբոյ և
Եկեղեցնի հայ ժողովուրդը մզեց համազգային տօնակա-
տարութեան օրի մը վերածելու վեհափառին ժամանման
բարեբանիկ օրը:

Գալուստ Բաբի, Վեհափառ:

ՀՐԱԶ ՊՈՒՇԻԴԱՆԵԱՆ

«Ժողովուրդի 2այն»
25 մարտ 1945 Գելլութ

Բարիզարուս Վեհափառին

Մեծ է և համազգային այն ուրախութիւնը, որը կը
զգայ այսօր մեր զազութը, ծերունազարդ Հայրապետի
ժամանման այս հանգիստաւոր օրուան մէջ: Դպրոցական
աշակերտներէն սկսած մինչեւ վերջին խանութպանն ու աշ-
խատաւորը հրճուանքի և յարգանքի երկիրդած զգացում մը
կը կրէ իր մէջ և այդ զգացումով ալ երած է դիմաւորելու
իր եկեղեցիկ արժանաւոր պետը և կիլիկեան Աթոռի Գա-
հակալը: Զեւական ծիսակատարութիւնն մը չէ բնաւ այն
սրտայոյզ ընդունելութիւնը, որուն իր մասնակցութիւնը
կը բերէ ամէն հայ, ժողիտը գէմքին և յոյսի հառագայթ-
ները սրտին մէջ: Տօնական այս օրը յիշատակելի թուական
մը պիտի մնայ մեզի համար:

Երկու տարուան սպասումէն յետոյ՝ Ազգը ընտիր կա-
թողիկոսը կուգայ վերջապէս իր հօտին գլուխոը անցնելու:
Թէև հեռաւոր աշխարհի մը մէջ, ան սակայն ներկայ էր
հոս իր հոգիով և յիշատակով, իր վեհաչուք հեղինակու-
թեամբ և երազներով: Ընարութեան օրէն սկսեալ ան մեր

Հայրապետն էր և իր բացակայ անձին հմայքով կը լեցնէր
արդէն Առարիոյ և Լիբանանի հայութեան սրտերը, Կիլիկիոյ
թափուր գանց և մեր Ազգ եկեղեցին:

Ու երբ կը հասնի հիմա, ոչ թէ պարապը կը լեցուի,
այլ կարծես գոյութիւն ունեցող գաղափարական ներկայու-
թիւն մը մարմին կ'աւնեէ, աւասանելի և շօտփելի կը գտանայ:

Բարի ժամանում Հայրապետին . . .

Ան մեր բարորին մէջ պիտի գանէ անվերապահ սէր
ու յարգանք՝ իր անձին, իր կոչումին և իրեն վիճակուող
բացառիկ առաքելութեան հանգէպ: Ան պիտի գանէ իր
շուրջ նուրիումով բարորուելու պատրաստակամ հօտ մը, որ
կարօտ է հովիթին, վասահալից անոր բարոյական և մտառ-
բական բարձր կարողութեանց և հաւասար՝ բաւագոյն ա-
պագայի մը յայտնութեան:

Կուգայ Հայրապետը ոչ թէ նոր ախտդուներով փա-
ռազարդելու իր անունը, այլ բազմամեռ զործունէութեան,
անբառիր կզերականի և հմտաշատ զիտունի իր փարձառու-
թիւամբ ու շունչով հարստացնելու իր ժողովուրդը և Կիլի-
կեան գարաւար Աթոռը, որ անսատն դառնալու համար,
պէտք ունի իր նման և իր արժանիքներով օժտուած կա-
թողիկաներու:

Վեհ. Տ. Գարեգին Յովուէլիսան, որուն մանրամասն
կենագրութիւնը հրատարակեցինք մեր նախորդ թիւերուն
մէջ, պատանեկան շրջանէն մինչեւ խոր ծերութիւնը երե-
ւան կուգայ իրեւ աշխատանքի և հազեկան արժէքներու
հետամուռ առաքեալը, որ կոչումի խոր զիտակցութեամբ
վրան առած է ոգի մը և մեր սուրբերու և անման Հայ-
րապեաներու շաւիղէն քալած հաստատ և խանդավառ յա-
րատեւութեամբ: Անոր ասրիները բնանաւոր են կրօնական,
դրական և ազգային այնպիսի վաստակով մը: որ կը բռնեն
իր զէմքը լուսաւոր պահելու ներկայ և հնաւորդ սերունդ-
ներուն առջեւ: Հաւատքի մարդը եղած է ան, զրչի մարդը
ըլլալէ առաջ և ճշմարիտ հայրենասէրը բարձր մնացած է
միշտ կրօնական և մտառորական իր կրկնակ զարծունէու-
թեանց ընթացքին: Այդ է պատճառը, որ անոր խօսքը խոր

արձագանգներով կը թրթռայ Հայաստանէն մինչև Ամերիկա, Եգիպտոս և Հուն, այդ է պատճառը դարձեալ, որ տարօրինակ կենառնակութեամբ մը թարմ կը մնան իր ուժերը և ստեղծագործ իր աշխատանքը:

78 տարիներու բերան տակ է որ կուգայ մեղի վեհ Հայրապետը, բայց ոչ թէ խոնջ ուկորներով և ուժաքամ հոգիով, այլ երիտասարդի ողեւորութեամբ և նոր նուռանուններ իրագործելու վճռականութեամբ: Աւրիշ պայմաններու տակ, իր արդար իրաւունքը ովհափ ըլլայ հանգչի հանգարաւորէն ազգային ծաղկեալ պարտէզի մը կազնիին տակ, բայց ան կը զգայ, որ ժամանակը չէ հանգստի և երանաւէտ երազանքներու: Մրագիրներ կան զլուխ բերելիք, հեռանկարներ կան նուազելիք, հոգիներ կան զաստիրաւկելիք և տարագիր ժողովուրդի մը կիսաւքանոց շէնքը կոյ կառուցանելիք: Զանազան շրջաններու մէջ ըրած իր բագմաթիւ յայտարարութիւններով Ազգընախիր Կաթողիկոսը այս մասին միայն կը խօսի և այս մասին կ'երազէ: Մեզմէ հեռու եղած շրջանին ալ, Ամերիկայի և Եգիպտոսի մէջ, ան մեր մասին խորհեցաւ շարունակ, քարոզեց, գործեց և գըրամ հանգանակեց՝ նոր ասպարէզին ու զործունէութեան դաշտին հերկը յաջողութեամբ կատարելու համար:

«Ազգակ» Գէյրութ
25 մարտ 1945

Յոյսին և Ռիստին Տապանակը

Ի զուր չէ որ մեր երանելի տաղերգուններէն մէկը, մեր ցեղը ևնոր Խորայէլը է կոչեր, Աստուաշնչական այդ հնաւուրց ու թշուառ ժողովուրդին հետ իր անսատոյգ ճակատագիրը նոյնացուցած ու իր ուսերուն վրայ վերցուցած ըլլարով յոյսերուն ու ուխտերուն տապանակը՝ մողական ու ոսկիաշէն այն տագաւարը՝ ուր երբեմն Աստուառ բնակեցաւ իր սիրելի ժողովուրդին միջև, պատմական ու ուուր գրական Օնիլ Մուեսը կամ հաւաքման այն վրանը ուր Եհովա ժամադիր

պիտի ըլլար իր ժողովուրդին ու գլխաւորաբար իր հօտին
ա'յն դաստկարզին հետ, քահանայ ու Ղեւտական, որ ինք-
զինքը պիտի կրնար արժանապէս ներկայացնել իսրայէլի
բոլոր ցեղերուն առջեւ:

Հրեաներու Ռւխտին Տապանակէն տռաջ ուրիշ Տա-
պան մըն ալ շինուեցաւ սակայն, ուր Նահապեաներուն ան-
դրանիկը՝ ալեփառ Նոյ՝ խնամալ տեղաւորեց իր ցեղին բո-
լոր սրբութիւններն ու առաքինութիւնները, ջրհեղեղի դա-
դարէն ու սահանքներու հանգարատէն յետոյ անոնցմով վե-
րաշինելու համար մարդկային յուսունատութիւնէն ու մեղ-
քերէն պահ մը վտանգուած արարչագործութիւնը:

Հին հին դարերու այդ միեւնայն սրբազան երկրպա-
ղելի աւանդն է, Հայոց ազգին յոյսի ու լոյսի նուիրական
Տապանակը՝ զոր ծովերու ու օդի ալիքներուն ու ցածմաքի
աւազներու վրայէն, ձմբան ուս խստաշունչ ու փոթորկու
օրերուն, մեղի կը բերէ այսօր, իբր վկայութեան նոր խո-
րան մը, բարի ու ալեզարդ Նահապեաը Հայ Ակեղեցւոյ,
այդ Տապանին դրան առջեւ, իբր նորընտիր Հավուապեա,
ժամագիր ըլլալու համար իր ժողովուրդին հետ, այնպիսի
տան մը մանաւանդ երբ նոր իսրայէլի բոլոր զաւակները
իրմալ պիտի տեսնեն թէ այսպիսի՝ շքեղ ու նուիրական
կառնձեր ու աւանդներ կան իր մէջ, որպիսի զեռ չկար-
դացուած մազազաթներ ու դեռ չքննուած Հայ արուեստի
բեկորներ:

Բայց հասաւ արդէն ու ինք իբր քահանայ ու Ղեւտա-
կաններու հետ միասին պիտի քննէ այդ բոլորը ու հետզհե-
տէ իր ժողովուրդին սրտին մէջ պիտի ցանէ հացի նման
ու անկէ աւելի քաղցր մանաւան իր ոսկի սափորին, իր
նոր անդաստանին մէջ ծաղկեցնելով տակաւ իր փառաւոր
նախնիքներու ձեռքէն առած մոգական դաւազանը:

Սպասեցէ՞ք, հասաւ արդէն:

ԱՐՏԱՀԱՇԴԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

*Զարթօնք Գէյրութ

25 մարտ 1945

Բարիզաղուս Վեհաշատին

(ՕՐԻ ՕՐԻՆ)

Երկար տարիներու անձկալից սպասումներէ յևոյ, ուրոնք ծանր մասնոգութիւններու ալ տախթ տուին, վերջապէս հասաւ մեր Ընտրեալ Կաթողիկոսը, վեհափառ Գարեգին Արքեպոս Յովսէփեան, իր շնորհալի և բազմահմուտ անձնաւորութեամբ վերստին փայլեցնելու համար երեք տարիէ ի վեր թափուր մասցած Կիլիկիան Աթոռը:

Վեհափառը, թէեւ ծերունազարդ, սակայն երիտասարդական աշխոյժով և կորովով զինուած և հրապուրիչ անձնաւորութիւն մըն է, և կը համնի մեր մօտ, խանզավառ, պայծառացնելու և բարձրացնելու համար Առորիոյ և Լիբանանի Հայ Համայնքին բարոյական, մատաւր և ազգային արժէքները իր ուշացումին մէջ հաւանաբար քիչ մալ զեր խաղացած են նիւթական մասնոցութիւնները: Իր պատրաստած գործունէութեան ծրագիրներուն գործադրութեան համար անհրաժեշտ նիւթական միջոցները ապահովելու համար է որ, ան ամիսներ շրջադաշնեցաւ Ամերիկայի մէջ, իր ամբողջ անձը նուիրելով իր Աթոռին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, և իր Յորելինական հանգիստութիւններուն առթիւկասարեց հանգանակութիւններ:

Ասիկա յաջողութիւն մը եղաւ Ամերիկայի մէջ, ուր մեր բոլոր ազգակիցները ճանչցան առնուազն զոյտութիւնը Անթիւմասի Կաթողիկոսարանին և Դպրուվանքին, և իրենց մէջ ծնուռ հետաքրքրութիւնն ու զգացումը՝ իրենց նիւթական օժանդակութիւնը քերելու անոնց:

Վեհափառը նոյն յաջիով ընթացաւ նաև իր ճամբուն վրայ, և Եղիպատոսի մէջ ալ յաջողեցաւ սաեղծել հետաքրքրութիւն մը՝ որ յանցեցաւ մօտ 15.000 եղիպատոկան ոսկիի հանգանակութեան:

Ամերիկա և Եղիպատոս գնահատեցին մեր Վեհափառին անցեալ ու Ներկայ արժանիքները, և խանգավառուեցան անոր ապագայի ծրագրով:

Վեհափառը երկարաւան ծառայութիւն մը ունի իր
ետին, նուիրուած Հայ Ազգին և Հայ Եկեղեցին: Սովորա-
կան ծառայութիւն մը չէ այս, որովհետեւ ան իր մէջ կը
մարմնացնէ մաքուր և հաւատացեալ եկեղեցականի, հմուտ
բանասէրի և գրագէտի, փորձառու առաջնորդի և անվիճե-
լի հեղինակութեան մը արժանիքները, արժանիքներ, որոնք
շատ քիչ մարդոց մօտ կրնան գոյութիւն ունենալ միաժա-
մանակ: Այս արժանիքներուն բման գործածումով և վաս-
տակով ձեռք բերուած արդիւնքներուն զարնեպսակն է այն
մեծագոյն ծառայութիւնը, որուն կոչուած է Գարեգին
Սրբազն, ընտրուելով կաթողիկոսը Կիլիկիոյ Աթոռին:



Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ունի փառաւոր անց-
եալ մը: Այս Աթոռին վրայ բազմած են Ներսէս Շնորհալի-
ներ և Բարդէններ: Անոնց լուսաւոր յիշատակը ներշնչա-
րան մը պիտի ըլլայ մեր Վեհափառին, որպէսզի լիովին և
կատարեալ յաջողութեամբ գործազրութեան գնէ իր ծըրա-
գիրները, և Սուրբոյ և Լիբանանի Հայութեան համար
Անթրիփիասը զարձնէ ազգային, եկեղեցական և մշակութա-
յին վերածնունդի ստան մը: Արդարեւ, մեր գաղութը ան-
կազմակերպ է իր բոլոր կողմերով, և ողբարի է կացութիւ-
նը մեր եկեղեցին, մեր զպրոցին, մեր մշակոյթին և մեր
ազգային բոլոր իշխանութիւններուն:

Հրաշագործ ձեռք մը պէտք էր բարեփոխելու համար
այս կացութիւնը, և գաղութը առաջնորդելու զէպի բար-
գաւաճում, զէպի վերելք՝ հաւաքականութեան հետ կապուած
բոլոր մարզերուն մէջ, Մեր Վեհափառը կ'առաջնորդէ, ինչ-
պէս կ'երեւայ իր զանազան գրութիւններուն, պատգամնե-
րուն և նախապատրաստական աշխատանքներուն մէջ, ձեռ-
նարկել այս ամենէն նուիրական և զերազանցօրէն ազգա-
յին ու եկեղեցական գործին, և վասահ ենք որ, շնորհիւ իր

արժանիքներուն և անձնական հմայքներուն, պիտի յաջողի գործել Հրաշքը, և սկիզբը ովհափ դնէ վերածնունդի շըրջանի մը:

Մառան Աստուծոյ, իր կոչումով իսկ, վեհափառը այս ձեւով կը գառնայ զլիսուոր ծուան մեր ազգին ու մեր երեղեցին, իր բովանդակ անձին զոհորերութեամբ, այնքան փորձանաւոր տարիներու իր աշխատանքներէն յնտոյ, քիչ մը ամէն անզ, սկսուծ Հայաստանէն, մինչեւ Ամերիկա:

* *

Առջին անգամը չէ որ մեր մէջ ունինք վեհափառը և կամքածնական եպիսկոպոսէ ան, և իրը այդ, որպէս Ընդհ. Հայրապետութեան նուիրակը 1936ին ալ ան անցաւ այս երկիրներէն, և իր հայրենաշունչ քարոզներով ու բանախօսութիւններով քաջալերեց մեզ, խանդավառեց, Մայր Հայրենիքով և Մայր Աթոռով: Ան գնաց մինչեւ Հիւս. Ամերիկա, ուր եօթը տարի զսպելէ յնտոյ գաղութը, ու վերակազմակերպելէ յնտոյ քայլայուած ազգ: Իշխանութիւնը, այսօր կը վերագանայ մեզի՝ ըսենք իր վերագարձի ճամբան վրայ, քանի որ ծովուն վրայ իսկ զրի տառձ «Դեպի կամքածնին» պատգամին մէջ, վեհափառը կը յայտնէ իր մատղրութիւնը, ուղևորութիւնը շարունակելու, ուղիղ գծով իր կողքին ունենալով կիլիկիոյ թիւմին եպիսկոպոսները և եթէ զիւրութիւններ ընծայուին, եպիսկոպոսներէն և պատգամաւորներէն զատ սառար թիւով ուխտաւորներու, մինչեւ սիրու մեր ցեղին, մինչեւ Հայրենիք, մասնակցելու Ընդհ. Աթոռի Գահակալին Բնարութեան, և աչքով տեսնելու համար Հայաստանի վերաշնուրութիւնը:

Վեհափառին համար հանգրուան մըն է Անթիլիստ, կամքածնի ճամբան վրայ: Բավանդակ հայ ազգին միասնականութեան և երջանկութեան համար, այսօր աւելի քան երեք, անհրաժեշտ է մեծութիւնը կամքածնի ընդհանուր հայրապետութեան, միասնականութիւնը նաև հայ եկեղեցին: կամքածնին զբուխն է մեր հաւատքին, սկսած Խուսա-

ւորչի օրերէն, այն ժամէն՝ երբ Միածինը իջած էր և լուսուորած մէր ժողովուրդը, մեր հայրենիքի հողին մէկ անկիւնին վրայ:

Տասնըետքը գարերու ընթացքին ան եղաւ յուսատու և տուաջնորդ փարոսը մեր ցեղին, հաւատքին և դոյտւթեան, և այսօր ալ կը մնայ նոյնը, գարձած աւելի կննուական աղդակ մը մեր նիւթական ու ազգային գոյութեան համար, մեր աշխարհի մէջ ցրուած հայու թեկորներուս համար:

Եւ իջմիածնական գարեգին Արբագան, բազմած Կիլիկիոյ Աթոռին վրայ, միացման կապը պիտի ըլլայ ընդմէջ երկու Աթոռներուն, միշտ գուրգուրալով իջմիածնի՝ Մայր Աթոռին վեհապեսութեան վրայ:

Այս զգացումներով, յոյսերով և հեռանկարներով կողմաններ գալուսոր մեր վեհափառին և յաջոզութիւն կը մազթենք իրեն՝ ծոռայութեան այս նոր շրջանին և շրջանկին մէջ:

«Զարթօնք» 25 մարտ

1945 Գէյրութ

Կիլիկիոյ Արոռը և Էջմիածինը

Կուգայ: Եկա՛ւ Եւ վերջապէս կը հասնի, այլեւս, այնքան անձկօրէն սպասուած Կիլիկիոյ սպաւոր Աթոռին ընտրեալ մեր սիրելի Հայրապետը: Այս անմռռանալի և պատմական վայրկեանին կը մոռնանք, բնականաբար—ինչպէս ծննդական մայր մը իր հոգեհատորը լոյս աշխարհը բերելէն ետք—ցաւը, սրտմաշուքը և կարօտը որ երկու առարիներէ ի վեր պատած էր սիրտը մեր ժողովուրդին:

Դարձը վեհափառին (և վեհափառ կ'ըսենք, զի իր ընտրութենէն ետք մեացածը պարզ արարողական ձեւակերպութիւն մըն է), Անթիլիասի որբացած Կաթողիկոսարանին սղանանումի տօնը չէ միայն, և այնքան, որքան ընտրեալ Հայրապետին իր հոտէն հնառու, անոր մէկէ աւելի և բազ-



Փառապես լինում են ուրիշ վեճ. Տ. Գարեգին Կարբուլիկոսից



մազան կարիքներուն հասնելու, ակամայ, անկարողութենէն ձերբաղատութիւնը: Յաւ մը, որմէն վստահ են թէ՝ ամենէն աւելի ինք կը մտահոգուէր:

Մեծաթիւ գաղութ մը, որպիսին է Սուրբան և Լիքանանը, միշտ և անմիջականորէն պէտք ունէր. և ունի, իր հեռատես, գործունեայ և կարգապահութեան նախանձախնդիր իր հովուապետին, իր ազգային, թեմական, կըթթական, մասակարաբական և վերջապէս, արմեմ, այս հայոցազութիւներկային թէ ապագային տեսակէտով, խիստ կարեւոր եղաղ «յարաբերական» բարդ և փափուկ գործերուն կարգադրութեանց համար:

Տարակոյս չունինք թէ՝ վեհափառին կարօղութիւնը ձեռնհասութիւնը և փորձառութիւնը պիտի կրնան բոլոր ոչ դիւրին հարցերուն լուծումը գտնել՝ բարձրացնելու համար իր ժողովրդեան բորոյականը, պաշտպանելու համար անոր կենաստկան շահերը՝ անսայթաք կերպով առաջնորդելու անոր նույը՝ փոթորիկներուն և խութերուն մէջնէն:

Ասոնցմէ անջատաբար, մեղի համար, մասնաւորապէս, ուրախառիթ է Նորընտիր կաթողիկոսին կամքիածին համագույշին Աթոռին բարձրաստիճան միաբանութենէն ըլլալու պարագան, խիստ կարեւոր կամքիածնոյն՝ Մայր և Կիլիկիոյ Աթոռներուն յարաբերութեանց տեսակէտով:

Կար ատեն մը, զժքախստաբար — և առաւելապէս Օսմ. Սուլթանական կառավարութեան գրգումով — որ մեր հոգեկից և համանման ոյց Աթոռներուն յարաբերութիւնը չէր ինչ որ փափաքելի էր ըլլալու Դաւանական կամ ծիսական ոչ մէկ տարբերութիւն. եթէ ոչ անոնց անջատ զոյս թիւնը, արգիւնք պետերու Ռուրինեաններուն պատճառու Սիս հաստատուած կիլիկիան Աթոռը չէ եղած հակաթոռ մը ըլլալու նպաստակաւ: Դէպքերը զոյն պարտադրեցին...: Երկու կաթողիկոսութիւններուն օտարներէ թելազրուած արուեստական հակամարտութիւնը, այնքան անիմուստ, որքան մնասակար մեր ազգային և եկեղեցական տեսակէտէն. վերջին ատեններս իր առաւելապօյն չափին հասած էր,

Կիլիկիոյ Մերտիչ Քէյֆսիզեան կաթողիկոսի օրով, և հը-
րահրաւած, ինչպէս ըսինք. օրուան վեհապետ Սուլթան Հա-
մբաէն՝ քաղաքական հակառակ նպատակներով:

Բարեբախտաբար էջմիածնի Ամենայն Հայոց Հայրա-
պետ հոգեւոյս Խրիմեան Հայրիկը, մղուած իր անսահման
հայրենասիրութենէն և քաջատեզնեակ քաղաքական սաղ-
րանքներուն, առաջին դրական քայլը առաւ երկու ա-
թոռներուն իրարահասկացողնւթեան, երբ մանաւանդ Սոյ
մէջ Քէյֆսիզեան կաթողիկոսին յաջորդու էր Խրիմեանին
անձնական բարեկամ և այնքան պատուական հոգեւոյս
Սահակ կյապայեան: Խրիմեան ինքն իսկ կարդ մը դրդա-
պատճառներէ մղուած, յանձնարարեց Պալմոյ պատրիար-
քարանին, պահել և զօրացնել Կիլիկեան Աթոռը՝ նոյնինքն
էջմիածնի Աթոռին ամրապնդումին և զօրացումին հա-
մար:

Պատճառներուն մէջ մտնելը մեր նիւթէն դուրս է:

Անկէ ի վեր ազգային կեսանքը հիմովին յեղաշրջու-
թիւններու ենթարկուած է. նոյնը և մտայնութիւններու
մէջ թէ էջմիածին և թէ Սիս, ուր երկու կողմերէն եւս,
ամէն ջանք թափուեցու հարթելու թիւրիմացութիւնները
և ձեռք ձեռքի, իրարու զօրավիր, մէկը նախաթռու և
միւսը անոր յարակից, պահելու, պահպանելու և առաջնոր-
դելու իրենց հայազդի հօտը:

Այս իրապէս ազգասիրական զգացումէ մղուած իրա-
րահասկացողութեան ըմբռնումով էր որ հանգուցեալ Սա-
հակ կաթողիկոսը, իր պատարագներուն մէջ կը յիշէր էջ-
միածնի Ամենայն Հայոց Մայր Աթոռին զահակալը:

Զէ մուցուած նոյնպէս թէ ինչպէս հանգուցեալ Բար-
զէն Աթոռակից կաթողիկոսը փորձեց անձամբ մասնակցիլ
հոգեւոյս Տ. Խորէն կաթողիկոսի ընտրութեան, Մայր Ա-
թոռին առնելով Սոի եղբայրական յարգանքը, և պանծա-
ցընելու անոր գերակոյ հանգամանքը: Եւ եթէ չկրցաւ եր-
թալ, պատճառը քաղաքական որգելքներն էին:

Աչ մէկ տարակոյս որ Նորընտիր Հայրապետն ալ,
ինչպէս Ամերիկանայ թերթերու, և վերջերս ալ, Գահիրէի
«Արև» օրաթերթին միջոցաւ ըրած յայտարարութիւնները

կը հաստատեն, միակ ցանկութիւն մը ունի—ուզեգիծ մը՝
անկեղծ և սերտ կապ մը պահել և ամբազնդել, մեր սի-
րելի հայրենիքին—Ա. Հայտառանի սրտին մէջ գտնուազ Ա-
Լուսաւորչի համայնական Ա. Աթոռին հետ, նոր կաթողի-
կոսին իր մասնակցութեամբ՝ անձամբ իսկ չնշելով յետին
խոչընդուաները եթէ կան, և վերահաստատել Հայտառանեաց
Առաքելական եկեղեցւոյ միասնականութիւնը՝ թէն երկու
Աթոռներով, բայց մէկ և անբաժանելի:

Միայն այս տեսակէտէն իսկ դարձեալ նորընտիր Հայ-
րարեատին վիճակուած առաքելութիւնը, զայն կը նկատենք
շատ բարձր եւ օգտաշատ: Եւ երբ մանաւանդ համայն
հայ Սփիւռքին աչքն դարձած է գէպի իր անցեալը և փա-
ռապանծ հայրենիքը՝ Ա. Հայտառանը, և հոն է որ կը տես-
նէ իր հայրենակարօտ սիրառ:

Զէ՞ որ երկու հարազատ մեր Արքազան Աթոռներուն
եղբայրական սիրայօժար գրկախառնումը պիտի ըլլայ մի-
անգամայն մէկը պատկներէն մեր իսկակներուն և գրկա-
խառնումը՝ անբաժանելի, գաղութահայութեան եւ հայրե-
նիքի եղբայրներուն....:

Ուրեմն, բարի գալուստ, վեհա՛փառ, եւ անվերջ յա-
ջողութիւններ:

ՄիՔ. ՆԱԹԱՆԵԱՆ

«Զարթօնք» 25 մարտ 1945

Գլուխով

Հայրենարադա ձայն մը

Վեհափառ Տէր,

Դուք բարի յոյսն էք որ մեզ կը պատուէք լիբա-
նանեան մեր քսանընդուամեայ բազմագոյն ամլութիւնը
կարողագին գարմանելու: Դուք այն հզօրագոյն ազգակն
էք որ ձեր վաստակալից կեանքի օրինակով մեզ պիտի մը-
զէք իրարահանգուժողութեան, գործակցութեան և մեր

առնմային բարքերու վերացայտումին։ Զեր հրաշագործ առաջնորդութեամբ է որ մեր լայն զանգուածները պիտի փրկէ ցեղային խաթարումէ, և պիտի բարեփոխէ մեր խոկալումները։ Դուք նուիրական Արարատի վերազարթնող փառքին փառահեղ լուսարձակն էք զոր բարեհաճեցաւ շնորհել մեզ բարձրեալն Աստուած։

Ակնածանքով կը մազթեմ ի համբոյր Ս. Աջոյդ
Մ. Մեսրոպեան

«Զարթօնք»

Միս ու Անրիլիաս

Ո՞չ մէկ տարակոյս որ Արարատեան Մայր Աթոռէն անմիջապէս յետոյ, Կիլիկիոյ կաթողիկոսութիւնն է որ իրաւոմբ կը գրաւէ ընդհանուր հայութեան միացն ու սիրաը, նոյնիսկ հիմա, երբ անիկա չի գտնուիր իր բո՛ւն հայրենիքին մէջ։

Անթիլիասի Հայրապետանիստ ոյս անկիւնը, թէեւ Տրջապատուած նարնջենիներու կանաչով և Միջերկրականի կապոյտով, չունի տակաւին Սիսի Մայրավանքին հմայքն ու կախարդական ոյժը՝ զորս ունեցած էր Կիլիկիոյ հայթագաւորութեան նախ՝ իրրեւ զործակից, ապա՝ ժառանգործը անոր թողած քաղաքական իշխանութիւն (1375-1921)։

Կիլիկիոյ հայութեան համար Սիսի կաթողիկոսութիւնը փարոս մըն էր, որուն կը յառէին աշքերը ամենէն տագնապալից օրերուն։ Զենք կրնար ըսել թէ այդ փարոսը. յաջողած է միշտ լաւագոյնս լուսաւորել իր ժողովուրդին ճամբան։ Իրողութիւնն է առկայն որ, ամենէն փոթորկու օրերուն իսկ, հայ անձկաս որտերուն մէջ անիկա եղած է յոյսի ազգիւր մը Կիլիկիէայ ժողովուրդին համար։

Այժմ ալ, երբ այդ ժողովուրդը որտասանկուած է՝ մեծամասնութեամբ։ Լիբանանի եւ Սուրբոյ հիւրընկալ հոգեբուն վրայ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը,

Նոյնպէս արտատնկուած Անթիլիասի մէջ, և ու կը մնայ յոյսի միեւնոյն ազրիւրը. եթէ ո՞չ քաղաքական, գէթ մշտկութային մարզին մէջ օժտելու այս չարչարակոծ ժողովուրդին աստանդական զաւակները, կեանքին մէջ խրոխտ քալելու անհրաժեշտ՝ ուսման և գիտութեան անկորնչելի գէնքերով:

Սիսի բերդը, որուն մաս կը կազմէր Կիլիկիոյ Վեհարանը. այնքան նշանաւոր եղած է որ հայ թագուարներէն մէկը իրեւ երախտագիտութիւնն իր զրամին վրայ արձանագրել տուած էր՝ «Ասոյ բերդն է թագաւոր» եւ նոյն իսկ, Միջին դարու կաթոլիկ եկեղեցին անոր անունը նուիրագործեր էր Աստուածամօր յղութեան չարականին մէջ Ս. Կոյսը վերակռչելով. «Սիս Քրիստիանօրում—Քրիստոնէից Սիս։» Անթիլիաս չունի Սիսի անուափիկ գիրքն ու պատմական արժէքը, սակայն իմաստուն զեկավարներուն առաջնորդութեամբ կրնայ գառանալ լուսաւորութեան կեզրոն մը։ Ի զուր չէ որ Անթիլիասի Վեհարանին գէմ առ գէմ կանգնուծ Մայր Տաճարին, որ կը գտնուէր Սիսի Վեհարանին առջեւ, Ս. Դրիգոր Լուսաւորիչ։

Ամերիկայի, Եզիդոսոսի և Պաղեստինի մէջ, Վեհարափառ Ընտրեալին ճամբուն վրայ ցոյց տրուած անկեզծ ու գրական համակրանքը, ապացոյց մըն է այն հաւատաքին՝ զոր Հայութիւնն ամբողջ ունի ո՞չ միայն գիտնական Հայրապետին՝ Ն. Վեհարափառութիւն Յովուէփեան կաթողիկոսին ամենազգի բարեմասնութիւններով օժտեալ անձին, այլ նուև Անթիլիասի մէջ արմատ այրձակող Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ ազգային իրականութեան մէջ կառարելիք օգտակար գերին հանդէպ, գէթ մինչեւ այն առեն ուր գաղթական հարիւր հազարաւոր հայերու այժմ անուրոշ ապագան, կարելի ըլլայ պայծառօրէն տեսնել...»

ՄԱՐ. Տէ՛ր ՍՏԵՓԱՆԵԱՆ

«Զարթօնք» Գլուխութ
25 մարտ 1945

Ախշիկեամ Արտոին շուրջ

— ԵՐԿՐՈՒ ԽՕՍՔ —

Քանի մը օրէ ի վեր, վեհափառը արդէն մեր մէջ կը դանուիր Երկու տարուան ակնգէտ սպասումը վերջ գտաւ և կիլիկեան Աթոռը վերջապէս ունեցաւ իր արժանաւոր զա- հակալը՝ յանձին Տ. Գարեգին կաթողիկոս Յովաչփեանցի: Ժողովրդային անհախընթաց յարդանքը, որ ընծայուե- ցաւ վեհափառին, ցոյց կուտայ այն առողջ բնազգը և խոր սէրն ու հասցումը, որ մեր զաղութին հայութիւնը կը տա- ծէ հանգէպ բոլոր անոնց, որոնք մեծ են իրենց մտային ու ողեկան կարողութիւններովն և ջերմ հայրենասիրութեամբը:

Կատակածէ վեր է որ Սուրբայ և Լիքանանի Հայութիւնը բան մը կը սպասէ ընտրեալ կաթողիկոսէն: Սակայն ինչ- պէս 17 Մարտի մեր «Երկու խօսք»ին մէջ շնչառած էինք, մողական գուազանի չենք հաւատար: Միայն նկատի ունե- նարվ Գահակալին արժանիքներն ու բազմակողմանի հըմ- տութիւնը, իրաւունք ունինք յաւսարա որ Անոր կաթողի- կոսութեան շրջանը պիտի գաւանայ արդիւնաւոր աշխա- տանքի, բարեկարգութիւններու և վերելքի շրջան մը կի- լիկեան թեմերուն համար, որոնք տարիներէ ի վեր քայ- ֆայուած կը մնան:

Սակայն ազգային այս մեծ զործը տառնձին կարելի չէ գլուխ բերել: Անհրաժեշտ է որ Հայութեան բոլոր հա- սանքները անկեղծ գործակցութիւնը մը բոլորուին Վեհա- փառին շուրջ, գործակցին Անոր և դիւրացնեն այս նրապա- տակով կատարուելիք բոլոր ձեռնարկները:

Հաւանաբար կարգ մը կազմակերպութիւններ իրենց մտքէն անցնեն և կամ փորձն մասնաւոր շնորհ վայելի ու քաղաքականութիւն խաղալ: Ասիկա ամենամեծ անար- դանքը ու խոչընդուռ պիտի ըլլայ այն նպատակին համար, զոր իրականացնելու կոչուած է վեհափառ կաթողիկոսը:

Մեզի համար ուրախանիթ իրականութիւն մըն է որ Կիլիկեան Աթոռի Գահակալը կը պահէ իր մասւոր և Քիզիքան աշխուժութիւնը և իր մէջ կը զգայ անհրաժեշտ ուժը՝ քաջալերելու ամէն գործակցութիւն և մերժելու ամէն յետին նպատակ:

Կիլիկեան Աթոռին շուրջ սանդաւելիք մթնոլորտը մեծապէս պիտի ազգէ գործերուն ընթացքին վրայ: Մեր կուսակցութիւններուն և միութիւններուն վրայ պարապակութիւն կը ծանրանայ կարելին ընել, բարձր պահելու համար Կիլիկեան Աթոռի հեղինակութիւնը և զայն զերծ պահելու ամէն ազգեցութենէ:

Հ. Տ.

«Արաւոտ» 30 մարտ 1945

Գէլլութ

Յարութեան soli

Պատերազմի վեցերորդ Զատիկը մեր գաղութին և եկեղեցին համար ալ բացառիկ ուրախութեան տօն մը կը գտնայ այս տարի: Կիլիկիոյ ազգընախիր Հայրապետը ժամանեց քանի մը օր տուած և հայ որտերը լիցուց հրճուանքով ու գեղեցիկ յայսերով: Անթիլիասի տաճարը կը պայծառանայ ոչ միայն իր կրօնաշունչ հանդիսութեանց շքեղութեամբ, այլ նաև մշակութային և հոգեւոր վերածնուրի այն ծրագիրներով, որոնց հիմքերը կը նետուին և կոթողիկոսի ներկայութեամբ մարմին կ'առնեն: Վատան ենք օր Հայրապետը շատ չանցած, իր անձին հմայքով, հեղինակութեամբ և կարողութիւններով, պիտի յաջողի Անթիլիասը գարձնել ազգային կեանքի և մշակոյթի կեղրոն մը, որուն հոգեւին կապուած պիտի մեռյ Սուրբոյ և Լիբանանի հոծ Հայութիւնը, իր բոլոր միջոցներով աջակցելով վեհափառ Տ. Տ. Գորեղին կաթողիկոսի ծրագիրներու իրադարձութեան:

«Ազգական Ապրիլ

1945 Գէլլութ

Վեհափառք Փոքր Սէրայի միջ

Երեկ՝ երեքշաբթի կէսօրուան ժամը 12-ին վեհափառ
Հայրապետը այցելութիւն տուաւ վարչապետ Ն. Վ. Ապահու
Համբատ Քարամէին, փոքր Սէրայի մէջ։
Վեհափառքին կընկերանային գեր. Տ. Ասդ և Գեր.
Տ. Արտաւազդ Մրբազաններ, երկու հայ երեսփախանները,
Քաղաք. Ժողովի Ասենապետ Պ. Մինոսեան և կարգադիր
յանձնախումբի ասենապետ Տօքի. Թագուրեան։ Վարչա-
պետը շատ սիրալիր ընդունելութիւն մը ցոյց տուաւ։ Վե-
հափառը կարգաց Ն. Վահեմութեան ուղղուած հետեւեալ ճա-
ռը, որ արտօքերէնի թարգմանուեցաւ երեսփախան Պ. Շամ-
իսանի կողմէ։

Տէ՛ր Վարչապետ,

Մեծ պարտականութիւն ունինք մեր խորին շնորհա-
կալութիւնը յայտնելու Լիբանանի ազնիւ ժողովուրդի
կառութեանը յայտնելու Լիբանանի ազնիւ ժողովուրդի
կառութեան, որ արտաքոյ կարգի ուշագրութիւն ըն-
ծայեց մեր մուտքը այս գեղեցիկ երկրի սահմանը և նորա-
փառաւոր մայրաքաղաքը Կարձնելու ժողովրդական և խան-
դավառ օրինակելի կարգապահութեամբ։

Խորապէս անձամբ, բայց և մեր Հայ ժողովուրդը իր
եկեղեցական ազգային մարմիններով, Պատրիարք հառա-
վարութեան այս բարեացակամ շնորհի համար։ Միանգա-
մայն վատահ ենք որ ըստ ինքնան, բայց և մեր հայրական
խրստն ու ներշնչումը պիտի լինի, փախողարձել այսպիսի
բարձր ուշագրութիւնը Քաղաքացիական պարտաւորութիւն-
բարձր մայրաքահիմ, անթերի և զիտակցուկան կատարմամբ,
երախտագէտ միանգամայն դէպի այս գեղեցիկ երկիրը և
անոր ազնիւ ժողովուրդը։

Յանուն Աստուծոյ օրհնուած ենք մեր նոր հայրենիքը,
նրա ժողովուրդը և իմաստուն կառավարութիւնը։
Վարչապետը պատասխանելով ցաւ յայտնեց որ Նո-

րին Սրբազնութեան Լիբանան ժամանման օրը ներկայ չէ գտնուած Պէյրութ, հետեւաբար չէ կրցած մասնակցիլ ընդունելութեան և ներողութիւն խնդրեց եղած թերութեանց համար Յետայ Ն. Վանմութիւնը գոհունակութիւն յայտնեց Հայ ժողովուրդի ցոյց տուած վերաբերումին համար և խոստացաւ վաղն իսկ փոխադարձ այցելութիւն տալ Ալեհավառոին: Խնդրեց Հայ երեափոխաններէն որ ընկերանան իրեն այս այցելութեան ընթացքին:

Զինուորական պատիւներ ընծայուեցաւ Վեհափառին:
Ազգակա Պէյրութ
5 Ապրիլ 1945

«Մեր նոր հայրենիքը»

Այս խորազով Ա. ԺԱԻՆԻ օրարերը
Ժ. Լ. Առուազրուրեամբ կը գրե: (6 Ապ.)

Ն. Վ. Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան քանի մը օր առաջ իր օրհնութիւնը տուաւ «իր նոր Հայրենիքին, անոր ժողովուրդին և իմաստուն կուալարութեան»:

Խորապէս կը ցաւինք որ աւելի կանուխ չկրցանք արձագանգը Ըլլաւ շարթուան սկիզբը Վարչապետին եղած այն յուղիչ այցելութեան, զոր կասարեց պետը Համայնքի մը, որուն բազմաթիւ զաւակները որդեգրած է Լիբանան:

Ընդունելութեամբ մը, որ ինքն իսկ անմռաւանալի կոչեց, Պէյրութ իսկ արտայատեց Յովսէփեան Կաթողիկոսին այն խոր ակնածանքը, զոր մեր երկիրը և մայրաքաղաքը ունէին իրեն հանդէպ:

Օգտագործելով բացառիկ և շօշափելի ուրիթ մը, պէտք էր ապացուցանել զանազան դաւանանքի պատկանող բոլոր Լիբանանցիներուն թէ բոլոր դաւանանքներն ու ընդունելի են Լիբանանի մէջ և թէ Լիբանան տէր կը կանգնի բոլոր անոնց, որ իրենք զիրենք զաւակը կը նկատեն այս երկրին:

թէեւ քիչ մը ուշ, բայց ուրախ ենք այս բանը շեշտելու անոնց համար, որնք օրէնքով մեր քաղաքացիները դարձած ըլլալով՝ խոչոր մնձամասնութեամբ մեր հայրենակիցները գարձած են նաև իրենց մտքով և հոգիով ու նոյնագան հաւատարիմ են լիրանանի, որքան մենք:

Եւ խորհրդանշական գիտակցութեամբ Յովաչփեան կաթողիկոս Սէրայ ներկայացաւ «մեր» խորհրդարանի «իր» երեսիսիսներով:

Մեր երկրին մէջ իրականը և իրաւականը կը նոյնանան:


Չենք գիտեր թէ ինչ խօսուած է այս երկու անձեռուն միջնեւ, որնք առանց իրար ճանչնալու, հեռուէն կու զային երկուքն ալ: Լիրանանի մէջ իրենց պարզ հանդիպումը կը պարզէ սակայն անոնց խօսակցութեան գաղանիքը: Լիրանանի իշխանութեան ներկայացուցիչն և լիրանանի Համայնքներու պետերուն միջնեւ եթէ երբեմն բառերու թարգմաններ անհրաժեշտ են, մտածումի թարգմաններ պէտք չեն սակայն շատոնց ի վեր: Ամէն գաւառունքի պատկանող բոլոր լիրանանցիներուն կ'իյնայ հսկել որ միշտ այդպէս ըլլայ: Մենք մեր հայրենակիցները և բոլոր միւսները կը հրատիրենք աշալլթութեան և միրակամութեան այս պարտականութեան:

Յովաչփեան կաթողիկոս լիրանան կը համնի երկար ճամբորգութենէ մը վերջ: Մենք գիտակցութեամբ և աւանդութեամբ մեր հիւրընկարութիւնը ընծայենք այս Վեհաշնորհ Շերտունիին որ նոր հայրենիքի հողը կը կոխէ զայն հայրենիք կոչելով և օրէններով:

Թիլսը

Ապրիլ 7ին, Շորամթ երեկոյ՝ ժամերգութենէն ետք՝ Տ. Գարեգին Ս. Արքեպոս. ի ներկայութեան Ս. Արքեպիսկոպոսներու, միաբան Հայրերու և հաւատացեալ ժողովուրդի ըրու հետեւեալ ուխտը. —

«Դարեզին ծառայ Յիսուսի Քրիստոի, Միաբան Սրբոյ Ուխտին Էջմիածնի, կամօն Աստվծոյ եւ բնորութեամբ ազգիս Հայոց կոչեցեալ յԱրքո. Կարողիկոսութեան Տանն Կիլիկիոյ ապահնեալ յօգնականութիւն շնորհաց Բարձրելոյն. խոսանամ եւ ուխտեալ առաջի սրբոյ Սեղանոյ եւ աստուածնեկալ սուրբ նշանաց, յանձն առնուլ զպաւուսն զայս եպիսկոպոսապետութեան Հայց. Եկեղեցւոյ, եւ բոլորապուղ. նուիրմամբ բնձայել զանձն իմ յանվրաց կատարումն Աստվածադդիր օրինաց եւ Կարողիկոսական պարտուց, եւ առաջնորդել ազգիս Հայոց բա ուղղափառ վարդապետութեան Քրիստոնեական կրօնից բա մերոյ եկեղեցւոյ դաւանութեան եւ բա Հայրապետական կարգաց եւ կանոնաց Աստվածպաւութեան, ամսեւիր եւ ամխոտոց բնրանալով յամենայնի ընդ լուսաւուի հետ զնացից արժանաժառանգ յաջորդաց սրբոց առանցնոց Թագեսուի եւ Բարքողիմեսուի եւ սրբոյ Հօնի մերոյ Քրիզորի եւկրորդ Լուսաւորչին զգուշաւոր պահպանութեամբ իրաւանց Արուոյս Տանն Կիլիկիոյ»:



ԱՅՐԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ-ՏԱԲԱՐ

ՀԱԻԿ

ՄԵՐԻ ՏՈՆՆ ԿՈԼԻԿԻՈՆ

S. S. Գարեգին Կարողիկոսի

ԶԵՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՄՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃՐԻՆ ՄԼԶ.

Համազգային խանդավառութիւն — Ազգբնիշ Վեհափառք
կը պատզամի. —

«Մեզնից կախուած է Հոգեւոր Կիլիկիոյ մը ստեղծումը»

1945 Ապրիլ 8 Կիրակի օր, Անթիլիասի Մայր Տաճար
րին մէջ տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գարեգին
կաթողիկոսի ձեռնազրութեան և օժման սուրբ արա-
րողութեանը, ունիլի քան 15.000ի հասնազ Հոյ և սուր-
բազմութեան մը ներկայութեան:


Համազգային տօնի բնոյթ ունեցազ այս հանդիսու-
թեանց, ներկայ գանուելու և յարգանքի տուրքը բերած
ըլլալու նախանձախնդրութեամբ, Առւրիոյ և Լիրանանի
ամենամուցուած անկիւններէն և կեղրոններէն, ինչպէս
նաև Մերձաւոր Արևելքի մեծ ու պատիկ երկիրներէն — Իրա-
քէն, Պաղեստինէն, Եգիպտասէն, Անդրյորդանանէն — Հայեր,
յիշատակելի աւուրէն առաջ հասած էին Պէյրութ:

Ապրիլ 8-ը, պատմական թուական մը և նո՞ր շրջան
մը պիտի ըլլայ Մեծի Տանն Կիլիկիոյ Ա. Աթոռին։ Նո՞ր
գործեր, նո՞ր հարցեր, նո՞ր ծրագիրներ՝ իրականացնելու
համար «Հոգեւոր Կիլիկիան» Փայյուն մեկնակէտ, հասնելու
և ըմբռնելու։ համար «Հոգեւոր Տանար»ի փառարանութեան
իմաստը, որուն ջատազով կը հանդիսանայ ծերունազարդ
Հայրապետը։

Աւանդական Ամօնովանիի տակ

Կոչնակներու զօդանջը աւետեց Վեհափառ Կաթողի-
կոսի գէպի տաճար ուղղութիւր Աւանդական ամպհավանիին

Վեհափառք, օճան օր, «Ահա Դան Ասուծ» պատառին առջեւ,
Ամպովանին տակ:



տակ երեւցաւ վեհարանի սանդուխներուն վրայ և բռպէ մը կանգ տուաւ՝ հաղորդուելու ժողովուրդին հետ, քարեպաշտ ժողովուրդ մը որ, անձկագին ու երկիւզած կը սպասէր ըմբուխնելու համար Վեհափառի Սրբազան ներկայութիւնը:

Հայիւր կանգնած էր Հօսին մէջ, դժուար էր զսպել յուզումը ի ան ժողովուրդի խանդավառ ընդունելութեան: Ինչ որ միսիթարական էր, անսահման վասահութեամբ և երկիւզածութեամբ Հօսը կ'ողջունէ առաջնորդի անձը՝ ու կարծես ձգտում մը ունի միարերան կոչելու. «Տէր հովուեցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցի»: Թէպէտ թափօրը կը շարժի գէպի Տաճար, սակայն, մեր հոգիին մէջ քանդակւած կը մնայ պատկերը, ու ինքզինքնիս կը զգանք ելեկարականացած մթնոլորտի մը մէջ:

Վեց եպիսկոպոսներ՝ Գեր. Գեր. Նախկին կաթ. Տեղապահ Ապագ. Ս. Արքեպիսկոպոս Աջապահեան, կ. Պոլսոյ նախկին պատրիարք Զուէն Ս. Արքեպիսկոպոս Եղիուեան, Լիբանանի թեմին կաթ. փոխ. Արտաւազդ. Ս. Արքեպիսկոպոս Սիւրմէեան, Դամասկոսի թեմին կաթ. փոխ. Եփրեմ Ս. Արքեպիսկոպոս Տանըունի, Խրաքի նախկին Առաջնորդ Ռուբէն եպիսկոպոս Մանասեան, Եղիպտահայոց Առաջնորդ Մամրէ Ս. Եպիսկոպոս Սիրունեան, ընկերակցութեամբ Եղիպտասի պատուիրակութեան, որուն շնորհաւած էր ամպհովանին կրելու բախտաւորութիւնը, Վեհափառը կ'առաջնորդին Տաճարէն ներս:

Յարգանի՛ Մեծի Տանն Կիլիկիոյ

Ներկաները՝ Լիբանանի Ներքին Գործոց Նախարար Վատի Նախմ, որ կը փոխարինէր Հանրապետութեան Նախագահը, ձորճ Զուէյն, Խորհրդարանի Նախագահին կողմէ՝ կմիր Գէյ Շէհապ, Տօքթ. ձէմիլ Թալհուք, նաև Մարտնի, Յոյն Օրթոսոքս, Յոյն կաթոլիկ, Հայ կաթոլիկ, Հայ Բողոքական, Հրեայ համայնքներու ներկայացուցիչները, և Միացեալ Նահանգներու, Խորհրդային Միութեան, Անդլիոյ, Թուրքիոյ, Զուիցերիոյ, Պելճիքայի և այլ երկիրներու դեսպան-

Ճյուղի բնակչութեան մասին:

Ա. Ս. Ստեփանյանը պատրիարք, Ա. Ս. Ստեփանյանը առջև



ները։ Մուրիոյ և Լիբանանի հայ երեսփոխանները Մեթր
Հրաչ Շամշեան, Պ. Պ. Մալսէս Տ. Գալուստեան, Սալաթ-
եան, Նողարէթ Պէյ Եսպուպեան, Պէյրութի և շրջաններու
մօտ քսան քահանայ հայրեր, առաջ վարդապետներ, խուռ-
ներամ բազմութիւն մը Հայերու և օտարներու, երկիւղա-
ծութեամբ խոնարհեցաւ Վեհափառին առջև՝ մատոցանե-
լու համար արժանավայրի յարգանք և ցայց առլու համակ-
րութեան չափը, որ ունի գէպի Հայ եկեղեցին և ժաղո-
վուրդը։

Ի խորոց սրբի առ Աստուած

Վեհափառը կը բարձրանայ խորոն և բազկոտարած
կանգ կ'առնէ սուրբերուն առջև՝ հայցելու համար վերջին
թողութիւնը, որպէսզի վերապատճայ առ Աստուած։

«Մազաղարեայ շրիներով» Հայր Մերը մը մրժնջերէ
ետք, երեար կուտայ ժողովուրդին և ծունկի կուգոյ ի խո-
րոց սրաբ խօսք բաելու համար Աստուածոյ, որպէսզի ընդունե-
լի ըլլայ իր ընծայումը՝ իրրեւ Հայրապետ Հայ եկեղեցիին։

Ենկարույր մինորաբին մէջ խաղաղած է մարդկային
ծովի աղեկոծումը։ Վերացած, անտեսանելի, անընբանելի
թելերով՝ հոգիները կուզած աննիւթականին, հրուժարած տ-
ուօրեայ ճզճիմ հաշիւներէն և մանր ու մեծ հոգերէն, այլ
խօսքով՝ մաքրուած, որբուած ի տես Մերունազարդ Հայ-
րապետի ընծայումին, վերերջանիկ բազէ մը կ'ապրէր բա-
րեպաշտ հասարակութիւնը։

«Մեթ դնեստ Զեռս»

Վեհափառը ծունկի է, ձախին ունենալով Հալէպի Ա-
ռաջնորդ Զարեհ Մ. վրդ, Փայտաղեանը, իսկ աջին՝ Երաւան-
դէմի Մրաց Յոկորեանց վանքի Լուսարաբապիս՝ եղեշէ
վրդ, Տէրտէրեանը։

Վեց եպիսկոպոսներ, ծանրագին զգեստաւորումով, գա-
ւազան և խաչ ի ձեռին կանգնած են Վեհափառին շուրջ,



Ն. Ա. Օծորինը Հայուսիսական կոչման առին, Ա. Անդամանց առջև
ճեղադիր Խ. բազկատած:

որ նոյնպէս զգեստաւորուած է ծանրազին՝ պատարագի ըղ-
դեստով։ Վեհափառը կ'ըսէ։ «Զի ողորմած եւ մարդակե ես
Աստուած»։

Եպիսկոպոս մը կը քարոզէ։ «Ազաէնցուք զմարդասէ-
րըն Աստուած վասն ծառայիս իւրոյ որ ընտրեցաւ և կոչե-
ցաւ ի կարգ պաշտաման և ի պատիւ քահանայապետական
Աթոռոյ Սրբոյն Թուղէսոսի և Բարթողիմէսոսի և խոստովանո-
ղին Քրիստոսի Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին. զի ար-
ժանի լիցի ի ձեռն կոչմանս և ձեռնադրութեանս առնուլ
զշնորհն և զօրութիւն ի բարութեանց առւողէն, յամինա-
կալէն Աստուծոյ՝ կեցուցէ և ողորմենցի»։

Երկրորդ եպիսկոպոս մը՝


«Աստուածային և երանաւոր շնորհ որ միշտ ընուս
զպէտո Սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ
կոչել Բարձր. Գարենգին Յավսէփեանց յեպիսկոպոսութենէ ի
Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, ի վերակացու-
թիւն Սրբոյ Եկեղեցւոյ ի սպասաւորութիւն և յառաջնոր-
դութիւն ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժա-
զալիքեան։ Ես գնեմ ձեռս ի վերայ սորա և ամենեքեան ա-
զօթս արարէք զի արժանաւոր լիցի իշխանութեան Առաքե-
լական Աթոռոյ անարատ պաշտելի սուածի սեղանոյ Աստու-
ծոյ»։

Ասկէ վերջ, երրորդ եպիսկոպոս մը՝ «Գոհանամք ըղ-
քէն Աստուած մշտնջենուոր» ազօթքը կը կարդայ։ Որմէ
ետք, բոլոր ժողովուրդին կողմէ, կ'ազօթէ Ընտրեալին հա-
մար որ Աստուծոյ ձեռքով կոչուած է ժողովուրդին առաջ-
նորդելու, Առաքելական և Կաթողիկէ Եկեղեցւոյ ծառայե-
լու, ճշմարիս և ուզգափառ հաւատք քարոզելու։ Թափան-
ձագին կը խնդրէ երկնաւորէ որ Ընտրեալին տայ Առաքելա-
կան շնորհք, ուժ՝ բարի գործերու, անարատ վարք, անտայ-
թաք զնացք։

Կարողիկոս Մեծի Տանն

Մասնաւոր հանդիսութեամք, Ս. Մեռոնի Անօթը ե-
պիսկոպոսի մը կողմէ կը բերուի խորան։

Ն. Ս. Օժոն բն. Եր Հայտապետական Զենօնադրութեան միջոցին



Վեհափառը ծունկի կուգայ: Եպիսկոպոսը «Առամելոյ Աղաւնոյ» շարականը երգելով, կը բարձրացնէ մեռոնը և կը կաթեցնէ ձեռնազգրեալի գլխուն: Դպիրները կը ձայնակցինք Ամէն ալելուիտ, ալելուիտ, իսկ եպիսկոպոսները իրենց բոյթ մատներով, դադաթը թափուած մեռոնը կ'օճն այնպէս մը որ նկատուի ճառագայթածեւ խոչ, և միաժամանակ կ'ըսին. «Օթհնեսցի, օծցի և սրբնեցի գագաթին Տէր Գարեգին Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ, այս նշանաւ Սուրբ Խոչչին և Սուրբ Աւետարաւս, և Սուրբ Միւսոնաւս, և ուսւրս Հնորհիւ, անուամբ Հօր և Որդւն և Հոգւսին Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից»:

Ապա սպիտակի քօղով մը կը ծածկեն Օծեալի զույխը, և սաքի բարձրացնելով անոր ձեռ քը կուտան Հայրապետական Գուազանը: Եւ զայն կը կուչն Կարողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Եպիսկոպոսները խոր երկիւզածութեամբ կը համբռուրեն Հայրապետի գագաթը, և «Աղջոյն» կուտան:

Պատարագը կը շարունակուի, սակայն վերջ զաած ըլլուլով ձեռնազրութեան և օծման սրբազան արտազութիւնը, բարձրաստիճան հիւրերէն կը խնդրուի վեհարան անց նիւ՝ լսելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի մազթանքները:

«Հոգեկան Կիլիկիան»

Վեհարանին մէջ հիւրերուն շամփայն հրամցուեցաւ: Բնդունելէ ետք Հնորհաւորութիւնները, Վեհափառը բաժականու մը արտասանեց, օրհնելու համար Լիրանանի և Սուրբիոյ կառավարութիւնները և երջանիկ կետնք մազթելու համար Ն. Վ. Շիւրբի Էլ-Քուաթլիի և Շէյխ Պշարա Էլ Խուրիի, երկու Հանրապետութեանց Նախագահներուն:

Դպրեանքին սաներուն կողմէ երգուեցաւ «Յանկամ տեսնել զիմ Կիլիկիանց. Վեհափառը զգացուած, խօսքը ուղղելով ներկաներուն յայտնեց, «Դուք կը ցանկաք տեսնել Կիլիկիան, մեզմէ շատեր կ'ուզեն տեսնել իրենց ծննդավայ-



Shawrazi մը օծովէն

ըը, սակայն մեր կամքէն չէ կախուած այդ իդմի իրագործումը, այլ կապուած է միջազգային խնդիրներուն, ըլլալով զուտ քաղաքական հարց: Բայց մեզնից կախուած է ըստեղծել հոգեւոր կիլիկիա: Այդ մեր եկեղեցին, մեր լիզուն, մեր գեղարուեստը, մշակոյթը, մանաւանդ մեր հայրենիքը ու անոր վերելքը, անոր բարօրութիւնը ու ապագան ահա մեր հոգեւոր կիլիկիան որ մենք կրնանք սահեղձելը:

* * * Պէյրութեանայ ազգայիններէն Պ. Ապրօ Ապրօյեան 3000 Լիբանանեան ոսկի նուիրեց դպրեվանքին՝ օծման կնքահայր ըլլալու համար: Այս առիթով Եգիպտահայ Պ. Սուրբեան յանձն առաւ դպրեվանքին մէջ աշակերտ մը պահել, այսքան առեն որ գոյութիւն ունի այս հաստատութիւնը:

Ռւխտի օր մը եղաւ ապրիլ 8ը, Սուրբոյ և Լիբանանաի հայութեան համար, անջնջելի պիտի մեռյ, մեր յիշուդութեան մէջ, որպէս համազգային խանդավառութեան օր:

«Ազգարար Պէյրութ

14 ապրիլ 1945


Մեծի Տաճի Կիլիկիոյ Վեհախառին

ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՌԻՅԱՅԱԳԻՐԸ

ՏԵՐ ՀՈՎՈՒԵՍՑԻ, ԶԻՍ

«Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ սակասեսցի» (Սաղմ. իբ. 2): Դաւիթ մազարէի անունով հասած մեզ այս խօսքը, իւր նեղութեան, հարածանքի, կեանքի ամենադժուարին պայտանների մէջ առ Աստուած ուզուած: Սաղմոսերքուի այս խօսքն է, որ այսօր, մեր նոր կոչման և պաշտօնի նուիրագործման այս սրբազն բապէին, կենդանանում է մեր հոգու մէջ: Նեղութեան մէջ չենք և ոչ հարածանքի մարգարէի նման արագքին կամ զժուարութիւնների կամ ազգատութեան ծանրութեան առկ ճնշուած,

Օծման առ թիւ օտար իրեալինք: Ա. զժի կրայ, Սովոր իւ Ամերիկայի Պհոսպան-
ցի, Տիւրք Սիւր Մոլոս իւ Շորտը լիր: Բ. շարիմ Սովոր Հիւպատոս
հայազգի Տիւր Անարենով:



վայելում ենք մեր ժողովուրդի սէրն ու յարգանքը մեր
արժանաւորութիւններից աւելի չափով, վայելում ենք Սու-
րբոյ և Եկեղեցների աղնիւ և բայնախոն հանրապետութեանց
մէջ քաղաքացիուն և կրօնական ամենայն ուզուառութիւն,
չնորհիւ դաշնակից ազգերի՝ և. Միութեան, Ամերիկայի,
Անգլիայի և Ֆրանսացի քաջարի բանակների յաջողու-
թեան, մեր հին և նոր հայրենիքները, այսինքն Հայուսաւան
ու Սուրբան և Եկեղեցներ, պատ են պատմարացմական ար-
հաւիքների և աւերութեների անմիջական առարկէզ լինելոց,
բայց և այնպէս հոգուս մէջ բարձրանում է հոգսի և պար-
տականութեան ծանր դդացումը:


Պիտի կարսպանանք օգտակար լինել մեր եկեղեցան,
ժողովրդին, որ յայսերով լի յանել էր իւր աչքերը մեր գու-
լբանեան: Պիտի կարսպանանք արժանաւոր յաջորդը լինել
մեր եկեղեցան երանաշնորհ Հայրապետաներին, սրոնք հոգի-
ների փրկութեան վեկայար, քրիստոնէական սիրոյ իրակա-
նացման, աստաւածահոմայ հասանառութիւնների հիմնադիր-
ներ, հոգեւոր և ազգային կետնքի վերածնաւթեան, հոգե-
ւոր տաճարների կառուցման ձարասրապետներ հանգիսացան,
հոգիների առ Աստուած սրացման և նորա մեղանի վրայ առ-
նուշանոտ կնքրուկի նման բուրուելու վարդապետներ և
ուսուցիչներ:

Սուրբ Սահակների, Ներսէաների, Սահակ Պարթևնե-
րի, Մեսրոպների, Նարեկացիների և Շնորհալիների հոգիներ
երկնքից պիտի դիտեն մեր ամէն քայլը, խօսքն ու զործը,
ծառայութիւնը եկեղեցւն և հօտին, պիտի կարողանանք
նրանց շաւզով ընդանալու:

Ահա, սիրելիք, ի՞նչ հոգս է պատռմ մեր սիրաը այս
սրբազան վայրեկնեանին: Աւստի և մարգարէի նման մեր
աչքերը գէպի երկինք ենք բարձրացնում «Տէր հովուեսցէ
զիս ինձ ինչ ոչ պակասեսցի»: Մեր ազօթքն է, խնդրում
ենք հաւասացեալ ժաղավուրդին էլ ազօթակից լինել մեզ,
որ Տէրը օգնական լինի մեզ, նորա խնամքի տակ մեր ըն-
թացքն ու զործը:

Իսկ չեթէ Աստուած մեր կողմը լինից առաքեալի խօս-

ՀԵՂՋՎԵ ԿԵՄԱՆՈՒԹՅԱԳ ԵՐԵՎԱՆ ԽԱՂՋԱԿԱՐԱՅԻ ԽՎԻՐԱԿ ԱՎԱՐԱՐ ՎԵ ՎԵՐԱՎՈՐԻ ԱՎԱՐԱՐ ՎԵ ՎԵՐԱՎՈՐԻ




քի համեմատ, որ որդեգրեցին նաև մեր հայրերը, ամենամեծ նեղութեան և փորձութեան օրերէն, երբ պէտք է իրենց հաւատն ու խղճի ազատութիւնը, հայրենիքն ու գոյութիւնը պաշտպանէին Սասանեան ահեղ պետութեան դէմ, վարդանանց պատերազմին գնալուց առաջ, ի՞նչ դժուարութիւն կարող է կանցնել «ի սիրոյն Քրիստոսի», այսինքն մեր պարտականութիւնների կատարման հանապարհին։ Քրիստոսի սէրը, սիրելիք, սէրն է դէպի եկեղեցին, դէպի հայրենիքը, դէպի նախնեաց թողած ժառանգութիւնները, դէպի հոգու և հանձնարի յարատեւ կենդանութեան և ստեղծագործութեան պաշտամունքը, վառ պահելու այն սրբազան հուրը, որից լոյս և ջերմութիւն տարածում է հոգիների մէջ։

Աղօթենք, որ Աստուած մեզ հետ լինի, և ձեզ հետ, որ մեր բոլոր ուժերը միացնէ բավանդակալից գարձնելու մեր պաշտօնը և Հայրապետական շրջանը իւր բարի Հովուաբետութեան առակ, և երբ մի օր կամենայ իւր մօտ կանչել և մեր տեսութեան հաշիւր պահանջել, ասել կարդանանք «զոր ինչ պարա էր առնել արարաք» (Ղուկ. Ժկ. 10)։
Շնորհք Տեսան եղիցի ընդ ձեզ, Ամէն։

Օծում

Շաբաթներէ ի վեր տաեղծուած խոնդավառութիւնը Սուրբոյ և Լիբրանանի Հայութեան իր լրումին հասաւ Վեհափառի օծման արարագութեամբ։

Թէև եկեղեցւոյ մէջ ու կրօնական պայմաններով, բայց աւելի քան զայն Ռւբիչ ժողովուրդներ իրենց արքաները օծած ժամանակ թերիւս այցուին բարձրագոյն յուզութենք։ Քանի՞ գար է այդ յուզումը, այդ սրբացումը, մենք փոխադրած ենք մեր սրբազան տունէն ներս, անոր գահակալին վրայ տանելով ամբողջ մեր ապրութեարուն գումարը։



Վեհափոր՝ շշապնտած օճամ մասնակցող ԱրԵպիսկոպոսներ:

Շովածավալ բազմութիւնը որ երէկ Անթիլիասի կամ
մարներուն ներքեւ և քովն էր, այդ երջանիկ մտածումներու և զգացումներու անդրագարձը ապրեցաւ նորէն:

Նսեմութեան օրերու այս այցելութիւնը Աստուծոյ իր հօտին, աւելի քան յուղիչ է զերի և թափուր կիլիկիոյ թեմին վրայ: Եւ ի՞նչ ընթրանք՝ մտածել թէ նորին ՍՕծութիւն Տ. Տ. Գորեգին կաթողիկոսի գահակալութիւնը երաշխիք մըն է թէ այդ լքումը կը վերանայ:

Միւս կողմէն ուրախութիւն է մեզի մտածել թէ այս գահակալութիւնը սկիզբ մըն է Հայուստաննայց եկեղեցւոյ հանուր Հայրապետութեան ընարութեան, քանի մը ամիսներ վերջ, աւելի բարձր ճակատագրի մը ի խողիր, մեր ժողովուրդի հոգիին և մշակոյթային կեանքին վրայ:

Կիրակիի օրուն արարողութիւնը սրանդրաւ եղաւ, գան զի կիլիկիոյ պանդուխտ Աթոռին զաւոկները չեն մոոցած ու պիտի չժառնան ընտան հայրենիքը ուրիշէ կու գան, աւելի որոշ, չկազմուած նոր հայրենիքին քրոմէքքայը, այդ է պատճառը որ սրբազն արդ արարողութիւնը ստեղծէր բացառիկ հոգնեան վիճակի մեր ժողովուրդի բոլոր խաւերէն ներս:

Ցիսուն ասպիներ տուած, կիլիկիոյ թեմը քովնաի պատճանան մըն էր Հայ հոգիին վրայ, գրեթէ զուտ կրօնուկան, այսօր կիլիկիոյ Աթոռը զրեթէ մշակոյթ մըն է, ամբազական կատար մը, կաթողիկէ մը Հայ հոգիին համար, որուն մէջ մկանած է կրկնուիլ Հայ վերածնութեան յաւիտենական խորհուրդը: Աւազուաի մը վրայ բուած շէնքերը, մաքուր ձեռքերէ և հոգիներէ վերընձիւզ այդ յաւիտենական փաստը կը կերպագրեն ասքիներէ ի վեր,

Այսօր աւելի քան իրաւ է թէ Սփրուքը ամենէն ծանր, խորասայդ ձգողաթիւն ունեցող սրբանեղի մըն է, Հայ հոգիին և մշակոյթին վրայ:

Այս ամէնը քեզմէ քեզի է Հայ ժողովուրդ, զի դուն աղբիւրն ևս այս ամայքները նուզող: Քու զոհարերումդ ստեղծեց այս շէնքերը, այս վեղարները, և քու յաւիտե-



Ն. Ա. Օծութինը Արքակին Գործոց 'Նախարար' Հանրի Պէլ
Ֆարանի ներ Կարողիկոսարանի Գանլինին մէջ:

Նական յոյտ է, հաւատքդ է, որ կը մզէ քեզի այս կառուցման, այս ճակատագրին:

Երկու պատերազմերու միջև, որ հոմանիշ է երկու զերեզդաննոցներու, դո՛ւն ժողավուրդ Հայոց, փառքեր կերտեցիր, որոնց պակն է այս արարութեան. իրականութիւնն ու ոգին:

Մինչ հեռանկարը շոշանդան է Մայր Աթոռի. կեռնքին վրայ, ոչ նուազ փայլուն, կենաւից է այդ հեռանկարը կիրիկիոյ գահին համար այս բարեպատեհ ընարութեամբ որ երէկ իր երջանիկ լուսմին հասաւ:

Ն. Ա. Օծութիւնը ծանօթ է բովանդակ ազգին, իր անձին և մհծ վաստակին բալոր շքեղ երեսներովը, իր հոյրենասիրական և հոգեկան անուշ ու պաշտելի բարձր արդիւնքներովը, Զափազմանցած չենք ըլլար եթէ ըսենք թէ Նորին Ս. Օծութիւնը արժանաւոր շարաւիզն է Լուսաւորիչներու, Ներսէսներու, Սահակներու և Շնորհալիներու, բազում կոչեցեալներէն սակաւ ընարեալը:



Ն. Ա. ՕՇՈՒԹԻՔ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱՐՊՈՎԻԿՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ինչ կը մնայ մեզի ընել, եթէ ոչ ցոյց տալ այս անգամ մանաւանդ, հոգեղջն գետնի վրայ, ինչ որ կրցանք ցոյց տալ նիւթի գյոխսքին վրայ: Դժուար է այժմ հաւատալ որ հրդենէն, արիւնէն, աւազներէն մազապուրծ բնկորներ այսօր ըլլան կազմած Սուրբոյ և Էիրանանի այնքան պատռարեր պայմաններուն հասած հայութիւնը:

Նիւթի մարզին վրայ սակայն փառքը կը մնայ փոռաւորեալ հոգիի և մաքի կեանքին վրայ: Մեր պատմութեան, ըսկու համար մեր եկեղեցիի մեծ աշխատաւորները, միշտ այս ժողովուրդը ունեցած են իրենց կողքին:

Չանցնիր տասը տարի և մենք կ'ունենանք ոչ միայն այսօրուան ժողովուրդին մեծազոյնը, այլ նուև մշակոյթ և եկեղեցի:

Մենք կը հաւատանք թէ այսօրուընէ սկսեալ Կիլիկիոյ Աթոռը, յանձին Նորընտիր Գահակալին, կը մտնէ իր ամբողջ փառքին, կարմիր գեղեցկութիւններուն և անթառամ կանաչ յոշին, տօսուածային ամպհովանիին մէջ:

Աթոռը, ժողովուրդը, երէկ Աստուծոյ նայուածքին տակ իրարու կ'ընծայուէին: Ս. Լուսաւորչի Աջը թող պուհապան ըլլայ Նորընտիր Կաթողիկոսին, Միաբանութեան և բովանդակ Կիլիկիոյ Հայ ժողովուրդին վրայ:

Խմբագրական • Զարթօնքնի

1945 ապրիլ 12 Գյուղոթ

—

Ղիրանանի մամուլը օճման մասին

Լր Ժոռ. — Նկարագրելով կիրակի օրուան Օծումը մօտ 20.000 կը հաշուէ ներկայ եղող բազմութիւնը: Թերթը թուելէ յետոյ արարողութեան ներկայ եղող կրօնական և պաշտօնական անձնաւորութիւնները, երկար հասուած մը կը հրատարակէ Վեհափառին գահակալնական քարոզէն:

ԼՇօրիան, նոյնպէս անդրադանալով օճման արարութեան, կ'ըսէ թէ օծումը տեղի ունեցաւ քրիստոնէական



Ա. Կորպ.— Զայխեն աջ՝ Եփրիս և կատ Մրագաններ, Ն. Ս. Օծորինը, Խովհեն և Աւստազ Դ Մրագաններ; Բ. Կորպ.— Զարեն Շ. Վարդապէս, Մամբէ Մրագան և Եղիշէ Վարդապէս:

շրջանի Հայ թագաւորներու թագավորութեան ծէսի համաձայն: Յետոյ կը յիշէ վեհարանի մէջ տեղի ունեցած պաշտ. ընդունելութիւնը:

Պէյռոք Խալամական օրութերթը «կրօնուկան ամենէն փայլուն հանդիսութիւն մը» կը կոչէ կիրակի օրուան օծումը և կ'ըսէ թէ Լիբանանի կառավարութիւնը, խորհրդարանը, Արար ու Հայ բոլոր հատուածները ներկայացուած էին հոն: Պէյռոք քանի մը հատուածներ արաւարպելէ վերջ վեհափառի ճառէն, չնորհակալութիւն կը յայտնէ Հայ ժողովուրդին և Կրջանկութիւն կը մազթէ վեհափառին:

* *

Պէյռոք հաւարակուող Լա Ռովիլ Տիւ Լիսան Ֆըրանսիրէն շարաթաթերթը ապրիլ 12ի իր թիւին առաջին էջը ամբողջութեամբ նուիրած է կիլիկիոյ վեհափառ կաթողիկոսին: Հրատարակուծ է երկու մեծագիր նկարներ, առանցմէ առաջինը կը ներկայացնէ ածման արարողութիւնը Անթիլիասի Տաճարին մէջ և երկրորդը՝ կաթողիկոսի այցելութիւնը Հանրապետութեան Նոյնագան Ն. Վ. Պէշարա էլ Խուրիին: Նկարագրելէ առաջ Գորեզին կաթողիկոսի Լիքանան ժամանումը և օծումը, թերթը սապէս կը բնորոշէ, վեհափառի անձը: —

«Գորեզին Յովսէփեան կաթողիկոս միջազգային համրաւով գիտուն մըն է, որուն գործերուն մեծ մասը թիւող 120, հրատարակուած են Անինկրատի կոճառին կազմէ: —

«Հոգեկան Հայրենիք»

(ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՇՄԱՆ ԱՌԹԻՒ)

Անցած կիրակի մեծ շուքով տեղի ունեցաւ կիլիկիոյ Հայրապետին օծումը։ Պաշտօնական շրջանակներու և ժողովութղի հասաքրքրութիւնը և խանդավառութիւնը յայտաբար նշաններն էին թէ տեղի ունեցածը պարզ ցոյցի մը և մարդկային հասաբակ հերաքրքրութեան մը արգիւնքը չէին։ Այլ կային հոգեփոխութեան, ներքին ապրումի և խորունկ մտածումի դրդապատճառներ, որոնք ինքնարուխ արտայայտութիւններու մզեցին կաթողիկոսի ժամանման և թէ առոր Ս. Օծման առթիւ։

Այս բոլորէն յետոյ կ'արժէ խորհրդածել երեւոյթի մասին և համագրել զգացումները ու ցանկութիւնները իրականաւթեան հետ և աշխատիլ կեանքի կոչել, զարծադրել և իրականացնել այն բոլորը, ինչ որ կարելի է այս միջավայրին մէջ, ինչ որ պայմանները թոյլ կուտան, և ինչ որ ժամանակը մեզ բոլորին հրամայական կերպով կը թելադրէ։

Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Յովսէփեանցի անձնաւորութիւնը, ընտրութիւնը, ժամանումն ու օծումը «Հոգեկան Հայրենիք»ի խանդավառութեամբ և ներքին դրդապատճառներով օծուն էր։ Այս հոգեկան ապրումը մօակուրային է։ Մշակոյթի պաշտամունք, որպէս հոգեկան ապրում, որպէս ուժ, որպէս ազգային կորով Հայ մարդուն հզօր զէնքերէն մէկը եղած է, որ դարերով քալեց Հայաստաննետց եկեղեցին հետ։

Կաթողիկոսական Ս. Օծումին հետ, այս օրերուն, Հայութիւնն ալ լռելեայն օծում մը կը ստանար և իր օծումը կը յայտաբարէր հաւաքական հոգերանութեամբ մը, ընդհանրական, ազգային, անհատէն և մասնաւոր շահերէն վեր։ Ու այսպիսով, այս օրերուն, բոլորին մէջ կը ստեղծուէր համահայկական ապրում մը եկեղեցին և հայ մշակոյթին

շուրջ։ Հոգեկան դինաւորում մը, որուն պատրաստ էին կիլիկիոյ կաթողիկոսութեան պատկանող հայկական այս հոծ գաղութները և ծերունազարդ Հայրապետը, որքան Արքազան և մեծ հաւատացնեալ, նոյնքան գիտուն և մըշտկութային անհատ, կուգար համազրելու և կերտելու ամբողջը, հաւաքական կամքը՝ հաւաքական աշխատանքի համար։

Ազգերը և ժողովուրդները երբ գիտակցօրէն գիտնոն օգտուիլ չինարար մթնոլուաէն, ձամբաց կը բանան իրենց վերածնունդին։

Կաթողիկոսի օծումը թող դառնայ մեր ժողովուրդի հոգեկան և մշտկութային կեանքին համար նոր Պրոպատիկէի աւագան մը, զոնէ հոգեկան ուժով դիմանալու ժամանակի հարուածներուն։

Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը գիրք մը ունի Մերձաւոր Արեւելքի և մանաւանդ ոյս երկրին մէջ ուր, կրօնական համայնքները իրենց կրօնական հանգամանքէն զուրս, ազգային և քաղաքական կշիռ մը ունին Կիլիկիոյ կաթողիկոսարանը պէտք է զառնայ իր անունն համապատասխան հաստատութիւն մը, պահէ իր հմայքն ու գիրքը իր աստիճանին հաւատար և պետական, կրօնական ու ազգային յարաքերութիւնները կարգի ու կանոնի տակ զնէ։ Անթիւիսը, այսպիսով, այսօր կը դառնայ հայ ազգային կեղրոն մը, իր շառքն ունենալով Սուրբին, Լիբանանը, Երուսաղէմը, Իրաքը, Անդրյարդանանը, Եղիպատուը և Կիպրոսը, որոնցմէ ոմանք թէեւ Կիլիկիոյ թեմին չեն պատկանիր, բայց անոր մթնոլորտին մէջ կ'իյնան։ Կատկած չունինք թէ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը սերտ կապակցութեամբ Ա. Էջմիածնի Ամենայն Հոյոց Աթոռին հետ՝ պիտի բարձրացնէ Հայ եկեղեցի գիրքը Մերձաւոր Արեւելքի մէջ, զայն օժանով պատրաստած եկեղեցականներով։

Հայ եկեղեցին իր ընտրանին կորոնցուցած է, իսկ մեացած քոնի մը գէմքերը շատ առաջացած տարիքի հասած են։ Հայոց գարաւոր եկեղեցին հոգեալէս բարձր և մաքով իսկապէս զարգացած Հովհիւներու պէտք ունի, որ-

պէսզի կարողանայ կատարել այն դերը որ իրեն վիճակ-
ւած է դարերէ ի վեր, մանաւանդ հայկական հոծ
Ափիւռքին մէջ:

Եթէ Կիլիկիոյ Հայրապետութիւնը և այսօրուան
Օծեալ կաթողիկոսը, կրօնապետութիւնը կը ներկայացնեն
հայ կեանքին մէջ, անոնց գործը գերազանցապէս մըշակու-
րալին է: Մշակոյթի վերելք մը անհրաժեշտ է, ու այդ վե-
րելքին համար տուեալներ և տարրեր կան Հայկական այս
հոծ միջավայրին մէջ: Իսկ կաթողիկոս Գարեգին Յովսէփ-
եանցը որպէս մշակոյթի նուիրուած գիտուն մը, մեծա-
գոյն գրաւականը պիտի ըլլայ մտաւորական ծաղկումին:

Անթիլիասը իր Դպրեվանքով, իր տպարանով, իր
լուրջ ամսագիրով և հրատարակութիւններով պէտք է զառ-
նայ մեր մշակոյթի կեդրոններէն մէկը և զլխաւորը, և
ձերբազատուի գաղթականական թափթափածութիւններէն:

Միայն Մերձաւոր Արեւելքը նկատի առնելով՝ կը
անսնենք քանի մը ճիգեր, որոնք զետին մը պատրաստած
են նոր յառաջդիմութեան: Երուսաղէմի զպրանցը և
տպարանը, Վէյրութի Հայ ձեմարանը, կիպրոսի Մելքոնեան
Հաստատութիւնը և անցեալի Անթիլիասը բաւական ճիգ
ու ջանք թափած են քիչ մը կերպարանափոխելու յարա-
շարժ Հայութիւնը: Այժմ, երբ տնտեսական պայմանները
աւելի թոյլառու են, երբ բոլորի համակրանքը վայելող
Հայրապետ մը եկած է Կիլիկիոյ Գահին վրայ, երբ Հայու-
թիւնը իր գերագոյն ձգտումներու, յոյզերու և յոյսերու
շրջանը կ'ապրի, Անթիլիասը պէտք է գրաւէ պատուաւոր
տեղ մը մեր մշակութային կեանքին մէջ, գոնէ եկեղեցա-
կան, պատմական և բանասիրական գեանին վրայ:

Այն ջերմ ընդունելութիւնը որ գտաւ Օծեալ Հայրա-
պետը Ամերիկայի և Եգիպտոսի գաղութներուն մէջ, վատահ
ենք թէ աւելի մեծ չափով մը պիտի զանէ Սուրբոյ և Լի-
բանանի հոծ գաղութներէն, ուր հայրէնասէր և կրթասէր
հայ մարդիկ չպիտի պակսին աջակից հանդիսանալու վեհ,
կաթողիկոսին, մեղուաջան մտաւոր մշակին:

Խմբագրական «Ազդակ» Նարաթօրեակի

13 Ապրիլ 1945 Վէյրութ

Ճաշկերոյթ Անրիլիասի մէջ

Ն. Ս. Օծութիւն վեհափառ Հայրապէտը երեքտչաբթի
կէսօրին մեծ ճաշկերոյթ մը սարքեց Անթիլիասի մէջ, ի
պատիւ Եգիպտոսէն եկած ազգային հիւրերուն, մօտ 26 հո-
դի: Վեհափառը շրջապատռած էր հինգ եպիսկոպոսներով,
(Տ. Զաւէն Արրաջան անհանգամութեան պատճառաւ ներկայ
չէր), Գեր. Գեր. Տ. Տ. Խոտ, Ռուրէն, Արտաւազդ, Եփրեմ
և Մամբրէ և Վարդապետներով: Ներկայ էին նաև Բրօթօ-
քօլի յանձնախումբին անդամները:

Եգիպտոսի հիւրերն էին, Գեր. Տ. Մամբրէ Արրա-
ջան, Տիար Ճանիկ Չագըր, Պետրոս Կիրակոսան Գահիրէ-
էն, Յակոբ Թօփալեան Աղեքսանդրիայէն, Տէր և Տիկ. Մել-
քի Գլըճեան Աղեքսանդրիայէն, Տէր և Տիկ. Արամ Կամ-
սարական Աղեքսանդրիայէն, Տիար Արամ Ստեփանեան,
«Արաքս» թերթի խմբագիրը՝ Աղեքսանդրիայէն:

Տէր և Տիկ. Կարապետ, Հայկանուշ, Օր. Նուարդ Մէթէրեան
Գահիրէէն, Տէր և Տիկ. Տիգրան, Սաթենիկ Մերձանեան
Գահիրէէն, Տէր և Տիկ. Միհրան, Տիգրանուհի Ալթունեան
Գահիրէէն, Տիարք Կարապետ Սարբեան, Յակոբ Արտմեան
«Արեւածի խմբագիրը, Զարեն Սագանեան, Թորգոմ Ղարիպ-
եան, Տիկ. Լուսի Քէստիկեան, Գահիրէէն:

Խօսուեցան բազմաթիւ բաժնականակեր: Խօսակցու-
թեանց ընթացքին ակներն էր ամրող ազգի միանակա-
նութեան, Էջմիածնի և Կիլիկիոյ Աթոռներուն միջև սերտ
և սիրալիր յարաքերութեանց ձգուղ ոգին: Սրառառուչ ե-
ղաւ պահը երբ Ռուրէն Արրաջան բաժակ առաջարկեց Էջ-
միածնի յաւերժութեան և ներկայ Տեղակալին կենացը,
մաղթելով որ շուտով Էջմիածնի ևս ունենայ իր Հայրա-
պետը: Այս ոգիին ի տես, Երուսաղէմի Սուրբ Յակոբայ
վանքին Լուսարարապետ Գեր. Տ. Եղիշէ վրդ. Տէրտէրեան,
խօսք առնելով խօսեցաւ Երուսաղէմի պատրիարքութեան
գերի մասին Հայ եկեղեցւոյ միանականութեան ի խնդիր,
իրեւ միացման կազմ՝ կազմելու համար այն երրորդութիւ-
նը՝ որ այնքան անհրաժեշտ է: այժման մեր տարանջատ
մտայնութեանց և հոգիին համար:

Աւելի քան սրտայոյդ էր մթնոլորտը, ուր ազգին սէ-
րը և եկեղեցին խորհուրդը քովի կուգային, ինչպէս
միշտ, ստեղծելու համար այն անորակելի բայց սերտ անու-
շութիւնը որ վեհափառին նման մեծ հոգիներու ներկայու-
թիւնը միայն կրնայ ստեղծել և բացատրել:

Այս անուշ անուշ ու խանդավառ հոգիներու ծփան-
քին ընդմէջէն, ստքի ելաւ Ն. Ս. Օծութիւն Գարեգին Կա-
թողիկոսը, շնորհակալութիւն յայտնեց իր անձին շուրջ ե-
ղած համակրութեանց համար, աւելցնելով թէ ինք ինչ որ
է և ինչ որ կ'արժէ, այդ բոլորը կը պարտի Հայ եկեղեցա-
կանի իր հանդամանքին և Ս. Էջմիածնի:

Ըստ որ ինք ուրախ է, իր յառաջաւոր արեւելքի
մեր բոլոր գաղութներէն ներկայացուցիչներ կան այս սե-
ղանին շուրջ, վերցուց իր բաժակը ոչ միայն յիշեալ եր-
կիրներու և գաղթաշխարհի միւս բոլոր Հայ գաղութնե-
րուն կենացը, այլ մանաւանդ այդ բոլորին՝ ֆիզիքական ու
հոգեկան արմատը կազմող հայրենիքին անմանութեանը և
բարգաւաճմանը համար:

Յետոյ անդրադանալով միայն իրականութեան,
ըստ, «թէեւ մեր մարմինը ծուէն ծուէն բաժնուած ինկած է
Սփիւռքի մշուշներուն մէջ և բացասաւաններուն վրայ, սա-
կայն ողջ է Հայ ժողովուրդին հոգին:

«Վիրաւոր է մեր մարմինը միայն բնութեան մէջ,
կենդանական աշխարհի մէջ, այս կարգի պարագաներուն,
ծառը քովի կը բերէ իր ուժերը՝ դոցելու իր վերքը և
կենդանին զայն լսելով կը ջանայ բուժել, մեզի կը մնայ
այդ ճիգով և զգացումով դարմանել մեր վէրքերը, ինչպէս
դարմանած ենք մեր բօվանդակ պատմութեան և կեանքին
ընթացքին:»

Շուրջ երկու ժամ տեսով այս հաճելի սեղանը ամէ-
նէն անուշ առիթներէն մին եղաւ որ անդամ մը եւս իրա-
րու խառնեց հոգիները:

«Զարթօնք»

13 Ապրիլ 1945 Գյուղութ

Անթիլիասի ձաշաւեղանեն

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Անթիլիասի կաթողիկոսարանի վեհարանին մէջ ի պատիւ Եգիպտահայ պատուիրակութեան, Վեհափառ Հայրապետին կողմէ տրուած ճաշասեղանը ճոխ էր։ Բացումը կատարեց Խաղ. Սրբազնան։

Եղան բազմաթիւ բաժականառեր, որոնք չէ կարելի մի առ մի արձանագրել, որով միայն կը թուենք անունները խօսողներուն, կարդաւ։

Տոհմունի Սրբազնան յիշատակեց թէ ներկայ Վեհ.ը Գլորն է Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներուն։ Ճանիկ Զագըրը որ Եգիպտահայութեան չնորհակալութիւնները յայտնեց Վեհափառին կողմէ ցոյց տրուած այս փափկանկատ ուշադրութեանը համար։ Ռուբէն Արք. Մանասնան յայտարարելէ յետոյ թէ Գարեգին Կաթ. և զած է իր ուսուցիչը էջմիածնայ մէջ, յարգանք ընծայեց անոր և պանծացուց կարողութիւնները Վեհափառին՝ ու ըստ, Արքանանցիններուն կողմէ ճարպիկ կերպով կորպուեց վեհաշնորհը, բազմեցնելու համար զինքը Կիլիկիոյ Աթոռին վրայ։ Սիւրմէնան Սրբազնան վեր առաւ արժանիքները Նորընտիր Կաթողիկոսին։ Տօքթ. Թագուրեան թուելով Եգիպտահայութեան նիւթեան նիւթական և բարոյական մասնակցութեան արժէքը, բաժակ առաջարկեց Եգիպտահայութեան համար։ Տիրո Մելքի Գլըճեան, Աղեքսանդրիոյ թեմականի Ատենապետը, Փոխադարձ արտօսայտուեցաւ և բաժակ առաջարկեց Սուրբիոյ և Արքանանի Հայութեան կենացը։ Մամրէ Սրբազնան բարձրօրէն գնահատեց Գարեգին Կաթ.ը և վեր առաւ արժանաւորութիւնը՝ կատարուած ընտրութեան։

Խօսեցան Դերենիկ Վրդ., Տիկ. Քէսդէքեան։ Յ. Արամեան խօսեցաւ մասնաւորապէս Եգիպտահայ մամրուլին կողմէ, յայտնեց թէ, ինք իբր ներկայացուցիչը Գահիրէի «Արեւ»ին

և իր պաշտօնակիցը՝ Արտամ Ստեփանեան, Աղեքսանդրիոյ
«Արաբս» թերթի արտօնաւոէրը որ ներկայ է, պատրաստ են
միշտ կատարելու իրենց գերը յօդուա Անթիլիասի, կանգ-
նելով անոր կողքին:

Գլխաւոր խօսողն էր սակայն նոյն ինքն վեհ. Գա-
րեգին կաթողիկոսը, որ իր պերճարարբառ, հմտալից,
ազգանուէր և հայրենաշունչ արտայայտութիւններով խո-
րապէս տպաւորեց, և հայրենասիրական, կրօնասիրական,
սարսուաը կաթեցուց ներկաներուն նոդիներէն ներսու:

Իրկնակի շեշտեց կարիքը կազմակերպուելու, պէտքը
ցոյց տուաւ հասցնելու, կարող, զարգացեալ առաջնորդնե-
րու: Եւ այս առթիւ գովեց մտածումը և ինքնարուխ առա-
ջարկը՝ Եղիպատահայ Տ. Զարեն Սաքաեանի որ ունեցած էր
մտածումը այդ անհրաժեշտութեան, և ազնուօրէն ատանձ-
նած բովանդակ ծախսը երկու ուսանող կրօնականներու,
որպէսզի օտար բարձրագոյն հաստատութեանց մէջ, կատա-
րելագործելու իրենց ուսումը՝ աստուածարամնութեան, փի-
լիստիայութեան և բարձր դիւնազիտութեան, դառնալով
ուսուցիչները իրենց կրտսերներուն, որոնք պիտի ուսանին
Անթիլիասի ուսումնարանին մէջ: Եւ որոնցմէ մէկուն մըշ-
տընջենական ծախսը ապահոված էր, ինչպէս յայտարարած
էր նախորդ օր Վեհափառը, Եղիպատահայ Տիար կարապետ
Սարըեան, իր կտակին մէջ արձանագրելով զայն:

Վեհափառը, իր գործունէութեան մէջ, իր փոխանորդ
Խագ Արքազանի, Ամերիկայէն իրեն հետ ընկերացող Դերե-
նիկ վրդ.ի, բոլոր Միաբանութեան ու ժողովուրդին աջակ-
ցութեան կարիքը շեշտելով, բաժակը բարձրացուց, Հայաս-
տանի, Սուրբոյ, Լիքանանի, Իրաքի, Իրանի, Հնդկաստանի,
Եղիպատոսի, Պալքաններու, Ֆրանսայի, հիւս. և հար. Ամերի-
կաներու Հայութեան և մէկ խօսքով, Հայ անունը կրողնե-
րուն կենացը: Գարեզին Կաթ.ի խօսքերը ծափահարուեցան
խանդագին և ջերմ կեցցէներով:

Միջանկեալ բաժակներ առաջարկուեցաւ, ի պատիւ
էջմիածնայ կաթ. Տեղակալ Զէօրէքճեան Արքեպիսկոպոսի,
Հայկ. կառավարութեան, Հայկ. բանակի կենացը:

Ժամելը Յը անցած էր արդէն, երբ վերջ գտաւ այս
պատմական ճաշկերոյթը և ներկաները մեկնեցան հրաժեշտ
առնելով վեհափառէն և Անթիլիասէն:

ԱՐԱՄ ԱՏԵՓԱՆԵԱՆ

Ալբարս*

21 Ապրիլ 1945, Աղեքանդրիա

Օծեալ Առաջնորդ Ազգին

«Ահաւասիկ, տուի զայն իշխան և առաջնորդ ժողովուրդներուն»:

Մարգարէին խօսքերը չպատշտանէին աւելի լու։ Քան Կիլիկոյ Հայրապետի օձման առիթին, երբ պատմական Աթոռը կը գտնէ իր Տէրը, և պատաւական մեր ժողովուրդը՝ իր առաջնորդը։

Աթոռներ կրնան մեծցնել անձերը, բայց աւելի ճշշմարիտ՝ Անձերն են որ արժէք կը բերեն Աթոռներուն։

Եւ ահա անգամ մը եւս՝ Աթոռ ու Գահակալ զիրար կը բարձրացնեն։

Ինք կը փառաւորուի Աթոռով՝ Աթոռը արժեւորելու համար իր անձով։

Ազգին բարձրագոյն Աթոռին վրայ՝ Ազգին բարձրագոյն դէմքը։

Հայ ժողովուրդին եզակոն Վեհաթիւնը՝ իր կաթողիկոսական Աթոռն է, մեր պատմութեան մէջն չարունակուող միակ հաստատութիւնը։ Մեր թագաւորական Աթոռները հատուածներէն յաճախ կործանած են, բայց կաթողիկոսական Աթոռը տեւած է անխափան, ու բոլոր փոթորիկներու գիմաց՝ պահպանած իր գոյութիւնը, և իրեն հետ՝ Հայ ժողովուրդի բարոյական ամբողջութիւնը և կորովը։

Եկեղեցական Աթոռի շուրջ միացած ու պահպանած և աճած են հայու մշակութային գանձերը, պատմա-

կան արժէքները, սրբութիւնները, իտէալները։ Թագաւորած կան հին տիտղոսն իսկ — «Վեհափառ» — պահպանուած է անոր վրան, հին օծութեանց անուշութեամբ։ Կաթողիկոսութիւնը, կերպով մը, մեր կործանած թագաւորութեան շարունակութիւնը եղած է։ Հայութեան միութեան երաշխիքը, անոր կենաւնակութեան մէկ սիմբոլը, պահպանութեան խարիսխը։

Այդ է պատճառը թէ ինչու Հայ ժողովուրդը կը սիրէ իր եկեղեցին, ու պաշտումի չափ խորունկ զգացումներով կը շրջապատէ Աթոս նստած Օծութիւնները։ Վեհութեամբ ու խորհուրդով շրջապատուած, Հայրապետական Աթուը սրբութիւն է հայութեան, որովհետեւ դարերով անոր սերմերուն են թափուած հայ ժողովուրդին սրտին արիւնն ու աչքին արցունքը։

Ու եթէ հայ եկեղեցին անսասան է, անսասան է անսրովհետեւ հայ ժողովուրդի սրտին վրայ է հաստատուած։ Ու եթէ հայ ժողովուրդը անոր նիւթեական զոհողութիւններ կ'ընէ, սիրով կ'ընէ այդ զոհողութիւնները՝ որովհետեւ գիտէ թէ եկեղեցիով կը մնայ կոնդուն հայ միութիւնը հայրենիքէն դուրս։

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը «Տօւն» է կոչուած՝ ու մեծ իմաստ կը կրէ այդ կոչումը, ոնիկա տունն է հայ ժողովուրդին։ Եւ անոր Աթուակոլը հայրն է, «Վեհափառ հայր»ը, այդ տան անդամներուն, իր անձին մէջ մարմնաւորած իր ժողովուրդին առաքինութիւնները, քաջութիւնները, իմաստութիւնը։

Եկեղեցին այն մինուրան է ուր կը յայտնուին հայու մեծ նկարագիրները, առաջնորդները։

Ու մեծ առաջնորդներու մեծութիւնը կը յայտնուի ասոր մէջ, որ անոնք կեանքի կը կոչին իրենց շուրջիններուն թաքուն մեծութիւնները։ Մեծ անձեր իրենց շուրջինները կը մեծցնին այդպէս, որովհետեւ ուշագրութիւն կը դարձնին միոյն դրական ու մեծ արժէքներու, քան ժխտական ու փոքր թերութիւններու։ Մեծութիւն վընտակով՝ իրեւան կը բերեն մեծութիւնը։

Եւ ահա Աստուած՝ եկեղեցւոյ ճամբռով Կիլիկեան Տան
կը զրկէ մեծ անձ մը եւս որ պիտի կեանքի գոչէ իր ժա-
դովուրդին մեծութիւնները։ Աւ մանաւանդ հաստատէ գոր-
ծակցութիւն ժողովուրդի և իր առաջնորդին միջեւ։

Իրեւ մարդ, մարդիկ առհասարակ շատ բան կը
սպասեն իրենց առաջնորդներէն։ Երբեմն, ամէն ինչ միայն
իրենց առաջնորդներէն կը սպասեն մարդիկ։ Բայց առանց
առաջնորդուողի գործակցութեան ոչինչ պիտի կրնար ընել
առաջնորդը։ Առաջնորդներ՝ արամագիր ուժերը լարելու,
ձգտութերուն ուղղութիւն տալու համար են աւելի։

Դժբախտութիւն է, միւս կողմէն, որ երբեմն ալ մար-
դիկ ի'րենք կը սիրեն ուղղութիւն տալ իրենց առաջնորդ-
ներուն, քան հետեւիլ անսանց։ Ասիկա մարդկային բնութենէ
կուգոյ։ Մարդիկ երբեմն Աստուծոյ իսկ ուղղութիւն տալ
չե՞ն փորձեր. ազօթքի լեզւով անոր կը թելագրեն գործեր,
բայց ուելի իրենց կամքին ուղած ձեւով, քան Աստուծոյ
կամքին համեմատ։

Այդ երկու ծայրահեղութեանց միջեւ, կայ պակայն
գործակցութեան ուղին, որ աւանդական ուղղութիւնը եղած
է Հայ ժողովուրդին։ Հայ եկեղեցւոյն մէջ՝ առաջնորդ և
ժողովուրդ իրարմէ անջատ տարրեր չեն, այլ իրարու միա-
ցած գործակից ուժեր։ Ժողովուրդին ոյժը իր առաջնորդի
ձեռքին մէջ պիտի վերածուի արդիւնքի։

Օծեուլ Հայրապետի Գոհակալութեան այս առթիւ,
անզամ մը եւս կարելիութիւն կը տրուի Ափեւաքի հայու-
թեան Աթուին շուրջ սրատպին գործակցութիւն յառաջաց-
նելու։ Պահն է խմբուելու և առաջնորդուելու։

Տասնըհինգ տարիներու ընթացքին, Կիլիկիոյ Աթուը
գրեթէ ոչինչէն սկսաւ ու գործացաւ Լիբանանի այս խո-
ղազ եղերքին վրայ։ Այժմ կրնայ իր լիութեան հասնիլ այս
վերածագկումը։ Առիթ կայ, ոյժ կայ։ Կը մնայ միայն ջերմ
մթնոլորտով շրջապատել Աթուը, և անոր տալ նիւթական
ամէն կարելիութիւն։

Ժաղովրդային խանդավառութիւնը արդիւնուոր
պիտի ըլլայ միայն երբ գործնապէս ժողովուրդը իր ուժե-

թը տրամադրէ Աթոռի բարգաւաճման:

Յաճախ նիւթ ըրած ենք այս էջներէն, թէ Սփիւռքի քառորդ դարու փորձառութիւնը ցոյց տուաւ, որ Հայ եկեղեցին կը մնայ միակ ամուր զետինը Հայ ժողովուրդի ազգային միութեան ու պահպանութեան: Անոր շուրջ պէտք է կազմակերպուին մեր բոլոր զործաւնէութիւնները: Օտարութեան մէջ եկեղեցին է Հայ ազատութեան զետինը:

Գիտակցինք Աթոռին այս բացառիկ հանգամանքին, և զայն պահնենք կեդրոն ազգային կեանքի, մշակոյթի, տոհմային դրամագիտակութեան ու հոգեւոր վերազարթնումի: Առով ո՛չ միայն պիտի փառաւորուի Աթոռը և Աթոռակալը, այն Աթոռին հնատ պիտի բարգաւաճի հայութիւնը:

Հայցելով՝ ասուածային օդնականութիւն Օծեալ Հայրապետին, կը մաղթենք որ շուտով հասնի աշխարհ՝ խաղաղութեան նաւահանգիստաը, նաև իրականանայ Գահակալութիւնը Ս. Էջմիածնի ընդհանրական Հայրապետին, ու Հայ ժողովուրդը, Սփիւռք և Հայաստան միացած՝ վերածագիւալ հայրենիքի հովանույն տակ, հասնի նորանոր յաղթանակներու, առաջնորդութեամբ մեր հայրերու և Ս. Հոգոյն:

«Հասկոի խմբազրական
Մարտ-Մայիս 1945 Անթիլիաս

Գիր. Տ. Գարեգին Արք. Յովսեյիկեան ԸՆՅՐԵԱԼ ԿԱԹՈՒԿԻՆՈՒՄ ՄԵՍԻ ԶԱԽ ԿԻԼԻԿԻԱՑ

Հայ եկեղեցու ականաւոր ներկայացուցիչներից և խոշորագոյն դէմքերից մէկն է Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփիկեանը:

1906 – 1914 թ. թ. Գարեգին Արքազանը մասամբ զբաղուել է գրական աշխատանքներով, հարկաւոր դէպքում ճանապարհորդութիւններ կտարելով արտասահմանում: Տ. Գարեգին Արքազանի կեանքում քիչ չին դէպքեր, երբ ան-

հրաժեշտութեան թելաղբանքով գրական աշխատանքները դադրեցնում էր և նետում դէպի կենդանի զործ՝ տառապեալ հարազատ Հայ ժողովուրդի բիւրաւոր ցաւերը մեզմելու համար։ Այսպէս, օրինակ, մեծ սպանդի տարին 1915ի ամառը, երբ Վասպուրականից մեծ զաղթականութիւն եկաւ Ս. էջմիածին, նաև անմիջապէս ձեռնամուխ եղաւ լայն մասշտաբով օգնութիւն կազմակերպելու։ Այդ կազմակերպութեան նախագահը Տ. Գարեգին Սրբազնն էր։ Հանդիսանալով իսկական բարի հովիւ իր բազմատանջ ժողովրդի։ Տ. Գարեգին Սրբազնը այդ օրներին հազարաւոր կետնքեր փրկեց գրաւելով Հայութեան սէրն ու համակրանքը։ 1917ի, քանի տարւայ վարդապետութիւնից յետոյ, հանգ։ Գէորգ Ե. նրան եպիսկոպոս է ձեռնապրում։

1918 ահեղ օրներին, երբ Գերմանա-Սուլթանական յափշտակիչները իմպերիալիստական մոլեգին ցնորժներով կուրացած արշաւանք կազմակերպեցին Անդրկովկասի վրայ կամենալով իսպառ վերացնել Հայ ժողովուրդը մէջտեղից, Տ. Գարեգին Սրբազնը անձնուրաց նուիրուածութեամբ դուրս եկաւ քաջալերելու և խրախուսելու Հայ ժողովրդի սակաւաթիւ մարտիկներին՝ չընկճուիլ ու չթուլանալ, այլ քաջութեամբ դիմադրել չարանենք գիշատիչներին վրաւրելու մեր երկրից։ Այդ անաւոր տարւայ մայիս ամսին մենք տեսել ենք նրան վազարշապատում ձի նստած, վեզ զարը դլիսին դէպի արեւմուտք սլանալիս։ Յուզմունքից չէր կարողանում խօսել։ Մեր հարցին՝ ո՞ւր, Սրբազնը միայն ձեռքի շարժումով պատասխանեց մտրակն ուզդելով դէպի Սարտարապատ Եւ այնեղ խրամատներում, ինչպէս յետոյ ականատեսները պատմեցին մեղ, որպէս մի նոր հայրենասէր Ղեւոնդ Երէց խաչը ձեռին ոգեշնչում էր զօրքին քաջութեամբ կոռուել հայրենիքի, եկեղեցու, ժողովրդի և իրենց ընտանիքի ազատութեան համար։ Նրա օրինակը յուզում էր բալորին և ամէնքը ծնկաչոք երգւում էին մինչև վերջին շունչը կռուիլ, իմպերիալիստական վոհմակները պարաւում են այս կռուի մէջ։ Յուզում է Գարեգին Սրբազնը, ուրախութեան արցունք է վազում նրա աչքերից

և մօտիկ կանգնած հետո գրկախռովուելով ցնծութեամբ բացականչում է. «մենք յաղթեցինք»:

Գալիս է դարձեալ երկրորդ ահաւոր տարին 1920 թ., երբ իմպերիալիստական նոր արշաւունք է սկսւում տաճկական բռնակալների կողմից Անդրկովկասի վրայ այս անգամ Սարիզամիշի կողմից։ Հայրենիքը նորից վտանգի մէջ է։ Ինչպէս կարող է նա՞ Գարեգին Սրբազնը հանգիստ նըստել։ Եւ ահա զնում է կարս նոյն միսիայով, ինչ որ 1918 թ.։ Կարսի անկման օրերին նա այնանց էր և չվախենալով ոչ մի բանից, ամենայն համարձակութեամբ մտնում է օտար բռնակալների մօտ և կարողանում մասսմբ մեզմել նրանց անսանձ արիւնուշութիւնը։ Հինգ ամիս զերութեան մէջ մնալուց յետոյ կարողանում է գալ լինինական և ապա Ա. Էջմիածին։

Ընդհանուր խաղաղութեան հաստատումից յետոյ Գարեգին Սրբազնը նորից զրազում է իր սիրած զրական աշխատանքներով, մինչևյն ժամանակ գործօն մասնակցութիւն ունենալով Գէորգ Ե. Կաթողիկոսի հաստատած Գերագոյն Այորհոգի նիստերին։

Հանգուցեալ Ա. Ա. Կաթողիկոսի կողմից 1934 թ. ուղարկուում է արտասահման այցելելու Ափիւնքի Հայութեան որպէս ներկայացուցիչ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից։ Իր ժրաժան գործունէութեամբ նա զրաւում է արտասահմանի, յատկապէս Ամերիկայի Հայերի սէրն ու համակրանքը և ընտրուում առաջնորդ Ամերիկայի թեմի համար 1938 թ., իսկ հինգ տարուց յետոյ 1943 թ. ընտրուում է Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ։

Բացի ուսուցչական, հասարակական և հոգեւոր այս ամենաբեղմնաւոր գործունէութիւնից, Գեր. Գարեգին Սրբազնը յայտնի է մեզ իր բազմաթիւ գրական աշխատանքներով և գիտական ուսումնասիրութիւններով, որոնք արգուել են զիմանըրապէս Մայր Աթոռի Հայրապետական «Արարատ» ամսագրում կամ լոյս են տեսել առանձին։ Այս աշխատանքները մեծ արժէք ունին և ընդգրկում են մեր գրականական բոլոր բնագաւառները՝ ժողովրդական, բանա-

հիւսական, կրօնական — եկեղեցական, պատմական — բանասիրական, մատենագրական, պատմա — հնագիտական և այլն:

Գիտնական այդ լուրջ աշխատանքները խոչոր նիւթեն մատենագրարում մեր կուլտուրայով զբազւող գիտնականներին՝ յատկապէս հայկական մանրանկարչութեան բընագաւառում:

Ի վերջոյ յիշենք, որ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի սրբազն հայրենասիրութիւնը հայրենական մեծ պատերազմին եւս բուռն թափով հանդէս եկաւ: Գարեգին Սրբազնանը հեռաւոր Ամերիկայում իր ջերմ հայրենասիրական մասնակցութիւնը երեւան թերեց մեր Մեծ Միութեան ժողովրդներից, դրանց թւում Հայ ժողովրդի ազատութեան և անկախութեան համար մզուող պատերազմի օգտին: Գեր. Սրբազնը Ամերիկայում դրամական մեծ գումար է հաւաքում կարմիր Բանակի «Աստունցի Դաւիթ» տանկարչին: շարասեան համար Հանգանակութիւնը դեռ շարունակւում է:

Թող երկար ապրի Գարեգին Սրբազնը սիրոյ այն բուռն զգացմունքով, որ տածում է գէպի Մայր Հայրենիք Սովուտական Հայաստանը, գէպի համազգային Ընդհանրական Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և գէպի իր հարազատ Հայ ժողովուրդը, որոնք Տ. Գարեգին Սրբազնի երկար բնդմանը կենքի բովանդակութիւնն են կազմել, որոնց նուիրել է իր ամբողջ կենաքը և որոնցով ապրում է հիմա Տ. Գարեգին Սրբազնը:

ՃԵՄԱՐԱՆԾԻ

«Էջմիածին»

1945 Մարտ—Ապրիլ

Ա ն թ ի շ ի ա ս

Երբ մեր հայրենիքի սիրտին՝ վրայ Հայաստանեայց և կեղեցիին դարաւոր փառքը կը վերակազմուի կրկին՝ մեր սիրտերը ողողելով խոր յուղումով և երջանկութեամբ, ասդին՝ Սփիւռքի պահ մը վտանգուած հոգեկան աշխարհի վերեւ ալ, ուրախ ենք յայտնելու որ կը փայլի բախտին աստղը, եթէ կը ներուի այս պատկերուն բացատրութիւնը:

Վեհ. Տ. Տ. Գարեգին Ս. Կաթողիկոսի գահակալութեամբ, Մեծի Տանն կիլիկիոյ Աթոռը վերատին կը մտնէ իր պատմական արժեքին ու դերին մէջ, Անդրադարձումի և սփոփանքի խօսքերէն աւելի, պահանջները դիմագրաւուելու և զանոնք լեցնելու պէտքէն կը մզուի մեր մտածումը աննախընթաց և յարմարագոյն այս ընտրութեան ապահովութեան առջեւ:

Բերկրանքէն աւելի ապահովութիւն մ'ունինք այս զգայուն, հոգեսէր և գիտուն՝ միանդամայն արուեստագէտ հոգեւորականին նկատմամբ, որ Ազգին և Եկեղեցիին ամենէն բախտորոշ շրջաններուն, յինամենակ մը ամբողջ, դէպքերու, խնդիրներու, յոյսերու և աղջտքներու յորժանուուներու միշտ մօտիկը, այս ժողովուրդի հոգին փօթորկող եղելութեանց ականատես՝ և անոր ճակատագրի կառուցման գործին վրայ՝ և մասամբ աշխատակիցն է եղած: Ան կը բազմէ յԱթոռ Մեծի Տանն կիլիկիոյ, տարիքով եւ իմաստութեամբ պատկուած, գիտակից իր դերին և բազմապահանջ պաշտօնին: Այս գահակալութիւնը երաշխիք մընէ թէ պիտի ամբողջանան ու պսակուին Անթիլիասի աւազներուն վրայ տարիներէ ի վեր սկզբնաւորուած և գեղեցիկ արդիւնքներու յանգած գործը: Կ'ըսենք արսպէս, վասնզի Նորին Ս. Օծութիւն Գարեգին Կաթողիկոսի կեանքին բոլոր երեսները եղած են բեղուն և լեցուն:

Իր եկեղեցական ասպարէզին առաջին սանդղամատին վրայ իսկ ուշագրաւ կը գտանայ գրական և մանաւանդ

բանասիրական աշխատութիւններով . Սասմայ Նոերը և Փերանները մեր ժողովրդային բանահիւսութենէն, այդ շրջանի գործեր են : Համալսարանական ուսանողութեան և ձեմարանի ուսուցչութեան ու տեսչութեան շրջանին, հակառակ իր արտաքին ու հասկնալի զբաղումներուն, չէ դադրած արտադրելէ :

Անհուն է իր աշխատանքը, նուիրուած մեր հնագիտական արժեք ներկայացնող վայրերու ուսումնասիրութեան, մեր ձեռագիրներու և մանրանկարներու մանրակըրկիտ և հմուտ պրապտումներուն : Հայ պատմութեան և մշակոյթին համար լոյսեր ու գանձեր են միանգամայն իր հաղբակեանէ կամ Պոռչեանէ Հայոց Պատմութեան մէջ գործը, երեք հատորներէ բազկացած, ինչպէս Հայ Մանրանկարչական Քարեւէր, և նման տակաւին անտիպ աշխատութիւններ որոնց համագրական հմուտն է ինքը :

Իր գրական, հնագիտական ու բանասիրական ընդարձակ վաստակէն դուրս Ն. Ս. Օծութիւնը զանազան առաքելութիւններով ճամբորդած է բոլոր քաղաքակիրթ ուստաններ, այս աշխարհամասերուն վրայ իր վերջին շրջանը ըրաւ 1934ին, իբրեւ լիազօր նուիրակ և ներկայացուցիչ Ամենայն Հայոց Հայրապետի : 1938 Մեպտ. 4ին Ամերիկայի Ազգ Երեսփոխանական Ժողովը, հակառակ իր կամքին, զինք կ'ընտրէր Առաջնորդ Ամերիկա Հայութեան : Հոս իր կազմակերպչական, կրթական և կրօնական աշխատութիւնները փրկարար դեր մը ունեցան պառակտուած այս գաղութին մէջ, իր շուրջ խմբելով Ամերիկահայ գործիչներու մեծթիւ մը, գրաւելով անխոտիր բոլորին համակրանքն ու հիպումը, ներլնչելով և առաջնորդելով դանոնք ազգային ծառայութեանց :

Ահա այս կարգի մնատգիւտ աժանիքներով անձնաւորութիւն մըն է որ կը բազմի Կիլիկիոյ գահուն վրայ : Եկեղեցական մը որ աւելի քան յիսուն տարիներ ծառայած է իր ժողովուրդին՝ դրով, խօսքով ու գործով, իր կոչումի և դերի արժանավայել գիտակցութեամբ, որ «սակայն ընտըրեալ շնորհածներու առանձնաշնորհն է միայն» :

Անթիլիասի կիլիկեան նորահաստատ Աթոռը շնորհիւ
իր բարեյիշատակ նախորդներուն, նշանակալից քայլեր ա-
ռաւ : Կաթողիկոսարան, կաթողիկէ, գպրոց, տպարան՝ խո-
րացուցին հիմերը աւազուտի մը վրայ նստած այս հաստա-
տութեան, և սիրոյ ու խնամքի նուիրումով հասցուցին
զայն գոհացուցիչ վիճակի մը :

Խոտացուած այս ակնարկը՝ ըսելու համար թէ հաս-
տատութիւնը առաջին օրէն քայլ առ քայլ, հաւատարիմ
իր պատմութեան ողիին՝ յառաջացած է, համնելու համար
այսօրուան բարեկարգ վիճակին: Սակայն Անթիլիասը իր
դերին համապատասխան հաստատութիւն մը կարենալ ըլ-
լալու համար, այս ընտրութիւնը պէտք է սկիզբ մը նկատ-
ուիլ նոր իրադործումներու: Զեն բաւեր միայն արտաքին
կարելիութիւններ, երբ պակսի իմացական եւ հոգեկան մըթ-
նոլորտը, կ'ակնարկենք այն ողիին որ բնաւ չպակսեցաւ
մեր նուիրապետական հաստատութիւններուն և կրօնական
յարկերուն, ընելով զանոնք լուսոյ վառարաններ և սրբու-
թեան շնչարաններ:

Եիսուն տարիներ առաջ, կիլիկիոյ Աթոռը քովընտի
պատուհան մըն էր, բացուած Հայ հոգիին վրայ, գրեթէ զուտ
կրօնական: Այսօր ան գրեթէ մշակոյթ մըն է, ամբողջական
կատար մը կաթողիկէ մը Հայ հոգիին համար, ուր կը կըրկ-
նուի Հայ վերածնունդի յաւիտենական խորհուրդը: Դժուար
է հաւատալ թէ ինչպէս բուսաւ այս բոլորը ամայքի մը
վրայ:

Անթիլիաս, այսօր աւելի քան իրականութիւն մըն է
Սփիւռքի ամենածանր, խորայոյզ ձգողութիւն ունեցող
սրբատեղին Հայ մտքին ու հոգիին վերե: Այս ամէնը քեղ-
մէ քեզի, Հայ ժողովուրդ, զի զուն ազբիւրն ես բոլոր կա-
րելիութեանց, և քու յաւիտենական յոյսդ ու հաւատքդ է
որ քեզ կը մզէ այս կառուցումներուն:

Նիւթի մարզին վրայ այս փառքը կը մնայ փառա-
ւորել հոգիի ու մտքի կեանքով: Մենք կը հաւատանք Ան-
թիլիասին որ Սուրբոյ և Լիբանանի հոծ Հայութեան վա-
ռարանը կը հանդիսանայ անոր նորընտիր Գահակալ վէճ.

Դարեգին կաթողիկոսին, երաշխաւորուած այդ աժէքներու չուրջ, կիսաղարեան իր խանդավառ սպասով։

Կ'ըսենք այսպէս, խորհելով թէ կիլիկիոյ Աթոռը յիսուն տարիներ առաջ, ինչպէս ըսինք, տեղական մասնաւոր Աթոռ մըն էր Հայ հոգիին մէջ, առանց ուրիշ անդրադարձի, այսօր իր խորհուրդը, իր իմաստը և իր դերը, առաւել քան ընդարձակ կը դասենք։ Անթիվասը Երուսաղեմի Պատրիարքութեան հետ միասին, Սփիւռքի հոգեւոր կեանքին ու իմացական մարզին վրայ պարտին ըլլալ տիրական մատոյցներ, օժանդակելու համար ոչ միայն Միջին Արեւելքի, այլ բովանդակ Սփիւռքի ազգային մշակոյթի պահպանման որակային ազնուացման։

Մեր ժողովուրդին սիրտը միշտ բաց է սրբազան ու հաւատարիմ ձայներուն։ Նորընտիր Գահակալը ոգիի մարդէ, հրաշքի ընդունակ պաշտօնեան՝ աղաղակող և բազմերես պահանջներուն դիմաց, մարդը որուն տիրական անձը կըրնայ դղրդիլ հոգիները, անոնցմէ առնելու համար անմահ իսկութիւնը արգաւանդ կեանքին։ Վերջապէս մարդը, որ քարերը հացի և սիրտերը ոսկիի փոխելու կախարդանքն ունի։

Կիլիկիոյ Աթոռին համար առաջին աստիճանի անհըրաժեշտութիւն է բաց հոգիով ու սրտով դիմելու մեր ժողովուրդի ուժերու անթառամ շտեմարանին՝ անկէ վերաբերելու համար այն որ բարեց դարուց ի դարս այս ժողովուրդի հաւաքականութիւնը, ոգեզէն խարութիւնը անվթար պահելու։

Վստահ ենք թէ ամբողջ Սուրբոյ և Լիբանանի հայութիւնը պիտի ընդառաջէ՝ ամէն անգամ որ Նորին Սրբութիւնը կարիք զգայ զօրացնելու հոգեւոր և իմացական կազմակերպութիւնը, օժտելու համար զանոնք արդի կեանքին պահանջներուն համեմատ, զայն բանալով իր հոգիին ու տնտեսութեան կարելի աղբիւրները։

Ոչ մէկ ատեն կիլիկիոյ Աթոռը բախտը ունեցած է այսքան ծանր՝ բայց այսքան օգտակար առաքելութեան մը հանդիսարանն ըլլալու։

Սրտառուչ այս հաստատումներէն յետոյ, որ մեր եւ

կեղեցւոյ ձայնը, ինչպէս մեր ժողովուրդին խղճմտանքը, իրարու կուգան կազմելու համար մեր օրերու յատուկ միակ կարելի ոգեղէն տարազը, մեզի կը մնայ շնորհներու և բարիքներու աղբիւրէն մաղթել կարելի անհրաժեշտ ուժը, որպէսզի այս ընտրութեամբ հեռատեսնուած և յուսացուած արդիւնքները իրանան այս նոր, չըսելու համար վերանորոգող, փառքին մէջ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

ԽՄԲ.

Խմբազրական «Արքան»
1945 Մարտ-Ապրիլ Երուսաղէմ

Մեծ Դեմք մը

Երկու տարիներու անհամբեր սպասումէ վերջ ուրախութեան ու հրճուանքի սարսուռ մը անցաւ բովանդակ Հայութեան հոգիին մէջէն՝ երր Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, վեց Արքեպիսկոպոսունք և Եպիսկոպոսունք նուիրադորձեցին Ընտրեալ Հայրապետին պաշտօնը Սրբալոյս Մեռնի օծմամբ ու հոչակեցին Ընտրեալը՝ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Բազմահազար հաւատացեալներ խռնուած ներսը ու գուրսը Մայր Տաճարին՝ գոհունակ սրտով և ուրախութեան արցունքներով ունկնդրեցին անդրանիկ պատգամը Նորած Հայրապետին:

Ուրախ ու երջանիկ էր ժողովուրդը: Համակրանքի ու սիրոյ աննախընթաց ցոյցերը, որոնք սկսան Ամերիկայէն ու շարունակուեցաւ Եղիպտոս, Պաղեստին, Լիբանան ու Ասւրիա՝ անհերքելի փասն են այս ճշմարտութեան: Ուրախ և երջանիկ էր ժողովուրդը, վասնզի մեծ զէմք մը արժանաւորապէս կը բազմէր Տանն Կիլիկիոյ Հայրապետական Աթոռին վրայ:

Ուրախ մանաւանդ անոր համար որ, հին մասածումը տեղի տուած էր նոր մտածումին, խտրականութեան ողին

տեղի տուած էր սիրոյ և համերաշխութեան ոգիին, Կիլիկիոյ Հայրապետական Աթոռը՝ այլեւս Աթոռը չէր Կիլիկեցիներուն՝ այլ բովանդակ Հայութեան, վասն զի Ս. էջմիածին և Անթիիաս եղբայրական ձեռք երկարած իրարուորոշած են աշխատիլ համազործակցաբասր և իրարմով զօրացած՝ Հայոց աննման ժողովուրդին հոգեւոր, բարոյական և մտաւորական կեսանքի զօրացման և բարձրացման համար; Այս ժողովուրդին որ ի գին ամէն կերպ զոհարերութեան՝ վառ պահեց միշտ լուսաւորչի կանթեզը, խորհրդանիշ Հայոց հաւատքին, և երբ պակսեցաւ անոր իւզը, Հայոց հաւատաւոր ժողովուրդը լուսաւորիչի կանթեզի մէջ լեցուց, պատրաստակամ սիրով, իր արցունքը և իր արիւնը յաճախ:

Եւ գարերու աղջամուղջէն և արհաւիրքներուն մէջէն ան, լուսովը լուսաւորչազառ կանթեզին՝ քալեց անյուսահատ և անշեղ, քալեց յածախ արիւնկուայ ոտքերով և սակայն չկորսնցուց երբեք իր փրկութեան ճանապահը:

Ուրախ է բովանդակ Հայութիւնը, վասնզի իր Նորած Հայրապետին մէջ կը տեսնէ սիրոյ և խաղաղութեան Առաքեալը, ուրախ մանաւանդ անոր համար որ Ն. Ս. Օծութիւնը ընդունած է Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը զօրացընելու համար գիրքը Ս. էջմիածնի և անկեղծ աջակիցն ու գործակիցը գառնալու ի մօտոյ ընտրուելիք Հայոց Ընդհանրական Հայրապետին:

Վեհափա՛ռ Տէր, մենք կը հաւատանք Զեր անկեղծութեան, վասնզի գուք եղաք ու մնացիք մեր եկեղեցական ազգային կեանքէն ներս մէկը այն մնձ դէմքերէն, որոնց մէջ նենդութիւնն ու չարիքը տեղ չունեցան երբեք, վասն զի Զեր Վեհափառութիւնը եղաւ մարմնացումը բարիքին ու բարութեան:

Մենք կը հաւատանք Զեզի Վեհափա՛ռ Տէր, վասն զի զուք եղաք ու մնացիք բարի հովիւը Հայոց աննման ժողովուրդին. քաջ հովիւ որ զիտցած է պահանջուած ատեն իր անձը տալ սիրով ու պատրաստակամօրէն իր հօտին իր հոգեւոր զաւակաց փրկութեան համար:

Մենք կը հաւատանք Զեզի վեհափա՛ռ Տէր, վասն զի դուք եղաք ու մնացիք անշնչ հետեւողը Սահակներու և Մեսրոպներու, Նարեկացիներու և Շնորհալիներու գծած ճանապարհին: Տարիներով և անխոնջ կերպով գրիչ շարժեցիք և Հայ մտքի ու Հայ արուեստի հարուստ գանձարանի դրսերը բացիք Հայ ժողովուրդին առջև: Աստուծոյ խօսքը քարոզեցիք հաւատաւոր հոգիով Հայ եկեղեցիի բէմէն և հոգեւոր կեանքէն սնունդ ջամբեցիք անձանձոյթ և ըզմայիշի նուիրումով:

Ապրեցաք այն ինչ որ քարոզեցիք և այդ պատճառաւ ձեր ցանած մերմերը Հայ հոգեւոր ու քարոյական կեանքին անդաստաններու վրայ եղան արգասարեր:

Տարիներու յառաջացումը ո՛չ մէկ կերպով կրցաւ տկարացնել ու մարել Զեր մէջ ծառայելու ու գործելու եռանդը:

Զեր նկարագրին տիրուկան գիծը եղաւ Ազգը, Հայրէնիքը և եկեղեցին ու այս սրբութեանց հանգէպ Զեր սընուցած մաքուր ու անշահախնդիր սէրը՝ եղաւ անսպառ ըշտեմարանը Զեր խանդին ու Զեր մէջ միշտ բոցավառ անշէջ կրակին:

Ահա ա՛յս իսկ պատճառաւ մեծ եւ սիրելի դէմք մը եղաք ու մնացիք մեր ազգային կեանքէն ներս:

Ամէնէն վերջ Զեր վեհափառութիւնը բազմապիսի շնորհներով հարուստ, արժանառութապէս կը բազմի Տանն կիլիկիոյ Հայրապետական Աթոռին վրայ իրեն հետ ունենալով ժողովուրդին սիրտն ու սէրը, համակրութիւնն ու վըստահութիւնը:

Զեր յոյսին յարդ ազգիւրն էք դուք:

Զեր երեւումը Հայրապետական Աթոռին վրայ՝ անհաւատը հաւատքի բերաւ, տկարը զօրացուց, յուսահաաը յոյսով լիցուց և այժմ ամէն աշք դարձած է Զեզի, ու շատ իրաւամբ մվան զի մեծ դէմք մը կը բազմի Տանն կիլիկիոյ Աթոռին վրայ:

Զեր վեհափառութեան կը նային մանաւանդ իմաստութեամբ ու կեանքով լիցուն երիտասարդ, ուսումնատենչ

անդամները Անթիլիոսի միաբանութեան, որոնք կը հաւատանք թէ Զեր հայրական շունչին տակ պիտի պատրաստուին անձնուէր հովիւ ու սպասաւորներ ըլլալու ազգին ու եկեղեցիին:

Անցան ցոյցի և խանդավառութեան օրերը: Ի մօտոյ պիտի սկսի շինարար աշխատանքը Անթիլիոսի մենաստանէն ներս՝ Զեր Վեհափառութեան առաջադրութեամբ ու հսկողութեամբ:

Բավանդակ ազգը յուսալից ու սրտատրով պիտի ըսպասէ ծրագրուած աշխատանքի արդիւնքներուն ու թափուելիք քրտինքներու պազարերումին: Յուսալից և հաւատաւոր կերպով կը սենք միշտ, վասն զի Տանն Կիլիկիոյ Աթոռին վրայ բազմած է այսօր յանձին Ն. Ս. Օծութեան Գարեգին Կաթողիկոսը՝ մեծ ու փառաւոր գէմք մը:

ՄԱՄԲՐԵ ԵՊԽՍԿՈՊՈՍ

Պարտի զօտին

Պարտիդ, փառիդ,
Կամարներուն ներիւ ես ալ
Ով Հայրապես
Ու կը բացուին, պիտի բացուին
Կամար կամար, ծուեն ծուեն,
Հոգիիդ մէջ, նայուածիդ տակ
Նոր պարտերու, նոր փառերու
Հերկերն անվերջ,
Ընդունելու,
Քրտինք, արիւն, կայծն իմաստին,
Վաղուան կարմիր զեղեցկուրեանց,
Կանանց յոյսին:

Եկա՞ր
Անհուն սպասումին,
Հաւատարիմ դուն արձագանգ,

Կանչերէ վեր, փառերէ վեր,
Պարսի ձայնին:
Զեր կրնար արդէն չըգալ
Հոգիդ առաջ հալած է միւս
Քու մարմինեդ:

Նկար կապոյթ նամբաներէն,
Անցած լեռնեն, անապատէն:
Խճչ խենդուրիւն,
Թաղաժն ողջոյն
Քեզ ունեցաւ երբոր իր մէջ,
Տարիներու ըսպասումէն
Ու ուրգէն վերջ,
Դարձաւ անհուն դիմաւորում
Ուրախուրեան խօս աղաղակ,
Պատկառանի հրսկայ պարիսպ:
Քեզ ներս առին,
Երբեւ Տեր ու կալանաւոր
Երենց սիրոյն,
Այրիացած իրենց Գանին:

Հանդէս է մեծ,
Կարողիկ եկեղեցին
Ալիքներով լիբն է մարդոց:
Ու զաներէն, կանքեղներէն,
Բազմածորան լեզուներէն
Ծիածաններ.
Կամար կամար
Կ'իյնալին վար:

Եկեղեցին աչ էր ամբողջ:

Սունկի բեմին,
Լոյսի խունկի ողարշին մէջ.

Տեսիլք մ'ինչպէս կանգնած է լուռ
Սեղանին դէմ,
Հայրապետը ծերունազարդ
Նոր օրերու Շնորհալին:
Ժայիս, արցունի,
Իրարու հետ, իրարու մեզ,
Աշւըներէն երիտասարդ ու ծերունի:
«Արժանի և, ալկյոփիա.»
Զայնը խորանէ ու բրբրուոն,
Հազարներէ դուրս պոռքկացաղ.
Որ դարէ դար,
Իբրև արիւն իբրև նրբիար
Բաշխրւեր և
Եկեղեցւոյն Հայաստանեայց:

Քիչ մը անդին,
Խենց կայիին բաղցրահայեաց
Ըստուեներն ալ այս սուրբ յարկին,
Կ'ողջունէկին
Շնորհաբեր Գալուստն այս նոր,
Մազադարեայ,
Մեր արուեստի ու պատմութեան
Բանուուր համեստ ու անձանձիր,
Եւ որ այսօր,
Օսականի մեծ նիրհողի հօւրով լեցուած,
Կուզայ պարպել
Մարաւանիւծ հոգիներուն,
Հայ արուեստի ու հաւատէի
Մեղրով շաղուած
Սափուն ոսկի:

Բայց բափօր և անօր աշխին
Շարանն ամբողջ
Անցեալ փառքին,

Երեւ տեսիլք ու յայտնութիւն,
Կ'անցնի անա,
Մըսածումէն
Աղօրք եղած Հայրապետին,
Երբ կը բափէր միւռոնք սուրբ
Եր զազարին,
Ու երբ կ'իջնար խոր ներմակ
Եր աշերուն,
Ու զինք Ասծոյ կ'ընէր մօսիկ:

Լոյս է իջեր,
Յոյս է բառեր,
Գահուն վրայ ննորհալւոյն,
Ու դեռ երկէ
Հայ նոզիին ու աշխարհին
Վերեւ բացուած
Պարզ լուսամուս,
Այսօր կամար մ'ամբողջական
Արուն ներմէն կըսոր կըսոր
Կը յօրինուի, պիս՝ յօրինուի,
Թեզանն աղուոր ու սրառուչ
Վաղուան պայծառ:

Գարուն է ծով:
Խաղաղութեան բացուեր է քեւ
Մենասանին վերեւն աղուոր
Անրիլիասի:
Վեհարանի լոռութեան մէջ,
Մազաղարին վրայ կամար,
Կը վերծանէ:
Մեր օրերու ննորհալին:

Քիչ մը անդին,
Ճընճղուկ մը օհւդը կրտուցին.
Քիւին ներքեւ Վեհափառին,
Վաղուան յոյսին
Կը հիւսէ բոյն:

ԵՐՈՒՍԱԼԵՄ ԵՊԻԿԱՐԴ

«Համկը»

Մարտ-Մայիս 1945 Անթիլիաս

«Այր լի Հաւատով և զօրութեամբ»

Գոհ ևնք Աստուծմէ և ուրախ՝ իր ծառայութեան
կանչած քառանային և անոր կատարած գործերուն համար։
Գարեգին Սրբազն արժանահաւատ վկայ մըն է հոգեկան
իրողութիւններու և մէկ մարմնացումը Հայուստանի ոգին։
Հպարտ ևնք իրմով, որովհետեւ նա իր բարձր կոչումին գի-
տակ, Աստուծոյ և մարդոց տաջն շարունակ պատրաստ
գտնուեցաւ, Հայուստաննեայց Եկեղեցւոյ հաւատքին և ոգ-
ւոյն, ինչպէս նաև Հայուստանի սիրոյն և Հայ մշակոյթին
մշտավառ լուստերներով, լոյս և յոյս ծաւալելու։

Իրր զինքն ու իր գործերը մօտէն ճանչցողներէն մէ-
կը, չենք խղճահարիր իրեն համար կիրարկելու Ս. Ստեփա-
նոսի մասին տրուած սա վկայութիւնը «այր լի հաւատով
և ճշմարտութեամբ, առնէր զարտենու և նշանս մեծամե-
ծըս ի ժողովութեանն» (Գործք. Զ. 8):

Նա է «այր լի հաւատով և զօրութեամբ» Ամերի-
կայի հայութիւնը յաճախ բախտն ունեցաւ լսելու իր քա-
րոզները և դիտելու իր կեանքը։ Անոնք երկուքն ալ հզօր
արտայայտութիւններն են հաւատքի և զօրութեան։ Անոնք
վկաներն են մէկը միւսին։ Մենք ամէնքս ալ շատ ան-

գամներ ուրախացած և հոգեպէս զօրացած ենք, իր քարոզ-ներով ու կրօնական զրուած քններովը:

Նա զօրութիւն ունի Հնրաշքներ զործելու իր ժողովուրդին մէջ։ 1897ի ձեռնադրութենէն ի վեր զրեթէ միշտ բեռնաւորուած է հովուելու, ուսուցանելու, առաջնորդելու, ծրագրելու և այլ պաշտօններով։ Որչափ որ զիտենք, վերջին հարիւրամեակի միջոցին, ոչ ոքի վատահուած է այնքան ստիպողական և արժէ քաւոր նպատակներու համար հանդա-նակութիւններ զեկավարելու գործը, որքան իրեն։ Վերջին վեց տարիներուն Ամերիկայի մէջ միայն, բարի նպատակ-ներու համար, նա հաւաքեց քառորդ միլիոն տոլար։

Գարեգին Սրբազնի իր կատարած բոլոր գործերը կը վերագրէ Աստուծոյ։ Զմայելի է ասիկա, և նշան իր ամէն բանէ յառաջ հաւատաւոր քահանայ մը լինելուն։ Ասոր հա-մար Հայոց եկեղեցւոյ լրութիւնը ուրախ է իրման, և աւել-լի քան արժանի կը համարի զինք երախտազիտական ու գնահատանքի այն ջերմ արտայայտութեան, որով ազգը Ամերիկայի մէջ պատուեց զինք յորելինական հանդիսու-թիւններով և նուրիրատուութիւններով, իսկ Սուրբոյ և Լի-քանանի մէջ կիլիկիոյ Աթոռին իրը կաթողիկոս ընտրու-թեամբ։

ԶԴՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ամերիկա

— 6 —

Առավելատիպ Հայրապետ

Տէր Գարեգին Ա. Արքեպոս. Յովսէվեանի երեք քա-ռորդ գարերուն արիւնալից կեանքին մէջ Աստուծոյ օրհ-նութեան ու շնորհին լուսաշող հետքը կը նշմարուի իր մանկութիւնէն սկսեալ։ Ամենակալին հրաշտագործ մատը զինքը առաջնորդեր է աղքատիկ ու խոնարհ ընտանիքի մը ծոցէն, մինչեւ Հայրապետական Աթոռը։

Ասորհղաւոր ինչ մը կայ անոր մանկութեան ու պատասնեկութեան կեանքին մէջ, կարծես հզօր ձեռք մը զինքը միշտ վեր կը քաշէ իր խոնարհ միջավայրէն, ու կ'առաջնորդէ դէպի մեծ տեսիլներ:

Սբրազանի բոլոր կարողութիւններուն խորքը—իբրև մտքի ու գրչի վարպետ, իբրև հայրենասէր ու վարչապէտ մարդ—կը կազմէ հաւատքի մարդը, հոգեւորականի կոչումը, Աստուծոյ մարդը, թէն վանական՝ բայց ո՛չ վազեմի դարերուն աշխարհէն հեռացող ճգնաւորներուն նման, այլ՝ մարդարէի տեսսիլով, առաքելական շունչով՝ Աւետարանի քարոզիչ մը եղած է, իրական վարդապետ մը Հայ Եկեղեցւոյ, ուսուցանող ու դաստիարակող, աստուածարան և պատմապէտ, հաւատաւոր ուսուցիչ մը Աւետարանի պատգամներուն ու Աստուծոյ արքայութեան:

Իր բովանդակ կեանքին մէջ՝ նպատակը եղած է ի լոյս հանել ու ծանօթացնել Հայութեան հոգեկան ու իմացական գանձերը, հայ գեղարուեատի ու մշակոյթի, պատմութեան ու ճարտարապետութեան գոհարները, ու այս մարզին մէջ իր գործը մագիստրական է:

Ու այսօր, իբրև արդար հասուցում իր բարձր արժանիքներուն ու նուիրեալ ծառայութիւններուն, Հայ ազգը կը խոնարհի իր առջև, ու կը գնահատէ իր բազմարդիւն կեանքը՝ զինքը ընտրելով Գահակալ՝ Վկայաւուրի ու Շնորհալի հայրապետական Աթոռին:

Սիմեոն Ավարդակեան

«Հայաստանի Կոչնակ»

1943, Հոկտ. 23 Նիւ—Եսորք

Մանրանկարչութեան Մասնագետը

Հայ անցեալի և մշակոյթի լուսաբանութեան համար նկարազարդ մատեսանները խիստ կարեւոր դեր կը խաղան: Պատերազմներու, արշաւանքներու և կրօնական հալածանքներու գոհ գաղած են մեր եկեղեցիներուն և վանքերուն

շատերը, որ յանախ աւերակներ կամ կիսափլատակ շինուածքներ միակ վկաներն են Հայ ճարտարապետական բարձր արուեստին։ Զկան այլնւս շքեղ արծաթեայ, ոսկեցօծ և ականակուռ անօթները, նուրբ մետաքսեղէնները կամ ասեղնագործ կտաւները, որոնք եկեղեցիներու զարդը կը կազմէին։ Բայց հակառակ աւերումներուն և կողոպուտներուն, մեծ թիւով ձեռագիրներ բարերախտաբար կը մնան տակաւին, և կորելի է յատակ գաղափար մը կազմել Հայ նկարչութեան զարգացման մասին։ Կորելի է որոշել Հայ յատառնի և կիլիկիոյ արուեստի զանազան հօսանքները, հետեւիլ Հայ գրիչներու զործունէութեան՝ բոլոր այն կեդրուններուն մէջ, ուր Հայկական անկախութեան կործանումէն վերջ նոր գաղութներ հաստատուեցան։

Այս ստեղծագործութեան ծանօթութիւնը կը պարագնք մեծաւ մասամբ Գարեգին Սրբազնին, որ իւր երկարատեւ և անխոնչ զործունէութեան ընթացքին մօտէն քննուած է էջմիածնի, Երուսաղէմի, Պերլինի և Վիշնաւյի ճոխ հաւաքածոնները, ինչպէս նաև Եւրոպայի և Ամերիկայի մասենագարաններու կամ թանգարաններու մէջ զանուող Հայ մատեանները։ Հայատանի զանազան գաւառները ճամբարդելով, տեսած բոլոր այն ձեռագիրները, որոնք նախորդ պատերագմէն առաջ կը պահուէին վանքերու կամ եկեղեցիներու մէջ։ Ուսումնասիրած է զանոնք իրր հմուտ գեղարուեստագէտ որ ծանօթ է, ոչ միայն Հայ անցեալին, այլ և մօտակայ Երկիրներու արուեստին, ինչպէս Բիւզանդական, Սիւրիական, Մասսանեան և Սիլուվկեան արուեստները։ ուսումնասիրած է զանոնք իրր պատմագէտ, ցոյց տալով յիշատակարաններու մէջ զանուող շահնեկան տեղեկութիւնները և անոնց նշանակութիւնը եկեղեցական կամ քաղաքական պատմութեան համար։ Ուսումնասիրած է վերջապէս իրր զգայուն գեղարուեստասէր որ գիտէ զնահատել, և զնահատել տալ, մեր գրիչներու և ծաղկողներու արուեստին մասնաւոր հմայքը։

Վարդապետութեան առաջին տարիէն ակսեալ, իւր ուշագրութեան առարկայ եղան նկարագորդ ձեռագիրները։

1898 թուին, Արարատ ամսագրին մէջ կը հրատարակէր ուսումնասիրութիւնն Ախալցիսայի գաւառի Շղրութ գիւղի Աւետարանի մասին: Այս ձեռագիրը, գրուած և ծաղկուած 909 թուին, ի կ. Գոլիս, ուշագրաւ է իրը Հայ մանրանկարչութեան ամենահին օրինակներէն մին: Կարեւոր է նաև իրը ապացոյց որ տասներորդ գարու սկիզբը: Հայ արուեստագէտներ կ'աշխատէին Բիւզանդական մայրաքաղաքին մէջ:

Մանրանկարչութեան նուիրած իւր երկրորդ յօդուածը, ո՞նախնեաց Յիշատակները, կը պարունակէ պատմական և գեղարուեստական խիստ շանեկան ծանօթութիւններ: Գար ընդին Սրբազնի ուսումնասիրութեան շնորհիւ կը տեսնենք որ հայրենի հողէն հեռու իսկ, Հայ արուեստը կը պահէր իւր բնորոշ հանդամանքը, օգտուելով հանդերձ Բիւզանդական օրինակներէ: Կը տեսնենք այն նուրբ ոճը, որ սկսած էր զարգանալ Հայաստանի մէջ տամարժէկերորդ գարուն, և որ նախապատկերն է այն արուեստին որ պիտի ծաղկի Կիւլիկոյ մէջ, հետեւեալ երկու զարերու ընթացքին:

Այս վերջին տասը տարիներուն մէջ Գարեզին Սրբազն մասնաւորապէս զբազած է տասներեքերորդ գարու ստեղծագործութեամբ, որ մեր մանրանկարչական արուեստի սկինդարը կրնայ նկատուիլ, նամանաւանդ Կիւլիկոյ մէջ: Հեթումնեան արքաներու և իշխաններու հովանաւորութեան տակ, զիտական և գեղարուեստասէր կաթողիկոսներու և եպիսկոպոսներու հոգածութեամբ, մանրանկարչութիւնը նոր փայլ մը կը ստունայ-այս շրջանին: Ակնառայ, Դրազարկ, Հռոմկայ և Սիս առաջնակարգ կեդրուններ են, ուր հանձարեզ, գրիչներ և նկարիչներ կ'աշխատին քով քովի, ու կը պատրաստեն շքեզ մատեաններ, որոնք զլուխ զործոցներ են ո՛չ միայն Հայ արուեստի, այլ եւ ընդհանուր Միջնադարեան արուեստի: Կոստանդին Ա. Կարօղիկոս, ուղիւ Հայ մանրանկարչութեան մեծ հովանաւոր յօդուածովը, Գարեզին Սրբազն մեղ կը ծանօթացնէ բոլոր այն մատեանները, որոնք կապուած են կոստանդին Կաթողիկոսի անուան հետ, և կը պատկերացնէ Հռոմկարչի գրիչներու բարձր արուեստը,

մանաւանդ Թորոս Ռոսլինինը, որ այդ դպրոցին փառքն էր:

Տասներեքերորդ դարու Հայաստանի զրիչներու գործունէութիւնը նոյնքան ուշագրաւ է: Իր պատմա-հաւագիտական աշխատութեան մէջ, Խաղբակեանի կամ Պրոօսեանի Հայոց Պատմութեան Մէջ, Գարեգին Արքազան ցոյց կուտայ որ Սելճուկեան տիրապետութիւնէն յևոյ, Վրահայրկական իշխանութեան շրջանին, իսկական վերածնունդ մը կը սկսի Հայաստանի արեւելեան գաւառներուն մէջ: Մանրանկարչութեան ուսումնասիրութեան համար մասնաւոր կարեւորութիւն ունի վերջին զլուխը, Գլանորի Բարձր Դրպեցը կամ Համալսարանը, որովհետեւ հոս աշխատեցան ճարտար գրիչներ, ինչպէս Թորոս Տարոնեցին:

Հայկական արեւելեան գաւառներու վերածնունդի պատմութիւնը Գարեգին Արքազանը ուսումնասիրած է նաև կարգ մը յօդուածներու մէջ: Խղնախիս Մանրանկարչի եւ Նորուկանց Տօնմը, Դարձեալ Խղնախիս Հոռոմացի Մանրանկարչի մասին յօդուածները կը պատկերացնեն այս վարպետին արուեստը, անոր արեւելեան բնոյթը, զեղարուեստական կապերը Սասաննեան, Միջազնեւեան և Արարական աւանդներու հետ Այս արեւելեան բնոյթը, որ Հայուանի մանրանկարչութիւնը կը զանուզանէ Կիլիկիուն ըստեղծագործութիւններէն, երեւան կուգայ ուրիշ ձեռագիրներու մէջ: Այս շարքին են Թանգմանչաց Աւեստարանը, որու մասին Գարեգին Արքազան արգէն խօսած էր Նախնաց Յիշաւակներուն մէջ, Գետաշէնի Աւեստարանը, ուսումնասիրուած Հաղբաշի Դպրոցի Մի Դլուխ Գործոց վերնազրով յօդուածին մէջ, և աւեստարան մը մասամբ նկարուած Արաս գրչի կողմանէ, որ այժմ կը գտնուի Շիքակոյի Համալսարանը:

Պէտք է նաև յիշել Գրչութեան Արուեստ Հին Հայոց Մէջ, Թանկագին քարտէս մը Հայ հանգրութեան համար, ինչպէս նաև գրախոսութիւններ և երկասութրութիւններ, որոնք թէեւ մանրանկարչութեան արուեստի չեն յատկացւած, սակայն շահեկան տեղեկութիւններ կը պարունակեն շատ մը ձեռագիրներու մասին:

Հայ արուեստի բոլոր ուսանողները երախտագիտութեան խոր պարտք մը ունին Գարեգին Սրբազնանին հանդէս: Շնորհիւ իւր հրատարակութիւններուն, ան եղած է երեց առաջնորդը և ուսուցիչը, իւր օրինակը քաջալերած և ոգեւորած է զանոնք: Ոչ մէկ գիտնական, ըլլայ Հայ կամ սուար, չունին Գարեգին Սրբազնանին խոր հմտութիւնը, և ոչ մէկը այդքան ծառայութիւն է մատուցած Հայ մանրանկարչութեան գիտութեան:

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ ՆԵՐՄԿՍԵԱՆ

Գարեգին Կարողիկոս Յովիսէվիեան

Ինչպէս իր ընդունելութիւնը, նոյնպէս իր կաթողիկոսական օծումը տպրիլ 8ին, յիշատակելի պիտի մնայ կիւլիկիոյ կաթողիկոսներուն տարեգրութեան մէջ: Քանի մը տարի կիւլիկիոյ կաթ. Գահը թափուր մնալէ յետոյ, վերջապէս կ'ունենայ իր Գահակալը յանձին Գարեգին Արք. Յովսէվիեանի, որ իր եկեղեցական բարձր արժանիքին կը միացընէ առաջնորդ գիտնական հեղինակի անունը:

Մոտ վաթունն տարիներու եկեղեցական և գրական րեզուն անցեալ մը, հարուստ՝ իմացական և նիւթական ստեղծագործութիւններով: Այսպէս կը ներկայանայ մեզի կիւլիկիոյ պատմական աթոռին նոր գահակալը: Բարձր եկեղեցական մը, որ ապրած է գիտակից և սրբակենցաղ կեանք մը, որ իր կրօնական անբասիր ապրումներուն համագրած է անշահախնդիր հայրենասէրի և ստեղծագործ հոգեւորականի կոչումը:

Գորեգին կաթ. Յովսէվիեան մեր օրերաւն հայ հոգեւորականութեան մէջ պայծառ դէմք մըն է և արժանաւոր յաջորդը մեր մէծ Հայրապետներուն՝ իրրեւ հաւատքի և իրրեւ գրչի մարդ:

Իրրեւ հեղինակ՝ մեծ է որակը և ծառալը իր բերած նպաստին Հայոց գրականութեան: Աւելի քան կէս դար,

խորասուզուած Հայոց գրականութեան, պատմութեան և
բանասիրութեան ականքներուն մէջ, մէծ ձևուննասութեամբ
և գիտնականի հեղինակութեամբ հաւաքած, համագրած և
հրատարակած է խիստ արժէքաւոր երկասիրութիւններ։
Նատ բան կը պարտինք իրեն Ժ. Ժ. Ժ. դարերու Հայոց
պատմութեան կառուցման մէջ, որու մասին ուսէ լուրջ
տեղեկութիւն չկար և որ ինք, առարիններու ընթացքին, մանր
պրապտումներով, յիշատակարաններու, արձանագրութիւննե-
րու, պեղումներու և ձևուազիրներու հետազօտութիւններով՝
յայտնաբերած և հրատարակած է։ Նմանապէս խիստ մէծ
է իր բերած նպաստը մանրանկարչական արւեստին մէջ
և այն ուղղութեամբ առաջնակարգ հեղինակութիւն մը կը
համարուի Մինչեւ հիմու իր լոյս ընծայած երկասիրու-
թիւնները գրքոյկով և հասարով 30ը կ'անցնին։

«Ակօս»

1945 Պէյրութ

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շուրջ

ԵՐԵԿՆ ՈՒ ԱՅՍՈՐԸ

Կիլիկիոյ Բնուրեալ Կաթողիկոսին Անթիլիոս ժամա-
նումը հազորգուեցաւ Նիւ-Եորք կը յաւսանք մօտ օրէն ըս-
տանալ նաև օծումին լուրը։

Դէպքը բարեգուշակ նոր գլուխ մը կը բանայ Հայ
եկեղեցւոյ պատմութեան մէջ։ Կիլիկիոյ թեմը իրրեւ մաս-
նաւոր կաթողիկոսութիւն սկիզբ առաւ 1441ին, երբ Հայ-
քապետական Աթոռը, ընդհանուր փափաքի համաձայն կը
վերադառնուէր էջմիածին։ Օրուան Կաթողիկոսը, Տ. Գրի-
գոր Մուսարէգեանց, նախընտրեց մեալ իր տեղը, Սիս, ուս-
տի Մայր Աթոռին վրայ բազմեցաւ Տ. Կիրակոս վերապեցի։
Էջմիածին երկար տաճն չի վայելեց ոյզ օրերու

համամետական խաղաղութիւնը, եւ դժնդակ պայմաններէ անցաւ մինչև ռուս տիրապետութիւնը 1828ին։ Ոչ նուազ տառապանք կրեց Կիլիկիան Աթոռն ալ Մեծ ու պղտիկ ցեղապետներ, նոյն իսկ Մէմլուքեան և Օմանեան իշխանութեան ներքեւ, իրարու ձեռքէ խլեցին երկիրը, որով Սըսոյ վանքը, քանից կողոպտուելով անչքացու, ու չարտշանութեան առարկայ գարձաւ, թէ՛ այլաղջի և թէ՛ Հայ ձեռքերու մէջ։ Այդ խաւարամած շրջանի բազմերախտ դէմքերէն մին էր Կիրակոս Ա. Կաթողիկոս, որ 1791ին Աթոռնատաւ իրեւ Աջապահեան մը—Լուսաւորչի Աջը պահող ընտանիքէ։ Նա յաջողեցաւ նորոգութիւններ և շինութիւններ կատարելու, և վանքին շուրջ պարիսպ մը բարձրացնելու։ Ասոր համար իսկ քաղաքականութէն կասկածելի գարձած՝ Կիրակոս ձերբակալուեցաւ և կ. Պոլիս զրկուեցաւ, ու հազիւ օձիքը ազատեց Պատրիարքարանի միջամտութեամբ։

Կիրակոսի յաջորդներուն առն ալ, աւելի քան հարիւր տարի, անպակաս էին փոթորիկները։ Գոզանեան ըրոնակալներու զօշաքաղութիւնը մէկ կողմէն, Աջապահեան ժառանգորդներու ոյլամերժ յաւակնութիւնը միւս կողմէ, վանքը կը վերածէին ռազմագալարի։ Բարեբախտարար արշալոյսը մը ծագէր թուրքիոյ Հայ հորիզոնին վրայ։ Թուրականէս երեք քառորդ դար առաջ կը հաստատուէր Ազգային Սահմանադրութիւնը, պետական վաւերացումով, որ վերջ կը դնէր վարչական կամայականութեանց, և ուշադրութեան առարկայ կը դարձնէր դաւառական կեդրոնները։ Սահմանադրութիւնը աւետարեր հրեշտակ մըն էր, զոր գպրցական տղաք կ'ողջունէին երգելով։ —

Անցա՞ն սեւ օրեր, օրեր մահանոտ,

Հայոց նոր բախտին ծագի առաւօտ։

Զարթօնքի պահն էր այդ։ Պոլսոյ Հայ մաաւորականներուն աչքը կը դառնար դէպի «ցանկալին» Կիլիկիա։ Թիւրք կտուավարութիւնը՝ պատրիարքարանին կրկնակի խնդրանքներէն ալ մզուած՝ միջոցներ ձեռք կ'առնէ յիլուզակներէ մաքրելու Տաւրոսի և Ամանոսի լեռները։ Գոզանեան ապստամբապետը կը բռնուի քաջամիրտ Հայու մը

ձեռքով։ Պոլսոյ մէջ կը հաստատուի «Վարդանեան» ընկերութիւն մը Հաճընի գպրոցներուն օգնելու՝ «Բարեգործական» մը՝ նոյն շրջանակի պղինձի հանքերը բանեցնելու նպատակաւ — ինչ որ շուտ պիտի մասնուէր պետական արգելքի։ Միեւնոյն ատեն՝ Պոլսոյ մէջ հիմունեցաւ Նուպար Շահնազարեան վարժարանը, մասնաւորապէս կիլիկիոյ տըղաց համար, Շահնազարեան կարսպետ վարդապետէ կոտակուած, և Մեծ Նուպար Փաշայէ ամբողջացուած զումարով։ Վրայ հաստ կաթողիկոսական Աթոռի թեկնածուներուն միջն պայքար մը։ Պատրիարքարանի պատուիրակներուն ներկայութեամբ՝ Սահմանադրական կարգերու համաձայն 1871ին ընտրուեցաւ Մկրտիչ եպիսկոպոս Քէֆսիզեան, Հաւլէպի առաջնորդը՝ Մարտացի։

Թուրքիոյ Սուլթանն էր Ապարիւլ Ազիզ. քաղաքական հարածանք չկար. Կիլիկիոյ թեմը կրնար ծաղկիլ։ Մեծ յոյսաեր կային Մկրտիչ կաթողիկոսի վրայ, որ ծանօթ էր որպէս ճարպիկ, քաջախօս և ունեւոր եկեղեցական։ Բայց շուտ պատահեցան անհաճոյ անակնկալներ։ Էջմիածնի կաթողիկոսը, Գէորգ Դ. բողոքեց Քէֆսիզեանի ընտրութեան դէմ, և Սիսն ու Աղթամարը հետեւալ հակաթոռներ հրչակելով՝ պահանջեց որ անոնք բարձուին, և կամ դրուին ստորագամ դիրքի մը վրայ, սահմանափակ իրաւասութիւններով։

Գէորգ Դ.ի տեսակէտը թունդ ջատագովներ ունեցաւ Պոլսոյ մէջ ալ, եկեղեցականներէն՝ Խորէն Արքեպու. Նարպէյ և Մատթէոս վրդ. Էղմիրընան (յետոյ Պատրիարք կ. Պոլսոյ և Էջմիածնի կաթողիկոս) բայց, ո՛չ օրուան Պատրիարքը, Խրիմեան, ոչ ալ Երեսփոխանական Ժողովը համամիտ եղան Հայրապետին։ Աղթամարի արժէքը աննշան էր, բայց Կիլիկիոյ Աթոռին պէտքը կը նկատուէր անվիճելի, մանաւանդ անոր համար որ Պալաժէնիայի օրէնքով Էջմիածին չունէր զդալի հեղինակութիւն, նոյն իսկ Ռուսակայ թեմերու վրայ։ Ռւստի Պոլսոյ մէջ ամէն ըերան կը կրկնէր Տօքթ. Նահապետ Ռուսինեանի բանաձեւը. — «Սիսը պահել Էջմիածնի համար»։ Ու այդպէս՝ անհետիւանք կը մնար Գէորգ Դ.ի պատգամը։

Մկրտիչ Կաթողիկոս, որ իր կարգին, իշմիածնի դէմ խօսելէ և գրելէ չեր քաշուած՝ քիչ հոգը պիտի ցցուէր ընդդէմ Պոլսոյ Պատրիարքարանին։ Պերլինի Վեհաժողովն երկու տարի նոտքը, 1880ին, երբ Ապտիւլ Համբարի հայուհուած քաղաքականութիւնը տակաւին կը քօղարկուէր։ Մկրտիչ Կաթողիկոս զնաց կ. Պոլիս, որպէս թէ Ներսէս Պատրիարք Վարժապետեանի և իր ժողովականներուն հետ համաձայնութեան գալու, յարաբերական խնդրոյ մասին։ Նա մէկ ու կէս տարի մնաց հօն, մէկ կողմէ բանակցելով պատըրիարքարանի յանձնաժողովին հետ, և միւս կողմէ՝ գաղտնապէս ծրագիր մշակելով ձէվոտէթ Փաշայի հետ, Արդարութեան և կրօնից նախարար։ Օրին մէկն ալ, Քէֆսիզեան յանկարծ մեկնեցաւ մայրաքաղաքէն, ձեռք բնրած ըլլալով առաջին կարգի Մէճիտիյէ պատուանչան, 35 սոկի ամսականի յատկացում, և կայսերական պէտրաթ (հրովարտակ) մը, որ իրեն կ'ընծայէր պատրիարքարանէն անջատ և ոնկախ դիրք, թէև յապաւումովը ինչ ինչ արտօնութեանց, նոր խորդ Սուլթաններէ շնորհուած։

Ներսէս Պատրիարք, զոր Սուլթան Համբար, քաղաքական հաշիւներով սիրաշահիլ կ'ուզէր։ Հրամարեցաւ Աթոռէն, իբրև բողոքի ցոյց այդ պիտական հարուածին դէմ։ Սուլթանը բացարձակապէս մերժեց Ներսէսի հրամարականը, անոր նուիրեց հազար սոկի և բնակարան մը, ու խոստացաւ բարեփոխութիւն մը հրովարտակին առարկելի կէտերուն։ Միինոյն ատեն՝ Քէֆսիզեան յաղթականօրէն վերադարձ կիլիկիա, ծաղրելով Սահմանադրութիւնը և Պոլսոյ զեվունիները, և անաթիմա կորդալով այն թեմականներուն դէմ որ կը նշաւակէին իր հակազդային ընթացքն ու տարապայման արծաթասիրութիւնը։

Քէֆսիզեանի բարեմիտ հետեւոզններն անդամ չորաշար գայթակղեցան 1885ին, երբ երեւան ելու գաղտնիքը անոր երկու թագրիբներուն, Թուրքիոյ Մեծ Եպարքոսին և կրօնից նախարարին ուղղուած։ Հետեւեալն է ամփոփումը այդ գրութիւններուն։

«Խմ Աթոռիս իրաւունքներուն զէմ Պոլսոյ պատրիարքարանը ձեռն միութիւն կ'ընէ ի նպաստ Ռուսիոյ (իմա' էջմիածնի) Կաթողիկոսութեան։ Միացեալ Ընկերութիւն կոչուած մարմինը հոս կը զրկէ խոռվարարներ (յեղափախական), ևս Օսմ. պետութեան ծառայելու համար ստանձնած եմ Կաթողիկոսական պաշտօնը, բայց ամսականներուս անվճար մնալէն յուսահատած՝ վանքը փակելու և բանութերը Ատանայի Նահանգապատետին յանձնելու պիտի հարկադրուիմ»։

Մկրտիչ Կաթողիկոս վախճանեցաւ 1893ին վերջերը, Հուլիսի Գրիգորիս Եպիսկոպոս Ալեքսանդրան (Թուչնիկ), որ Կիւլիկոյ թեմական ժողովին ընտրութեամբ պիտի յաջորդէր՝ մերժուեցաւ կառավարութեան կողմէ։

Եօթը տարի ետքը, 1902ի Հոկտեմբերին, նոր ընտրութեամբ և պետական հաստատութեամբ Աթոռը գրաւեց Սահակ Եպիսկոպոս։ Խապայեան, և պատշաճ յարաքերութիւն հաստատեց կ. Պոլսոյ և էջմիածնի հետ։ Նա քուեցաւ արդինաւոր աշխատանքի, քաջալերուելով մանաւանդ 1908ի Օսմ. Սահմանագրութենէն, իր հովանաւորութեան ներքեւ բացուեցաւ կիլիկեան ձեմարանը, Այնթապի մէջ, որուն կը նպաստէր Ամերիկանայ Յանձնախումբ մը՝ Պր. Մ. Գարակէօղեանի գանձապետութեամբ, Բայց երազի պէս անհետացան այդ կարգի ձեռնարկները, ու սեւ թուականներ յաջորդեցին իրարու։ Տեղահանութեան միջոցին աքսորական դարձած՝ Սահակ Կաթողիկոս պահ մը զրկուեցաւ Դամակոս։

Թուրքիոյ հայութեան ողորմելի քեկորները մնացած էին հոս ու հոն ի թթիհատական կառավարութիւնը 1916 Յուլիս 19 թուակիր կանոնագրավ մը իրարու կը միացնէր Սոսյ և Աղթամարի Կաթողիկոսութիւններն ու Պոլսոյ և Երուսաղէմի Պատրիարքութիւնները, կրօնական կեղրոնավայր սահմանելով։ Երուսաղէմի վանքը, էջմիածնի հետ ամէն յարաքերութիւն պիտի խզուէր։ Խապայեան Սրբազնն կը նշանակուէր Կաթողիկոս Պատրիարք Օսմանցի Հայոց։

Այդ կանոնագիրը մեռեալ տառ մնաց անշուշտ։

Զօր. Ալէմպի 1918ին մտաւ Գաղեատին և Սուրբիաւ

Քիչ յետոյ՝ Կաթողիկոսը փութաց Կիլիկիա, ուր Ֆրանսացիք կ'ուզէին նոր Հայաստան մը կազմել մեր գաղթականներով։ Երեք տարին չի բոլորում՝ Հայ ու Հովիւ արդ Աւետեաց երկրէն գարձեալ հեռացան, գառնապէս յուստիսար։ Կաթողիկոսը վերջը հաստատուեցաւ Անթիլիաս, շուրջը հաւաքեց ձեռնհաս ուժեր, և հիմը դրաւ նոր Մայրավանքի մը որ այսօր կը պարունակէ եկեղեցի, Կաթողիկոսարան, վարժարան, տպարան եւայլն։

Սահակ Բ. վախճաննեցաւ իր Աթոռակից Բարգէն Ա. Էն եաքը, 1939ին։ Յայտ կարձանել եղաւ պաշտօնավարութիւնը վերջին, Պետրոս Սարանեանի, որուն կը յաջորդէ Գորեղին Արքեպոսկ։ Յովսէվինան։

Բախտաւոր է Սուրբոյ և Լիքանանի Հայ ժողովուրդը՝ տեղական կառավարութեան, Խոլոմ և Քրիստոնեայ բնակչութեան բարեացակամութիւնը վայելելով, և Հովուապետ ունենալով Հայ եկեղեցւոյ եղական զէմքերէն մին, — Հեղաբարոյ և ներուզամիտ, լեզուի և գրչի մագիստրոս, անխոնջ մշտիկ և անձնուրաց առաջնորդ։

Գորեղին Սրբազնն, զերազանցօրէն հայրենասէր՝ իր արտասահմանեան առաքելութեան առաջին օրէն ասղին եսորհրդայքին Միութեան և Հայաստանի համար խանդադատական զգացում հրահրեց անհնուրեք։

Նոյնպէս զերազանցօրէն կարդապահ՝ նա անզագուր քարոզեց Մայր Աթոռին նկատմամբ հաւասարիմ ու պատկառալից վերաբերում։ Ուրախ ենք որ այդ իրազութիւնները արժանապէս կը զնոհնատուին թէ Երեւանի և թէ Եջմիածնի մէջ, ինչպէս հաւասած էր Մերձաւոր Արեւելքի Հայրապետական Պատուիրակը՝ Փրոֆ. Աշոտ Արքանամեան։

Գարեգին Սրբազնն անշուշտ պիտի ցանկար ուղեւորի Հայաստան, և իրեն Տանն կիլիկիոյ Կաթողիկոս մասնակցիլ յառաջիկայ Համագումարին։ Եքեզ, սրտառուչ և խորհրդաւոր տեսարան մը պիտի պարզուէր ոյն օրը։

Նորաօծեալ Շնորհազարդ Հայրապետին կը մաղթենք երկար կեանք, որպէսզի Աղջը աւելի եւս օգտուի անոր հոգեկան և իմացական կարողութեանց անօպառ ազրիւրէն։

Եւ Ազգ բաելով կը հասկնանք նաև Հայութեան այլառաւան
հաստուածները: Անոնք ալ դաւակներն են միեւնոյն Հայրե-
նիքին, և ժառանգորդները միեւնոյն լեզուին և մշակոյթին,
և միեւնոյն Տնօքիքին: Անոնք ալ բերած են և կը բերեն
իրենց բաժինը, — ուզեղի, դրամի, և ի հարկին՝ արխանի
բաժինը — զանողութեան համազգային սեղանին: Անոնց հետ
համերաշխ գործակցութեան բարիքները տեսառեցան թիւր-
քիա, Եղիպատոս, Ամերիկա և այլուր: Համերաշխութիւնը
նոյնպէս արդիւնաւոր պիտի ըլլայ Սուրբոյ և Լիբանանի
շրջանակին մէջ որ կը պարունակէ Հայ-Կոթոլիկ և Հայ-Ա-
ւետարանական համայնքներ, երկուքն ալ ուժեղ և կենսա-
լից, երկուքն ալ հարուսա՝ հեղինակաւոր դէմքերով:

Տ. Դարեգին կաթողիկոսի նուրբ կենցազագիտութեան
շնորհիւ հոն ալ կրնայ սանդեկ և զգայրական քազցր մըթ-
նուորած մը, այնպէս՝ ինչպէս որ զայտացած էր երբեմն, Ներսէս
Վարժապետանի, Արքմեան Հայրիկի և Եղիշէ Դուրեանի
շունչին ներքեւ:

Խմբագրական «Հայաստանի Պալատի»
1945 Մարտ 31, թիւ 13 նիւթեար

ԱՅՐՈՂԻԿԱՍՏՐՈՒՆ ՀՈՂԻ ԳՆՄԱՆ ԹԱՐԵԲՈՐՈՒՀՄԻ ՆԱԽԱԳԻ Ն. Ա. ՕՇՈՒԹԵԱՆ

Հելլիոպոլիս 22 Մարտ 1945

Ամենապահիւ Արքազան Հայր,

Ա. Յարութեան յառաջիկայ Հրաշափոր Տօնը՝ եր-
ջանիկ տարիթ կուտայ նուաստիս՝ իր սրտաբուխ մաղթան-
քը յուզուած յարգանքով մատուցանելու վեհափառութեանդ,
հայցելով Բարձրեալէն՝ Ա. Ա. Պոռոյդ և առաքինառատ կաթո-
ղիկոսիդ թանկագին արեւուն անվասանդ ճանանչումը եր-
կար տարիներ: Հակառակ վեհափառիդ սրտագին քաջալե-
րանքին՝ խոր ցաւով կը յայտնեմ որ՝ առաջական աննպաստ
պայմաններս, տարիներու բնա մը, և մանաւանդ անփոխա-

բինելի ամուսնոյս՝ Ալիմոնի անդարձ մեկնումին դառնութիւնը կը հարկադրեն ինձ՝ զրկուիլ վեհափառիդ Ա. Օձումի նուիրական հանդիսութեան ականատեսի վայելքէն:

վեհափառիդ Հայրական օրհնութիւնները խնդրելով
և ժաղթելով ի համբոյր Ա. Աջոյդ:

Երևարն ազտիսին Զեր վշտուից՝
ՄԱԹԻԼՏ Ա. ԳԱՅՐԴՃԵՍԱՆ

«Համկ»
Մարտ-Մայիս 1945

Ա. ՇՆՈՐՀԱՉՈՂԻ ՅԵԱՌՆ Տ. Գարեգին Առաջին ՄՐԲԱՋԱՆ ԿԱԹՈՐԴԻԿՈՍ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՑ յԱնրիլիան

Վեհափառ Տէր,

Կարի տաժանազին եղեւ անձուկն յորում ժողովուրդն այս ակնկառոյց մնայր Զերում Գալստեան: Եւ այս յայն սակա զի ենաս ժամանակ — և այն չէ հեռի — յորդամ չորեքին Գահոյք Արրոյ Առաքելական եկեղեցւոյ Թափուր զտու ի տերանց իւրեանցն զերկոցունց Հայրապետութեանցն տաեմ և զգուարիարքութեանց: Էստ որում, Հայ ազգ որ ի սփրեռ աշխարհի՝ ոչ զիտէր յար ապաւէն դիմել առ ի բերելոյ ի ձեռս խուն ինչ սփոփանս բազմազիսի ցաւոց իւրոց:

Արդ զի բարեաւ ժամանեցէք յԱթոռն որ Զեղ սահմանեալն էք, բազումք են որ, թէպէ՛տ ազգային մարմինք թէպէ՛տ սոսկական անձինք, եկեղել առ Զեղ միսիթարութիւն խնդրեսցին յօրհնարաւշին Աջոյդ:

Թո՛յլ տուք և ի՞նձ միում ի խօնարհագոյն զաւակաց Զերոց՝ ի հանդէս ածել առաջի սրբոյ իշխանաւորիդ որ միանգամայն բժիշկ էք հոգւոց երաշխէով մի որ չարագոյն իմն թուի քան զայլու ամենայն զոր պատմելոցն են Զեղ:

Քանդի սա իրրեւ որդ մի շարտալից հանապազ ապականէ զողիս հայկական։ Ակնարկիմ յամօթապարտ ախտ վատառերութեան որով ժողովուրդն զոր եկիքդ ի հովուել, աբ-համարհանօք թողեալ զմայրենին իւր զքաղցրանունչ լեզու, նախամեծարութեամբ խօսի ի բարբառ ինչ օտար և տաժառալուր ականջացն մերազնէից։ Ախտն այս ազիտալի է յոյժ, վեհափա՛ռ Տէր, աղագաւ զի որք յինքեանս կրին զնա, ոչ միայն փոյթ յանձին չտանեն որբել զողիս ի նմանէ, այլ և յատուկ հոգածութեամբ յաւերժացուցանեն զնա իրբեւ յիշատակ ինչ սիրելի...

Բարէ՝ անմտութեան մերում, զի ուստի՞ կարէ գու սիրնլիութիւնն այդպիսոյ յիշատակի Յաւերակացն հայրենեա՞ց, եթէ յարենէ երիտասարդացն որք կամաւորապէս մարտիրոսացան զի մի՛ լքանեցին զՄեսրոպեանն պարզեւ։ Ի նահատակութենէ պարկեշտագեզ կուսանա՞ցն Հայոց որք յօմարեցան զետամոյն մեռանել սրբութեամբ՝ քան թէ զանձինս բռնձանել ի հեշտակենցաղ կանանցը այլազգեաց։ Եւ կամ արդիօք ի կոտորածէ Հայ մանկա՞նց որոց այնինչ սկսեալ թոթովել զմայրաւանդ բարբառն, խողխոզեցան մայրք հանդերձ։ Զի՞նչ պիտոյ է երկարցնել զչար աղետից որք հասինն ի վերայ մեր և զԱզզն շկօրակ արարին ի չուրիս կազմանս աշխարհի։ Եւ այս ամենայն ի ձեռն այնոցիկ որոց զարդիս մեքս պանծացուցանեմք զարիւնաթոր լեզու։ Այսպիսի վարք ոչ երբեք թուին լինել արդասիք բնական աղմանց, այլ արդիւն խօթացեալ մտաց։

Այս եւս քաջայայտ լինի Զեղ, վեհափա՛ռ Տէր, զի որք օտար բանին բարբառեն, չեն տմենեքեան անդէտք Հայկազնեան լեզույու։ Ստուարք իսկ են շարքն այնոցիկ որ վարժեալք են ի Հայ զպրութիւնս, ուստի եւ մարթ է նոցա խօսիլ առանց տաժանաց զմերս բարբառ, եթէ միայն կամք եղիցի նոցա։

Վեհափա՛ռ Տէր, ընդ ամենայն երամս Հայազգեացս որք ահա ժողովեալ կան շուրջ զգահիւդ, ընդունայն է դոյզն ինչ որոնել չօշափական որ մեր ի միտ ածէր զպատկեր առան Հայրենոյ։ — ո՛չ բաժակն այն կու է յոր տանուտէրն

ստէպ ըմպէր, ոչ ասեղն հանւոյն շողայր ի մէջ մատանց, ոչ ծուէն մի հանդերձից որ զմանկութեան մերոյ ցանկալի ուռուրս ի յուշ բերէր, և ոչ բռու մի ի նուիրական հողոյն որ զհանդիսա մեր քաղցրացուցանէր հուսկ յօթեւանի մերում։ Միայն եկն այն յիշատակ որ դեռ եւս զօդէ զսիրա մեր ի փառա Հայրենիս, այդ լեզու մերն է։ Եթէ զդա եւս կորուսանիցիմք, ազա ի՞ւ կեցցեմք յարտաքոյ Հայատանի։

Վասն որոյ աղաչեմ զԶեղ մի անփոյթ առնուլ։ — Եթէ բանիւ բերանոյ և եթէ գրով կամ այլով իմն յարմարաւոր հնարիւ — յորդորել զշառաւիզն Հայկայ հրաժարիլ յօտարոտի խօսից և զառնալ ի հարազատ բարբառն որ ի վերայ սեփհական մեծավայելլութիւնն իւրոյ ունի և զհամբաւ Աստուածախօս լինելոյ։

Աստուածն, ամենեւին պատշաճաւոր դատիմ ի մէջ ածել զոր ինչ ասաց Սուրբն Սահմակ ցարքայ Վռամշապուհ, յորժամ եմուտ առ թագաւորդ՝ հաւանեցուցանել զնա յուղեւորութիւն Մեսրոպայ ի խնդիր հայերէն նշանագրաց։

«Ճեպեա՛ յազագս մեծ և օգտարեր աշխարհիս Հայոց դիւտին այսորիկ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայսն բերէ քեզ շահ յիշատակաց անմռաց, և օգուտ երկնաւոր ովայելից՝ քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո»։

Քանիօն եւս բարեգէով իցէ զմեծին պատիւի մարդարէաշունչ խրախոյադ վերընծայել առ Զեղ որ ի պատառ նի ակաց անտի ետուք զանձն ի տոհմական բանասիրութեանն ի սպաս։ Ապաքէն չիք այլ խրատ կարեւորագոյն և առաւել արժանաւոր վեհիդ ձայնիւ քան զքարոզն Հայախօսութեան։

Այսոքիկ են եւեթ հայցուածք իմ ի Զէնջ, Վեհափա՛ռ Տէր։

Մատչելով ի համբոյր բազմերախօս Աջոյն Սրբազնագոյն Հօրդ Հոգեւորի։

Մնամ ամենախօնարհ որդի ԵղիսիԱրդ ՏԱՐԾՆԵԱՆ

(Ակօս)

Վիճակառ Շրուայի մեջ

Ամսոյն 24ին, Ապրիլ, ուրբաթ, առառ ժամը 8,30ին, դէպի Դամմանկաս իր ճամբարդութեան վրայ Շթօրա, Օթէլ Մասապքի կանգ առաւ Վեհափառ Կաթողիկոսը ընկերակցութեամբ Խաղ Սրբազնի և ձեզիրէի Առաջն փոխ կորու վարդապետի Վեհափառը պաշտօնապէս ընդունելու համար ներած էին, Պէքառյի կառավարիչ Պ. Պշուր Հատական և լիօթնան Շամմուն, իսկ ժանտարմաներու ջոկատ մը զինուարական բարեւի կեցած էր Շթօրայի Սիսուան և Բաղարական վարժարաններուն աշակերտութիւնը ներկայ էր, ներկայ էին նուև Վեր. Յկ. Շնորհօքեան և ուսուցիչ կ. Գրգեաչպրեան:

Պ. Պ. Գուտառւեան ի դիմաց զիւղիս կարդաց բարի գոլուասի ուղերձ մը:

Կանխաւ, 25 հոգինոց նախաճաշի սեղան մը պատրաստած էր Օթէլ Մասապքի տիրոջ կողմէ ի պատիւ Վեհափառին և հանւարդներուն, պանդոկի սքանչելի պարակին մէջ: Սեղանակից էին, կառավարիչը, Պ. Շամման, Վեր. Շնորհօքեան, Յ. Յովակիմեան, Տօքթ. Կէօնճեան և ներկայ Եղիպատահայերը,

Պանդոկին տէրը ուղերձ մը կարդաց:

Եղիպատահայ ազգայիններէն Պ. կ. Սարըեան, կրկին ողեւարուան Վեհափառէն խնդրեց, իր էջմիածին երթալուն հազարդել ի նպաստ էջմիածնի ձեմարանին տարեկան 50 եղիպատահան ուկի նուիրելու իր խոստումը:

Վեհափառը ուրախ տպաւորութեան տակ բաժնուեցու ներկաներէն:

աԶարթօնք*

29 Ապրիլ 1945 Արքութ

Այնարի Հայութեան

ՅԱՐԴԱՆՔԸ ՎԵԶ ԿԱՐԱՎԱՐՈՒՄԻՆ

Ուրբաթ օր, ամսոյս 20ին, 1945, առառանց ժամը 7ին, Շթօրայէն հեռածայնով կ'իմացնէին մեզի վեհափառին Դամասկոս մեկնումի մասին։ Աւետարեր լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ հիւղանի մէջ։ Խանդավառութեան և ուրախութեան յորդանս ալիք մընէ որ ծայր տուաւ գիւղաքաղաքին մէկ ծայրէն միւսը։ Ամէն ոք կը տենչար տեսնել Մհեմի Տանն Կիլիկիոյ Արքազան Դահակալը։

Աղջ. վարժարանի երկան աշտակերտութիւնն ու ուսուցչական կազմը, անմիջապէս փութացին դէպի Դամասկոս տանող խճուղին, ու կանգ առին Այնձարի մռատքի ձահնապարհին վրայ։

Քիչ յետոյ հասան նաև Հայ Աւետարանական և Հայ Կաթոլիկ վարժարաններու երկան աշտակերտութիւնն ու ուսուցիչները, իրենց հոգեւոր հովիւներով՝ յանձին՝ վեր, Արամ Հատիտանի և Հայր Սարգիս Հալածեանի։ Հոն էր Մայր Ակեղեցւոյ քահանայից գասը՝ յանձին Տ. Մարկոս Քնյ. Երէցեանի և Վահան Քնյ. Քէնտիրմեանի։ Խնչոյն նաև Օգնութեան ելաչի Վարչութիւնը, քաղաքագեատութիւնը, մռախթարներն ու թղկ. Առընուրդը։ Դիմաւարողներու շարքը՝ երկար ժապաւէնի մը պէս կ'երկարէր հիւղանին մինչև խճուղի։ Ու երթալով կ'ստուարանար ժողովուրդին թիւը։

Հակառակ անոր որ մետասաներորդ ժամուն բարի լուրը հազարդուած էր մեզի, նորէն հազարէն շատ վեր բազմութիւն մը փութացուծ էր դիմաւարութեան, իրենց որդիական յարգանքը ընծայելու Ն. Ս. Օծութեան, այդ տաղանդաւոր, հանձարեզ, Մհեմ Ակեղեցականին ու Հոդ. Հօր։ Ժողովուրդին խանդավառութիւնը աննկարագրելի էր։ Ժա-

մը 10ին հասաւ վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Խաղ Արքազանի, և Հայր Խորէն Բարոյեանի ու քառ նի մը աղգայիններու: Այդ պահուն բովանդակ աշակերտաթիւնն ու ժողովուրդը ծափահարեցին անվերջ: «Բարով եկա՞ր Հայր պատուական» աղազակներ սկսան ծայր տալ: Դամասկոս-Պէյրութ երթեւեկը գոհ մը դադար տառ: Ազգ գարժարանի ազաքը «պատուոյ բարեւ»ի կեցան: Որմէ յետոյ Մայր վարժարանի աշակերտաւհները երգեցին «Երրոր բացուին զաներն յաւսոյ» երգը:

Աշակերտունի մը՝ գեղեցիկ ծաղկեփունջ մը մատոյց Ն. Վեհափառութեան, երկուս աշակերտաւթեան կողմէ: Ապա Աշահամբոյրի արարողութիւն: Որմէ յետոյ, Վեհափառ Հայրական քանի մը յորդորներ ըրաւ, ապա օրհնեց աշակերտութիւնն ու ժողովուրդը Յետոյ նստան ինքնաշարժին մէջ ու ուզուեցան դէպի Դամասկոս:

Ժողովուրդը, արձանացած գիրքի մէջ, երկարօրէն նայեցան ինքնաշարժներու ետևէն, մինչեւ որ անոնք անհետացան մեր ահսոզութեան հորիզոնէն:

Յ. Գ. ՊՈՒՐՍԱԼԵԱՆ

«Ազգակ»

26 Ապրիլ 1945 Պէյրութ

ՄԵՆԻ ՅԱՆՆ ԿԻԼԻԿԻԱՅՑ

S. S. Գարեգին Ա. Կարողիկոս

ՍՈՒՐԲԱԿԱՆ ԳԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Եղիպատուէն, Երաւագեմէն և Պէյրութէն յետոյ, Դամասկոսի հայութիւնն ու երկու օրէ ի վեր կ'ապրի աւանդական ուրախութեան մը օրերը, իր մէջ անհնալով նորած վեհափառ կաթողիկոսն ու Հայ եկեղեցւոյ խումբ մը պետերը:

Վեհափառ Հայրապետը, իր հետ ունենալով Գեր. Տ. Խաղ Արքազանը և ձեզիրէի Առաջն. փոխ. Հաղ. Խորէն

Վ. Բարոյեանը, Անթիլիասէն ճամբայ ելաւ ուրբաթ առաջ տառ ժամը 7,30ին ժամը 9ին, Եթօրայի մէջ, Հայ Առաքելական և Հայ Բողոքական համայնքներու զաւակները, դպրոցներու աշակերտութիւնը և ուսուցիչները խանդավագ առյցերով ընդունեցին Վեհափառը, և միարեան երգեցին «Յանկամ անսնել զիմ Կիլիկիա»։ Վեհափառը օրհնելէ յետոյ դիմաւորող ժողովուրդը, զնաց Մասագի մեծ պանդիրը, ուր Եղիպատահայերը իրեն ի պատիւ պատրաստու էին նախանձաշի սեղան մը։

Ապա, Վեհափառը իր ճամբուն վրայ հանդիպեցաւ Այնար։ Ամբողջ ժողովուրդը ծափերով և հրճուանքի ազադակներով ընդունեց զինք։ Վեհափառը հետիւան պատեցաւ զիւղին մէջ, և օրհնեց իր շուրջը համախմբուած դազթականները։

Վեհափառը, Սուրիոյ սահմանագլուխը հասաւ ժամը 9,25ին։ Սուրիոյ կոռափարութեան անունով, Ժանասրմբ-ըի զնդապետ Հրանդ Մալոյեան դիմաւորեց զինք։ Մինչեւ սահմանագլուխ դիմաւորելու եկած էին նաև Դամակոսի թեմին Կոթ, Փոխ, Գեր, Տ. Եփրեմ Ա. Արքեպիսկոպոս Տահմունի, Երևափիստան՝ Նազարէթ պէտ Եպուապետն և Առաջնորդարանի Բրօթօքուի ներկայացուցիչներ։

Դամակոսի մերձակայքը, Տումար զիւղին մէջ, Վեհափառը ընդունուեցաւ Սուրիական կոռափարութեան ներկայացուցիչ և վարչապետարանի դիմանապետ Տ. Հաննամի, ազգային իշխանութիւններուն, կուռակցութեանց ներկայացուցիչներուն և քաղաքէն եկած մեծ թիւով ազգայիններու կողմէ։ Փոքր պահ մը հանդաստանալէ յետոյ Տումարի պարաէզներէն մէկուն մէջ, Վեհափառը ճամբայ ելու ամբողջ շքախումբով, որ կը բազկանար մօտ 150 ինքնաշարժներէ։

Դամակոս մուտքին, «Պարտաւ» պողոտային վրայ, թափօրը անցաւ Սալհի թազի Հայ վարժարաններու աշակերտաներուն և ժողովուրդին կազմած շղթային մէջէն և ուղղուեցաւ Պապ-Եպուարքի, մօթօսիքլիթաւոր ոստիկաններու առաջնորդութեամբ։ Պապ-Եպուարքի թազին մէջ, Ա. Սար-

զիս և կեղեցի տանող ձամբաները զարդարուած էին բազմաթիւ կամարներով և գետինը ծածկուած էր մինչև Առաջնորդարանի դահլիճը՝ զորգերով:

Պատ Շարքիի խանութանները, գլխաւորութեամբ Պ. Նազարէթ Գրբաննեանի, կանգնած էին յաղթանակի մասնուոր կամարներ: Հ. Ե. Բ. Ի. և Հ. Մ. Լ. Մ. ի սկառաւուներն ու երիտասարդները շարուած էին անցքին ամրագչ երկայնքին և կը հակէին կարգապահութեան: Ամբողջ դամասկոսի հայութիւնը հաւաքուած էր հոն:

Առաջնորդարանի դրան առջե, Պ. Յակոբ էսկիժեան ծունկի եկաւ և յուզուած համբուրեց վեհափառին ոտքերը, Հայ մը՝ որ Պատ-Շարքիի յաղթական կամարները կանգնելու և կարգադիրի այլ զործերուն հակած էր:

Վեհափառը եկեղեցի առաջնորդուեցաւ «Հրաշափուազով» կարծ և իմաստալից քորոզ մը, ան օրէնքց ժողովուրդը և չնորհակարութիւն յոյանեց իրեն հանգէպ ցոյց արուած յարգանքին համար:

Այսուհետեւ, Առաջնորդարանի դահլիճին մէջ, մեծ ու փոքր բոլոր ազգայինները առզանցեցին վեհափառին առջեւէն և համբուրեցին անոր Ս. Աջը:

Հաւկեւոյինեւ.

Բրօթօքոլի յանձնախումբին կարգադրութեամբ Վեհափառին ամբողջ անւոզութեան, օրական երկու անգամ պիտի արուեն ձաշկերոյթներ, որոնց պիտի կրնան մասնակցիլ վեհափառին սեղանակից ըլլալ փափաքող բոլոր ազգայինները:

Առաջին ձաշկերոյթը անդի ունեցաւ ուրբաթ կէսօրին: Ներկայ եղան վեհափառը, Խաղ և Եփրեմ Արքազանները, Տ. Զարեհ և Տ. Խորէն վարդապետները, Սուրբոյ Խորհրդարանի անդամներէն ՊՊ. Ետպուղեան պէտ, Մ. Սուրբեան, գնդապետ Հ. Մալոյեան, Քաջաք, և Գաւառ, Ժողովներու Առաջնորդականները, չորս Հայ կուսակցութեանց ներկայացուցիչները, «Զարթօնք»ի խմբագիր Պ. Գրիգոր Գէրէրէնեան, որ յատկապէս եկած էր Պէյրութէն:

Ճաշկերոյթի ընթացքին բաժանվածուեր արտասահմացին վեհափառը, աղջային մարմիններու և կուսակցութիւններու ներկայացուցիչները: Վեհափառը բաժակը առաջարկեց հնամեայ Դամակոս քաղաքին, Առքիական ժողովուրդին և կառավարութեան բարօրութեան համար: Ռամէկավար Ազատական կուսակցութեան կողմէ Պ. Միհրան Տէր Ստեփանեան արտասահմաց հետեւեալ բաժանմառը:

Վեհափառ Տէր:

Աշխարհի և Արեւելքի ամենառին և պատմոկան այս ժայրաքաղաքին մէջ ուր տակաւին կը յածի Ս. Պողոսի շունչը և վահան Գողթնացիի առուելը, թոյլ առէք որ յանուն Ռ. Ա. կուսակցութեան այսուզի մարմինին, բարիգալուստ մազթեմ Աշխարհի և Արեւելքի ամենառին մէկ ազգին և անոր նոյնքան դարաւոր եկեղեցւոյն արժանքները պետիգ:

«Նոր Գիրշի մէջ կարդացինք որ դուք սարիներ առաջ Արագածի գագաթն էք ելած փնտուելու Լուսաւորիչի կոնթեղը (*): Գտած էք այդ կանթեղը: Գտած էք այդ

(*) Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդ և այժմ Մօծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոս բնուրած Փեր. Տ. Գարեգին Ս. Արքապիսկոպոս Յովանիկեանցի «Արագածի զաղարին ի խնդիր Լուսաւորչի Կանքեղին» ընդառնութեամբ մաս մը:

«Տեսել եմ աւխարհի մի կարեւոր մասը, տեսել եմ բբնուրեան բազմատեսակ զեղեցկութիւններ, եկեմաներ լեռները, անդնդախոր ձուեր՝ Տիրոյի և Զուիցերիայի սահմաններում տարածութեամբ հարբավայրեր և դաշտեր Ռուսաստանում, տեսել եմ նեղոսի աճապատային և խորնդաւոր նողերը Լուսորի և Կարճակի մօս, նիազարայի ջրվեժը Ֆինլանդիայի Խմաղրան, Կայիթութիւնի Խորամէերին իւր զեղեցկութիւնների համադրութեամբ, հազարաւոր տարիների ծառերով անտառները, նիացել եւ սահնացել նրանցով... Բայց ոչ մեկը նրանցից չի կարող համեմատուել եւ չափուել Արա-

կանթեղը և անոր լոյսէն ամբարած Զեր հոգւոյն և սրտին
մէջ և բաշխած նոսի հայրենիքին մէջ, յետոյ որպէս Նուի-
րոկ Սփիւռքի, ապա որպէս Առաջնորդ Ամերիկայի, և
հուսկ ուրեմն որպէս գահակալ Մեծի Տանն կիլիկիոյ կա-
թողիկոսութեան՝ կը չարունակէք բաշխել զայն; Կը յու-
սանք մենք ալ ընդունիլ ատկէ մեր բաժինը:

Մենք մեծ ակընկալութիւններ ունինք: Այդ ակըն-
կալութիւններուն համար կը մազթենք որ չատերը իրա-
կանանան Զեր վեհափառութեան գահակալութեան ընթաց-
քին, որովհետեւ երկունքներով յդի պատմական ժամանա-
կաշրջանը որուն մէջ կ'ապրինք թոյլ կուտան որ մենք
անուցանենք այդ յոյսը: Այդ ակնկալութիւնները նոսի հայ-
րենիքի և Հայրապետութեանց մեծութեան համար և յետոյ
Սփիւռքի համար, որուն կը յուսանք թէ դուք կ'ըլլաք
Նոր Մովսէսը առաջնորդելու համար մինչև աւետեաց եր-
կիրք:

Արդարեւ, այսօր կէս գիշերէն յետոյ ժամը 2ին Ա-
Միութեան բոլոր թերթերուն իր մատնուոր ձայնափուռմի
ընթացքին, Մոսկուոյի ռատիօն-ժանոյց որ, Մեծ Մարտ-
իսիս Աթալին ընդունեց համայն Հայոց Հայրապետի Տե-
ղակալ Նորին Ամենապատուութիւն Գէորգ Արքեպիսկոպոս
Զէօրէքճեանը, որուն հետ երկարօրէն խօսակցեցաւ Հայ ե-
կեղեցւոյ գործերուն շուրջ:

(Խանողավառ ծափանարութիւններ, գլխաւորութեամբ
վեհափառին):

Զեր ժամանումէն ասդին, դուք, վեհափառ, առարկայ

բատեան նարբորինից դէսի երկինքը բարձրացող սպիտակա-
փառ զազարով Արարատի զեղեցկուրեան նէ՞ Արազածի
կատարից դիտելով:

Հայրենիքի սկզ ու կարօք, անընէւս սրբազն եւ
խորհրդաւոր են զարձնում նորա պատկեր յիշողութեան մէջ,
բայց դորան ալ, իրօ, նա զերազանցօրէն զեղեցիկ է եւ նմայիչ»:
«Նմի Գիր»

Կ ԱԱԱՔ Զեր հօտին և այլոց սիրոյ և յարգանքի արտա-
յայտութիւններուն։ Հպարտ կը զզանք մնենք զմենզ։ Պիտի
սիրէինք սակայն որ ընդունելութեանց խանդավառ և տա-
րբնատասեան խարոյիններէն յետոյ, բաւական մը կրակ
մնար տաքցնելու համար Զերդ վեհափառութեան ազգային
և մշակութային առաջադրութիւնները։

Կը յուսանք թէ այս ժաղավորդը պիտի դիտնայ այդ
«բաւական մը կրակը» տրամադրել Զեզի։

Այս յոյսով կը վերցնեմ զաւոթս Զերդ վեհափա-
ռութեան արեւշատութեան համար։

Շատ լաւ տրամադրուած էր վեհափառը, և բա-
ղոքեց, երբ բաժականափ մը ընթացքին «ծերունազարդ»
բառը գործածուեցաւ իր մտափն։ «Եւ, ըստ վեհափառը,
կարծուածին չափ ծերունազարդ չեմ, որովհետեւ հաշուելով
եկեղեցականի մը կեանքին բնականոն տեսզութեան վրայ,
տակաւին 12 տարուան կեանք ունիմ զոնէ։

Այցելութիւններ

Սուրբական կառավարութեան կողմէ տրամադրուած
քոմիտէր մը և սոտիկան մը տեւապէս ընկերացան վեհա-
փառին, իր անձին հազ տանելու մինչեւ իրեն մեկնումը
Դամասկոսէն։

Ուրբաթ կէսօրէ յետոյ, Առաջնորդարանի դահլիճին
մէջ, վեհափառը ընդունեց օտար և Հայ բազմաթիւ այցե-
լուներ։ Օտարներու մէջ աչքի կը զարնէին Յայն-Օրթո-
սոքս պատրիարքի փախանորդ եպիսկոպոսը, Յիսուսնան-
ներու ներկայացուցիչ երկու վարդապետներ, Մարոնի և
Սուրբան-կաթոլիկ եպիսկոպոսները, երեսփոխան Պ. Փորժ
Սևանափ, «Ելիֆ-Գայ» և «Լէզ» կքօ» թերթերուն անօրէնները
և այլն։ Ազգային շրջանակէն վեհափառին բարիգալուստի
այցելութիւն տուին, Հ. Ե. Բ. ի երիտասարդները, երիտա-
սարդուհիները և արիները, ինչպէս նաև Ռոմեկառվար Աղա-
տական, Համայնապար և Հնչակեան կուսակցութեանց ներ-
կայացուցիչները, վեհափառը թելագրեց ամէն նկատումէ
վեր դասել ազգին ընդհանուր շահը։

Շաբաթ առառու ժամը 10.30ին, 11ին և 11.30ին, վեհափառը իր հետեւորդներով, պաշտօնական այցելութիւններ առանաւ յաջորդարար Սուրբոյ խորհրդարանի Նախագահն Պ. Շապրիի, Հանրապետութեան Նախագահն Ն. Վ. Շիրքրի Բուաթլիի, Արտաքին Գործոց Նախարար ու Վարչապետի փոխանորդ Ճեմի Պէյ Մարտամի:

Երեք պաշտօնաաեղիներու մուտքին առջեւ վեհափառը ընդունուեցաւ զինուորական պատիւներով:

Կիրակի օր, Սուրբոյ Հանրապետութեան Նախագահը, Խորհրդարանի Նախագահն ու Վարչապետի փոխանորդը փախարձ այցելութիւնն առանձ Վեհափառին, Ազգ. Առաջնորդանի մէջ:

Երեսւշտրթի օր Վեհափառը վերադարձաւ Անթիլիսս:
«Զարթօնք»

Ապրիլ 24., 25., 26. 1945 Պէյրոք

Վեհափառը Դամակերպի մէջ (ՄԱՆՐԱՄԱՄՆՈՒԹԻՒՆՔ)

Դամականի արուարձաններէն Տումմարի պարտէզներէն մէկուն մէջ եղած առանձնը Վեհափառը կ'ըսէ. —

«Այս պարտէզները և ջուրը ցոյց կուտան որ երկիրը շատ զեղեցիկ է և անփես նշան է որ, այս երկրի՝ ժողովուրդըն ու զեղեցիկ է ու աշխատաւէր» Եւ յայտարարելով ներկայ Հայ հասարակութեանը կը կրկնէ, եղէք միշտ օրինապահ քաղաքացիներ այս երկրին, շնորհակալ եմ ինձի համար եղած այս ընդունելութենէն. կեցցէ՛ Սուրբոյ ժողովուրդը և անոր նախագահն՝ Շիրքրի Պէյ Քուլէթլին, կեցցէ՛ Հայ ժողովուրդը:

Վեհափառը Սուրբոյ պետական գէմքերուն այցելութիւնն առանձ միջոցին, երբար շնորհակալութիւնն կը յայտնէ անոնց, պետական երեք միծ գէմքերը՝ Խորհրդարանի Նախագահն Աստամալլա պէյ Շապրի, Հանրապետութեան Նա-

Խագահ Շիւքրի պէյ Քուվէթլի, Փոխ Վարչապետ՝ ձէմիլ
պէյ Մէրտէմ, կը պատասխանեն Հմենք գոհ ենք Հայերէն,
անոնք լուրջ և պարկեցա բաղաքացիներն են այս երկրին,
շատ է տառապած Հայը, և մանք կը հասկնանք անոնց ցաւ-
ը, որովհետեւ Սուրբացի ժողովուրդն այ տառապած է, և
անոր համար է որ կը սիրենք Հայ ժողովուրդը:

Վեհափառը կը մազթէ որ, վերջապէս ազատութիւնը
վերագտնէ, երբեմնի քաղաքակրթութեան, քաղաքական և
պետական այս կեղրոնք ծաղկի, բարդաւաճի ու հասնի իր
հին փառքի օրերուն:

Փոխ Վարչապետ՝ ձէմիլ Մէրտէմ պէյ, իր բնակա-
րանին մէջ Վեհափառին ի պատիւ առւած ճաշկերոյթին
միջոցին, Վեհափառին կուրծքէն կը կախէ Սուրբական կա-
ռավարութեան Ա. կարգի պատուանշանը և ներկայացնելով
վկայագիրը, կ'ըսէ.

«Այս վկայագիրը կառավարութեանս Զեզի հանդէպ
ունեցած վստահութեան մէկ արտայայտութիւնն է:»

Վեհափառը զգածուած՝ շես մէկ նոր քաղաքացին
այս երկրին, ծառայութիւն մը չեմ մասուցած, այս պատ-
ռանշանը ոչ թէ իմ, այլ ժողովուրդիս կուրծքին է որ կը
զարդարէ, և ես կը խօսատնամ, որ ես և իմ ժողովուրդս
պիսի մեանք օրինապահ քաղաքացիներ երկրին և մեր
կարելին պիտի ընենք, անոր յառաջդիմութեան համար:»
Իրիկուան ճաշկերոյթին, Վեհափառը մօս բառառուն
հինգ վայրկեան խօսեցաւ ներկուներուն: —

«Դուք Սուրբահայերդ բախտաւոր էք, կը վայելէք
այս երկրի քաղաքացիի լիակատար իրաւունքները, ունիք
դպրոց և եկեղեցի, որոնք միակ ազգակներն են գաղթաշ-
խարհի մէջ մեր գոյութեան պահպանման, հակառակ ասոր
տակաւին թրքախօսներ կան ձեր մէջ:»

Շատ մը ազգեր այսօր պատմութեան մէջ միայն կը
յիշուին, իսկ մենք գոյութիւն ունինք ու կ'ապրինք: Ազ-
գերը կը տեւեն, կ'ապրին, երբ հաւատք ու գաղափար ու-
նին, ձգտում ապրելու, տեւելու: Տէր ըլլանք մեր մայրենի
լեզուին և մեր գեղեցիկ մշակոյթին: Մոռնանք սպառող

մանր վէճերը, որովհետեւ շատ մեծ ու նուիրակոն գործ մը
ունինք՝ ազգապահպանում։ Ես տարիքով ձեր ևմ, բայց հո-
դիով չուտ ևմ երիտասարդ։ Մեծ պարագանութիւն մըն է
տրուած ինձի ձեր կողմէ, և ես այս գործին համար պէտք
ունիմ ձեր բոլորին աջակցութեան, պիտի բախեմ բոլորիդ
գուները։ Անթիյիասը պէտք է դառնայ մշակոյթի կեղրոն,
պէտք է պատրաստաննք նուիրուած, ուսումնատենչ ու գի-
տակից հոգեւորականներ և կրթական մշակներ, որոնց պա-
կասը շատ է զգալի գաղթաշխարհի մէջ։ Այս պիտի ըլլայ
իմ՝ զիսաւոր գործը, որը կը կարօտի ձեր իւրաքանչիւրի
աջակցութեան։

ԹՂԹԱԿԻՑ

«Ազգական Շարաթօրեակ
4 Մայիս 1945 Գլուխ

— 6 —

Վեհափառ Հայրապետ

ՍՈՒՐԵՆԻԱՆ Ա. Ա. ԶԻՒՆԻ ԿՈՐԿԻ ՊԱՅՈՒԽՆԵԱՆ
ԿԸ ՍՏԱՆԱՑ

Անցած կիրակի օր, Առորիոյ Արտաքին Գործոց նա-
խարար, Ն. Վ. Ճէմիլ Մէրտէմ պէյ ճաշկերոյթ մը տուած
է, որուն ընթացքին Ն. Ս. Օծութեան յանձնած է՝ Առորիա-
կան կառավարութեան կողմէ շնորհնաւած Սուրբական Ա.
Կարգի պատուանշանը։

Լ'Օրիան իր թիւերէն մէկուն մէջ կը զրէ թէ Սուրբոյ
Հանրապետութեան Նախագահը Օմայտաներու մեծ պատ-
ուանշանը տուած է վեհափառ Յայտէփեան Կաթողիկոսին։
Այս առթիւ, կ'ըսէ թերթը, Արտօքին նախարար փոխ-վար-
չապետ Ճէմիլ Մէրտէմ պէյ ճաշկերոյթ մը տուած է։ Իսկ
լը Փուր կը զրէ թէ Կաթողիկոսը բազմաթիւ եպիսկոպո-
ներէ և 7 պատգամաւորներէ բազկացած պատուիրակու-
թեան մը զլուխը՝ պիտի մենքնի Հայուստան, մասնակցելու
համար եկեղեցական համազումարին։

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

الْمُؤْمِنُونَ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ الْعَمَّاْزَةَ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ الْمُؤْمِنُونَ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ



بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

Վեհափառը երէկ երեքշաբթի 24 Ապրիլ, ժամը 10,30-ին, պաշտօնական այցելութիւն տուաւ Մարտնի Պատրիարք՝ Ամենապատիւ Արքային, որ սիրալիր ընդունելութիւն մը ցոյց տուաւ: Վեհափառին է՛ընկերանային Գեր. Խաղ և Արտառազդ Սրբազնները, Հայր Դերենիկ և Տօքթ. Թապուրեան:

Վեհափառ Հայրապետին ԱՌԵՋԻՆ ՊԱՅԱՐՈԳԻՆ Ի ԼՈՒՐ

Անցեալ Կիրակի, 29 Ապրիլ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայր եկեղեցին, Անթիլիսոսի կանաչագարդ ու բուրումաւէտ պուրակներուն վրայ հակող Ս. Գրիգոր Լուսուորիչ Տաճարը, Կրկին խորհուրդներով լեցուեցաւ: Մեծի Տանն Կիլիկիոյ առաքբինապարդ Հայրապետը՝ Տ. Տ. Գորեգին Ա. Կաթողիկոս, իր առաջին պատարազը մասոյց այն օր, Տաճարին ներսն ու արտաքին բակը լիցնող հաւատացեալ ժողովուրդին համար:

Խորհուրդ մըն էր այս պատարազը, նման Յիսուսի պատարագին: Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արտատնկեալ Աթոռին արժանքնատիր Գանձակալը, իր այս առաջին պատարազով, յայս և հաւատ կը ներշնչէր իր Հօտին: Եւ Հօտը միսիթարուած կը զգար ինքինքը, տեսնելով վերջապէս իր Հովուապետը, մական ի ձեռին, ժամանակարին բայց վըճռակամ, Ս. Անդանին առջեւ ազօթքով ու Կաթողիկոսարանին մէջ ալ բարեւք աշխատանքով ու զօրծով պաշտպանելու և զեկագագարելու այս երկինքներու ներքեւ ցիրուցան ինկած բնկորները տառապակով Ազգին Հայոց:

Երկրորդ խորհուրդը՝ որ կը լեցնէր այն օր Տաճարն ու շրջափակը, կը բղխէր Նահատակաց Յուշարձանէն: Աներեւոյթ հագիները Ապրիլեան Եղեռնի զոհերուն, կարծես կը սաւառնէին խունկի դուրսներուն ընդելոյզ, ազօթքով ու

Հերմեռանդութեամբ ակազձուն մինուրատին մէջ։ Անոնք ալ ուխտի նկած էին կարծես այն օր, լսելու համար Շնորհազարդ Հայրապետին Սրբազնն քարոզը, որուն բառերը, հատիկ հատիկ, Ս. Անգանէն կը թուէին ու գիտութեան անտեսանելի խողովակէն անցնելով, կուզային թանելու շըրջափակին մէջ երկիւղածօրէն ունինդրով ժողովուրդին ականջներուն մէջ աւետարեր ազաւնիներուն նման։

Սքանչելի, զերազանցօրէն ներշնչեալ ու ներշնչող, հոգերուխ ու հոգեշունչ քարոզը, զոր խօսեաւ վեհափառ Հայրապետը, վասահ ևմ որ շատերուն յիշեցուց Հոգելոյս այն միւս Հայրապետները՝ որոնք Սույ մայրապանքին տեղ Անթիլիստի սա տաճարը կանոննեցին ու անոր շուքին ունեցան «Ափ մը հողը» իրրեւ վերջին հանգատարան։

— Երուսաղէմ, Երուսաղէմ, թէ մոռնամ ևս զքեզ, թո՞ղ ստոչի ուղեղոս զանկին մէջ, թո՞ղ անշարժանան անդամներն իմ . . . :

Եզեկիէլ մարգարէին արդ բառերը, Մեծի Տանն կիւղեկիէլ մարգարէին արդ բառերը, Մուսավանդին առ կաթողիկոսութեան Հովուապետին ըերնին մէջ, Ազրիկեան Սպատանին ասիթով, աւելի իմաստալից կը դառնային ու խորարժատ կարձանագրուէին հոգիներէն ներս։ Ոչ, կարելի չէ մոռնալ չարիքը, զոր զործել ուղեց թշնամին Հայ ազգին հանդէպ։ Բայց՝
«Օրհնեացի և պահպանեցի զՀանրապետութիւն և Հայրապետութիւն Հայոց»։

Յաւարա պատարագին, որուն խորհուրդը կը խորունկնար առաւել եւո, երաժառարդ երաժիշտ Պ. ՀրանդԳէորգեանի զեկազարուծ երդչախումբին ներդաշնակ երգեցողութեամբ, երբ Հոգեհնագիսուր կատարուեցաւ Յուշարաձանին առջեւ, ու վեհափառ, ամրոզջ պատարագի տեւողութեամբ, երբ Հոգեհնագիսուր կատարուեցաւ Յուշարձանին առջեւ, ու վեհափառ, ամրոզջ պատարագի տեւողութեամբ, սպասարկող Տ. Տ. Խաղ. ու Արտաւազդ Սրբազններու միջեւ կանգնած արտասահեցՀոգեւոցն հանգուցելոց»ը, զգացի թէ շրմներս կը մրմնչէին լուսօրէն։
«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քանչարժ պահեա»։

«Զարթօնք»
Մայիս 6 1945 Գլյուք

Վեհին Քարոզը Նախաւակաց Solihisi

(ՄՈՏԱՒՈՐ ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ)

«Այսպէս առ Տէր. Տէր ցովկեւսդ ցայդոսիկ, ահաւասիկ ես ածեմ ի վերայ ձեր ունց կինդանի: Եւ ասց ձեզ զիդս, եւ ածեց ի վերայ ձեր մարմինս, եւ ձգեցից ի վերայ ձեր մորը, եւ ասց զոդի իմ ի ձեզ եւ լինիցիք կինդանիք»:

ԵԶԵԿ. ԱՀ. 5-6

Ա.

Եղեկիէլ մէկն էր Բարելոցւց զիտութեան ժամանակի մեծ մարգարէներից և աւետառորը Ճողովուրդի ազատութեանն Բարելոցւց զիտութիւնը 586 թուին Ք. Ա. Խարայէլի ժողովուրդի քաղաքական անկման վերջարանն էր: Բարելոցիք նուածել էին երաւազէմը, զերել Սեպեկիս թագաւորին, սպանել արքայորդիներին հօր առաջ, ինչպէս և իշխաններից շատերին, իրեն էլ կուրացրել, և շղթայակապ Բարելոն ասրել նորա հետ՝ կենդանի մնացածների կարեւարագոյն մասը: Քանզիէլ էին որքայական սպարանքները, Երաւասզէմի Տաճարն ու պարիսպները, կողապանել Տաճարի կահն ու հարստութիւնը: Քաղաքում և երկրում մնացել էին միայն աղքատներ և ժողովրդի սոսրին դասի հատուածներ, «սինլըքորներ», ինչպէս առուած է Երեմիոյի մարգարէութեան Մէջ (Երեմ. ԺԲ.) մնացածներն էլ երկպատակուած ներքին հակամարտութիւններով այս կամ այն զօրովարի առաջնորդութեամբ: Մի մասն էլ առանց լոելու ժամանակի մեծ Երեմիս մարգարէի յորգորներին, սազիպտու էին անցած... Ամենամեծ թշուառութիւնը, սառ կարող էր, եկել էր Յուղայի ժողովրդի դիմին:

* *

Բայց աքսորի և գերութեան մէջ սթափուել էր ճողովուրդը և հայրենաբազմ զգացմունքը գլուխ բարձրացրել նորա հոգու մէջ։ Այս ժամանակից են հայրենաշունչ և հայրենատենչ որոշ Սազմաններ, նեղեալ, բայց հաւատարիմ սրանքից բղիպա երգումներ և ոխտեր գէպի երուսաղեմը, գէպի հայրենիք երկիրն ու նորա որբութիւնները։ Այդպիսիների մէջ ամենից յայտնին ձլջ. — (136րդ) Սազմոնն է։

Բարելոնի գետերի ափերին նստած, լալիս է խարացելի ժողովուրդը, և տենչում գէպի Սիրնը, ուռենիների մէջ կախած իրենց «կտակարանները»։ Տեղական բնակիչները, «գերեվարները» ստիպում էին նրանց օրհնութեան խօսքեր երգել, զուցէ և մասամբ հեղնութեամբ։ «իսկ զիա՞րդ օրն նեղութ զօրնութիւնն Տեսան յերկիր օտարը եթէ մոռացոյց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս աջիմ, կցեսցի լեզուիմ իմ ի քիմս իմ, թէ ո՛չ յիշեցից զքեզ, եթէ ո՛չ նուազեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ։»

Դանիէլ և երից մանկանց պատմութիւնը յայտնի է մեր բոլոր հաւատացեալներին, տարին երկու անգամ Մերձեան և Զատիկին ճրագալոյցներին կարգացւում է այն պատանիների բերանով Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում։ Որպիսի՛ սրատուչ օրհներզութիւն և նուիրումն հայրենիք Առածու, ուրիշ խօսքով որբուած, մաքրուած ըիւրեղացած բարեպաշտութիւն և հայրենատիրութեան։

Բ.

Այսպիսի հայրենաբազմ հոգերանութեան հետ է կապուած է Եղեկիէլի տեսիլը, որ բնարան ընտրեցինք։ Նա յուսագրութեան, վերականգնումի և գէպի հայրենիք դարձի աւետարեն է, քարոզինը զիսութիւնից գէպի ազատաթիւն, ակամայ պանդխառութիւնից դարձ գէպի հայրենիք տունը և վերաշնուրութիւն հայրենիք քաղաքի և Տոմարի։ Մարգեային հոգու ամենապահմ ազբումներից և զգացում-

ներից մէկն է այս, տեղու ստրկութիւնից դէպի ազատութիւն։

Մարգարէն տեսիսլքի մէջ ներկայացնում է իսրայէլի գերութեան դատաստանը։ Նու դաշտի մէջ տեսնում է ցրուած և ցամքած ոսկորներ, իսրայէլի ժողովրդի ոսկերներն են այդ։ Եւ ահա Տէրը տալիս իւր պատգամը։ — Ո՛վ ցամքած ոսկորներ, ևս ձեզ շունչ պիտի առմ, մարմին, մորթ բերեմ ձեզ վրայ, ձեզ պիտի իմ հոգին տամ և դուք պիտի կենդանանաք, դուք պէտք է մեռելութիւնից յարութիւն առնէք։

Եւ մենք գիտենք, որ այդ գարձումը կատարուեցաւ երուսաղէմի և Տաճարը վերաշինուեցաւ, իսրայէլը գերութիւնից յետոյ քաջաքական նոր կեանք ունեցաւ։ Մարգարէական զրքերի, Սաղմուների, Սիրաքի և իմաստափրական քնաւորութեամբ զրքերի մի կարեւոր մասը այդ ժամանակի արդիւնք են. աւելի յետոյ Մակարայեցւոց քաջարի շըրջանը, որ օրինակ և քաջալերութիւն հանդիսացաւ և մեր վարդանանց համար։

Այստեղ մի դաս ունինք պատմութիւնից առնելու, թէ ազգերի գլխին եկած դժբախտութիւնները միշտ դէպի մահ չեն տանում, երբեմն նեղութեան մէջ է, ինչպէս անհատական, այնպէս և հաւաքականութեան կամ ազգի կեանքի մէջ, որ հոգին վերածնում է, վերանում դէպի երկնայինը և ծունկ չոքում արդարութեան աթոփ տառջ։ Եւ Ասուած ընդունում է սրտի այսպիսի զգացումը, որպէս անուշանոտ կնդրուկ, երբ խնկուած է այն սրտի ոսկի բուրգառի մէջ։

9.

Նախընթաց պատերազմը ստեղծեց նման դրութիւն մը մեզ համար, ինչ որ Բարելացւոց արշաւանքը իսրայէլի Քարուքանդ եղաւ մեր Հայրենիքի մի կարեւոր մասը՝ մեր

ժողովուրդի մի երրորդը զոհ եղաւ սրի, բռնութեան, հաւածանքի և սովի: Մեր ժողովուրդն էլ աեղահան եղաւ, և զինուորների սուբնների և սատիկանների մարտկների հարւածների տակ, կողոպտուած և աննկարագրելի բարբարոսութիւնների ենթարկուած, քշուեցան դէպի անոպատները: Սորա հետեւանքով արաւափոխիկ հիւանդութիւնները ձարակեցին թշուառ, անօգնական ժողովրդի մէջ, և ատրաւ հորիւր հազարաւոր ոնմենզ զոհեր:

Մեր ժողովրդի առաջուորները, եպիսկոպոսներն ու վարդոպեանները, մատորականներն ու մատենազիրները խողութեան անյայտ վայրեւում, որոնց դիտկները մասցին անթաղ, ցամաքեցան և փոշիացան անոպատների և դաշտերի մէջ: Աւերտկների վերածուեցան մեր եկեղեցիներն ու վանքերը, ձարաւարապետական կոթողները, բարեչէն քաղաքներն ու գիւղերը անբնակ, մշակութային գանձերը ժողովուեցան կամ ոչնչացան: Արբանախիլ եղան ժողովուեցանի կնոջանի պահպանութեան, երգերի և աւանդութիւնների վրդական բանահիւութեան, երգերի և աւանդութիւնների ժողովրդական արուեստի հիմունքները, որոնք ազրիւրն են ամենայն ժողովրդի յառաջիմութեան և ազգային ըստնդագործութեան: Ենթաւ կնոջանի պահպանութեան և հաւարածութեան: Սովից, սրից, հիւանդութիւններից ազարդ մնացորդը՝ Հայուսաւանի, Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ Հաւթեան, ցրուեցան աշխարհի ամէն կողմերը:

Ո՞րը թուեմ, ի՞նչպէս շօշափելի կացուցանեմ մեր անսահման կորուստները մի քանի տաղերի մէջ, պատմութեան այս ձականագրական, անզոք և անզութ հարուածների տակ կարող ենք բնրել, նոյնիսկ խրայէլի պատմութիւնը . . . :

Դ.

Բայց ինչպէս ասոցինք երբեմ նեղութիւններից և հալածանքներից յետոյ վերածնեւում է ինչպէս անհատի, այնպէս ազգի հոգին: Ազգերի կեանքից բազմաթիւ օրինակ ներ կարող ենք բնրել, նոյնիսկ խրայէլի պատմութիւնը

ունի զորա համար ուրիշ ցայտուն ապացոյցներ։ Եգիպտական ստրկութիւնից ձնեց Մալսէս մեծ հայրենասէր մարգարէն, որ իւր ժողովրդին կրօնական կողմակերպութեան և Աւետեաց երկիրը առնելու առաջնորդը եղաւ։ Անտիոքոսների հալածանքից յառաջ եկու Մակորայեցոց շարժումը և քաղաքական ազատութեան ձգումը։

Մեր ցիրուցան եղած ժողովուրդը, բարերախտարար սիրալիր ասպինչականութիւն ունեցու այլ և այլ ազգերի մէջ։ Այսուղ յասուկ յիշատակութիւն ունինք կատարելու լիրանոնի և Սփրիոյ մասին, ուր պատապարուած է մեր ժողովրդի մի կարևոր հատումնը, քաղաքացիական և կրօնական բոլոր ազատութիւններավ։ Այսուղ է հաստատուած եւ կիլիկիոյ Հայրութեատական Աթոռը, որ իւր ժողովրդի հետ սկսել է կենզանանալ և կողդուրուել նիւթագէս և կուլտուրապէս։ Այսպէս և ուրիշ երկիրների մէջ, Ափիւռքի աշքարաց Հայութիւնը և յառաջդիմութեան ընդունակ ժողովուրդը, որոց անգ է սկսել ըննել իւր ընտկած երկիրների մէջ։ Ակսել է յառաջդիմնել նազեւոր զարթնումի, արուեստների և զրականութեան մէջ։ Հայրենարարդ ըզդացմունքը բարձրացրել է իւր զլուխը, ինչպէս երբեմն խրայէլի ժողովուրդի մէջ։ Այդ զզացմունքն է, որ այսօր խրմքել է մեզ այս սրբազն կամարների տակ, ախուր, բայց նուիրմանը և զիտակցութեամբ, կոտարելու բիւրաւոր նահանգների յիշատակը, որոնք ընկան աքարի և զերութեան հան ապարհին, որոնց նշխարները անթագ մնացին և փոշիցան անապանների աւագների մէջ։ Այդ զզացմունքն ու զիտակցութիւնը պէտք է վառ մնայ մեր սրերի մէջ և արդիւնուոր գառնույ մեր նիւթական և նազեւոր Հայրենիքի վերակենդանութեան և յառաջդիմութեան վերելքի համար։

Դորանով է, որ մենք իրապէս յարգուծ և գնահատած կ'լինենք նրանց յիշատակը և պահած մեր դոյտթեան զէմքը Հայրենիքից գուրս՝ նեռաւոր ափերի վրայ։

Բայց մենք միսիթարութեան ուրիշ հիմունքներ եւս ունինք, այդ մեր վերածնուող Հայտառանն է Խորհրդային

սահմանների մէջ։ Մեծ էր Հարուածը անցեալ համաշխարհ-
հային պատերազմի հետեւանքով, անսահման մէծ մեր
կորուստները, բայց Աստուած բոլորովին չզրկեց։ Ունինք
մեր փոքրիկ, բայց թանկողին Հանրապետութիւնը, իրրեւ
մէկը և։ Միութիւնը կազմող Հանրապետութիւններից ընդ-
ամէնը 25 տարուան կարձատեւ ժամանակը բաւոկուն եզւ,
որ հին աւերակների տակից մի նոր երկիր և ժողովուրդ
յարութիւն առնէ։

Գունաւոր ակնոցով չնայինք իրոզութիւնների վրայ
և միայն պակասութիւններ չորսնենք այնուզ, ամենամեծ
և հին պետութիւնների մէջ էլ կարելի է պակասաւոր բա-
ներ զանել, ևթէ փնտունք։ Իննենք խոնճմ, և իմաստուն,
իրականութեան հանգէպ, և կը տեսնենք, թէ ի՞նչ ուսուա-
ծային պարզեւ է և։ Հայոստանը մեզ համար, մեր ազգին,
քաղաքական և քաղաքակրթական տեսակէտներով։

Մեր լեզուն պետական լեզուն է մեր սահմանների
մէջ, գործում, դատարանում, փողոցի և խանութների
մէջ և ամենուրեք։ Օտար տարրերն իսկ, եզիդի, տարր,
յոյն, ուսու, Հայոստանի փոքրամանութիւնների քա-
ղաքացիներ, ոննենալով իրենց քաղաքացիուկան ազատու-
թիւնները և գործոցները, սովորում են և հայերէն, իրրեւ
պետական լեզու։ Հայոգիտութիւնը, մեր պատմութեան,
լեզուի, հնագիտութեան, արուեստի և գրականութեան
ուսումնասիրութիւնը յառաջացել է գգալի չտիալ։ ունինք
այն աւելացի գիտնականներ, ինչպէս Աճառեռնն է, հանգուց-
եալ Արեգեանը, Մանանգեանը, Մալիսակեանը, Հավանցեանը,
Տէրտէրեանը և մի շարք նոր հայոգէաններ, որոնց հրատա-
րակած գործները պատիւ կորող են թերել մեղնից աւելի
թուով մէծ և պետական աւելի երկար կեսն քով ազրած
ազգերին։ Հայ արուեստի բոլոր ճիւղերի մէջ, նկարչու-
թեան, ճարտարապետութեան, արձանագործութեան և երա-
ժշտութեան մէջ այնպիսի ներկայացուցիչներ ունինք,
որպիսիք Սարեւանն ու Կոչոյեանը, հանգուցեալ թամանեանն
ու թարամանեանը, Հայքարեանն ու Բուխաթեանը կենցա-
նիներից, Արայ Սարգսեանն ու Ռոբարտուն, հանգուցեալ

Սպենդիարեանը, Յ. Մտեմիանեանն ու Խաչատրեանը երաժշտութեան մէջ. վերջինն արդէն սկսել է համաշխարհային հռչակ առանալ լի. Միութիւնից էլ զուրս. Ապա քանատեղծների և գրականութեան ներկայացուցիչների հոյլը. Աւետիք Խամակեան, Դեմիրմեան, Հանգուցեալ Զարենց, Ն. Զարեան, Յովհաննէս Շիրազ, Մտեմիան Զօրեան... եւն:

Երեւանի մեր թանգարանը իւր բաժանմունքներով աւելի հարուստ է, քան մեր տեսածները Բալկանեան պետութիւնների մէջ: Մեր համալսարանը՝ իւր ճիւղերով և բազմաթիւ մասնագէտներով գիտութեան այլ և այլ ճիւղերի մէջ:

Ունինք մեր գիտութեանց ճեմարանը իւր կարող և հմուտ նախագահով, որպիսին Յօվհէփ Օրբելին է, բազմաթիւ ակադեմականներով, մեր թատրոնը, մեր երաժշանոցը իրենց բազմաթիւ արուեստագէտներով. մեր դպրոցները, տարածուած յետին գիւղերում իսկ, մեր զինուորականութիւնը իւր զօրավարներով և հերոսներով, որոնք բարձրացնում են Հայ ժողովուրդի անունը ո'չ միայն լի. Միութեան ազգերի, այլ և օտար մեծ պետութիւնների աչքում:

Սրանք ակնարկներ են միայն, ցոյց առաջ, որ մեր ազգը վերածնութեան մի նոր շրջան է ապրում, մեծ հարւածներից յետոյ, և նոյն իսկ ահաւոր պատերազմը, որին մասնակցում է մեր երկիրը, յետ չէ կասեցրել իւր յառաջդիմական քայլերից նիւթական և մշտիոյթույին սաեղծագործութեան բոլոր մարգերում: Մեր սրբերը պիտի բարսին ո'չ միայն մեր զաղութային, այլ և հեռաւոր Հայրենիքի յառաջդիմութեանց հարցերով: Այս է այսօրուան տօնի խորհուրդը և արժէքը մեզ համար: Աչքերս դէպի հեռուն և լուսաւոր ապագան, յոյսով, հաւատով և սիրով լցուած:

Շնորհք Տեսան եղիցի ընդ ձեզ. ամէն:

«Համկ»

Անթիլիաս 1945

Կարողիկուստանի
Հովանաւորութեան Տակ Խղած
ԵՐԻՑԱՍՈՒԹԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Սիրելի զաւակներս,

Երկու պատճառով կը կամենայինք ներկայ լինել հանգուցեալ թէքէեանի յիշատակին ձեր կազմակերպած սգահանդէսին, մէկ յարգած լինել և օրհնել յիշատակը այն անձին, որ իւր տաղանդն ու ամբողջ կեանքը նուիրեց Հայ Դրականութեան, մշակոյթի գարգացման և ազգային կեանքի յառաջդիմութեան։ Մէկ էլ կ'ուզէինք տեսնել և ուրախանալ ձեր երիտասարդական սրտի և հոգու արտայայտութեամբ դէպի այն միտքն ու գաղափարը, որ ձեզ ամէնքիդ ի մի է բերել և խմբել մի յարկի տակ։

Բայց, ինչպէս գիտէք, պարագի կատարման ուրիշ պահանջներով, ձեր հանդէսի կատարման օրը, Հայ եպիսկոպոսների և պատգամաւորների մեծ խմբով գումարուած պիտի լինինք Ս. Էջմիածնի սրբազն կամարների տակ, Հայաստանեայց եկեղեցու բարեկարգութեան և Ամենայն Հայոց կաթողիկոսի ընարութեամբ գրաղուելու։ Մեր անձի փոխարէն թող այս երկառողը լինի մեր ցանկութեան և հայրական իղձերի թարգմանը ձեր միութեան հանդէպ։

Մենք ծերունիներս անցնող սերունդ ենք և երիտասարդներդ եկող։ Ազգերի կեանքն ու պատմութիւնը կապակցութեամբ է կազմում ազգի ամբողջութիւնն ու պայմանաւորում նորա յարատեւ գոյութիւնը. ուստի և կենսական է մեզ համար գիտնալ, թէ գուք, որ տարբեր պայմանների մէջ էք ծնուել ու սնուել, օգակը պիտի լինիք մեր կեանքի յաւիտենականութեան։ Ահա մենք ինչ ենք կամենում որոնել և գտնել, տեսնել և չօշափել ձեր երիտասարդական միութիւնների մէջ։

Ի հարկէ, մենք չենք սպասում, որ ամէնքդ բանաւ-

տեղծ, հասարակական մեծ գործիչ լինիք, թէպէտե կը ցանկանք, որ այդպիսիները լինին ձեր մէջ, բայց կը սպասենք և կը բաղձանք, որ դուք ամէնքդ լու սրտով, լու նկարագրով, և դիտակցութեամբ Հայ մարդիկ գառնաք, որ դուք իբրեւ բազմութիւն այս բարեկեր հողը դառնաք, ուր մտքի և հոգու ծաղիկները աճել և արդիւնաւոր գառնալ կարողանան:

Սիրեցէք Հայաստանեայց եկեղեցին, ինչպէս «Եկեղեցին Հայկական» հեղինակն սիրել, կուսաւորչի կանթեղի մէջ տեսէք մեր բայխանդակ մտաւոր և հոգեւոր կեանքի նշաւակը, ինչպէս մեր ժողովուրզն է տեսել:

Սիրեցէք Հայ լեզուն, Հայ գրականութիւնը, թէքէնանի և նորա նմանների մտքերն ու զգացումները, սէրն ու տառապանքը, հոգեկան ապրումներն ու գեղեցկութեան և ձշմարտութեան որոնումներն են մարմնաւորուած։ Զօրացէք առողջ մարմնով և առողջ հոգով, որպէսզի ինչքան էլ յառաջանան ձեր տարիքները, զգաք ձեզ առողջ և աշխայժ ձեր երիտասարդութեան նման։ Թո՛ղ ձեր միութիւնը դըպրոց գառնայ ընկերական և բարեկամական կեանքի, միութեան գաղափարի, ուժերի համադրութեան, ապազայի գործակցութեան նախապատրաստութեան։

Այս մաքով յանուն Աստուծոյ օրհնում ենք բարի յիշատակը բանաստեղծին, օրհնում ենք Հայ մշակոյթի բոլոր աշխատաւորները, օրհնում ենք ձեզ, ձեր միութիւնը և բարեկամազթում, որ Հայ անուան պատիւ բերէք կեանքի մէջ, արժանաւոր սերունդ հանդիսանալով մեր պանծուի նախնեաց։

Հայրական սիրով և օրհնութեամբ։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻԱՑ

5 Յունիս 1945

Անթիւաս

Հաղորդագրութիւն

Վեհափառ կաթողիկոսի Երաւանղէմ գտնուած ատեն Պաղեստինի Բարձր Քոմիտէր Դերկոմս Կորթ, Վեհափառն ու Պատրիարք Հայրը ճաշի հրաւիրած. Էր: Ասիթէն օգտուելով Վեհափառը օրհնուած էր արքայական ընտանիքը և մազթանքները ըրած՝ Անգլիոյ թագաւորի արեւշտութեան համար:

Վերջերս, Սուրբոյ և Լիբանանի մէջ Բրիտանական ներկայացուցիչ Գ. Թորմէնս Շօն Վեհափառին գրած է թէ՝ Ն. Վ. Անգլիոյ թագաւորը իր մասնաւոր շնորհակալութիւնները կը յայտնէ մազթանքներուն և օրհնութեան համար:

ԴիիԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Գեղի Մայր Արոռ

Ցարդ պատմութեան մէջ չէ պատահած որ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ մը անձամբ երթայ Ա. կջմիածին և մասնակցի Ընդհանրական Հայրապետութեան գահակալին ընտրութեան: Այդ պատմական գեղեցիկ և պերճիմաստ նախընթացը պիտի ունենանք շնորհիւ այն հանգամանքին որ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական գահուն վրայ կը բազմի Ն. Ա. Օծութիւն Գարեղին կաթողիկոսի պէս լայնախոն և բացառիկ գէմք մը:

Վեհափառ Հայրապետը քանիցո կրկնած է որ, իրեն բուռն բազմանքն է որպէս Կիլիկիոյ կաթողիկոս, իրեն թեմի եպիսկոպոսներով ներկայ գանուիլ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան:

Վեհափառին բազմանքն եղած է նուև որ, Ա. կջմիածնայ համագումարը ըլլայ ըստ կարելոյն ըստմամարդ և Ընդհանրական Հայրապետի օծման հանդիսութիւնը՝ ըստ կարելոյն փայլուն և մեծավայելուչ:

Խ. Միուրեան Դեսպանի Հրաւերը

Ի ՊԱՏԻՒ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐՈՒՆ

Կիրակի, Յունիս 3, ժամը 7ին, Խ. Միուրեան դեսպանը հրաւեր տուած էր վեհափառ կաթողիկոսին և միւս պատգամաւորներուն՝ անոնց էջմիածին մեկնելուն առիթով։ Հրաւերուած էին նաև Յոյն Օրթոսաքս Պատրիարքը, եպիսկոպոսներ՝ Տ. Տ. Արտաւազդ, Խաղ Սրբազնները և կարգ մը ազգայիններ։

Սեղմ շրջանակին և տաք մթնոլորտի մէջ տեղի կ'ունենան մտերմիկ խօսակցութիւններ։ Վեհափառը բաժակ առաջարկեց բոլոր ազգերու եղբայրութեան, Խ. Միուրեան ազգերու բարգաւաճման և անոնց կարգին Հայաստանի վերելքին համար։

Պ. Սոլոտ պատասխանեց սիրալիք բառերով ու մազթեց որ վեհափառը իր հետեւորդներով յաջողի իր առաքելութեան մէջ, ու վերադառնայ լաւ գործ մը կատարած ըլլալու գոհունակութեամբ։

Վեհափառ կաթողիկոսը, Հայր Դերենիկ, Պ. Պ. Մ. Մըսըրլեան, Ա. Գալէմ քեարեան, Ե. Էլլէզեան, և Գ. Պապոյեան կը մեկնին Պաղեստին, Լիտուայի օդակայանէն առնելու համար Անգլիական իշխանութեանց կողմէ յատկապէս տըրամադրուած օդանաւ մը, որ զիրենք պիտի տանի մինչեւ թեհրան։

Հայրապետը կը մեկնի Ս. Էջմիածին

Վեհափառ Տ. Տ. Գարեգին կաթողիկոս Տանն կիլիկիոյ, գէպի Ս. Էջմիածին իր ուղեւորութեան առթիւ ազգին ուղղեց հետեւեալ կոնդակը։—

Այսու Հայրապետական կոնդակաւ մերով յայտ առնեմք, ամենայն ժողովրդեանս և եկեղեցական ազգային հաստատութեանց, որք ընդ մերոյ իշխանութեամբ, թէ հանգերձեալ եմք ի մօտոյ ուղեւորել յէջմիածին առ ի մասնա-

Կից լինել Ազգային Եկեղեցական ժողովոյն և ընտրութեան Դահակալին Մայր Աթոռոյ, ընդ մեզ ունենալով ընդ աշխարհիկ կամ ժողովրդական պատգամաւորաց և զերեսին Առաջնորդու վիճակաց՝ Դամասկոսի, Լիբանանի և Բերիոյ, զՃ. Եփրեմ և զԱրտաւազզ Արքեպիսկոպոսունու և զԶարեն Մ. վարդապետ:

Առ ի կարգաւորութիւն եկեղեցական-դպրոցական և այլ գործաց, նշանակեմք զՃ. Խոդ. Արքեպիսկոպոս փոխանորդ մեր, զի ի բացակայութեանս վարեսցէ զընթացիկ գործու միաբանութեանս, որպէս և եկեղեցական-ազգային և զպրացական հաստատութեանց, և առաջադրեմք ամենայն ստորագրեալ իշխանութեանց, ի նկատի առնել զայտ Հայրապետական մեր կարգադրութիւն և ի կատար ածել զհրամանն և զկարգադրութիւնս ամենայն, որք հային և բարւոք կառավարութիւն գործոց և հաստատութեանց:

Օքնեմք և շորջորեմք և զհաւատացեալ ժողովուրդն մեր, խաղաղութեամբ և հանգարանութեամբ ընդանալ յառօրեայ կետնաւ և ի գործու, որպէս հաւատարիմ քաղաքացիի երկուց հասարակազեսութեանցն, զի իրանանի ասեմ և զՍիւրիոյ, առանց տեղի տալոց թիւրիմացութեանց յայս զժուարին ժամանակու, միշտ ունենալով ի նկատի զկարգ և զկանոն և զկառավարական կարգադրութիւնս։ Զի հաւատարմութեամբ և լիսկասար հասուցմամբ պարտեացս, արժանի լիցուք համակրութեան բարի դրացեաց և քաղաքացեաց մերոց, ի չոհ և յօդուանորոց հայրենեացս, յորս վայելեմք զամենայն շնորհս ազուտ քաղաքացիութեան։

Յանձնելով զձեզ ի խնամս Ամենակալի Աստուծոյ, յուսամք թէ ամենայն ինչ ընթացք ըստ բաղձանաց հայրական սրտիս ի սահմանս կարգապահութեան և օրինապահութեան։

Ծնորչք Տեսան եղիցի ընդ ձեզ։

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱՐՈՂԻԿՈՍ
ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Վեհա Հայրապետը Թեհանակի մէջ

1945 յունիս 7ին, կէսօրէ վերջ ժամը 3ին թեհրան ժամանած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Վեհանորհ Տ. Տ. Գարեգին Ա. ընկերակցութեամբ Գեր. Տ. Գերենիկ վարդապետի և Լիքանանի, Սուրբոյ և Պաղեստինի պատգամաւորներ Տիարք Արշակ Գարէմքեարեանի, Մկրտիչ Մարգանի, Եփրամ Էլլէզեանի, Գէորգ Պապոյեանի, Պետր Ճայֆայէն մեկնած են անոնք մասնաւոր զինուորական օգանաւով, զոր սիրալիիր կերպով, Գարեգին Կաթողիկոսի արամագրած է Պաղեստինի Բարձր Քամիսէրը: Կաթողիկոսը իր ժամանումին օգակոյանին մէջ գիմուորուած է քառասուն ինքնաշարժով որոնք ընկերացած են իրեն մինչեւ Ա. Աստուածածին և կեղեցին, առ խոնուած հազարաւոր ժողովուրդ խանգալու ցոյցերով ողջունած են զինքը: Գարեգին Կաթողիկոս ազօթած է և յեսոյ խօսած ժողովուրդին: Իրենց մեկնումը դէպի Էջմիածին կատարուած է խանգալաւութեան մէջ:

Թեհրանի Առվեա զեսպանատան կցորդ Պ. Մելքոնեան որ համաձայն զեսպանի հրահանգին Կիլիկիոյ Կաթողիկոսին ընկերացած է մինչեւ Երևան:

«Արարտ» Ազերանդրիա

1945 Յունիս 21

-o-

Տաճի Կիլիկիոյ Վեհախտը Կարալիկոս ԳԵՐԵԳԻՆ Ա. ՏՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ Ա. ԷՉՄԻԱՅՆԻ ՄԷՋ

1945 Յունիս ամսոյ մէջ ժամը 8ին ժամանում է Տաճի Կիլիկիոյ Վեհախտը Կաթողիկոս Գարեգին Առաջինը: Վեհախտը աղմկալից կեցցէներով առաջնորդում է դէպի Մայր Տաճարը: Թափօրի առաջից Փաղիսպամ են խանգալաւուներն ու խաչերը և «Հրաշափառ» շարականով կառ

Թողիկոսը միաբանութեան առաջնորդութեամբ մտնում է Տաճար:

Նա հակիրճ ու ամփոփ կերպով խօսում է առաջիկայ Ազգային եկեղեցական ժողովի պատմական նշանակութեան մասին, կոչ է անում սիրել Մայր Աթոռն ու հայրենիքը, սիրել և ամուր փարուիլ մեր պետականութեանը, նուիրուիլ նրանց ստեղծագործ աշխատանքներին և բարձր պահել Հայ ժողովուրդի Ազգային պետական և կրօնական միանութեան գրօշները:

Դուրս գալով Մայր Տաճարից վեհափառը քայլերն ուղղում է դէպի վեհարան: Ճանապարհի երկու կողմերը բռնել են հաւատացեալները որոնք կեցցէներով ողջունում են նրան:

Յուղիչ է տեսարանը վեհարանում: Հայ եկեղեցու երկու վեղերանները գրկախառնուում են և համբուրուում, ձախ կողքին բազմում է երուսալիմի Գուարիարքը, միւսները կանգնում են ըստ սպիրութեան:

Կաթողիկոսը ձեռքի շարժումով աղջարարում է նստիլ:

Ակսում է խիստ մաերմական, ընտանեկան զրոյցը: Նա՝ պատմում է ճանապարհին վայելած սովետական օրգանների հիւրասիրութիւնների մասին: Ծիծազը անպակաս է նրա դէմքից, նա այնչափ գո՞ւ է իրեն շրջապատշ իրադրութիւնից:

— Ճեմարանի համար նույր եմ բերել — յայտարարում է Վեհափառը — տարեկան 50 ֆունտ սթերլինգ ապահովել եմ, գրպանում է, ուղում էք հանեմ, դնեմ սեղմանի վրայ, — ասում է նա և լիաշունչ ու կուշտ ծիծազում:

Նրա կննառլից ծիծազի մէջ հայրենիքն է խօսում, Մայր Աթոռի և Ա. Էջմիածնի կարօտն է, որ վեհափառ շըքեղութեամբ լցնում է հսկայական դահլիճը:

Պատգամաւորները ցնծադին ծափահարում են, նրայայտարարութիւնը վարակում է ամէնքին, «կը վերադառնանք, մենք էլ կ'ուղարկենք», լսում է կողքերից, «այդործնական մարդ, ինչպէս երեւում է, չի սիրում խօսառում»:

ներ և ապառիկ գործեր», լսում է ետևեց: Շուռ եմ գալիս վերջին արտայայտութիւն անողին գտնելու, տեսնում եմ բոլորն ուրախ են, ժողովրդին, կայսուո, ըստորի ուշադրութիւնն ու նայուածքները նուիրուած են գէպի վեհափառը:

Առանձնապէս նկատելի է երկու ականաւոր եկեղեցականների փայփայանքը և խիստ սիրալիր, ջերմ վերաբերմունքը միմեանց: Եւ այդ հասկնալի է, նրանք ճեմարանի առաջին շրջանաւարտներն են, դասընկերներ և ճեմարանաւարտ առաջին եկեղեցականները: Տարիներ ո'րպիսի վսեմ պատմութիւն է կապուած կեանքի հետ, մէկը Տանն կիլիկիոյ Կաթողիկոս, իսկ միւսը՝ Ամենայն Հայոց Հայրապետական Տեղակալ: Ու որք. ան խորհրդաւոր, իմաստալից ու գեղեցիկ է պատմական այս զուգադիպութիւնը:

Մէջ ընդ մէջ Դարեգին Ա. վեհափառը հայեացքը արտասահմանից եկած հոգեւորականներին ուղղելով պատմում է այնաղի անցուգարձներից ինչ որ յիշեցումներ անում, կամ հարցումներ տալիս: Չըոյցի հանդիսաւորութիւնն ու քաղցրութիւնը թոյլ չեն տալիս միջամտել և հարցումներ անել:

Սակայն վերին աստիճանի կենսուրախ և պարզ այդ անձնաւորութիւնը ամէն անգամ գոհունակութեամբ է շըփում իր ձեռքերը և յիշեցնում Ազգային-Եկեղեցական միասնութեան գաղափարը: Ազգային-Եկեղեցական միասնութիւն, — ահա մեր երկու ականաւոր եկեղեցականների էռթիւնը, նրանց նկարագիրը:

ԽՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

«Էջմիածին»
Յունիս Յուլիս 1945

Վեհ. Հայրապետ Ս. Էջմիածնայ

ԵԿԵՂԵՑԱՆՈՆ ՀԱՄԱԳՈԼԻՄԱՐԻՆ ՄԵՋ

16 ՅՈՒՆԻՍ 1945

Վերջացնելով իր խօսքը, Ամենապատիւ Տէր Տեղակալը, Ազգային եկեղեցական ժողովը յայտարարում է բացուած։ Որից յետոյ խօսք է առնում Տանն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոս Տ. Տ. Գորեգին Ա.ը.

— Նշելով ժողովին պատմական նշանակութիւնը նա յայտարարում է որ այս օրը բախտաւորութեան և ցնծութեան օր է, քանի որ երկար տարիներից յետոյ Հայ ժողովուրդի յոյսերը իրականացած են։ Ուրախալի և ոգեւորիչ են, շարունակում է նա, որ աշխարհի ամէն կողմերը ցըրւած Հայ ժողովուրդի ներկայացուցիչներն այսօր մասնակցում են ժողովին, որ նրանք եկել են ոչ միայն իրենց Կաթողիկոս մը ընտրելու այլ Ս. Էջմիածինին նիւթական և բարոյական ուժ տալու։ Այս ժողովը յայտարարում է նա, մեր եկեղեցու և ժողովուրդի միանականութեան ժողովն է։ Դրուատելով մեր ժողովուրդին և պետութեան՝ ձեռք բերուած նուաճումները, Վեհափառ անհուն բերկութեամբ իր գոհունակութիւնն է յայտնում Խորհրդային Հայաստանին և օրհնում է ժողովը, յաջողութիւն մազթելով նրան։



Ուրիշ ժողովի մը մէջ, Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսը խոր լուսթեան մէջ կ'ըսէ «ցանկալի պայմաններու մէջ հաւաքուած ենք նոս մեր պատմութեան մէջ ունեած անգամն է որ ներկայ Կ'ԸԱՎայ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը և շատ քիչ է պատահած որ այսքան մեծ թիւով եներկայացուցիչներ հաւաքուած են ընտրութեան համար։ Եկած էք հեռաւոր Ամերիկայէն, Եգիպտոսէն, Անգ-



Ա. Էջմիածնայ Եկեղեցական

ՀԱՍՏԱԳՈՒՄԾՈՐԻՆ ՄԵԶ ՎԵՀԱՓՈԽԸ ԿԸ ԽՕՍՔ

Ոչ մի ազգ երկրագնդի վրայ մեզի չափ չէ տառապած, չէ կոտորուած, բայց մենք մեր այդ ցաւերուն և զժրախտութեանց վերջ տուինք Սովիէթ բէժիմին ու անոր պետական գաղտնաբարաբանութեան յարելով, անոր մի մասը կազմելով։

Խորհրդային Միութեան շնորհիւն է որ մեր մըշտկոյթը փրկուեցաւ և զարգացաւ, թէեւ մեր երկիրը փոքր է, բայց անոր ապագան ապահով հիմերու վրայ դրուած է։ Մենք պատերազմի տարիներուն մեր ամրողջ ուժը ի սպաս գրինք յազմանակը շահելու համար, բայց այդ բնու արգելք չեղաւ մեր վերելքի ու յառաջդիմութեան զարգացման։ Ես Երեւանը տեսած եմ տակէ տասը տարի առաջ, բայց հիմա մեծապէս փոխուած գտայ։

Սովիէթ բէժիմին շնորհիւ զանազան ցեղերի մէջ ստեղծուած բարեկամութեան ու միանականութեան ոգին բարոյական մեծ ուժ մը եղաւ անպարտելի, յաղթանակներ շահելու համար, բայց մենք մի փոքր յոյս ունինք, յոյս, որուն իրականացումը կ'ապասենք մեր մեծ պետերէն, որ միշտ իրականացուցած և կատարած է իր խոստումը։ (Մեծ ծափանարութիւն)։

Յուշագրութիւններ Խորհրդային Հայաստանին
գ. ՊԱՊՈՅԵԱՆ

*Արարատ
5 Դեկտ. 1945 Գյորութ

Համազգային Եկեղեցական Ժողովի ՀՅՈՒԳԻՐԸ ԱՅՈՄ ԳԵՐԱԴԱՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱԾՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱԾ ԿԱԼԽԱՏԻՆԻՆ

Հայկական Համազգային Եկեղեցական Ժողովը հա-
ւաքուելով Էջմիածնում և սահմանալով բոլոր հնարաւորու-
թիւններն իր աշխատանքի համար գաղտնի քուէարկու-
թեամբ միաձայն Ամենայն Հայոց Մայրաքոյն Պատրիարք
Կաթողիկոս ընտրեց Գէորգ Արքեպիսկոպոս Զէօրէքնեանին
Ժողովն իր երախատագիտութիւնն է յայտնում Սովե-
տական կառավարութեան ուշադրութեան և քարեացակա-
մութեան համար։

Համազգային Եկեղեցական Ժողովի անունից

Տանն Կիլիկիոյ Կարողիկոս
ԳԱՐԵԳԻՆ Ա.

«Էջմիածին»

Յունիս-Յուլիս 1945

Համազգային Եկեղեցական Ժողովի ՀՅՈՒԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՊՈԽՄՈՋ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔԾՈՒՆ ՄՈԽՆՈՒԱ

Նորին Արքութիւն Ամենայն Ռուսիոյ Պատ-
րիարք Ալեքսիին։

Համահայկական Ազգային-Եկեղեցական Ժողովը
1945 թ. Յունիսի 22ին Ս. Էջմիածնի նախաթռո Մայր
Տաճարում գաղտնի քուէարկութեամբ միաձայն, Ամենայն
Հայոց Կաթողիկոս ընտրեց Արքեպիսկոպոս Գէորգ Զէօրէք-
նեանին, որի մասին անդեկանացնում եմ Ձեզ։

Համազգային Եկեղեցական Ժողովի
Նախագահ,

Տանն Կիլիկիոյ Կարողիկոս
ԳԱՐԵԳԻՆ Ա.

«Էջմիածին»

Յունիս-Յուլիս 1945

Համազգային եկեղեցական ժողովը

Ս. ԷջՄԻԱՆՆԻ ՄԵԶ

Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհ. Տ. Տ. Գարեգին Ա. Կարողիկոսի
խօսածները ժողովի առեն: Վեհ. Կարողիկոսը
սրբայոյ միւռանով կ'օճէ Ամենայն Հայոց
Կարողիկոսը՝ Տ.Տ. Գևարգ Զ. Զերեֆնեանը

Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհ. Տ. Տ. Գարեգին Ա. Կա-
թողիկոսը կը նախագահէ համազգային պատմական եկեղե-
ցական ժողովին:

Ա. ժողովին, 1945 Յունիս 16ին Վեհափառ Կաթողի-
կոսը պատշաճ աղօթքներն ասելից յետոյ, ժողովը բացուած
յայտարարեց:

Տիրում է հանդիսաւոր լուսթիւն, Տէր Տեղակալը
առաջարկում է Տանն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին իր
օրհնութիւնը տալ ներկայ եղազներին:

Վեհափառ Հայրապետը ոտքի է կանգնում:

Ամբողջ գանձինը յոտնկայս լուսմ է Վեհափառի ար-
տասանած «Հայր մեր» և աւուր պատշաճի աղօթքները,
որից յետոյ քառաձայն խումբը երգում է «Էջմիածինի ի
Զօրէ» շարականը:

Ամեն. Տ. Տեղակալից յետոյ, ողջոյնի խօսք է ասում
Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը:

Ամենապատի Տէր Տեղակալը յայտնում է ժողովին,
որ պատգամաւոր Ստ. Մալիխանեանը «Էջմիածին» ամսա-
գրին ուղարկած մի յօդուածով առաջարկ է արել տօնել
Մայր Աթոռի Կիլիկիոյից Ս. Էջմիածին փոխադրուելու
500ամեակը, Ժողովականները միաձայն ընդունում են այս
մտայլացումը և որոշում են տօնել 500ամեակը:

Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը հակիրճ կերպով պատ-
մական տեղեկութիւններ է հաղորդում Աթոռի փոխադրման-
մասին և ցանկութիւն է յայտնում մեծ շուքով տօնել
500ամեակը, ինչպէս որ տօնուել է տառերի գիւտը, Աստ-
ուածաշունչի թարգմանութիւնը եւայլն:

Ժողովը ընդունեց Գարեգին Ա. ի հետեւեալ բանաձեւը.

«Անդրադառնալով՝ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետութեան կատարած դերին անցած 500 տարիների ընթացքում նշանակում է արել և լուսաւորել ժողովրդեան միաբը և գիտակցութիւնը այդ երկարատև շրջանի մասին»։ Ժողովը օգտակար է համարում 1945-1946 տարին յայտարարել Մայր Աթոռի վերահաստատման յորելինական տարի ընդունելով միևնույն ժամանակ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեանը։

Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը յայտարարում է որ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսարանը ձեմարանին համար յատկացնում է տարեկան 5000 տոլար։

Տանն Կիլիկիոյ վեհ. Կաթողիկոսը առաջարկեց Մայր Աթոռի պահպանութեան համար սահմանել «Լուսաւորչի լումա» տուրքը բալոր եկեղեցիների ամբողջական հասոյթների 4 տոկոսի համեմատութեամբ։ Ժողովը միաձայնութեամբ ընդունեց այս առաջարկը։

Տանն Կիլիկիոյ վեհ. Կաթողիկոսը ողջունելով Ժողովին ձեմարանի պահպանման խանդավառ յանձնարարութիւնները, առաջարկեց հոգեւոր ձեմարանի մատենագարանը եկեղեցական, կրօնական և առաւտածարանական գրականութեամբ ճախացնելու համար եւս խորհիլ։

Զարրարդ նիստում Տանն Կիլիկիոյ վեհ. Կաթողիկոսը Ժողովին հաշուեառութեան ներկայացրեց իր կատարած հանգանակութեան մասին, երբ ինքը որպէս Հայրապետական լիուզօր նույիրակ գործուղուել էր արտասահման յիշեալ նպաստակով։ Պարզուեց որ նա հանգանակել է 37.114 տոլլար, որպիսի զումարը պահ է զրուած ապահով գրամաների հասաւառութիւնների մօտ։

Կաթողիկոսի ընտրական նիստին, Տանն Կիլիկիոյ վեհ. Կաթողիկոսը, խիստ սրասուաչ և անկեղծ զգացումներով դիմում է պատգամաւորներին, յայտնելով նրանց պատմական մեծ ակարի ժաման, որ նրանք պիտի կատարեն այսօր Հայրապետանեաց եկեղեցւ Հովուապետ՝ Ամենայն Հայոց վեհափառ Կաթողիկոս ընտրելով։ Նա կոչ է անում լուրջ և զգաստ մասնուով այս խնդրին, հաշուի առնել նրանց

պատասխանատուութիւնը ժողովրդի առաջ և լսել իրենց խղճի ձայնին:

Ժամը 4-ին 45 րոպէին վեհ. Կաթողիկոս Գարեգին Ա.ը յայտնում է քուէարկութեան արդիւնքը, ներկայ է 111 պատգամուոր, 110 քուէով:

Դէորդ Արքեպիսկոպոսը ընտրուած է Ամենայն Հայոց կաթողիկոս, այդ մէկ քուէն ալ իրենն է, որ նա առեւ է ինձ: - Միաժամեւ յայտնում է վեհափառը: - Աւրին ընտրուել է միաձայն: -

Այսուհետեւ Ն. Ա. Օծութեան վեհ. Կաթողիկոսը առաջարկում է ժողովին մի յանձնաժողով ընտրել, Սովետական Միութեան հանձարեկ առաջնորդ Մարշալ Սաալինին ուղարկելիք դեկարացիան մշակելու և խմբագրելու:

Ի զիմաց Հայուստանի ժողովրդի հանդէս եկաւ Պրոֆ. Արարտ Ղարիպեանը: Նա ասաց հետեւեալը. «Հայ եկեղեցին կատարեց իր պատմական հազուագիւտ դերը Զեր բուրի միջոցաւ, հայ ժողովուրդն այժմ գտնուում է իր հոգի վրայ: Հոգեգէս հրձուում եմ, անսնելով, որ այս ժողովը կարողացու հանդէս բերել միասնականութիւնը յօդուահայութիւնը և եկեղեցու:»

Տանն կիլիկիոյ վեհափառ Կաթողիկոս այս միասնականութեան կենդանի օրինակը հանդիսացաւ իր խորը հրմտութեամբ և բռուն հայրենասիրութեամբ: Հսկայ հայրենասիրութիւն կայ նրա փոքր մարմնի մէջ և այդ հայրենասիրութեան կրտսկը տարածում է ամէն կողմ:

Տանն կիլիկիոյ վեհափառ Գարեգին Ա. Կաթողիկոսը շրջապատուած Արքեպիսկոպոսներով, վարդապետներով, քահանայից և գորաց գասով, 1945 Յունիս 24ին, Ա. Էջմիածնայ պատմական Տաճարին մէջ, «Հաւատամք»ից յետոյ, սրբալյա, խնկորոյր միւռոնով Ամենայն Հայոց կաթողիկոս կ'օծէ ազգընտիր Տեղակալ Ամենապատիւ Տ. Գէորգ Ա. Արքեպիսկոպոս Զէօրէքնեանը՝ ձեմ արանի դաւրները:

ԱՌԻԲԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

«Էջմիածին»
Ցունիս Յունիս 1945

Վեհավիտը կը պատուի

Ս. էջմիածնայ Ամենայն Հայոց Հայրապետը՝ Տ. Տ.
Գէորգ Զ. իրրեւ աննախընթաց պարագայ կը շեշտէ Տանն
Կիլիկիոյ Շնորհազարդ Տ. Տ. Գարեգին Ա. Վեհավիտ Կա-
թողիկոսին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընտրութեան
և օժման ներկայութիւնը և Հայ եկեղեցւոյ միասնականու-
թիւնը։ Ս. էջմիածնայ Նորընտիր Հայրապետը իրաւասու-
թիւն կուտայ Կիլիկիոյ Կաթողիկոսին՝ իր վեղարին վրայ՝
կրելու աղամանդակուռ խաչ, և պատարագի ընթացքին Կի-
լիկիոյ Կաթողիկոսին անուան յիշատակութիւնը եւս Ընդ-
հանրական Հայրապետին անուան յիշատակութենէն անմի-
ջապէս վերջը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐՁԻՆ

Վեհավիտը կը յայտարակ

Վեհավիտ Հայրապետը Հայաստանէն վերադարձին
կը յայտարաբէ։

Մեր յաջողութիւնն ու տեսած իրականութիւնը վեր
են բոլոր ակնկալութիւններից, Կարող եմ ասել թէ Հա-
յաստաննայց եկեղեցւոյ պատմութեան մէջ, այսպիսի մի-
ասնական, միակամ և ընդհանուր առամբ ներդաշնակ ժո-
ղով մեզի ծանօթ չէ։

Պէտք է ըմբռնել և թափանցիլ այն երեւոյթին մէջ,
որ աշխարհի բոլոր անկիւններից, ամենէն հեռաւոր հարա-
ւային Ամերիկայից, Բալիֆօրնիայից և Միացնալ Նահանգ-
ներից սկսած մինչեւ արեւմտեան և արեւելեան, Եւրոպայի
բոլոր թեմերից Հայ գաղութները ուղղարկել էին իրենց
պատգամաւորները, որոնց ներկայութիւնը Ս. էջմիածնի
նուիրական կամարների տակ, մարմնաւորումն էր Հայա-

տանեայց եկեղեցւոյ ամբողջութեան: Արտաքոյ կարգի երեւոյթ էր կիլիկիոյ կաթողիկոսի իր եպիսկոպոսներով և աշխարհիկ պատգամաւորներով, ներկայութիւնը այդ ժողովին մէջ, որով շնչտուում էր Հայաստանեայց բոլոր բարձր Աթոռների միութիւնը, միասնականութիւնը, միակամ և միախորհուրդ գործակցութեան տրամադրութիւնը նոր ընտըրուելիք Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ:

Մեր խորհրդակցութիւնները, մտքերու փոխանակութիւնները նախ ժողովից դուրս, ապա ժաղովի մէջ, ապացոյցներ էին տալիս մտքերի, մտածումների և հասկացոզդութիւնների այն միութեան, որ ներկայ բոլէի պահաջն էր:

Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտըրութիւնը կատարուեցաւ, կիլիկիոյ կաթողիկոսի նախագահութեան տակ, գաղանի քուէարդութեամբ և միաձայնութեամբ առանց վէճի, առանց սպառական և անպատճն տարակարծութիւնների: Ամէնքը, խորասուլուած և իրենց խզճին և Աստուծոյ ներկայութեան, թղթի վրայ դրոշմեցին իրենց և զիրենք զրկոզ ժողովրդի ցանկութիւնը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի Աթոռին վրայ տեսնել Գէորգ Արքապիսկոպոսին, որը իր Տեղակալութեան շրջանում արդէն կատապուին, որը իր Տեղակալութեան շրջանում արդէն կատարել էր գործեր, որոնք ապահովում էին նորու միաձայն ընտըրութիւնը:

Տեսնել պէտք էր, ով չի տեսնել, հոգւով պէտք է ապրի այն տեսարանը՝ որ պարզուեցաւ երր Նորընափր Հայրապետը և կիլիկիոյ կաթողիկոսը միասնարար, 110 հոգեւոր և աշխարհիկ պատգամաւորների առաջնորդութեամբ գուրս եկաւ Մայր Տաճարից, զանգակների զօդանջների, ողեւորուած ժողովուրդի բացագանչութիւնների և ծափանաւրութիւնների միջամբ:

Հայրապետական օծումը նոյնապէս կատարուեցաւ ամենայն շքեզութեամբ և փառաւորութեամբ:

Ժողովին խորհրդածութիւնները, Մայր Աթոռին աընտեսական և մշակոյթային վերակազմութեան մասին, ընթացան նոյնապիսի համաձայնութեամբ և ներդաշնակութեամբ: Պէտք էր տեսնել թէ ինչ ողեւորութիւն առաջ ե-

կաւ ժողովուրդների մէջ, երբ Ամենապատիւ Տեղակալը, իր ընտրութիւնից առաջ, ընդարձակ զեկուցումով մը ամփոփ պատկերը տաւաւ իր տեղակալութեան ամբողջ շրջանին գործունէութեան, և ապա աւետեց թէ Սովիէթ կեզրանական Պետութեան կողմից, Մարաջախտ, այժմ Սպարապետ և կոմիսարների նորուրդի նախագահ Սթալինի ստորագրութեամբ հրամանագրով մը, կատարուած են իր բոլոր խնդիրները, գրական կերպով ընթացք տալով անոնց, Հայրապետութեան վերադարձնելով էջմիածնի պարիսպներից ներս և գուրսը գտնուող բոլոր շնչքերը (միաբանութեան մեծ շնչքը, մատենագրարանի ընդարձակ շնչքը, տպարանի շնչքը, ճեմարանը, մթերանոցները ևայլն): Դրա հետ նաև, կեդրուական կառավարութիւնը իրաւունք է տուել վերաբանալու հոգեւոր ճեմարանը՝ պատրաստելու համար հկեղեցւոյ սպասարկուներ, տպարանը՝ հրատարակելու համար և կեղեցական և ժամապաշտութեան գրքեր ու «էջմիածն» պաշտօնաթերթը:

Այսպիսով աւետուեցաւ որ Սովիէթ Միութեան մէջ մի նոր գարաշրջան է սկսում Մայր Աթոռի և Հայաստաննեայց եկեղեցու համար:

Այսպիսի ուրախ լուրերի արամագրութեան տակ էր որ բոլոր թեմների պատգամաւորները յանձն առին իրենց բաժիննը բերել ճեմարանի պահպանութեան, տպարանի տարգաւորման, միաբանութեան ապահովութեան և այլ հարկաւոր նիւթական միջոցների հայթայթման գործում:

Մի արտաքոյ կարգի ուրախալի լուր էր ժողովներից յետոյ ստացումը մի հեռագրի, որով Հայ մեծատուն մը կը կամենար իմանալ թէ որքան գումար հարկուար է Ս. էջմիածնի Տաճարին նորոգութեան պահպանութեան համար:

Նման ուրախալի լուրեր ունինք յայտնելու մեր թանկագին հայրենիքի պետական, անտեսական, գիտական, գեղարուեստական, մշակութային և այլ մարդերի մէջ կատարեալ յաջողութեան և յառաջընթաց վիճակի մասին: Որպէս հոգեւորական և մշակոյթի մարդ՝ բնականաբար ես աւելի հետաքրքրուած էի վերջին խնդիրներով, և կարող

ևմ ասել թէ լիսկառար գոհունակութեան զզացմունքով է
որ խզել եմ և զուրս եկել զիտական գեղարուեստական և
մշակութային հաստատութիւններից։ Ճարտարապետական
տեսակետով փուռաւոր չէնքը Սբերայի, իր ամառնային և
ձմեռնային ներկայացումների մասներով, մեր տրամաթիկ
թատրոնը, կոչուած «Անդուկեան»ի անունով, մեր պետական
գրադարաններն և ձեռոգրատունները, իրենց կարգաւորու-
թեամբ, իրենց հարստութեամբ և խնամուածութեամբ կա-
րող են մրցակից լինիլ Եւրոպական նման հաստատութիւն-
ների հետ։

Մեր Երեւանը, իր մաքուր և գեղեցիկ չէնքերով,
ծառագարդ պողոտաններով, հանրային պարտէ զներով և
ծաղկոցներով, իր անմահուկան ջուրին կանոնաւոր մասա-
կարարութեամբ, Սովիեթ երկիրների լաւագոյն քաղաքնե-
րից մէկն է։

Մաղթող եմ ի սրտէ որ վերահաս խաղաղութիւնը
մինի յարատեւ, որովհետեւ խորագէս համոզուած եմ որ այդ
խաղաղութիւնը մեզի համար պիտի բերէ ազգային, մաս-
սոր, հոգեւոր, գեղարուեստական և մշակութային կեանքի
մի նոր գարաշը ջան։

Գ. Պ.

Զարթօնք
1945 օգ. 19 Պէլլով

Վեհափառ Կաթողիկոսի Առաջին Տարողը

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

«Հայրենիքը ոզի և եւ սկը» կը յայտաբարէ վեհափառը:
Օգոստոս 5, կիրակի, Դամակոսի Ս. Սարգիս եկեղեցին մէջ, Ս. Պատարագի ընթացքին, Տանն կիլիկիոյ վեհ: Հայրապետը ոգեշունչ քարոզ մը խօսեցաւ: Հայտատանէն վերադարձին խօսած իր տռաջին քարոզն է առիկա:—

— Մեր եկեղեցական եւ ազգային կեանքը վերջին տասնամեակներուն փորձութեան էր ենթարկուած: Դուք շատերդ զո՞ն էք այդ փորձութեան: Շատերդ տեսաք ձեր հարագատաներու խողխողումը, տեսաք խեղճացած ազգային եկեղեցական կեանքը: Կեանքի մէջ եղի՛ր հաստատ, եղի՛ր հաւատարիմ, քո նախնեաց հաւատով:

Իմ հաւատացեալ ժողովուրդ, հաւատարմութիւնը մարդկութեան ամենամեծ առաքինութիւնն է: Ով որ ուղիղ հանապարհն է զնում նա տեղ կը հասնի: Աջ և ձախ դեգերողներն են շարունակ, որ իրենց նպատակին չեն հասնում, Եթէ որեւէիցէ բարեմաղթութիւն ունիմ իմ ժողովուրդին դո նորութիւն չէ: Զեր հաւատարմութեան համար ազօթող եմ: Եթէ մեր ժողովուրդի մէջ զուք հատուածների էք բաժնուած, ոյդ ոզին թող զարթնի, Աստուած կ'օնսէ մեր հաւատարմութիւնը:

Մենք ունեցանք մեծ յաջողութիւն Ս. Էջմիածնի մէջ: Ունեցանք միաւայն ընթացք, որ երբեք ապասել կարելի չէր: Մինչեւ իսկ խօսք չեղաւ թեկնածուների մասին: Մենք հաւատուած ենք որ Հայ ժողովուրդի մէջ նոր դարագլուխ մը ստեղծուի:

Այժմ մեր թափուր Աթոռները ունին իրենց գահակալները:— Կաթողիկոսներ և Պատրիարքներ, բայց մէկ է Հայաստանեայց Ս. Եկեղեցին: Դա մեր ոգու արգիւնքն է: Պէտք է գուրգուրանք և պահենք Մայր Աթոռը որ իր խեղճութեան մէջ է այսօր: Բոլորս հաւատք ունինք թէ պէտք

է նա վերահաստատուի լիորհ. Հայոստանի աջակցութեամբ:

Սթալինի ստորագրութեամբ վերագործուած են բոլոր շէնքերը: Միայն նիւթական շէնքերը չեն որ անցնում են մեզ, այլ հոգեւոր ձեմարանը, որպէսզի հոգեւորականներ պատրաստէ: Այս արտօնութիւնը արւում է Հայ ժողովուրդի գոյութեանը համար: Զեզ աւետել կարող եմ որ ապահովուած է տպարանը:

Վերակառաւացման համար գոհաբերութեան պէտք ունիք: Մենք տեսանք մեր հայրենիքի կենդանի վկան՝ դէպի երկինք սպացող սպիտակ գոզամներով՝ Արարատը: Տեսանք թէ թիշ մը հող չէ մնացուած անմշտի:

Տասը ասրուան մէջ մեծ փափոխութեան է հնթարկուած մեր հայրենիքը:

Մէկ ուրիշ երեւոյթ. — պատերազմի հետեւանքով երիտասարդներ պատերազմի գաշտ են զնացել, բայց կանայք պահել են նրանց տեղը: Դա հոգին է որ քարին լեզու է տալիս, թէ մենք կոնք:

Բոլոր կայարաններում մեզ գիմաւորեց ժողովուրդը: Հասանք Երեւան, ի՞նչ հրաշալի տեսարան: Հազարաւորներ սպասում են: Անցանք քաղաք, լայն, մաքուր պողոտաներ; Ամէն երկիր ունի իր պակասութիւնները, բայց մեր երկրում այնքան բան կայ դրական, որ մեր սրտերը լայնցան:

Մեր ներքին կեանքի մէջ բոլորտին անկախ ունինք համալսարան և գիտնականներու բանակ: Պետական դրագարանը ունի երկու միլիոն 200,000 գիրք և 13,000 ձեռագիր:

Մեր հաւատարմութիւնը գէպի մեր նախնեաց ոգին, զէպի հայրենիք՝ արդէն սկսել է վարձատրուիլ, հայրենիքը ողի է, սէր է, զիտակցութիւն է: Ահա այս մտքերի գումարումը հայրենիքն է:

Այդ, հայրենիքը սկսել է երեւան գալ:

Ալլոց է պաֆօրեակ

1945 օգ. 10 գլուխ

Ազգային Եկեղեցական ժողովը և ՆՈՐԱ ՆԵՐՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա.

Կատարուեց ինչ որ Հայութեան իշման էր տարիներից ի վեր, և կատարուեց լաւագոյն կերպով։ Հայ Ազգային-Եկեղեցական ժողովն էր այդ, Ամենայն Հայոց կոթողիկոսի փառաւոր և միաձայն ընտրութեամբ։

Բացառիկ երեւոյթ էր մեր պատմութեան մէջ տեսնել Համայն հայութեան ներկայացուցչութիւնը հոգեւոր և աշխարհիկ գասերի Մայր-Աթոռի կամարների տակ, սկսած Բուշոս-Այրէսից, հիւսիսային Ամերիկայից, Եւրոպայի բոլոր գաղութներից, Եղիպատոսից, Պաղեստինից, Լիբանանից, Առւրիայից, Պարսկա-Հնդկաստանից, նստած կողք կողքի և Հայաստանի և Միութեան հեռաւոր թեմերի պատգամաւորների հետ Տասնեակ հազար մզոններով իրարից հեռու ընկած տարածութիւնները, ծովերն ու ովկիանոսները, ներկայ ժամանակի հետ կապուած ճանապարհորդական դրժուարութիւնները մեծածախս, չեին կարողացել արգելք լինել ներքին մզման և բուռն ցանկութեան, Համախմբուիլ հինաւուրց Տաճարի սրբազնն կամարների տակ, տմէնքի համար տեսանելի և հասկանալի արտաքին ապացոյցն էր իւր Մայր-Աթոռով և Ամենայն Հայոց Հայրապետութեամբ, որ իրեւ մագնիսական ոյժ իրար էր բերել այլպիսի հած թուով ներկայացուցութիւն աշխարհի ամէն անկիւններից, ուր հայութիւն կայ խմբուած։

Բայց պատգամաւորներին Մայրենի երկիրն էր բերել ոչ միայն եկեղեցասիրութեան զգացմունքը, այլ և Հայրենասիրութեան։ Հայ հաւատացեալ ժողովրդի պատմական առանձնայատկութիւնն է այդ, եկեղեցասիրութիւնն ու Հայրենասիրութիւնը սերտ կապուած երեւան բերել կեանքի կարեւոր սգոյն գէպքերի ժամանակ, Ս. Սահակ-Մեսրոպների և Վարդանանց ու Ղեւոնդեանց օրերից սկսած։

Ուշագրութեան արժանիկ և քացառիկ երեւոյթ էր ժողովականների մէջ երեւան եկած ներդաշնակ և փոխազարձ հասկացողութեան գալու տրամադրութեան հոգին։ Մենք չենք տեսել այդպիսի մի մեծ ժողով, համակաւած սիրոյ և համերաշխութեան այնպիսի հոգով, ինչպէս այստեղ։ Հարաւային Ամերիկայից մինչև Խուսաստանի խորքերի պատգամուորները, տարբեր երկիրների և պետութիւնների, տարբեր լիգուններով, սովորութիւններով և օրէնքներով ղեկավարող ազգերի մէջից եկած, շատ և շատ խնդիրների մէջ էլ, բնականարար, տարբեր հայեացքներով և ըմբռանումներով . . . զգում այստեղ մի, մի մեծ, իրար հետ կապուած ամբողջութեան մասների ներկայացուցիչներ։ Այդ միութեան ներքին, մզիչ ոյժը և՛ւ եկեղեցասիրական էր եւ հայրենասիրական։

Հայաստանեաց եկեղեցին պատմական այլ պայմանների մէջ է ծագել կազմակերպուել և ընթացք սասցել, բան նորանից շատ և շատ հզօր և մեծ եկեղեցիներ։ Այսց ոչ մէկը չի կապուած այնպէս իւր ժողովրդի կեանքի և ոչ մէկը չի կապուած այնպէս իւր ժողովրդի կեանքին, պատմութեան հետ, ինչպէս Հայաստանեաց եկեղեցին, պայմանների նաև Հայոց ազգույին եկեղեցին է, Հայ հոգու պայմանների ստեղծագործութիւնը, ամուռ շաղախով միացած՝ ինքնուապաշտպանութեան, լեզուի, գրականութեան, կրկնուապաշտպանութեան, մարդկութիւնութիւնը, մէջ։ Դարերունատից և մշակոյթի բազմաթիւ մարդերի մէջ։ Դարերունատից և սովորքից եկած սրբազն աւանդն է այդ մեզ հասած։ Երբ խորքից եկած սրբազն աւանդն է գիտակցութիւնը, որ կապում Այդ աւանդի բնագան էր և գիտակցութիւնը, որ կապում էր մեզ ամէնքիս իրբեւ ամբողջութիւն։ Ահա՛ մեր ժողովի էական և ընորոշ գծերից մէկը։

Միութեան այս կապը և գիտակցութիւնը երեւան եկած և շեշտուեցաւ և մի այլ կողմից, թէ մի է և անբաժանելի Հայաստանեաց եկեղեցին, որքան և վարչական տեսնելի Հայաստանեաց եկեղեցին, որքան և վարչական տեսնելի պակէտով տարբերութիւններ լինին իւր մասների մէջ։ Եսակէտով տարբերութիւններ իւր ներքին կառավարութուսադէմի Պատրիարքութիւնը իւր ներքին կառավարու-

թեան մէջ այլ ձեւ ու կերպարանք ունի, կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը այլ իւր սահմանադրական կազմակերպութեամբ, իսկ աւելի առաջ իւր աթոռակալների գիրքով Օսմանեան պետութեան մէջ կիլիկիոյ կաթողիկոսութիւնը այլ, իւր անկախ և եկեղեցական պետի աւանդութիւններով, բայց ընդհանուր միութեան գաղափարը միշտ պահպանուած, որ այս անգամ առանձնապէս շնչառուեցաւ Ներկայ էին նախ և առաջ Երուսաղէմի Պատրիարքն անձամբ ու կ. Պոլսոյ պարիարքական տեղապահը, իրենց պատգամաւորներով և ոչ թէ ներկայացուցիչներով, ինչպէս սովորական էր: Իսկ կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ոչ միայն առաջին անգամն էր մասնակցում Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան, այլ և կաթողիկոսն անձամբ ներկաց էր ժողովին իւր եպիսկոպոսներով և աշխարհիկ պատգամաւորներով:

Ընտրական նիստը և օծման արարողութիւնները կատարուեցաւ նորա նախագահութեամբ, նիստերի ժամանակ զոյտ կաթողիկոսներն իրար կողքի, համակամ և միասիրութիրեւ հոգեւոր հարազատներ, ժողովի գնալիս և գալիս միշտ ընթացակից իրար պատրիարքի հետ, իսկ օծման գալու և վեհարան յետ զնալու թոփօրներու ժամանակ մինչեւ իսկ նոյն ամպհովանու տակ, Նորբնաիր Հայրապետի ցանկութեան համեմատ, աջ և ձախ ժողովուրդը օրհնելով, որ սրտառուչ տեսարանի տպաւորութեան տակ, յափշտակութեան էր հասած իւր ոգեւորութեան մէջ: Այս միութեան և եղբայրակցութեան հանգամանքը շնչառուեցան նաև նորահաստատ սահմանադրութեան մէջ, որի մի յօդուածն է: «Հայտառանեայց եկեղեցու միասնականութիւնը գլխաւորուած է Ամենայն Հայոց կաթողիկոսով, պատշաճ յարաբերութիւն պահելով կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ»: Արշուեցաւ նոյնպէս Հայց: բոլոր եկեղեցիների մէջ անխըստիր պատարագի ժամանակ յիշել Ամենայն Հայոց կաթողիկոսի անուան հետ կիլիկիոյ կաթողիկոսի, Երուսաղէմի և կ. Պոլսոյ Պատրիարքների անունները Յայտնի է մեր ժողովուրդին որ, Ամենայն Հայոց կաթողիկոսի անունը չէր

յիշատակում կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերում, և Ա-
մենայն Հայոց Հայրապետութեան ենթակայ թեմերում կի-
լիկիոյ կաթողիկոսի անունը: Սորանով էլ ժողովը կամեցաւ
շեշտուած լինի Հայց. եկեղեցւոյ միութիւնը:

Կարեւորագոյն երեւոյթ էր նաև Մայր-Աթոռի նիւ-
թակուն ապահովութեան հոգացողութեան խնդիրը, Յայտնի
է, որ Հայաստանում հաւատատուած նոր իրաւակարգով բո-
լոր եկեղեցիները, ինչպէս և անհատները իրաւունք չունին
հասութարեր կալուածներ ունենալու կամ շահարեր դրա-
մագլուխներ: Նոր իրաւակարգով հաւատացնալներն իրենք
պիտի հոգան եկեղեցիների նիւթական կարիքները: Բնա-
կանարար, նոյն օքէնքներին և կացութեան է երթարկուած
և Մայր-Աթոռը, որ մինչև այժմ կառավարուել է մոմա-
վաճառութեան և կամաւոր նուէրների հասոյթներով:

Բայց այժմ, թ. Խշխանութեան բարեհամ վերաբեր-
մունքով իրաւունք է տրւում վերաբանալու հոգեւոր ձե-
մարանը, ունենալու տպարան, եկեղեցական պաշտամուն և
կեանքի հետ կապուած գրքեր և հրատարակութիւններ կա-
տարելու, երբ վերակազմուած է նոր միաբանութիւն և յո-
րութիւն է առնում եկեղեցական մի նոր կեանք, նոր իրաւա-
կարգի սահմանների մէջ. Ընդարձակուում է և կարեւորա-
կոյն խնդիր գառնում նիւթական ապահովութեան հարցը:
Ժողովը երեւան հանեց նախ, թէ բաւական գումարներ նը-
շանակուած են թեմերի կողմից իրրեւ միանուագ նուէրներ
կամ «գարբասներ» ժողովի հետ կապուած ծախսերը հոգալու
և մասամբ նիւթական կացութեան օգնելու: Ճեմարանի
բացման առթիւ թեմերի և անհատ պատգամաւորների կող-
մից խոստումներ եղան հոգալու 40 սաների թոշակը, իւ-
րաքանչիւրի համար տարեկան 500 տոլար:

Գ.

Արդէն յիշեցինք, թէ այս ժողովը եկեղեցական խըն-
դիրներից գուրս եւս ունեցաւ իւր մեծ նշանակութիւնը:

Կիլիկիոյ կաթողիկոսը յայտնեց որ Եղիպտաքնտէ Պ.
Կ. Սուրենանը իրեն յանձնել է 50 եղիպտական ոսկի փո-
խանցելու Մայր Աթոռին իրրեւ տարեկան թաշտկ իւր ա-
նունով մի սանի, որ ովհաք է մշտական դառնայ, ինչպէս
գարելանքում ունի մի սան: Մայր-Աթոռի համար իրբե-
մշտական հասոյթ որչուեցաւ Էջմիածնական թեմերի եկե-
ղեցիների ընդհանուր եկամուռներից 4օ/օ յատկացնել Մայր
Աթոռի պահպանութեան, հուշուած կամաւոր նուէրները:

Այս պարագաներութեան չի ենթարկեում Կիլիկիոյ
կաթողիկոսութիւնը իրեն. նոր հաստատուած Անթիլիասում
և տարբեր պայմանների ենթակոյ, ինքն էր կարօտ օգնու-
թեան: Տաճարի նորոգութեան հոգացողութիւնը յանձնուե-
ցաւ զայդ կաթողիկոսների, իրենց զիսցած միջոցներով
ձեռք բերելու հարկաւոր գումարը, յայտնի դառնայով ժո-
ղովին, թէ նախկին նուիրակին ձեռքով հաւաքուած պատ-
րաստ զումուրն է 37 հազար տոլար: Ասկայն ժողովը չի
վերջացած, որտանամանից հեռազրական լուր ստոցուեցաւ,
թէ մի մեծունաբուստ ազգային կամնում է իմանուլ, թէ
ո՛քան ծախս կը պահանջէ տաճարի նորոգութիւնը և վան-
քի պահպանութիւնը: Այսպիսով համազգային այդ մեծ
խնդիրն էլ պիտի հոգացուի և ապահովուի հազարաւոր
տարբիների պատմական և սրբազն յուշարձանի կեանքը:
Աշխարհի ամէն կողմէներից եկած պատգամաւորները իրենց
աշքերով ահսան հայրենի երկրի պետական, անտեսական,
մատուր և գեղարուեստական կեանքի մեծ յառաջդիմու-
թիւնը կարծ ժամանակի մէջ: Տեսան Երեւանում սկսուած
սքանչելի շինուարութիւնը Եւրոպուկան մաքով, լայն և
ծառազարդ պազուտաներով, ընդարձակ հրազդարակներով,
պարտէ զներով և ծաղկանոցներով: Օպերայի և կոստյո-
ւական տան շէնքերով պարծենուլ կարող ենք մեզնից
թուով շատ աւելի մեծ և պետականութեամբ հին ազգերի
առաջ, գեղեցիկ, հայակապ, Հայ ճարտարապետական ոճով
ու զարդարանքով, անման թամաննեանի գործերը: Տեսան
գեղարուեստական, պատմական, ազգագրական, հայ գրող-
ների, երկրաբանական թանգարանները, հուշեանց պահ-

պահութեան կոմիտէն, պետական կեզրոնական Գրադարանը
(տպած զրքերի) իւր երկու միլիոնի չոփ զրքերով, մասե-
նագարանը (ձեռագրատունը) տաս հազար ձեռագիրներով և
երեք հազարի չոփ ֆրազմենաներով, Հայ ժողովրդի ամե-
նամեծ գանձը, կարգաւորուած և մշակուած ցուցակներով,
որ մեծ օգնութիւն է գիտութեամբ զրագուազների համար,
պահպանութիւնն էլ խոնմ քայլ և աշխատաղ պաշտանեաներով:

Մրագրուած է մեծ և փառաւոր շէնքեր շինել թան-
գարանի և մատենագարանի համար և... կարող էք մրաց-
ծել, զարգարուած է. Մահակի և Միարոպի, Նարեկացու և
այլոց արձաններով, որոնց նախագծերը ցայց դրաւած ան-
սանք մատենագարանի պատերին: Բարեւ քանինինդ տարի
առաջ է. Յեզափիսութեան սկզբնական շրջաններում շատ
հայրենակերներ մատենագութեան մէջ էին, թէ ի՞նչ պիտի
ՏՈՒՄՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՎՄԲ ԱԶԳԻՄ ԵԳԻՍԿՈՊՈՍԱԳԵՏ ԵԲ
ԿԱԹՈՂԵԿՈՍ ՏԱՆ ԿՈԼԻԿԻՈՅ. ՇՆՈՐՀՅ, ԱՅՐ, ԽԱՂԱՂՈՒ-
ԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԵԼ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ Ի ՄԷՆՉ:

Կիլիկիոյ Կարողիկոսարանին Օգնոյ Միութեան
Կեղրանական եւ Մասնանիւղերի Վարչութիւններին,
Բարեւարեներին եւ Անդամներին Ամերիկայում:

Քաջայոյն ենք որ Զեր Միութիւնը, գօտեպնդուած
իւր առաջադրած բարձր նպատակով՝ զաղափարականից
անցել է արդէն գործնականին: Պատմական հանգամանք-

ների բերումով, Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռը զըրկուած իւր նուիրական որբավայրից, հարստութիւնից եւ կալուածներից, հաստատուել է այս հիւրընկալ ափերի վերայ, ուր վայելում եկեղեցական և մշակոյթային ամենայն ազատութիւնն Բայց ինչպէս տեղափոխուած ծառը յատուկ խնամք և աշխատանք է պահանջում, իւր նոր վայրում արժատներ արձակելու և պողաբեր գառնալու համար, այդպէս և այս Աթոռը:

Օրհնեալ լինի մեր նախորդների յիշատակը, որոնք ամենայն գֆուարութեան տոկալով, ազգ՝ բարերարների օժանդակութեամբ կարողացել են ձեռք բերել յատուկ կալուած, ուր շինուած են Տաճարը, Վեհարանը, Դպրեվանքը և այլ շենքեր։ Բայց իւր բարձր կոչման համապատասխան գիրք ստեղծելու և գործ կատարելու համար, պակասում են մեզ հարկաւոր միջոցներ։ Կիլիկիոյ Աթոռը ո՛չ միայն կրօնական—եկեղեցական մատուկարարութեան կերպոն է, այլ եւ գործոցական, մշակոյթային և զիտութեան առպարիզում շատ գործ ունի կատարելու։ Մեր Դպրեվանքից պիտի սպասենք կրթուած եկեղեցականներ և ուսուցիչներ, առանց որոնց ո՛չ եկեղեցին և ոչ գպրոցը կը ծառայեն իրենց նպատակին։ Մենք պիտի ունենանք բանիմաց և կրթեալ եկեղեցականներ և ուսուցիչներ, որպէս զի կենգանի խօսքը եկեղեցու բեմից և գաստիարակութեան զովարար աղքատըները չցամաքին մեր գպրոցներում։ Առանց տպարանի, առանց մամուլի, առանց զիտական աշխատութիւնների և հրատարակութիւնների մեր լուսաւորութեան լապտերը ազօտ կը լինի և անբաւարար։ Մեր Աթոռի կոչումն է եկեղեցական կեդրոն լինելոց զատ՝ լինել և լուսաւորութեան կեդրոն։

Բայց այս և սրանց նման բազմաթիւ այլ պէտքերի լրացման համար հարկաւոր են նիւթական միջոցներ, որ չունի Աթոռը՝ նոյնիսկ մի երրորդը բաւարարելու չափով։ Անա այս մտքով էր որ Մեր Ամերիկայում եղած ժամանակ ծրագրեցինք հիմնել Կիլիկիոյ Աթոռին Սկնող Միւթիւնը, մօտաւորապէս նոյնպիսի կազմութեամբ, ինչպէս

Կ. Պոլսի Աղջային Հիւանդանցի Օդնող Ընկերութիւնն է:
Առաջին հերթին կիլիկեցիներու պարտականութիւնն
է ջերմագետ յարիլ այս Միութեան, որպէսզի հոգեւոր կի-
լիկիւն մնայ պայծառ և կենդանի, բայց և ամենայն զի-
տակից և ազգասէր հային Ամերիկեան մեր շատ մը զա-
զութներում գեռ չունինք մասնաճիւղեր, ինչպէս Տիբ-
րոյին է, ևս Անձեւուր, Չիկագոն, նաև Հարաւային Ամե-
րիկան, որի բարեջան Ասաջնորդը՝ Տ. Գարեգին Արքեպո-
խոսացել է կազմակերպել այդ գործերը իւր թեմերի
մէջ և թէ հետամտութիւն լինի, կաթիլների հաւաքում-
ներից մշտահոս աղբիւր կը ստեղծուի:

Մեր յորելեանի հետ կարուած նուիրաբերութեան
մի մասը արգէն ծախսուած է այս երկու տարուան նախա-
հաշուի պակասները լրացնելու։ Շտագեցնել պէտք է օգ-
նութիւնը, որպէս զի այս գումարի մնացորդների հետ,
կարողանանք մի կարուած ձեռք բերել և մշտական եկա-
մուտի ազրիւր ստեղծել։ Այդ նպատակի համար կազմել
ենք մի Յանձնաժողով՝ գրամական և շուկայի գործերի
մէջ փորձառութիւն ունցող մարգկանցից, որոնց աջակ-
ցութեամբ պիտի կատարուի այդ գումարների լաւագոյն
օգտագործումը։

Ժամանակին հաշիւ կը տրուի այդ մասին և առ հա-
սարակ մեր ստացած զումարների գործադրութեան մա-
սին, ինչպէս միշտ ենք կատարել։

Հայրապետական օրհնութեամբ

Տաւա. Կոնդակս
Կ-16 Դեկտեմբերի 1945.

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՏԱՆԻ ԿՈՒՆԻՄՈՑ

յԱնդիլիս



ԿԱՏԱՐՈՒԻԱՆՔ ԵՒ ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔԸ

ՄԵՐ ԿՈԹՈՂԻ ՀԱՍՏԱՏԱՆԱԼԻՄ

Քսանեհինդ տարի առաջ չունէինք ոչինչ, այժմ
ունինք Անթիլիասի կալուածը իւր հին շենքների մնացոր-
դով, ուր միաբանութեան խուցերն են, մատենագրանը,
տպարանը։ Նոր են շինուած մեր փառաւոր Տաճարը հայ
ճարտարաբռւստական ոճով, վեհաբանը, Դպրեվանքը։
Շենքերից գէզի ծովը ունինք բաւական լաւ մշակուած
պարտէղ։ Ունինք և Աէրեան կալուածը, որ յուրանք շու-
տով կ'աղատուի զինուորական նպատակով եղած զբանումից
և մեր մնայուն կարեւոր եկամուտներից մէկը կը լինի։
Չունէինք միաբանական նոր սերունդ, որովհետեւ չունէինք
ժառանգաւորաց գպրոց, իսկ այժմ գպրոցի հետ ունինք
երիտասարդ վարժապետներ և վեց սարկաւագ, որոնք մի
տարուց յետոյ կ'աւարտեն իրենց ուսումը և վարդապետ
կը ձեռնադրուին։ Օհնութեամբ պիտի յիշենք Մեր նա-
խորդների։ Տ. Սահակ, Բարդէն և Պետրոս կաթողիկոսների
իրենց գործակից եղիսկոպանների՝ անունները, որոնք նիւ-
թական ամենագժուար պայմանների մէջ աշխատել են և
բարերարների օժանգակութեամբ, ձեռք բերել կալուածը,
և Տաճարը, Վեհաբանն ու գպրեվանքը շենքը կառուցել,
և այն վիճակը ստեղծել, որի համառօտ նկարագրութիւնը
առէինք։

Բ.

Սակայն մեր առաջ մէծ կատարաւելիք կայ նիւթա-
կան և բարոյական շինաբարութեան, կաթողիկոսարանը
իւր անուան արժանի բարձրութեան և կարդանութեան
հասցնելու համար։ Կատարելութիւնն ու յառաջգիւմութիւ-
նը երեւան է զալիս հետզհետէ, աստիճան առ աստիճան,
առաջին աստիճանն անցել ենք արգէն, պէտք է երկրորդը
և երրորդը թեւակումել։

Շինուած է մէծ և փառաւոր Տաճար, բայց նոյնիսկ
տաճարը իրեւ շենք պակասութիւններ ունի, վերջաւո-

բուած չէ բոլորովին։ Արձագանդ է տալիս շատ ուժեղ
կերպով, խառն աղմուկի վերածելով երգեցողութիւնը, և
անլսելի գարձնելով քարոզւ։ Պատերազմը արգելք է եղել
կարգաւորել այդ պակասը։ Հոյսկապ տաճարի պատերը
մերկ են, ոպիսակ վարից վեր՝ մինչեւ զմբէի տռաստա-
զը, մինչեւ, եթէ կարողանանք հայ արուեստի ոճով
ծագկագարգել և հարկաւոր տեղերում մի քանի պատկեր
զետեղել, մեր տաճարը կը գառնայ Պէյրութի աչքի ընկ-
նող, գեղարուեստական և փառաւոր շէնքերից մէկը։ Սո-
րան էլ համապատասխան երգեցիկ խուժը պիտի լինի,
որպէս զի երջ, քարոզ ժամացութիւն և յարգաբանք
միացած իրար լրացնեն և ազօթողի մէջ կրօնական ար-
բամադրութիւնն և զգացմունք յառաջ բերեն։

Հեռուից տաճարի թողած արտաքին տպաւորու-
թիւնը կիսով չափ պակասում է, երբ բակն ենք մտնում։
Պատերազմը և նիւթականի պակասը արգելք են եղել
մուտքի մեծ գրան վրայ վայելու կամար կանգնել և փո-
քը ինչ գեղարուեստական գուռ կախել։ Իսկ բակը քար-
քարու կամ փոշոտ վիճակի մէջ, անձեռւի ժամանակ ցեխ
կամ լճացութեր և չոր եղանակին փոշի։ Այդ պակասու-
թիւնը առաւել ևս զգալի է գառնում, երբ գարելվանքի
սաները խաղում են, վազում, իրենց պատանեկան եռան-
գի և շարժման պահանջների համեմատ։ Բակը, ուրեմն,
պէտք է սարշատառակել կամ ասֆալտել, առողջապահան
և զեղագիտական պահանջներով, տեղ տեղ ծաղկանոցներ
կամ մշտագալար թփեր գնելով, ուր յարցար է։

Մեր ամենամեծ պակասութիւններից մէկն էլ այն
է, որ ամարանց յոնինի։ Անթիլիսասի կլիմայական պայ-
մանները ամեններին թոյլատու չեն, որ կաթողիկոսը կամ
միաբանութիւնը ամառուան անտանելի, խեղգիչ շողերին
մնան իրենց տեղում, այդպէս և մեր ժառանգաւոր ու-
սանողութիւնը, որին ստիպուած ենք լինում իրենց ծնող-
ների մօտ ուղարկել, որ մեծ մասով չքաւոր ընտանիք-
ների զաւակ լինելով, ուռուում են այլ և այլ տեսակէտ-
ներով։ Ամոռը, ամբողջ չորս ամիս, վարձու տան մէջ

ամփոփուելով, խանգարւում է բոլորսվին միաբանական կեանքն ու կարգաւորութիւնը՝ իսկ ամարանց՝ առանց եկեղեցու՝ անկարելի է մեր հաստատութեան համար, եթէ ոչ մեծ գոնէ մի մատուռ պիտի ունենանք։ Այսուեղ բոլոր յարանուանութիւններն ու եկեղեցիները ունին այդ յարմարութիւններ։ Մենք նորեկներ ենք, բայց այդ պակասը պէտք է լրացնենք առաջին հերթին։ Արգեն մի աղգային, որ գեր չէ աւզում իւր անունը յիշուի, արբամադրել է մեզ որոշ չափով գետին և 10,000 սիւրիական սոկի մատուռի շենքին համար, մոռմէ է, որ Աստուածած ուրիշ բարերարներ ուղղարկէ, ամարանցի հողն ու շենքը հոգալու։

Ունինք նորակազմ մատենադարան, Աթոռի կարերեւորագոյն հաստատութիւններից մէկը, բայց չենքը, որի մէջ դասաւորուած են գրքերը, յարմար չէ։ Առ ժամանակ միայն կարող ենք համակերպութիւն, բայց վաղը մենք աւելի մեծ միաբանութիւն կ'ունենանք, ուստուցչական խըմբի հետ դրսից եկող աշխատադների թիւր աւելի կ'ստուարանայ, ամենեւեին արտօքին յարմարութիւն չունինք զրական-բանասիրական աշխատանք կատարողներու համար աւելի հրապուրիչ և հանգստաւէտ գարձնել մեր հաստատութիւնը, որ անհրաժեշտ է մատուր աշխատունակ տրամադրութիւն ստեղծելու համար։ Մեր մատենադարանը ուր է թէեւ գեր շատ հարուստ չէ, ընդամենը մօտ ութ հաղար կտոր, բայց թանկարժէք և հաղուագիւտ գրքեր կան նրանց մէջ, եւ բաղկացած են հետեւեալ միութիւններից։ 1. — Մկրտեան քահանայի գրքերի։ Կ. Պոլսի թերթերի։ մի քանի ձեռագիրների և գիւղանական թըղթերի ժողովածու։ զնուած Գարակէօղեանների ծախքով։ 2. — Զաւէն Պատրիարքի նուէրը՝ 1000 կտորից բաղկացած։ 3. — Բարգէն Կաթողիկոսի մատենադարանը և գիւղանը։ 4. — Հանգուցեալ Գալոզ ճեանը կալուածի զնման հետ նուիրել է կարեւոր գրքեր։ 5. — Կարոյեան Սրբազանի գրքերը։ 6. — Հանգուցեալ Արքէն քահանայ Թորուեանի կտակով թողած գրքերը, որ Ամերիկայից մենք

ենք բերել երկու մեծ արկղ : 7 .— Վերջապէս մեր անձնական մատենագարանը , ինչ որ Ամերիկայից բերել ենք մեզ հետ և մեր անձնական Դիւանը , որ առ այժմ մեզ մօտ ենք պահում , և Դերենիկ վարդապետի մատենագարանը , որ բաւական հարուստ է : Անինք և մի քանի ձեռագիրներ նոր ձեռք բերուած կամ նուէր սուացուած մեր ժամանակ , որոնց վերայ եթէ աւելանան նոր խոստացուած և եկեղեցիների մէջ ցրուած ձեռագիրները , կ'ունենանք սկզբնաւորութիւն և մի փոքրիկ և արժէքաւոր ձեռագիրների ժամագալուի : Մենք մատենագիր ենք միւնցների գիմելու մատենագարանի մասնագիտացման եւ հարստացման համար , որին յարմար չենք պիտի ունենալ : Այդունք կարելի է ձեռագրատան հետ և փոքրիկ պատկերասրանի հիմք զնել հայ արուեստագէտների գործերից : Բայց այդ չենքի պատրաստութիւնից յետոյ :

Մեր միաբանութիւնը տեղաւորուած է այժմ Ամերիկացիներից մատած մի չենքի մէջ , որ բաւարար չէ մեր կարիքներին , վաղը միւս օրը մեր միաբանութիւնը աւելի մեծնայ , նրանց համար խոցեր եւ բնակարանի յարմարութիւններ չունին : Նոր չենք չինել կամ եղած "չենքի վրայ երկրորդ յարկ բարձրացնել , ստիպողական կատարելիքներից մէկն է :

Վեհաբանութիւնը իւր իննաշարժը չունի , եղածը հնացած է , և զրեթէ , անզործածնելի զարձած : Ամէն անզամ , որ մի տեղ պիտի զնանք կամ պաշտօնական այցելութիւն կատարենք , ստիպուած ենք այս կամ այն ազգայինին գիմել և և նորա կառքը խնդրել : Ինքնաշարժ կառք ունենալ , ամենաանհրաժեշտ կարիքն է , որ պէտք է լրացուի : Նաեւ մեր միաբանութիւնն համար հորկաւոր է փոխազդութեան միջոց և գիւրութիւն ունենալ , հովուական , վանական և այլ հանգաման բներով գործի ուղղելիս : Առանց գիւրութիւնների գործերը կը կատարուին զանգաղ , անկանոն և երբեմն էլ նոյն խոկ կը խափանուին :

9.

Նիւթական շինարարութեան հետ՝ պականեր կան լրացնելիք մշակուրային և բարոյական ժինարարութեան ,

Աթոռի կոչման և անմիջական պարտականութիւնների հետ կապուած: Առաջին հերթին մեր Դպրեվանքը, որ ժառանգաւորաց գովոց է, որտեղ մեր միաբանութեան համար նոր անդամներ պիտի պատրաստուին, ժամանակակից դիտութեան և քաղաքակրթութեան մակերեւոյթի վրայ կանոնած, իրենց եկեղեցական աղջային պաշտօնի համապատասխան զարդարմամբ, բայց և քահանաներ, և ուսուցիչներ, ոչ պակաս կարեւոր մեղ համար: Այլեւս միմիայն աստիճանի և պաշտօնի բներած հեղինակութեամբ ժողովութեամբ և եկեղեցի առաջնորդել և կառավարել ։ Ենք կարող: Կեանքը գարձել է բարդ և բաղմապահանջ, զորա հետ էլ ուղղութիւններն ու ըմբռնութիւնները, ճանապարհները բազմատեսակ: Այս բազմազանութեան մէջ մեր աղջային եկեղեցու գնալիքը ուղիղ լինի որոշ և պարզ, աւետարանի և մեր հայրերի հոգւով լուսաւորուած՝ գեղինը նորը: Առանց անտեսելու ստեղծուած բազմազանութիւնները, չպէտք է մոռանանք, որ արտասահմանի մէջ Սփիռաքի հայութիւնը, և յատկապէս Մերձաւոր Արեւելքում, եկեղեցական-աղջային համայնքներ են, Մենք ունինք գարերի պատմութիւն, զբականութիւն և արուեստ, երաժշտութիւն և ընդհանութը մշակոյթ: մեր Դպրեվանքը ի վիճակի պիտի լինի իւրացնելու այդ թանկադին ժառանգութիւնը, ուղղութիւն, հոգի և կետնք ստեղծելու իւր սաների մէջ այդ գծով, որ առաքելական կոչում զգան իրենց մէջ, հոգեւոր վերածնութեան և մշակոյթի յառաջդիմութիւն գրուակիր՝ իրենց վիճակուած ուղինքով:

Բայց ոչ մի բան, առաւել ևս հանրական ծառալ և բովանդակութիւն ունեցող զորձեր, առանց կարգաւորեալ աշխատանքի, նիւթական և բարյական զնաբերութեան չի կատարուամ: Դորա համար էլ Դպրեվանքը մեր մըտահովութեան կեցընն է կազմուամ. մեր սուղ միջոցների մեծագոյն մասը նորա բարձրացման, զարգացման նուիրուած: Տարւան վերջը 23 ուսուանող ունէինք սարկաւագներով, այժմ քառասուուն ունինք, կը կամենայինք յիսուն ունենալ, որ տարաբախտաբար անհնարին է՝ տեղի փոք-

բութեան պատճառով Աւասուցչական խումբը ընդարձակել
ենք մասնագէտ նոր ոյժերի յաւելմամբ, երկուոր աստը-
ւածաբանական գիտութիւնների և երկուոր երաժշտութեան.
թէ մէկը և թէ միւոր կարեւոր՝ Դպրեվանքի մակարդակը
բարձրացնելու և իւր նպատակին հասցնելու համար: Ա.
Դրբի քննական-պատմական ուսումնասիրութեան, մէկ-
նաբանութեան, ընդհանուր և հայ եկեղեցական պատմու-
թեան հետ կապուած գիտութիւնները երկուոր բաժնուած
յանձնուած են Տ. Եկեղենիկ վարդապետին և Դր. Թոփէնա-
նին: Մինչեւ իսկ մենք յանձն ենք առել շաբաթական մի
ժամ զատախօսել Հայ Գրչութեան Արուեստի պատմու-
թիւն: բայց գեռ լրացած չենք համարում ուսուցչական
խմբի կարգը և թէ մեղ հարկաւոր պատրաստ մարդիկը
չդանենք, պիտի աշխատենք պատրաստել հետզհետէ, գիւ-
թական զաւագանք չունինք մի անդամից ժայռից ջուր բը-
խեցնելու:

Այս հոդին և զործը, որ կամենում ենք սուեդուի
և ծաւալուի մեր Աթոռի շուրջը, միայն Դպրեվանքով չի
սահմանափակեւում: Աւելինք մեր «Հասկը», որի խըմ-
բագրութիւնը վերակազմուած է, հին անդամների վերայ
աւելանալով նորերը՝ Աթոռի միաբաններից և Դպրեվան-
քի ուսուցիչներից, յուսանք թէ գրուից ևս նոր աշխատա-
կիցներ պէտք է աւելանուն հետզհետէ: Մեր ցանկութիւնն
է, որ «Հասկը»ը ընդարձակուի և ճախանայ բով անդամու-
թեամբ և տարածուի ժողովրդի մէջ: Առօրեայ թերթերի
կոչումն ուրիշ է, քան մեր Հասկինը, իբրև Աթոռի և
ընդհանուր եկեղեցական բերան, նա պէտք է առաջնորդող
և ուղղութիւն տուողի գեր կատարէ եկեղեցու հետ կա-
պուած գործերի մէջ ամենայն ուղղամտութեամբ և լըր-
ջամտութեամբ, մշակուած յօդուածներ առյ մեր անց-
եալի և ներկայի հետ կապուած, ոչ խիստ մասնագիտա-
կան, միջակ ընթերցողին մատչելի, ինչպէս և ապագայի
համար անհրաժեշտ թելագրութիւններ: Յատուկ բաժն-
ներ պիտի աւելանան օտար եկեղեցիների մէջ երեւան ե-
կած երեւոյթների բացարութեամբ, հայ օտար ազգերի

կեանքի մէջ գրական և գեղարուենստական երերի և ըստեղծագործութիւնների մասին, յատկապէս կը կամենայ «Հասկ»ը ընթերցողներին իրազեկ պահել Հայաստանի և Սփիւռքի մէջ կատարուած գրական-հայագիտական-գեղարուենստական և մշակոյթային երեսոյթներին, լուրերով և գրախօսականներով, «րքան հնարաւոր կը լինի այդ և մեղ մատչելի մեր առաջնորդութիւնները և նրանց ենթակայ հաստատութիւնները՝ կաթողիկոսարանը և Ամբագրութիւնը իրազեկ պիտի պահեն իրենց շուրջը կատարուած անց ու գարձի և իրենց յուղող խաղիքների մասին»:

Դ.

Բայց «Հասկ» միայն ընթացիկ և կեանքի և երեւոյթների վերաբերեալ յօդուածներ կարող է տալ, մինչդեռ մեր միաբանութիւնն ու կաթողիկոսարանը և Դպրեգանքի ուսուուցութիւնը պիտի նուրիւուին և զիսական աշխատների և նրանցակուրեան: Հանգուցեալ Բարգին կաթողիկոսի Զեռագիրների երկու մեծ ցուցակները կ. Պոլիսի և Գաղատիոյ շրջանի, մուժ ևն առանց տպագրութեան. մենք թեթեւակի թերթելով տեսանք թէ շատ նորութիւններ կը բերեն յատկապէս մեր Ժի—Ժի գարերի կեանքի և մշակոյթի պատմութեան, եթէ հրատարակուեին և մատչելի գառնան բանասիրութեան: Աշխատութիւններ ունին Փառէն Շ. Վարդապետուք, ուսուուցիչներից ոմանք, Դերենիկ և միւս վարդապետները, հետզհետէ կը լծուին նման աշխատութիւնների: Մենք էլ անձամբ ունինք հրատարակելիք հատուրներ հայ արուեստի և. մշակոյթի վերաբերեալ Եթէ հնարաւորութիւն ունենանք, կը կամենայինք նոյնիսկ աւելի հեռաւոր բանասէրների գործեր հրատարակել, մի այլ տեսակի մեցանակաբաշխութիւն հաստատելով, արժանաւոր գործերը տպագրել և գրքերի կէսը հեղինակներին յանձնելով իրեւե վարձատրութիւն և խրախոյաւթայց այդ բոլորը կախուած է մեր տպարանի կարգաւորութիւնից և հարստութիւնից, որ նիւթականի հետ է կուպուած: Այդ ուղղութեամբ էլ որոշ խոստում ունինք ստա-

յած, եթէ Աստուած տայ, գորա իրականացումը շուտ տեսնել, մեր յաջողութեան կարեւոր պայմաններից մէկը ստեղծուած կը լինի:

Յիշեցինք և կեղական երածըութեան մասին, աւելացնում ենք՝ և ժողովրդականը: Մեզ ժառանգութիւն մնացած այդ աննոման գանձերը դատապարտուած են մեռնելու և յաւիտեան ոչնչանալու, եթէ չշտապենք, գոնէ, մնացորդները փրկել: Շատ բան կատարուած է, ի հարկէ, բայց քիչ չեն կատարուելիքները: Պէտք է ձայնազիր միևնայ պլազմեր ձեռք բերել և մի մասնագէտ մարդու յանձնելով, հմտու երգիչներն ու բանահիւսութեան մնացորդները զրի առնել, և գորանով ոչ միայն կորստից փրկել դարերից մեզ հասած այդ ժառանգութիւնները, այլ և ատազն մատակարարել ապազայ կոմիտասներին, եկամայեաններին, ապազայ Մանուկ Աքեղեաններին և լեզուաբաններին, որոնք կ'օգուազործեն իրեն մասնագիտութեան համար:

Ժողովրդական արուեստն ու բանահիւսութիւնը արմատն է ազգային, մշակուած բարձր արուեստների ուսումնացման և զարգացման, սղբիւրն է մեր լեզուի ճռխացման և կենդանութեան:

Մեր շարականներից և մեղեդիներից սմանց մէջ այնքան երաժշտական հոգի և արուեստ կայ, սքանչացում և սլացում դէպի վկեմը, նոտիրում և վառարանութիւն Ասուեծոյ մեծութեան... համեմատ զրական բովանդակութեան, որ եթէ հաւաքուին և մտքուեին աւելորդ պահուանքներից, երաժշտական—զեղարուեստական մշակոյթի ենթարկուին, երեւան կղայ առաւել ես, քան մինչեւ այժըմ յայտնի է, հայ սուեծազործութեան մեծ շէնքերից մէկը, որ և կեղական հիմ երածըութիւնն է, նոյնչափ մեծ և արժէ քաւոր, ինչպէս հայ ճարտարապետական և մանրանկարչական արուեստները:

Եկեղեցական շարականների և մեղեդիների հաւաքաման այս գործը կարող է զլխաւորել լաւագոյն կերպով Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Գէորգ Զ., որ ո՛չ միայն

երաժիշտ է ինքը, այլ եւ էջմիածնում իւր մօս ունի շարականների և մեղեգիների քաղցրաձայն երգիչ, յայտնի Տէր Նիկոլը, որ սկսում է ծերանալ և յաւիտեան չպիտի ապրի: Շատապել պէտք է:

Երգեցութիւնը պէտք է կանոնաւորել, բաղմաձայն և զեղարութեաւական դարձնել, զոնէ, մեծ քաղաքներում և Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնն թերեւընւմ, ուր հնարաւոր էր, ուրծագրութեամբ, նոյնը կատարուում է Եւրոպայում, Ամերիկայում, Եղիպատում, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն մէջ շատ համեստ ենք այդ կողմից: Հայ եկեղեցու բարեկարգութեան մեծ խնդիրներից մէկն է այդ, որի վերայ յասուկ ու շատութիւնն պէտք է քարձնել: Պահելով մեր եկեղեցական երգեցողութիւնն եղանակները, հոգին և ոճը, կանոնաւորել, բաղմաձայն դարձնել պատարազը, նոյն իսկ որոշ տօների երգեցողութիւնը, որդընի կամ, զոնէ, Ֆիոհարմոնիի նուազակցութիւնը: Ներդաշնակ երգեցողութիւն, իմացական և պատշաճ ժամանացութիւն, պատրաստուած և մշակուած քարոզի հետ, մեր ժարմերգութիւնն ու արարողութիւնը կը գարձնէ տպատորիչ և զաստիարակիչն ամէն տեսակետով, մանաւանդ ունինք Եկեղալեանի շքեղ, փառաւոր և կոմիտուով վարդապետի նուրը, զեղարուեստական, ապաւորիչ և կրօնական զգացմունքով պատարացները:

Հիմքն ենք գրեր մեր ծոլով բականին: Նոյն մը բարերի կէսերից յետոյ Բէյրութիւնը ոկտոս են զաստիառական հաւաքայթներ կանոնաւոր կերպով, Կաթողիկոսարանի հովանաւորութիւնն տակ, կրօնական: պատմական դրական, զեղարուեստական, զաստիարակչական, և նաև առողջապահական նիւթերի մասին: Փորձով զիտենք, թէ ի՞նչ որհնութիւնն կարող է զառնալ այն, մտաւոր և հոգեւոր կեանքի ծարաւ ժողովրդի համար: Այդ փորձը միայն մենք չենք, որ կատարում ենք, ուրիշները նոյնպէս կատարել են և կատարում են, բայց վնաս չէ, որ Կաթողիկոսարանը իւր Լառանը ունենայ: Ժողովրդի հետ խօսելու և

ուսուցանելու մի տարբեր հաստատութիւն։ Մենք գէմ չենք զործակցութիւն սկսել ուրիշ խմբերի հետ ևս, զուտ գիտական—մշակոյթային, դրական—գեղարվեստական հոգի վերայ։ Այս զործի մէջ իւր զործնական աջակցութիւնը կը բերէ մեր հովանաւորութիւնը վայելող Հայ երիտասարդաց Միութիւնը մեր հրահանդների համեմատ։ Գործի զեկավարութիւնը յանձնել ենք Տ. Դերենիկ Վարդապետին որին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն մեր միաբանութեան և Դպրեցական բժմքի անդամենուրը։ Այսպէս ընդարձակ է զործելու առարեզը, միան աշխատելու փոքր ինչ լաւագոյն պայմաններ ստեղծուին։

Այս յօդուածը կարգացողներից սմանք, դուցէ, կը ժապտին և երազ կը համարեն։ Ամենայն իրականութիւնն սախազէ երազ է և վերացական միաք։ Հաւատով սկըսուած զործը ապարգիւն չի անցնիլ, ինչպէս բարի սերմը լաւ հողի մէջ։ Այդ հողը, այդ բարերեր հոգը, մեր սիրելի եկեղեցակը և հայրենասէր ժողովուրդն է։ Օգնեցէ ք մեղ, աշակի՛ց եղէք այս Աթոռը իւր յարեկից հաստատութիւններով և միաբանութեամբ աղջի և եկեղեցու համար կրօնական—եկեղեցեկան, զիտական—մշակոյթային կետնքի մը վառարան գարձնել, որից լոյս և ջերմութիւն տարածուի շուրջը։ Թող Աստուած օրհնէ մեր զործը, համակրութիւնն զարթեցնէ մեր ժաղավրդի մէջ և բարերարներ ուղարկէ, թէ մի քանի տարի յետոյ՝ նիւթական չենքերի հետ՝ բարյական։ Հոգեւոր—մշակոյթային նոր չենքեր ևս կանգնած են այս տեղ։

Բայց մենք գարձեալ ասելիք ունինք։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿԱԼ

Միւ նույր Հայաստանին

Երէկ, կիրակի, 1945, գեկուեմբեր 30ին կէսօրէ յետոյ ժամը 4ին, Վեհափառ Գարեղին կաթողիկոսի նախադահութեան տակ, Անթիլիասի վանքին Վեհաբանին մէջ անդի ուեցաւ մասնաւոր ընդունելու թիւն մը, բացումը կատարելու համար մասնաւոր հանգանակութեան մը, ուրուն հասոյթով պիտի զնուի կօշիկի զործարան մը և պի-

տի զբկութի Սովորեթ Հայտստան, որովէս 25ամեակի առթիւ
նուէքը՝ Սուրիոյ, Լիբանանի և Կիպրոսի հայութեան կողմէ:
Ներկայ էին Ասդ և Արտաւազդ Սրբազները և վարդա-
պետ հայրեր, Գերապատիւ Պաթանեան Սրբազն՝ կաթո-
ղիկէ համայնքին կողմէ և վերապատուելի Կէօքիէօքեան՝
Բողոքական համայնքին կողմէ, ինչպէս նաև հրաւիրեալ-
ներու սուռար բազմութիւն մը:

Առաջին անգամ խօսք առնելով Վեհափառը խօսե-
ցաւ հայակապ նառ մը, որուն զիւաւոր մասերը կուտանք
ստորեւ:

Ի սրտէ ողջունում էմ ձեր ներկայութիւնը: Զեղի
յայտնի է թէ ի՞նչ զաղափար, ի՞նչ միոք և ի՞նչ մեղ
հաւաքած է հոս: Քիչ ժամանակ առաջ, Սփիւռքի միւս
բոլոր զաղութիւներուն նման, Լիբանանի, Սուրիոյ և Կիպրոսի
հայերն ալ տօնեցին մեր պետական կեանքի 25ամ-
եակը:

25 տարին շատ կարճ ժամանակ է պետական կեան-
քի համար: Բայց այս ժամանակը օգտագործած է առա-
ւելազոյն չափով, նիւթական, մշակութային և այլ բարո-
րութեանց անսակէտով: Պատգամ առողիները իրենց աչքե-
րով անսան թէ մեր փոքր բայց թանկապին հայրենիքը
ինչպէ՞ս իր գլուխը բարձրացրել է առերակներից և կեր-
տել է երկիրը: Բացառիկ երերոյթ մըն է այն՝ թէ փոքր
հայ ժողովուրդը 25 տարուան մէջ կատարած է զարգա-
նահրաշ գործ մը: Այժմ առըստմ ենք պետական կեանք,
ստեղծագործական կեանք, նիւթական, մշակութային, շի-
նարարական և մտաւոր անսակէտներով: Մեր ժողովուր-
դին ընդունակութիւնն է զա: Աստուած տուած է այդ ըն-
դունակութիւնը: Ժիր ենք, աշխատասէր, ստեղծագործ:
Եթէ կարենանք օգտագործել ասիկա, միշտ կը լինինք ար-
դիւնաբերող: Մեր պատմութեան ամենէն փայլուն շրջանը
եղած է Բագրատունեաց շինարարական շրջանը, որ առևեց
միայն 60 տարի, և ուր ժողովուրդը կերտեց խաղաղու-
թեամբ:

Երբ խաղաղութիւն եղած է, հայը արտակարգօրէն

Հինարար և ստեղծագործող եղած է: Այսօր ալ պարագան
նոյնն է Հայաստանի մէջ:

Բայց եկաւ պատերազմը և կեանքի նշանաբանը դար-
ձաւ, մեր երկրին ու ժողովուրդին համար. «Ամէն ինչ
ճակատի և յաղթանակի համար»: Չորս տարիներէ ի վեր,
մեր ժողովուրդին կեանքը չէր կրնար զարդանալ խաղա-
ղութեան ժամանակուան պէս: Հիմա վերագարձած է խա-
ղաղութիւնը, և մեր ժողովուրդն ու կառավարութիւնը,
պետական ամբողջ կազմը, չարել են իրենց ուժերը, աշ-
խարհին ցոյց տալու. համար իրենց ստեղծագործական հան-
ճարը: Եթէ Աստուած մեր հետը ըլլայ, 20 տարիէն անձա-
նաչելի կը գառնայ մեր Հայաստանը:

Հիմա սկսած է շինարարական նոր շրջանը: Ոչ միա չ
Հայաստանի, այլ նաև Սփյուռքի հայ գանգուածները պատ-
րաստ են իրենց բաժինը բերելու ստեղծագործ մեծ զոր-
ծին: Սուրբոյ, Լիբանանի և Կիոպրոսի հայերը չեն կրնար
անտարբեր մեալ: Պարտինք մեր բաժինն ալ բերել շինա-
րարական նոր աշխատանքին: Առանց յարանուանական և
կուսակցական խորութեան, բոլորս, Սփյուռքի բոլոր հայ
գանգութիւններուն նման, բերելու ենք մեր բաժինը: Առանց
զոհարերութեան՝ արդիւնք չկայ: Մեր զոհուզութիւնը ա-
հազին նշանակութիւն ունի մեր երկրի զարդացւմին և
վերելքին համար: Մեր փոքր Հայաստանը, մեր փոքր
ժողովուրդը, պէտք է մեծ գուսնան ստեղծագործութեամբ:
Մեր մասնակցութիւնը բերենք այդ ստեղծագործութեան: Դ
Դրամը այսօր կայ: Վաղը չկայ: Պէտք է զայն զործածել
բաւագոյն կերպով, մասնակցելով ազգային վերածնութեան
և պետական կեանքի զօրագուման:

Թող յարանուանական միւս ներկայացուցիչները խօ-
սին որպէսզի ամէն մարդ հասկնայ թէ մենք մի ենք, թէ
մի լեզու ունինք, մի պատմութիւն, մի մշակոյթ, մի
ներկայ և մի ապագայ:

Հայրապետական կոնյակ

Ա. Հ. Բ. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս. Ա. Ս.

Նոյեմբեր 29ին փառաշուր հանգէսով կատարուեցա-
կանի Հայաստանի քառան և հինգ ամենակը Մեր Հայրապետու-
թեան ենթակայ բոլոր թեմերում:

Բայց սովորական տօնակատարութիւնը, որքան և զնահատելի, բաւական չէր մեր որդիական սէրն ու երախտագիտութիւնը յայտնելու գէպի Մայք Հայրենիքը։ Համաշխարհային այս երկրորդ ահաւոր պատերազմին մասնակից էր և մեր ժողովութզը։ Երկրի ամբողջ ուշադրութիւնը ուղղուած էր գէպի պատերազմի ճակատը, ամէն ինչ յաղթութեան համար, նշանաբարութեան թափը, թէպէտ կանգ չառաւ բոլորովին, բայց բնականաբար, գանգաղեց և սահմանափակուեցաւ յիշեալ պայմանների հետեւանքով։

Այժմ, երբ փառաւոր յաղթութեամբ վերջացել է պատերազմը, հայրենիքը իւր բարոր ուժերը կեղրոնացըել է նիւթական և մշակոյթային վերաշնուրթեան զործի վրայ։ Կորած ժամանակը յետ պիտի թերուի ուժերի կըրկնակի և եռեւակի լարումով և բարձր ոգեւորութեամբ։ Բայց հայրենիքը միայն Հայաստան ազգութ ժողովրդինը չէ, որչափ և նա հիմն և արմատը մեր հարստութեան և կենդանութեան, այլ ամբողջ հայութեան։ Խնչպէս «Սիիւռ քի հայութիւնը իւր բաժինը բերեց «Սաստենցի Դաւիթ» հրասայիւրի կառուցման մէջ և այլ կերպերով, այսպէս էլ մեր բաժինը պիտի բերենք հայրենիքի մտաւոր և նիւթական վերակառուցման մէջ։ Մեր հայրենիքը այս պատերազմից յետոյ պիտի ազըրի մի նոր շրջան, պետական, մտաւոր և հոգեւոր վերածութեան շրջան, նոր սոկեզարի կառուցման շրջան։ Ուստի և բարձրիս պարտականութիւնն է մեր մասնակցութիւնը բերել նորա լիսակատար յաջողութեան համար։

Մեր նախագահութեամբ, Ազգային կեղրոնական կարչութեան համաձայնութեամբ, կազմել ենք կեղրոնական մի Յանձնաժողով, որ նպատակ ունի Մեր ենթակայ Լիբանանի, Առերիոյ և Կիպրոսի հայութեան և ասնակցութիւնը բերել այս գործին մէջ, ինչպէս Եղիպտասի և այլ երկիրների հայութիւնը։ Յանձնաժողովը կազմուած է առանց կուսակցական կամ յարանուական գունաւորութեան։ Հայրենիքի գաղափարը ընդհանուր է, այդպէս էլ համազգային և ընդհանուր բնաւորութիւն պիտի ունենայ նաև որդիական պարտքի կատարումը դէպի նաւ։

Կեզրոնական Յանձնաժողովը կազմուած է հետեւեալ
անձերից . Տիարք Տաճատ Արագեան , Առենապետ , Եփրեմ
ելլեզեան , Առենագպիր , Ապրօ Ապրուեան , Գանձապահ ,
Բագարատ Պագդալեան , Հայուապահ , Տօքթ . Ագամ Մա-
նուէլեան , Մկրտիչ Մորլեան , Միհրան Զէլէպի , Տօքթօր
Զպլաքեան , Գէպրդ Պապոյեան , Նշան Տէմիրձեան , Յակոբ
Տէր—Մելքոնեան , Թագւոր Փալանձեան :

Մեր ցանկութիւնն է , որ նոյն կերպով Յանձնաժո-
ղովներ կազմուին և Մեր թերմերի մէջ , Առաջնորդների
գլխաւորութեամբ , առանց կուսակցական և յարանուանա-
կան գունաւորութեան , բայց բոլոր խաւերի և յարանուա-
նութիւնների համերաշխ մասնակցութեամբ :

Կեզրոնական Յանձնաժողովը արգէն գործի է անցել ,
և պարզել է սկզբունքը և առելիքական կողմէերի հետ
կապուած խնդիրները : Հանդանակութիւնը պիտի կատար-
ուի և հաւաքուած գումարը հաւաքուի կաթողիկոսարա-
նում , որպէսզի Յանձնաժողովը գործաքրէ իր նպատակին ,
որ է կօշիկի մի գործարանի մեքենաներ և սարք ձեռք
բերել Ամերիկայում : Հայաստան ու-
զարկելու համար : Տպեզրուած են և պատրաստ հանդա-
նակութեան համար ստացականների տամսակները , որ ու-
զարկելում է Առաջնորդքարանին : Հանդանակութիւնը պիտի
կատարուի Յունուար ամսի ընթացքում :

Հայրապետական այս կոնդակով յորդորում ենք հայ
ժողովուրդին իւր լրիւ պարտականութիւնը կատարել ,
մասնակցելով հանգանակութեան կատարեալ յաջողութեան :

Յանձնաբարում ենք այս կոնդակը կարդալ եկեղե-
ցիներում և հարկաւոր բացարութիւնը տալ քարոզի
մէջ : Եւ առաջարկում ենք հայ թերթերին իրենց աջակ-
ցութիւնը բերել գործի յաջողութեան համար :

Շնորհ Տեառն եղիցի ընդ ամենեսեան , ամէն :

ԳԱՐԵԳԻՆ Ա . ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ա Ե Լ Ս Ֆ Ա Ռ Ի Ն

Ն Ո Ւ Ւ Ր Ա Մ Ա Ր Ա Խ Ա Խ

Ով չի տեսէլ Արարափ կատարը վես,
Կապարնաւիր մեր նախանայր դիւցազնի պես,
Ասուածաղիր անման կորող խորախորհուրդ,
Թիւր բիւրաւոր սերմնդների յոյս եւ յագուրդ...,

Ով չի լրսէլ Մայր Արախի շառաշը զռու,
Եր յոյզերով, իր վետերով անզնդախոր,
Եր ջրեւրը, որ փախստմ են նեսի՝ նեսի,
Անխոս վրկայ անասէլի ոնիւնների...,

Ով չի նրապէլ Էջմիածնի սուրբ պատերին,
Մայրամատուր, անզին աւանող մեր պաօքերին,
Որ դարերին ուսուցել է կրօնի եւ ազգ,
Որ դարերից ժառանձել է փուռ եւ սատակ...,

Ով չի նանցել սուրբ Ներուսին բազմամանար,
Հայրենաւունչ սուրբ Վեւոնդին եռանդախոր,
Շնորհալուն Նարեկացուն, բարձրարրոիչ,
Եւ բոյերին ռանդիրայ թէ Լուսաւորիչ...,

Ով ուզում է հաղորդակից լինել յաւես
Մայր հայրենեաց սուրբ խորեղին երանաւէս,
Թող տեսնէ միւս, բոլ լրսէ զանգ, բոլ նրափի յար,
Թող նանցնայ յաւ, Մեծ, աննըրման մեր Վենախոտ ...:

8. Ե. ՄԱՍԻՄՈՅԱՆ

«Զարթօնք»
1945. Գլուխ

Կարողիկոսարանը պէսքէ ՆԻՒԹԱՎԵՍ ԽՆՎԱԾՈՒ ԴԱՐՁՆԵԼ

Տուր եւ տացի մեզ
Ղակ. 2. 38

«Հասկը անցեալ նոյնմբեր-դեկտ. համարի մէջ մեր
«կատարուածք և կատարուելիքը» վերնագրով յօդուածի
նպատակն էր պարզել, նիւթական և մշակոյթային այն
կատարելիքները, որ անհրաժեշտարար զրուած են մեր
առաջ, թէ կամենում ենք, որ կաթողիկոսական Աթոռը ի-
րօք կրօնական, մասուոր և մշակոյթային կեանքի կեդրոն
գոտնայ:

Բայց առանց նիւթական միջոցների և առանց հաս-
տառածն եկամուաների մեր նպատակին հասնիլ կարող չենք:

Եթէ մեր գպրեվանքը կամենում ենք, քարէճական,
բարձր գպրոցի վիճակի հասցնել բարոր գտարանների լը-
րիւ կազմով, եթէ կամենում ենք առուոր ուսուողութիւն
ունենալ, որպէսզի ամէն տարի ազգին և եկեղեցւն վար-
դապետուներ, քահանաւացուներ և առուցիչներ տանք,
պէտք է համապատասխան որուալ և չափով գտատխօսներ
և ուսանողութիւն պահպանելու նիւթական միջոցներ ունե-
նանք: Հեշտ չէ գպրոցուկան, այն էլ զիշերօթիկ, մի մեծ
հաստատութիւն պահնել առանց մշակուան եկամուաների,
յոյսը զնելով միայն ժամանակաւոր և պատահական նուիրա-
րերութիւնների վրայ:

Եթէ կամենում ենք միարանութիւն ունենալ, պատ-
րաստաւած և բանիմաց վարդապետներից բազկացած, որ-
տեղից առաջնորդեր, քարոզիչներ, կրօնի գտատառներ,
զիտական և մշակոյթային աշխատ աւորներ սպասենք, նիւ-
թական միջոց է հարկաւոր նրանց սննդեան, հագուստի և
այլ կարիքները չոգալու համար:

Առանց ցանելալ, չե՞ս հնձի:

Եթէ մեր ապարանը կամենում ենք լուսուորութեան,
մշակոյթային, գեղարաւեստական և գիտական գիրքեր ար-
պագրելու վիճակի մէջ լինի, խրախուսել կարողանանք հայ-
րանասիրութիւնն ու գիտութիւնը, պէտք է հակաւոր մե-

քենաներ, սարք, զբաշարներ և աշխատառորներ ունենանք,
իսկ այդ բոլորը առանց նիւթական միջոցների՝ միայն ե-
րազ կը մնան:

Մեր փոքր զբաղարանը, որքուն և գնահատելի գեռ
եւս սկզբնաւորութիւն է հայսպիտական հաստատութիւն
զարձնելու համար: Մենք ոչ միայն հայերէն զբքերի
պէտքն ունինք, այլ և մեծ պակաս՝ օտար լիզուներով
ապաւած զբքերի, որոնք կազ ունին մեր և զբացի ազգե-
րի, Մերձուոր Արմենիքի պատմութեան, արաւետար, և մը-
շակոյթի հետ Խնչպէս քազաքան-տնահատկուն կենանքի
մէջ կզզիոցած ազգ չկայ, այնպէս և մատոր, հոգեւոր կամ
մշակոյթային մարզերի մէջ:

Հայուսանի պատմութիւնը և մշակոյթը հասկնալի
չի լինիլ, առանց ծանօթանալու Հիսուսների, Ասորեստանի,
Աքեմենեան Պարսից, Անդեւկեանց, Պարթևների, և Հռոմա-
յացիների, Սասանեանց, Վրացիների, Բիւզանդացիների,
Արարների և Անդեւկեանց, Թաթարների և Թուրքմէննե-
րի, նոր Պարսից և Օսմանցիների պատմութեան, զոնէ, այն
չափով, որքան կազ և շփումն ունին Հայուսանի հետ:

Հայ ազրիւրները շատ բան են առլիս, բայց ամէն
բան հայ ազրիւրներով պարզել և հասկանալ կարելի չէ:
Ռւրեմն մեր մատենազարանը պէտք է նեզինեւ: ընդար-
ձակուի և մասնազիտական բաւարարութիւն ստուայ: Բայց
ամենից առաջ յարմար չէնք է հարկաւոր, որ չունինք:
Այս զեզեցիկ ցանկութիւնները նոյնպէս առանց զբաժակուն
միջոցների, զլուխ չեն գալ:

Մեր ժողովրդական և կիրակնօրեայ գպրացների
օժանդակութեան և կարգաւորութեան հարցերը կան, և
ուրիշ բազմաթիւ մեծ ու փոքր, բայց ոչ անկարեւոր, խըն-
դիրներ, որ զբաւած են մեր առաջ, որ ու այժմ չենք ար-
ծարծում, խնդիրը չընդարձակելու համար:

Արդ, այսպիսի պարտականութիւնների և ծրագիր-
ներու կատարման համար ի՞նչ միջոցներ ունինք: Մեր
զբական եկամուտների ընդհանուր գումարը աւելի պակաս
է, քան վաթուոն հազար Լիբանանեան ոսկի, մինչդեռ մեր
ելքի հաշիւը այս առքի կրկնակի է զրեթէ:

Անցեալ և այս տարուայ պիւամէի պակասները լրացրել ենք մեր Յորեկեանի առթիւ եզած նուիրաբերութիւններից և այլ մանր պատահական եկամուռներից։ Եթէ մենք չմոռածենք նոր աղբիւրներ գտնել, Յորեկեանի առթիւ մեր սասցած գումարները մի երկու, երեք տարուց յետոյ կը վերջանան, նախահաշխի պակասները լրացնելով, այնուհետեւ ո՛չ միայն ներկայ վիճակը պահել կամ աւելի զարգացնել չենք կարող, այլ ասիպուած կը լինենք եզածն է, վրայ առլ։ Մեր պատրաստ գումարներով — Ամերիկայում և Եգիպտոսում հաւաքուած և մեր տրամադրութեան տակ դրուած — կամենու և ենք մեր կալուածը ձեռք բերել իրեն մշտական եկամուռի աղբիւր, և այդ նպատակով կազմել ենք մի անականկան խորհուրդ, զրոմի և շուկայի հետ գործ անհեցող ձեռնհաս անձերից, որ յայս ունինք պիտի յաջողի մեր նպատակն իրազործել։ Բայց այդպիսի մի կալուածի եկամուռամբ աւելցրուած մեր միւս աղբիւրների վրայ, որ յիշեցինք վերեւ, գա'րձեալ հնարաւոր չէ Աթոռը կառավարել, ուր մնաց նոր ձեռնարկութիւններ կատարել ընդարձակելով մեր եկեղեցական և մշտակոյթային գործունէութեան ասպարեզը։

* *

Սակայն մենք ունինք ուրիշ հնարաւորութիւն բաւարարութեան հասնելու, ներքին աշխատանքով և կարգաւորութեամբ վանքին մէջ, և ժողովրդի փոքր ինչ աւելի նուիրաբերութեամբ, քան մինչեւ այսօր։

Ա. — Մեր տապարանը կարգաւորել և առեւտրական հիմունքներով ընդարձակել նորս գործունէութեան շրջանը, չմոռնալով մշտակոյթային նշանակութիւնը։

Այժմ մինչեւ այդ հնարաւոր չէր թղթի և գործադրների պակասութեան պատճառամբ։ Այս տարուանից այդ պակասները որոշ չափով կը հազարուին, և յուսով ենք, թէ մեր եկամուռը կ'աւելնայ այդ հաստատութիւնից մի ըշ-

դալի գումարով։ Մասդիր ենք կարձ ժամանակից յևսոյ, երկրորդ տպագրիչ մեքենայ ձևոք բերել և ա՛յլ անհրաժեշտ սարքուսորութիւն, որպէսզի մեր տպարանը Բէյրութի առաջին տպարաններից մէկը դասնայ։ Ժողովուրդը այս բանի մէջ մեզ օգնել կարող է Հանկը տարածելով, զրքերի, նույտեկազգուխների և այլ պատուէրներ առաջ մեր տըրարաննին, որ ճշգրիթեամբ և զիւրամառչելի դներով կը կոտորաւին։ Միաբանութեան կողմից այդ մաքավ որոշ աշխատանք է սկսուած, պիտի մեզ օճանգակ լինին Առաջնորդարաններն ու եկեղեցական տպարագրեալ հաստատութիւնները։

թ. — Եէրնան մեր կարուածը պատերազմի սկիզբից դրաւուած է անզիխական զիխուսորակոն իշխանութեան կողմից, չնչին վարձատրութիւն նշանակելով։ Ենդիր ենք յարուցել, յետ գարձնելու յաջողութեան զէպքում, որ յոյս ունենք մեր եկամուանները 15-20 հազար սոկով կ'աւելնան։

դ. — Մեր նորասանկ պարտէզն սկսել է արգէն առաջ պատուզ տալ որ մի քանի ամիս շարունակ կը բաւարէ Միաբանութեան սեղանառուանը, որով կը պակսի մեր ծախսը մի քանի հազար սոկով, որ գործադրուում էր վիհարաննին, Միաբանութեան, աշակերտութեան և հիւրերին պառազ մասակարարելով։

թ. — Մեր թեմերի կողմից նշանակուած Աթոռատուրքը չնոտ չնչին գումար է, ընդամէնը 10.000 սիւրիական սոկի։ Այժմ մեր ժողովուրդը այլիւս նոր անգուհան եղած և ընչափարկ ժողովուրդ չէ։ Այս վերջին 20-25 տարիների մէջ իւր աշխատութեամբ և աչքարացութեամբ չնչին բացառութեամբ տուն տեղ ունի, ձեռնորկութիւններ և վաճառականական հաստատութիւններ, մինչեւ իսկ բարեկեցիկ վիճակի հասնազներ կան։ Յոյս ունինք, թէ ընդուած պիտի գայ մեզ, քառապատկէ աթոռանս տուրքը և իւր կամուար նուիրատուութիւնները որով զգալի յաւելում կը լինի մեր եկամուանների վրայ։

ե. — Ամերիկայում սկիզբն ենք զրել Արևիկայ Կոռպորիկոսարաննին օգնող միութեան, որ եթէ փոքր ինչ աշ-

իստանք գործազրուի և մեր նախկին հօտն էլ փոքր ինչ
ձեռք մեկնէ, ինչպէս բարի սիրական ուրիշ հաստառու-
թիւնների համար, մեծ նպաստ կը լինի մեր Աթոռի մշա-
կոյթային և դպրոցական գործունեութեան բարձրացման:
Նոյն սպասում ենք և Հարաւային Ամերիկայից,
որի բարեջան Ալաջնորդը խոստացել է նման կազմակեր-
պութիւն ստեղծել: Այս գործին, երկու Ամերիկայի մէջ ես
սպասում ենք, որ առաջին հերթին մեր Կիլիկեցիները ոգ-
նութեան հասնին:

Ահա՝ մեր զգացումներն ու հարաւորութիւնները
կիլիկան Հայրապետական Աթոռը կարծ ժամանակից յե-
տոյ ինքնարաւ դարձնելու, եթէ մեր ակնկալութիւնները
իրականաթիւն դառնան մեր թեմերի և ա՛լ դադութների
իմացական և կենդանի օժանդակութեամբ, մինչեւ ոտքի
կանգնել կարողանանք, նաև մեր նորանոր և պատուաւոր
անտեսական ձեռնարկութիւններով: Կիլիկայ Աթոռը շատ
զրական գործ ունի կատարելու, եկեղեցական, դպրոցական
և մշակոյթային առաջարկներում: Մեր իզման է հազեւոր
և մտաւոր կեդրոն գործնել այն՝ յօդուած ընդհանուր Հա-
յաստանայց եկեղեցու, հայ ազգի և հայրենիքի:

«Ճո՛ւք եւ տացի ձեզ»:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՏԱՆ ԿԻԼԻԿԻՑ

«Համե» 1946 Յունիսը
Անթիլիաս

X.

Վեհ Հայրապետ կը նախազանէ ԵԿԵՂԵՑՈՒՅՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՅՑ

Գէյրութի Հայուշէն թազի Ա. կարապետ եկեղեցւոյ
անուան տօնին առթիւ, 1946 Յունիս 13ին, Ն. Ա. Օծու-
թիւն Տանն Կիլիկայ Վեհ Հայրապետը՝ Տ. Տ. Գարեգին
Ա. Կաթողիկոսը Խախտողահաց եկեղեցական արարողութեանց:

Հաւասարցնելու հոծ բազմութիւն մը խանուած էր ե-
կեղեցւոյ մէջ, տանիքներու վրայ քովնաթի փողոցներու մէջ։
Վեհափառ Հայրապետին ի պատի քանի մը անդեւ կանգ-
նած էին յաղթական կամարներ և մինչեւ եկեղեցիի փո-
ղոցը ձածկաւած էր գորգերատ։

Ա. անման պատարացը մասայց Աբրամոնի թեմին
Կաթ. փայտ. Գեր. Տ. Արտաւազը Ա. Արքեպիսկոպոս Ավեր-
մէկան և բարձրախօսի առջե վիճ. Հայրապետը խօսեցաւ
հացեածն քարագ մրտ

1

Յանձնաբար 20, կիբուժի օրը աննախընթաց ցնծութեան
օր մը եղար Անդ-Նահրի հայութեան համար։ Նոր-Մարտի
Ա. Քառա Մանկանց եկեղեցին թագականութիւնը Մարտի
Ազէտին 26րդ տարեօպարձին առ թիւ կտառարուելիք Հոգեհան-
գըստեան պաշտօնին նախագահներու հրաւիրեց Ն. Ա. Օծու-
թիւն Գարեգին Ա. Կաթողիկոսը և որպէս պատարագի՝
թիւնին կաթ. Փաթանագր. Գեր. Արքաւոցդ Արքապանը։

վեհափոռը պատշաճ ձևով ընդունելու համար, որ
մը առաջ գտարազարդ կամ արներ զետեղուած էին թաղի
մուտքին, կիրակի աստու ժամը 7.30ին սկսու ժամերգու-
թիւնը, որ բարձրախոսունեցաւ միջոցաւ ոխուեցաւ թաղին
մէջ:

ժամը 8.30ին, Նոր-Մարտունի Ազգ. վարդարանի մաս
600 երկուու աշակերտութիւնը, կալիկ ու կարգապահ, ու
առցիշներու առաջնարդութեամբ շղթայ կազմած էր ճամ-
րու երկու կազմերը: Ժամը 9.15ին խումբ մը ձերմակ շա-
պիկուոր Մարտունի հեծելորդ և մօրօնիլիսը երթառարդ-
ներու ապաւորիչ անցքը կը լույսնելը վեհափառի գարւուար:

ქართველი სამარტინო მაცხოველი მარგარებელი და მარტინი მარტინი



Նոր—Մարտի Եկեղեցւոյն Արուր

մը զինայրեր (ժանտարմ) զինուորական բարեւի կնցան: Նոր Մարտի Ազգ - վարժ .ի աշակերտութեան կողմէ ծաղկելիուն-ջեր նուիրուեցան վեհափառ Հօր, որուն կ'ընկերանային Գեր. կադ Սրբազան և երիտասարդ վարդապետներ:

Դպրոց գասը «Ռերախ լեր»ը երգելով վեհափառը առաջնորդեց եկեղեցի, ուր Թագականութիւնը պատրաստել տուած էր աւելի քան 2000 լիր. ոսկի արժողութեամբ ընտափր փայտէ հոյակապ դահմը, հայկական կաթողիկէի ոճով:

Հազուագէպ կարգապահութեամբ մը՝ ներար թէ զուրար խմբուած բազմութիւնը հետեւեցաւ արարողութեանց: «Հայր Մեր»ի ատեն վեհափառը խօսեցաւ իր ամենագեղեցիկ և ներշնչուած քարոզներէն մին: Խօսք առաւ նուն պատարագիչ Սրբազանը և զջուասեց վեհափառի արժանիքները:

Ապա Վեհափառ Հօր նոխազահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Մարտի Ազէտին դոհ զուցած բազմահարիւր նահատակներու յիշտառկին:

Յաւարտ պատարագի, Վեհափառն ու իր հետեւարդները հիւրասիրուեցան Նոր Մարտի նորակառոյց վարժարանի ճաշակառուր կերպով կահաւորուած դաստիաներէն մէկուն մէջ: Աշակերտներու կողմէ եղան ուզերձ մը, արտասահութիւններ (վ. Թէքէնոնի «Եկեղեցին Հայկականը և Յ. Թումանեանի «Լուսաւորչի Կանթեզը») ու տօներդ մը:

Թագականութեան անդամներուն կողմէ ի պատիւ վեհափառին արուեցաւ հաշկերոյթ մը, Պ. Մ. Չաքրեմանի տունը, ուր ներկայ եղան Գեր. կադ և Արտաւազդ Սրբազաններ, Հոգեշ. Վեւոնդ, Բարգէն և Տաճատ վարդապետներ, Տէր Մհարոսպ ու Տէր Հմայեակ ու Նոր Մարտի Ազգ. վարժարանի մասօրէն Պ. Սկզբակ Զաւէն:

Ժամը 3.30ին հրամեշտ առին բարձրասարինան հիւրերը աշակերտներու խանոնայու ծափանարութեանց մէջ, դոհ ապաւորութեամբ:

Գհաւառանքի արժանի է Նոր-Մարտի ժրաշան թագականութիւնը, որ քանի մը ասրբներու ընթացքին հիւանալի աշխատանքներ կատարեց: Բարեգարգուած է եկե-

զեցին, ուղարկուած է բակը, կառուցուած է լուսաւէտ և վայելուչ երկյարկանի դպրոցի շենքը 9 գտարաններով։ Նախկին խարխործ գրասեղանները փոխարինուած են նորերով։ Գնուհաստանքի արժանի է նաև ուսուցչական կազմի լուս և անձնուէր աշխատանքը։

Փափաքելի պիտի ըլլոր որ նախորդ Թաղականութեան կողմէ զնուած 4000 կանգուն հողի վրայ կառուցւէր աւելի ընդարձակ դպրոցական շենք մը, ընդարձակ բակով։

ԹԱՂԵՑԻ ՄԸ

«Ազգարար»
1946 ԳԵՐԱԿ

×

Հայրապետական Կոնդակ ՔՈՒԺԱՐՄԱՆ ՕՐՈՒԱՆ ԱՆՔԻ

Սուրիոյ և Լիբանանի Հաւատացեալ ժողովուրդին,
Քրիստոնէական «իրայ», զիոնթեան և քաղաքակրթ-
թութեան յայտարարներն են բարեկործական և բարեսի-
րական բազմատեսակ հաստատութիւնները, «րոնց մէջ և
հիւանդանոցները։ Քաղաքակրթութեան ստորին աստիճանի
վերայ եղած ազգեր զուրկ են այդպիսի հաստատութիւն-
ներից, որովհետեւ պակասում են նրանց մարդասիրական
բարձր դիտակցութիւնները։

Աւրախանալ կարող ենք որ, հայ ժողովուրդը որքան
և գժուարին պայմանների տակ ապրած վերջին դարերում
պահել է կենդանի զգացմունքը և լուսաւոր կիտակցու-
թիւնը այդպիսի հաստատութիւնների անհրաժեշտութեան։
Մենք չենք յիշում հեռաւոր անցեալի այդպիսի հաստա-
տութիւնների գոյութիւնն ու ծաղկումը Հին Հայոց մէջ։
Բաւական է մատնանշել Փրկչի Ազգ։ Հիւանդանոցը Պո-
տում, բարեսիրական և մարդասիրական մեծ ընկերու-
թիւնները ուսւահայոց մէջ, իրենց մշակոյթային և բարե-

զործական ընդարձակ զործունէութեամբ։ Նրանց կարգին է և Արտասահմանի հայոց Բարեղործական Միտթիւնը, որ օրհնութիւնն է գարձել Հայքենիքի և զաղութների ժողովրդի համար։

Շատ ժամանակ չէ որ հաստատուել են Լիբանանի և Սուրբոյ Հիւրդների վերայ մեր ժողովուրդի նոր հաստատմանը, ուստի և առաջել զնահաստութեան արժանի, որ կարողացել են ստեղծել Ազգունիքի հիւծախտառութիւնների հիւանդանոցի նման մի հաստատութիւն, որ միակն է մեր շրջապատի մէջ, միանդամայն պատուաբեր մի բռւռն հայ ժողովուրդի համար։

Առիթ ենք ունեցել այցելութեան գնալ և անձամբ ուրախութեան լիակտատար զգացմամբ՝ ծանօթանալ հաստատութեան զեղեցիկ վայրի և կարդառութեան մանրամանութեան հետ Առելի քան 116 հիւանդներ կային այսուղ մեր այցելութեան մամանակ, անցեալ աշնան, երեք կարդի բաժնուած, ունեակների և սրահների մէջ, հիւանդների մեծամանութիւնը, բնականաբար հայեր են, բայց կային եւ եղել են օտարազգիներ ևս, պարսիկ, քուրդ, թուրք, արար եւ յոյն հիւանդներ։ Քրիստոնէական սէրը միացած քաղաքակլթի ական զիստակցութեան հետ, ստեղծել է մարդկասիրութիւնն այս հրաշալիքը։ Աւելացնենք նաև որ այս հաստատութիւնը համարդային բնոյթ ունի առանց յարանուանական խորտութեան։

Լիբանանի և Սուրբոյ հայութիւնը պարծենալ կարդ է այսպիսի մի հաստատութեամբ, ուստի եւ նամեր գուրզուրանքի և հազածութեան առարկան պիտի լինի։ Աւանդական սովորութիւնն է գարձած Բուն Բարեկենդանի Առաջին Կիրակին հանդանակութիւնն կատարել այդ հաստատութեան համար։ Մենք օրհնուամ ենք եւ խրախուսում այդ աւանդութիւնը եւ յորդարում հաւատացեալների իրենց լիսաւատ նիւթական նպասար բերել, Աւածուն եւ մարգեանց հաճելի այս հաստատութեան համար, որպէսզի ան լաւագոյն պայմանների մէջ յարատեւէ եւ հաշակուի ոչ միայն Հայոց, այլ մեր գրացի ազգերի մէջ իրբեւ շո-

շափելի և տեսանելի ապացոյցը հայ ժողովրդի քաղաքականթութեան և բարեւէր ձգտութերի:

Ծնոր՞ք Տեսան եղիցի ընդ մեզ ամէն:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՏԱՆ ԿԻԼԻԿԻՈՑ

—o—

Վեհափառ Հայրապետ կը նախագահէ ՀԱՅ ՄԵՇԱՌՈՒԹՈՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՀԱԽՎԻՆՔՆԵՐՈՒԻՆ

Երեք շաբթօւան ընթացքին Հայ Մշակութային Մարմինը կազմակերպեց երեք հանգէւներ:

Առաջինը տեղի ունեցաւ 26 Դեկտ. 1945ին, բարձր հոգանաւորութեամբ Վեհ. Տ. Դարեղին Կաթողիկոսի: Մըկութային կեդր. Մարմինը բացման այս հանգէւը նույիրուած էր Սովիեթական Հայաստանի 25ամեայ մշակութային կեանքին: Պ. Յավսէփի ծըռեանի՝ գաստիարակութեան, Պ. Յ. Մատէնեանի՝ Նկարչութեան, Պ. Օ. Առատուրեանի՝ Երաժշտութեան և Պ. Դ. Գասպարեանի՝ զբականութեան մասին ըրած բանախօսութիւնները եկան հաստատելու՝ առենապետ Պ. Դ. Գուճիկանեանի բացման այն խօսքը թէ Հայ Մշակութային կեդր. Մարմինը իր «աիրոռ'վ ու միուք'վ» կազուած է Առօվիէթ Հայաստանին: Այս բանախօսներէն Պ. Դ. Գասպարեան, յայտնաբերած իր շատ ջերմ հայրենասիրութեամբ, սովիեթահայ հոգիին հիմնական առաքինութիւնները սովիեթահայ զբականութեան մէջ խռոշարկած ու դտած ըլլալով և իր հայեցի ու խորապէս տաք շունչով, ստեղծեց մոզական մթնոլորտ մը:

Պ. Հ. Գէրգէրեանի լարային քառեակները, Օր. Հ. Առաջատրեանի ու այլոց արտասահութիւններն ու մէներգները յաջորդեցին իրարու:

Պարտիահայ ուսանող—ուսանողունիներու կազմէ սարգուած «Հայկական Արակմանք»ը, որ այդ օլուան յայտա-

զըրին վերջին մասը կը կազմէր, հաւանաբար նպաստելունէր լարուած միտքերն ու շիղերը զուարթացնելու։ Պարսկահայերը դովելի յաջողութիւն մը ունեցան իրենց վստահուած այս գերին մէջ։

* Երկրորդը՝ 7 Յունվարին տեղի ունեցաւ։ Ասիկա ջութակի «Շխիթալ» մըն էր և յայտագրին մաս կը կազմէին՝ Վեթալիի, Մոցարթի, Սարազատի և Փականինիներու կարգին Արամ Խաչատրեանի, Սպենդիարեանի, Բարիտոնգարեանի և Արեգանեանի հեղինակութիւնները։ Ինչո՞ւ զուտ հայկական կտորներ չըլլային և ինչո՞ւ հայ մը չնուագէր դանոնք՝ խորհեցան շատեր։ Հայ Մշ. Կեգրոնական Մարմինը խորհեցաւ թերես թէ՝ երաժշտութիւնը հայրենիք ու ազգութիւն ճանչնալով հանգերձ միջազգային լեռու մըն է սիրտէ սիրտ նետուող։ Յետոյ՝ կլի Պէնժամին ոչ միայն Լիբանանի ու Աուրիոյ՝ այլ Պաղեստինի ու ամբողջ Մերձ։ Արեւելքի մէջ համբաւի տիրացած արուեստագէտ մը ըլլալուն՝ տեւելի պիտի կարենաբ քաղցրացնել մեր արգէն քաղցր ու սիրտի խօսող եղանակները։

Աւելին՝ կլի Պէնժամին այնքան «հայու սիրտով» նուագեց՝ որ հայկական եղանակիները հպարտութեամբ լեցացին ամէն հանգիստականի սիրտ։ Բարխուգարեանի «Օրոքան» ու «Տանն Թարթար»ը այնքան ծափահարութիւններ խլեցին որ արուեստագէտը համելի ընդառաջումով մը կրկնեց դանոնք։

* Երրորդ ձեռնաբարկը տեղի ունեցաւ ամսոյս 9ին, բարձր հովանաւորութեամբ վեհ։ Պարեզին կաթողիկոսի և ներկայութեամբ Ն. Վահեմ Տիար Ահարոնովի։ Մեծ շուշանվ տօնեցին սովիէթահայ գրագէտ Դերենիկ Դեմիրճեանի գրական գործունէութեան յիսնամեայ յորելեանը։ Բանասխաներն էին ՊՊ. Ն. Յովհաննէուեան և Բ. Եղիայեան՝ խորաստուգուած, պայծառատեսն նայուած քով մը փնտուեց ու գտաւ «Վարդանանք» պատմական վէպին ուղղակի սիրտը և խանգամավուութեամբ ու ապրումով ցոյց տուաւ գայն ունեղից հասարակութեան։ Պ. Եղիայեանի բանախօսու-

թիւնը անպատճառ պիտի մզէ շատերը որ անձա՛մբ կարգան մեր նոր դրականութեան հրաշակերտներէն եղող այդ գործը։ Պ. Պարզեւ Շահպազ՝ իրը յաւելուածական այս բանախօսութեան ապրումով ու հայեցի՛ արտայայտութեամբ կարգաց վէպէն քանի մը էջ։ «Կոմիտաս» երգչախումբը, Պ. Հ. Գէորգեանի զեկավարութեամբ՝ յաջորդութեամբ երգեց երկու խմբերգ։ Բոլորէն յետոյ վեհ։ Հայրը խօսք առաւ ։ Վեհափառը, սրամիս կատակով մը հետաքրքրութիւնները վերաբերելէ վերջ, ըստու թէ ինք ամբողջ սիրուվը կապուած էր այս երիտասարդութեան, քանի որ այս վերջինը զիտէր զնահատել իր մշակութային գործիչները և զիտէր խանդավառուիլ հայրենիքի իրականութեամբ։

Այս հանգէսը կազմակերպուած էր Պ. Ե. Մ. Ի. պորձակցութեամբ։

ԵՐԻՑԱՍԱՐԴԻ ՄԲ

«Զարթօնք»
Գլուխ, 1945

—ο—

Սովոր Հայաստանի

ՊԱՅՉԵՐԸՆՈՒՐ ՅՈՒՅՏԱՀԱՆԴԵՑԸ

ՄԵՌԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻԱՅՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱԳԵՏԸ

ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԵԼՄԻՆ ՆԵՐԿԱՅՑ ԿԲ. ԳՏՆԱՒԻՆ

Սովոր Հայաստանի Այրանանի Բարեկամներու Ընկերական հայրակցութեան սարքած և մեր հայրենիքի խորհրդայնացման 25 ամեակին նույիրուած պատկերաւոր ցուցահանդէսին բացումը Վերածնունդ Միութեան Ակումբին մէջ տեղի ունեցաւ 1946 Փետր. 7ին։

Բացումը կատարեց Տանն Կիլիկիոյ վեհ։ Հայրազետը, շրջապատռած Գեր. Տ. Տ. Խադ, Արտաւազդ Մրրազաններէ, Քահանայ հայրերէ, Հայ Ազգ. իշխանութեանց, Հայ մամուլի և առեարական դաստ. ներկայացուցիչներէ։ Ներկայ էին նաև Սովոր Միութեան հիւպատոս Պ. Ահա-

բոնով, Արար Քաղաք. գէմքեր, մտաւորականներ։ Սրա-
հը զարգարուած էր լիբանաննեան դոյներով։

Ցուցահանդէսին պատուոյ աեղը յատկացուած է հայ-
րենական պատերազմի հերոսներուն։ Յարկաբաժնին կեղ-
րոնը զարգարուած է սաղանգաւոր նկարիչ՝ կուլինցի վըր-
ձինէն ելած գունաւոր և պերճիմաստ քարտէսով մը, ուր
նշանակուած Հայաստանի զլիաւոր գործարանները, ճար-
տարարուեստի կարեւոր կեդրոնները։ Քարտէսին վըրայ
մշտարթուն և աչալուրջ կը հսկէ Սպարապետ Մթալին, իր
կողքին ունենալով Ա. Միկոյեան, Գրիգոր Յարութիւննեան
և նախագահ Մացակ Պալեան։

Բաժանմունքի վրայ են, Զօր. Բաղրամեան, Ն.
Սաֆարեան, Տիգրամանեան—Պերլինեան զօրաբաժնի
հրամանատարը։ Հոս են մեր 63 զօրավարները, Սովոր
Միութեան 96 հերոսները և 35000 պարգեւատուած մար-
տիկները։

Աջին փռուած է, լուսաւոփիւռ մայրաքաղաքը՝ Ե-
րեւան, Ստալինեան պողոտայ, Շահումեան հրազդակ,
Տէրեան փողոց, հոյակերտ պալատներ։

Հանգիստականները կարօտագին կը գիտեն Ակադեմի-
կոսները՝ Օրբելի, Մալյասեան, Տէրտիքեան, Բունեաթ-
եան, Աճառեան Ակադեմիկոսներուն գրացի են, որի վար-
պետներ՝ Աւ. Խոահակեան, Գ. Բորեան, Սիլվա Կապե-
տիկեան, Գ. Սարեան, Արագին, Հ. Յովհաննէսեան։

Երգահաններու բաժնին մէջ են, Փրոֆ. Սառաջեան,
Տիգրաննեան, և ահա Մարտիրոս Սարեանը՝ Արարատի ըս-
տարուոր նստած, անոր երկնարերձ զաղաթը կ'ուրուազձէ։

Քիչ մը անգին, Սունդուկեան տրամաթիք, Սպեն-
դիարեան Օքերա, Հայկ. Ֆիլարմոնիա, Թատերական ի-
նըստիտուտ, Երեւանի ուռու. Թատրոն։ Երգող արուեստա-
գէտներ, պարողներ, քեմական տարապներով պարողներ
և վերջապէս դիւթական աշխարհ մը։

Ապակեգարանի մը մէջ զետեղուած են բազմազոյն
կողքերով հրատարակութիւններ։ Տեղ մը պատկառազդու-
փրօֆիէսօրներ առոյզ և կայտառ ուսանողներուն կը գա-
ստանգեն։

Ա. Էջմիածնի բաժինը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ազգ՝ Եկեղեցական ժողովը, Կիլիկիոյ Վեհապետը, Երևանադէմի Ա. Պատրիարքը:

Բացման հանդէսին Տաճն Կիլիկիոյ Կաթողիկոսը
կ'ըսէ —

ԱԱԱԱԱԱ ա՛լ վերջակէտը գրած է մեր տանջանքներին — Լիբանանահայ զազութը, լիայոյս եմ, մօտ ապագայում, իր կենդանի աչքերով կը տեսնէ հոս ցուցագրուած տեսաբանները»¹⁾

աժապավորի Զայն
Գյորգի 1946 փետր. 10

— • —

Վեհապետին Անուան Տօնախմբութիւնը

1946 փետր. 28, Վարդանանց տօնին օրը Անուան Տօնն ըլլալով նաև Մեծի Տաճն Կիլիկիոյ Պարեգին առաջինի, հանդիսաւոր Ա. պատարագ մատուցուեցաւ Անթիւմասի Մայր Տաճարին մէջ՝ նախագահութեամբ Վեհապետին:

Ա. պատարագի արարողութիւնները քառաձայն կատարուեցան գպրեվանքի սաներուն կողմէ՝ ղեկավարութեամբ գպրեվանքի երաժշուաւութեամ ուսուցիչ՝ Տիար Հայրաբանում Պէրպէրեանի:

Եկեղեցական արարողութիւններէն յետոյ վեհապետին մէջ տեղի ունեցան ընդունելութիւնները, ներկայութեամբ գպրեվանքի սաներուն, Եկեղեցական զատուն և Ազգ՝ Իշխանութեանց ներկայացուցիչներուն:



Ուղերձ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏ

15 դաբեր շաբունակ Հայաստանեայց Եկեղեցին կը տօնէ Սրբոց Վարդանանց յիշատակը՝ փառաշուշ հանդիսութեամբ և ժողովրդական բուռն խանգամառութեամբ։ Այս երկար դաբերու ընթացքին Վարդանանց տօնը եղած է հզօր ներշնչարան մը աղդային պատագրութեան և Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութեան։ Մեր ժողովուրդը անքաժանելիորէն ի մի ձուլուած է Վարդանանց տօնախըմբառութեան մէջ, ազգն ու Եկեղեցին, հայրենիքն ու Հայքիստոնէութիւնը։ Պէտք է հիանանք մեր ժողովուրդի առողջ գատաղութեան վրայ, պէտք է հիանանք անոր պատմական գէպքերը բնազգաբար վերլուծելով, անկէ քաշելիք գասերը՝ բիւրեղացնելու կարողութեան վրայ։

Աստուածաբեալ Հայրապետ :

Անոնդեանց շաւզին հետեւած է նաեւ Զերդ Ա. Օծութիւնը։ Զեր ազգին և Հայաստանեայց Եկեղեցւոյ մատուցած ծառայութինները՝ բազմաթիւ են ու բազմատեսակ։

Զի ուսուցչական, տեսչական և Համարարանի ուսուցչապետական արդիւնաշատ պաշտօնավարութեանց ընթացքին, դուք հայ Երիտասարդութեան ո՛չ միայն ուսում և գիտութիւն ջամբեցիք, այլ անսնց ներշնչեցիք հայրենիքի, Հայաստանեայց Եկեղեցւոյ և Մշակոյթի մէրը։

Հայաստանի և Ամերիկայի մէջ Զեր վարած առաջնորդական բեղուն գործունէութեան միջոցին, դուք ո՛չ միայն կազմակերպեցիք թեմերը՝ նիւթական ու բարոյական ապահով հիմերու վրայ դնելով առաջնորդարանները, Եկեղեցիներուն պարտքերը վճարելով և դանոնք պայծառացնելով, այլ արթնցուցիք և աբծարձեցիք Զեր Հօտին

մէջ ազդային և եկեղեցական ոգին ու հետաքրքրութիւն
մեր մշակոյթին մէջ:

Դուք մտաք մեր ձեռագիրներու և աւերակ ու
կանգուն հայ վանքերու, հայ խաչքարերու և ա'յլ պատ-
մական շնչարերու յանախս անծանօթ աշխարհը, ի լոյս բերելու
համար մեր հնագարեան պատմութեան և հայ արտաեւտ-
ներու սքանչելի գանձերը, հայ մանրանկարչութիւնը, հայ
քանդակագործութիւնը, հայ սրմնանկարչութիւնը, հայ
հնագրութիւնը և հայ գրական զպրոցները, ուսումնասիրու-
թեան նոր ուղինենք բանալով անոնց համար: Մասնակցե-
ցաք զանազան գիտական պեղումներու և Զեր հեղինակած
բանասիրական մեծարժէք գործերուն համար ընտրուեցաք
անդամ Ռուսական Ակադեմիայի և Հայ Գիտ. ինստիտուտի:

Իբր Կաթողիկոսական պատուիրակ, գուք մաքուր
հայրենասիրութեան պերճախօս առաքեալլ հանդիսացաք,
զաղութէ զաղութէ շրջնով՝ բոցավառեցիք Սփիւռքի հայու-
թեան սիրուն ու հոգին՝ մեր նորածին լուսաշող հայրենիքի
բուռն սիրով և անզուսով կարօտով, ինչպէս նաեւ Մայք
Աթոռի հանդէս՝ սրբիական գուրգուրանքով:

Գլխաւորապէս Զեր ջանքերով վերականգնեցաւ Հա-
յաստանեայց Եկեղեցւոյ միասնականութիւնը, Ս. Էջմիածնի
վերջին ազդային-եկեղեցական ժողովին մէջ:

Զեր անձնուեր հայրենասիրութեան ամենափայլուն
ապացույցը տուիք 1918ին Սարտարապատի ճակատամարտի
միջոցին, երբ Զեր փափաքով բանակի Հոգ. Հովիր կար-
գուեցաք և արհամարհնով թշնամիին մահասկիւռ զըն-
դակներուն անդատարափը, ճակատի ամենայառաջացեալ
խրամներու մէջ նետուեցաք, զինուրները խրախռնելու
համար: Իբր «նոր սմբ Ղեւոնդ Երէց» Աւարայրի վրայ,
Սարտարապատի վճռական ճակատամարտէն անմիջապէս
առաջ, դուք Զեր հրաւունչ ճառով բոցավառեցիք ամբողջ
բանակի զինուորներուն և սպաներուն մարտական ոգին և
երդուընցուցիք զանոնք կա'մ յաղթելու. և կամ մեռնելու

համար և եւ երբ այս միջոցին Զեր հողեկան յափշտակութեան պահուն, անզգալարար ծունդի եկաք, ամբողջ բանակը Զեզի հետեւեցաւ խորին երկիւղածութեամբ, և ծընկաչոք լսեց Զեր խանգամավառ ճառը:

Եւ իրը Մեծն Ներսէս Նոպատ լերան վրայ Զիրաւի ճակատամարտին միջոցին, բազկատարած կ'որհնէիք բանակը, այն առևն միայն նշմարեցիք անսնց ձն կաչոք և հոգեզմայլ Զեզ ունկընդգրելը:

Նոյն անձնուեց ընթացքը ցոյց տուրք 1920ին Կարսի պատերազմի միջոցին, երբ թերզը որուուած էր թշնամիին կողմէ և ո՛չ ոք կը համարձակէր թուրք հրամանատարին դիմել՝ առահով կոտորածէն ազատելու. համար քաղաքին հայ բնակչութիւնը Դուռք անցաք ջարդարար զինուորներու սուրբներու և զնքակներու մէջէն և յաջողեցաք փրկել հայ ժողովուրդը, արհամարհնելով Զեզ ամէն վայրկեան բսպառնացող մահուան վտանգը:

Այս լուսաշող մտածումէն առաջնորդուած՝ Գարեգին Արքեակիսկապս իր կեանքն ամբողջ նուիրած է հայ մշակոյթին և արուեստին ուսումնասիրութեանը—իր բազմաթիւ ճիւղերով։ Սրբազնը, գիտնական, անխոնչ միաքայլ մշակոյթին և արուեստին մնացորդները գտած և գընահատած է հին գերեզմաններու մէջէն, տապանաքարերու կողերէն, վանքերու, եկեղեցիններու կիսաւեր կամարներուն և զմբէթներուն հարատրապեսութիւննէն և քանդակներէն, և մանաւանդ՝ մագաղաթին վատահուած հնադարեական գեղեցիկ գըչագրութիւններէն և մանրանկարներէն։



Ն. Ա. Օծուրինը Ամերիկայի մէջ:

իր զբչին և գառախօսութիւններուն նիւթերը, բնուկանարար, մասնազիտական ևն մեծ մասով, բայց մատչելի են և հաճելի բոլոր անոնց որոնք արաւետուր կը սիրեն խելառդէս:

Կարգացէ՞ք իր նորագոյն ուսումնառիրութիւններէն սա մէկ հասը — «Եթի կարեւոր ձեռագիր նիւ եսրքի հանրային մատենազարդարունում» — որ կ'երեւի նոր Գիրի այս

թիւին մէջ: Եթէ պէտք ըլլայ՝ կարդացէք զայն երկու կամ երեք անգամ — ինչպէս ըրած ենք մենք — և պիտի վարձատրուիք՝ խորապէս զգալով բարախուն զեղեցկութիւնը հայ զրչագրութեան և մանրանկարչութեան արուեստին, եւ բաց աչքերով տեսնելով մշտանորոգ աւիշը որ դեռ կը հսկի մեր ոսկեղին բարբառին մէջէն:

Գարեգին Արբաղանի մատուորական անփոխարինելի գործին բուն արժէքը մեր հին արուեստի արմատական, համբերատար զնանատութեան և արդար պահծացումին մէջն է:

Արբաղանը, խորաթափանց միտք, ամբողջ կէս դար և աւելի նուիրուած մեր հին մշտակոյթի զանազան դրուագներու ուսումնասիրութեան, զոր ամփոփած է երեսունէ աւելի հատորներու և բազմաթիւ յօդուածներու մէջ: Կարձ խօսքով՝ նա մտանանչած և դնանատած է Մայր արմատը մեր մշտակոյթին և մեր արուեստին, որ հիւսուած է մեր պապերուն հաւատքին հետ, և որ հին է Լուսուորիչի կանթեղին չափ, և խորանիստ ու անստան՝ Արտատուն նման:

Եւ ուղղակի այդ Մայր Արմատէն է որ իր կեանքին ու իր մեծութեան աւիշը կը ծծէ մեր «Մեր Փաքրիկ Ածուն», մեր թանկազին Հայաստանը, իր նորազոյն առազին մէջ:

Բարիին սէրը, Գեղեցիկին սէրը, ձշմարիսին սէրը և այդ սէրերուն համար ճակտի քրտինք և աչքի լոյս թափելու և պայքարելու անսահման ուժին ներշնչումն է որ կը բերէ մեզի մեր Արբաղանը՝ իր կեանքին և զործին լուսաւող օրինակովը:

Երախտապարտ ենք իրեն, մեր Արբաղանին: Մանաւանդ մենք, որ, իր նման, սրտե՞ն բղխած արուեստին մէջ կը տեսնենք ամէնէն մնայուն զեղեցկութիւնն ու արծէքը մարդկային կեանքին:

ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆ

«Նոր Դիր»
Ելու եռր, 1944 թիւ 1

Զօն Յորթինական

Ա. Ռ.

ՎԵՀԱՇՆՈՐՀ Յ. Յ. ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐՔ.
ՅՈՒՆԻՓԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆՏՐԵԱԼ ՄԵՆԻ ՏԱՆՆ ԿՈԽԻԿՈՑ
(Մայրանուն)

Պետագոյն բարեոյն գերազանց ընորհնով զեղազարդարուած
Սուրբ հայրապետաց նեսեռուն նլու նետեռող անդարձ,
Քանանայութեանդ յիսնամեակն օրինեալ, նոզեւո՛ր խրախ-
նանք,

Ուղիներդ բոլոր ահա սօներու ցնծմամբ կը փուրանք:
Մեծարանի երգ կը ննչեցնենք խանդավառուէն,
Բիւր բարեմաֆրանք կը յօրդին նամակ մեր նոզիներէն:
Թէ ակն ամենից տայ Ձեզ կեանք երկար Քանանայական
Համոզուելու Ձեր հօսն նոգուովն երկնակուր մեծ խմասու-
րիան:

Այնա՛ն տարիներ բարձրագոյն ուսմանց նետեռող եղամ՝
Որ խմասութեան մե՛զըր պատրաստէ նամեղանաշակ՝
Ուսուցանելու ամեն անոնց որ Ձեր ծունկերուն մօս
Բաղձացին սորովի և միտերն իրենց կրթել խրնամօս:
Ձեր մեղրածորան բերանը ջամբից ուսմանց մանանայ՝
Միտով խաղածներու յազեցնելու սուսնդով անխնայ:
Ո՞վ մեծ ուսուցչին աօակերս ուժիմ, Ձեր խմասութեան
Հոգւով նետեռող նայուդիներ յար անճրւադ մքնան:

Քարունուն միշտ ուսումնասիրող բարեոյն, զեղեցին,
Գեղարուեսներու սիրով սնանեցաւ Ձեր ազնիւ նոզին,
Համաշխարհային արուեսներու նես արուես նայկական
Ձեզ խանդավառեց իր զադենիներով անծանօր այնքան:
Հայ գրչազիրներ, մանրանկարներ նոր լիզու առին
Պատմելու իրենց յղացքը յատուկ արուեսը նրբին,
Նոր էջ մը բացին, Հայ զեղարուեսի էջ մը պանձայի
Մեզ սիրցրնելու նայուն գեղապատ նոզի՛ն պատելի:

Երկարաւոնչ Ձեր որոնումներով բանասիրական՝
Հետաքրքրաւոր նոր ուղիներ մեր առջեւ բացուեցան՝
Ես ասնելու մեզ մինչեւ հին օրերի յաւե՞ս փառապանձ,
Եւ նոր կեանք տալու մեր նեկիարունակ դիւցազներգութեանց.
Սասմայ օրերաւն սարսից, սասանից Դաւիթին նրենդէն,
Մըները մըրքին մեզ նոր վերելիի տենչո՞վ կ'ողողին.
Արձանազիրներ, խաչար եւ խանդակ կը խօսին կա շեն.
Պատմական հազար դրուազներ, դէմքներ բերելով հանդէս:
Գիրեւոր զի՞րքը, մատեանն երկնախոս, Ձեր հանճն անսպառ,
Մեծ հմարտութեանց զանձեռով անզին՝ շարունակաբար
Ձեր խարզութեանց նիւր և անհանում զոր կ'օքտազործէիմ,
Մեզ նոր պատզամներ բերելու համար յաւե՞ս բանկարժէք:
Ո՞վ խաջախարզ ձայնն իմաստութեան, խօսէ խոնական,
Ուղիիդի նոզեւոր Ձեր խորհուզներուն մըսսկարօս կան:
Հայ եկեղեցւոյ սրբազն բիմէն ներենչեա՞լ խօսնակ:
Սիրոյ, միուրեան խօսքը հնչեցուր սինիչ ներդաշնակ:
Թուկ Ձեր Վեհ կոչման պրասակն ադամանդ՝ խանանայական
Շնորհն երկնատուր՝ նակատ է պինած վայելուչ ո՞ւրան,
Տիրոջ սեղանին կը սպասաւորէ որ մեզ լիառաս
Տափ հացը կենաց, զինին փրկազործ, մարող անարաս,
Որ մեր հոգիներն անցաւորին մէջ անոնցին յառած.
Պայշտը բարոյն անվեհներուն հասնին կատարած,
Եւ նոր օրհնութեամբ վերանորոգուին վեներօս կամմեր:
Քահանայութեանդ յիսնամեակն ըլլայ բիւրից օրհնաբեր:
Նախախնամական անհմանալի կամմին ամենազօր՝
Հայրապետական Արռա կոչեց Ձեզ, եւ որդիիդ այսօր
Ցուած աշխարհի մօս եւ նեռաւոր կողմները ամէն՝
Նոր նովուապէտիդ առաջնորդութեան անձկաւ կը սպասեն
Շնորհալիի Արոռին վրայ ընոնիք բերէ նոր՝
Քահակալութեանդ դէպքը պատմական, երկնայի՞ն ընորհ:
Ո՞վ երանելի սուրբ հայրապետաց յաջո՞րդ պատուական,
Տէրը կեանք տայ Ձեզ, մեր մեծ Յօբելեա՛ր, մեր Հայր
Յովուէփիեան
Ուղիական խորին յարզանօֆ
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՅՏԵԱՆ

Մեր իղձերը Հայ Գրի

ԵՀ ՍԱՍԻՆԻ ՄԱՍԻՆ

Սիրելի՝ Պարոն Բենիամին Նուբրիկեան,

Զեր Դեկտ. 9, 1944 նամակի մէջ խնդրում էք շկարճ գրութեամբ մը «Նոր Գիրը» միջոցով տալ մեզի Զեր Հայրական պատգամը, ուղղուած մասնաւորապէս անոնց որ հայ գիրն ու արուեստը կ'ապրեցնեն այս երկրին մէջ ամէն զնով։ Վասահ կրնաք ըլլալ որ մենք սիրով եւ երախտագիտութեամբ պիտի ընդունինք ձեր պատգամ։»

Մենք մեծ բանաստեղծ չենք, գրական-դիտական մեծ հեղինակութիւն, որ մեր «Պատգամը» տանք հայ գիրըն ու արուեստը այս երկրին մէջ ամէն զնով ապրեցնել կամեցողներին, Բայց սիրում ենք մեր գիրն ու գրականութիւնը, մեր արուեստն ու մշակոյթը, և որպէս այդպիսին մեր համեստ կարողութեան սահմանների մէջ աշխատել ենք և պիտի աշխատինք, շունչ կայ մեր բներանում Ռւստի և սիրով ընդառաջ ենք զալիս ձեր ցանկութեան, մեր սրտի իղձերն ու ցանկութիւնները հայ զրի և զպրութեան մասին։

Առիթ ենք ունեցել ուրիշ անգամ ևս «Նոր Գիրը» շուրջ հաւաքուածներիդ մեր հայրական խօսքն ուղղել, որ փոքրիկ փոփոխութիւններով տպագրուեցաւ «Հայաստանեայց Եկեղեցիաի մէջ», 1941 Յունուար, «Օրհնեցէք զԱստուած Հարցն մերոց» վերնագրով։ Այսուղ արծարծելով ազգապահանութեան հարցը մեր գաղութների մէջ, փորձել էինք համառօտակի պարզել թէ գիրն ու գրականութիւնը, ինչ նշանակութիւն ունին ազգի կեանքն ու գոյութիւնը յաւերժացնելու համար պատմութեան մէջ։ Ամենայն ազգք կենդանի է, յառաջադէմ, որքան կենդանի է նորա գիտակցութիւնը իր հոգեւոր-բարոյական, գեղարուեստական-մշակութային ժառանգութիւնների մասին։ Մարգկային հոգին է իրական կեանք եւ յաւիտենական բարիքներ բներելու մէջն ու ազգիւրը այդ ինչպէս անհա-

տի, նոյնպէս և հանրութեան համար։ Մենք ոչ միայն մեր ծնողների և ապրած ժամանակի զաւակն ենք, այլ և անցեալի և մեր նախնեաց։ Հոգեկան գիտութիւնները, ինչպէս պատմութիւնն է իւր բոլոր ճիւղերով և բնական գիտութիւնները, իւրաքանչիւրը իւր ճանուպարհով, պարզում են ժառանգականութեան տիեզերական օրէնքը լոյս մարմարականին և լոյս հոգեւորին կեանքը երեւոյթների կապակցեալ մի շղթայ է, որ գէպի յաւիտենականութիւնն է ուղղուած, խզումը այդպիսի օգակաւորման, մահ և կորուս։ Անցեալի գիտակցութիւն և գնահատութիւն ներկայ և գոլիք սերնդի կողմից ազգի ու անմահաւթեան հրաշալիքն է։ Այսպիսի գիտակցութիւնն է այս հողն ու ջուրը, լոյսն ու ջերմութիւնը, որով աճի, զարդանալ եւ պտղաբեր գաւանալ կարող է ազգի կենդանութեան ծառը։

Այս գիտակցութեան պահպանութեան և խօրացման մէջ մեծ է մեր պարագանութիւնը իրրեւ ազգի առաջնորդներ, ժառանգականներ, գրոցներ, արուեստագէտներ, ուսուցիչներ ևն։ Ի հարկէ, ազգի ամբողջութիւնն իր բաժինն ունի, բայց սորում շատ առաւ, շատ պահանջնեցի։ Մեր կոչումը մեծ է և նուիրական, ուստի և իրրեւ սըրբութիւն պիտի լինի մեր խօսքը, մեր կեանքի բոլոր մարդերում։

Բայց յատուկ շեշտել կը կամենայինք գրի և գըպրութեան մարդկանց մասին, և խօսքն այսոնդ նրանց է ուղղուած։ Թատրոնը, բնեմական խօսքը, երգն ու խաղը, երաժշտութիւնը տպաւորիչ է, հզօր, բայց ներկաների համար միայն։ Նոյնիսկ նկարչութիւնն ու ձարտարապետութիւնը, որ արուեստների մէջ կարեւոր անդ են բանում եւ հոգեւոր կեանքի բարձունքները մատնանշում, սահմանափակ են ըստ իրնեց ազգեցութեան, և շատ քչերին մատչելի կամ հասկնալի, նուրբ երաժշտութեան հետ։ Մինչգետ գրով ու գրքով խօսքը աւելի մնայուն է և հանրութեան հասկնալի։ Աշխարհի երեսին պետական և եկեղեցական կազմակերպուած մեքենոյի հետ, կեանքի մեծ շարժիչը զիրն է, իւր ընդարձակ հասկացութեամբ, զիրն ու մամուլը։ Գրով ու գիրքով յայտնուած միտքն ու գա-

գափարը ոչ միայն աւելի յարատեւ է, այլ և տարածուած ըստ ժամանակի տարածութեան:

Ինչ կը լինէր մարդկութեան վիճակը առանց գրի և գրականութեան. գարերի ապրումներն ու գիտութիւնները ծանօթութիւններն ու գիտութիւնները յօդս կը ցնդէին առանց ապագայ ուերունդների սեպհականութիւն դառնալու: Մեր գրիչներից մէկը իւր գրած ձեռագրի (manuscript) արժէքը բացատրելու համար իւր յիշատակարանի մէջ այս միտքն է արտայայտում, թէ ամենայն հարստութիւն, դըրամ, ստացուածք անցաւոր է և զիրն է միայն մնայուն և օգտակար, ի՞նչ ձեռք էլ ընկնելու լինի նա: Ուրեմն գրի և գրքի համար կատարուած աշխատանքը, կորցրած ժամանակն ու նիւթական զոհողութիւնը ամենագնահատելին է և յաւիտենականը, և բարիք ընդհանրութեան համար: Հստ այսմ և ձեր աշխատանքը և այն մարդկանց աշխատատանքն առնասարակ չորոնք հայ գիրն ու արուեստը կ'ապրեցնեն այս երկրին մէջ ամէն զնով», արժանի է բարձր գնահատութեան: Եարունակեցէք աշխատիլ նոյն հոգւով, նոյն յարատե՛, կամ քով և նույրմամբ՝ հայ գրի կենդանի պահպանութեան համար: Թո՞ղ սուրբ մասն ձեր և ձեր աշխատակիցների գրիչները: Զեր մելանը մաքո՞ւր և ձեր թուղթը միայն ճշմարտութիւն ընդունով: Բայց այս խօսքն և բարեմաղթութիւնը միայն շնոր Գիրչի մարդկանց չէ, որ ուզզել կը կամենայի, այլ հայ գրի և մամուլի բոլոր աշխատաւորներին:

Որչափ գնահատելի է գրչի գրական աշխատաւորների գործը, նոյնչափ պարսաւելի, երբ ի չարն է զործադրւում և ընդդէմ ճշմարտութեան այդ սուրբ գործիքը՝ անձնական կրքերի գոհացում տալու, կամ նոյնիսկ կուսական սխալ հասկցուած շահերի: Նա միայն բարւոյ, գեղեցկի և ճըշմարտութեան գործիք է և ոչ չարտութեան և տգեղութեան: ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՈՅ. ՅՈՎԱԿԻՓԵԱՆ(*)

ՅՈՒՆԻՎԵՐ 1945

ՆԻՒ ԵՎՐԸ

(*) Նորընտեր Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ:

Գարեգին Արքայի Յովկական

(Ց Ա Ն Ե Ր)

1925—1928 տարիներուն, երբ կը պարապէի էջմիածնի Պետական Մատենադարանի հայերէն ձեռագիրներու ուսումնասիրութեամբ, Մատենադարանին մէջ ինծի ընկեր աւնէի երկու բանակէր սրբազաններ, Մեսրոպ և Գարեգին Արքեպիսկոպոսները, որոնք նոյնպէս նուիրուած էին ձեռագրական հետազօտութիւններու. ձեռագիրներէ ուրիշ հետաքրուող չկար:

Մատենադարանը ամսաը ժամը 8ին և ձմեռը ժամը 9ին կը բացուէր: Ամէն առաւօտ կը փութայի գործի բայց հիացմամբ կը նկատէի որ կանխած է զիս Մեսրոպ Սրբազանը, նա թափած իւր առջին կոյտ մը ձեռագիրներու, խորամուխ է արդէն անոնց մէջ. հազիւ կը լոէ այդ օրերս: Սրբազանը զբազու է հայերէն ձեռագիրներու ցուցակագրութեամբ. կը վերամշակէ տարիներ առաջ կազմած իր բազմահատոր ցուցակը. կը բազմատէ սեւագրութիւնները բնագիրներու հետ, կը ճշգէ, կը լրացնէ...և որքան համբերատար, տոկուն աշխատասիրութեամբ. ժամնրով անխազաց աթոռին զրայ՝ կ'ուսումնասիրէ...: Մի խանգարիչ ունի Սրբազանը՝ Գերագոյն Խորհուրդի յանձնակատարը, որ ի ժամու և ի տարաժամու կուգայ կամ հրաւիրելու խորհուրդի, և կամ ուեէ պաշտօնական թղթի մը տակ իր ստորագրութիւնն առնելու: 1926 թուին, գարնան բաժնուեցաւ Սրբազանը մեր ընկերութենէն և մեկնեցաւ Նոր Զուգայ՝ հովուելու Պարսկա-Հնդկական թիմը:

Երկրորդ ընկերս էր Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեան: Թղթապանակը անութին տակ կը յառաջանայ Սրբազանը, աշխայժ քայլուած քով, կը զգաս թէ բազմարզբազ է միտքը. ուշացած է: կ'աճապարէ օգտագործելու ժամանակը, որ թանկագին է այն յարկին տակ: կը հարցուի Վարիչը. անհամբեր է, երբ որ եւ իցէ պատճառաւ յաղաղում կը կրէ պատասխանը: Ցուցակ մը ցանկացուած

գրչագիրներու կը ներկայացուի վարիչին և կը խնդրուի
անոնց փութանակի ստացումը:

Այս միջոցին կը տարածուին սեղանի վրայ թղթեր,
լուսանկարներ, անոնք պիտի համեմատուին ձեռագիրնե-
րու հետ. պիտի ճշգույն թղթահամարները, միւսանգամ
պիտի նկարագրույն և չափագրույն մանրանկարները. պի-
տի բազդատուին համացեղ նկարներու հետ:

Սրբազնութեանը իւր բովանդակ էութեամբ նուիրուած է
Հայ Մանրանկարչութեան պատմութեան: կը դասաւորէ
հաւաքած նիւթերը, կը ճոխացնէ զանոնք նոր տուեալնե-
րով. երեւան կը հանէ նոր մանրանկարիչներ, ծաղկողներ.
կը նոյնացնէ, կը պարզէ անոնց անձնաւորութիւնները, կը
համագրէ նկարչական արտագրութիւնները. կուսաւմնասի-
րէ արուեստը, կը հետազօտէ արուեստին ծագումը, ազգե-
ցութիւնները, ներշնչումները:

Կատարեալ հաճոյք է տեսնել Սրբազնութեանը նախա-
սիրած նիւթին մէջ: Ժամերով խորասուզուած ձեռագիր-
ներու մէջ կը քրքրէ, կը պեղէ նախնեաց արուեստը, անոր
կ'առեղծու, խորհուրդները կը լուսաբանէ: Զեռք կ'առնէ
մէկը, խորախորհուրդ կը բարձրացնէ վեր, կը պատշաճեցնէ
լոյսին, կը զննէ, կը քննէ, կը դատէ... կը դիմէ խոշորա-
ցոյցի՝ մանր զծիկներն անդամ պարզելու, լուսաւորելու,
ըմբռնելու: Վրձինի մէն մի շարժում կը հետաքրքրէ
զինքը:

Սքանչանք, հիացմունք կը կարդացուին իւր աշխե-
րու մէջ. կը զուարթանայ դէմքը. բացականչութիւններ կը
լսուին իր բերնէն: Անպարբան նոր գիւտի մը, յաջող
մանրանկարի մառջին է Սրբազնութեանը: Եւ ահա բարձած բա-
զուկներու վրայ մեծափոր հատոր մը՝ ինչպէս մի մայր
գործագութ իւր ազէգաւակը թեւերու վրայ օրօրուելով՝
կու գայ կը մօտենայ ինձ, զիս ալ ոզեւորելու, յափշտակե-
լու, հաղորդակից ընելու իր հիացմունքին:

— Այս', Սրբազնն, ճիշդ են Զեր նկատողութիւննե-
րը... նո՞յն վրձինը, նո՞յն արուեստը, մէ՛կ մանրանկարչի
գործ... սքանչելի յաջողած է մանրանկարիչը իւր ար-

ունստին մէջ... թորոս Շառլինի^շ գպրոցէն... բայց չէ՞ք կարծեր, Արբազան, թէ արևմտեան նկարիչի մը վրձինը շարժած ըլլայ հոս... ճիշդ է, տարազները հայկական են, մոտիւները արեւելեան... որչափ ալ օտար ազդեցութեան հետքերը կան հոն, բայց ծագումը անոգայման հայ հոգին վրայ հարկ է ենթադրել... ոյտ, ինքնուրոյն, նկարագիրը հայկական... նոյնքան հին:

Ու պէտք է առանել զուարթ հոսանքը զգացումներու իր աչքերուն մէջ... կը թողնէ զիս Արբազանը և կը փութայ արձանագրել տպւորութիւնները: Ժամերով կ'ապրի նա այս տպաւորութիւններու տակ. ուրախ է օրը, երբ նա նոր գիւտերու նոր անսութիւններու հասած է:

Բայց աշխայժ ապրումներու այդ աշխարհը ձիւնապատ լեռներու սասրութը ունի իւր գոյութիւնը: Արդէն ալեխառան են Արբազանի գաղաթին վրայ մազերը և սպիտակափառ ծնօտին վրայ մօրուքը: Վեց տասնեւոկ տարիներ ունի նա իւր եաւ: Հակառակ յառաջադէմ հասակին՝ երիտասարդ է ոգին իր մէջ, միշտ թարմ եռանդը, կենդանի՝ ապրումները, անխոնջ ջանասիրութիւնը:

Բուռն փափաքով՝ մրցելու ժամանակին հետ, վարձած է Արբազանը գրադիրներ, որոնք կ'արտադրեն ընազիրներ, ունի նկարիչներ, որոնք կ'արտահանեն մանրանկարներ բազմագոյն լուսանկարիչներ, որոնք կը նմանահանեն դըրչութիւններ, մանրանկարներ. շատ անգամ ինքնին Արբազանը լուսանկարչի դերին մէջ է:

Մի քանի շտրամով բացակայ է Արբազանը լուսենադրանին: կը հնատաքքրարուիմ: Արբազանը մեկնած է Լոռի կամ ուրիշ հնավայրեր, լուսանկարելու յուշարձաններ... վերագարձին կը լսեմ արդէն հիացախառն մանրամասնութիւններ իւր գիտական արշաւանքի արդիւնքներու ժամին:

Այց մը տանք Արբազանին իր աշխատասրահին մէջ: Համեստ կահաւորութեամբ կրկին սենեակներէ կը բազկանայ իր բնակարանը. մին աշխատասենեակն է և երկրորդը ննջարանը: Անոնք լաւ ծանօթ են ինձ, որովհեան ամիս-

ներով իրեն բնակակից ըրած է զիս հիւրասէր Սրբազնը այնչափ մաերմութեամբ։ Կրկին սեղաններ լտյն լտարածուած են աշխատասրահն մէջ, ծածկուած կուտակագէզ՝ զրքերով, թղթերով, լուսանկարներով...։

Սրբազնը աշխատանքի վրայ է. չխանգարենք զինքը։ Նոս այնչափ բարի է և թոյ; կու տայ մեզ աչք մը նետելու պահարաններուն, դարակնեւուն, որոնք կ'ամփոփեն իրենց մէջ զրքեր, ծրարներ...։ Անոնք մասնագիտական գործեր են, մեծու մասամբ Գեղարուեափ պատմութեան վերաբերեալ. անոնց շարքի մէջ են չեղչ չեղչ կապոցներ, տուփեր - ասանք Սրբազնին ձեռագիր, անտիպ աշխատանքներն են և հարիւրաւոր լուսանկարներ, Շրարներէն մի քանին կը կրեն վերտառութիւն. ՚Նիւրեր Հայ Մանրանկացուրեան վերաբերեալ։ Այսուեզ հաւաքած կուտակած է Գարեգին Արքեպիսկոպոս անսպառ նիւթեր՝ ձեռագիրներէ, տպագիր աշխատաւթիւններէ, արտագրութեան լուսանկարով։ Զարդաքանդակներ, պատկերաքանդակներ, մանրարուեատի գործեր, մանրանկարչական, հնագրական նմանանանութիւններ և այլ այգ սեռին հայոց լուսանկարներ, ուսումնասիրութիւններ, արտագրութիւններ, ծանօթագրութիւններ։ Կը անեսնուի թէ Սրբազնը ոչ միայն էջմիածնի ամենաճոխ Մատենագարանը մազած, ուսումնասիրած է, այլ և ծանօթ է առհասարակ հայկական կենդրուններու և Եւրոպայի Մատենագարաններու մէջ պահուած նիւթերուն։ Այս ատաղձնները ըստ մեծի մասին մշակուած են արդէն և գասաւսրուած ըստ շրջաններու, բազգառաւթեամբ համացեղ նիւթերու և գրականութեամբ։ Ոչ միայն Հայ Աշխարհի պատկերագարդաքանդակներն և ձեռագըրական մանրանկարչութիւնն կողք կողքի համեմատութեան առնոււած են, այլև հայ ժողովուրդի արդի տարագները ցուցագրուած են հոն, միամոյն և բազմագոյն։ Լուսանկարներու և նկարներու այս բազմագանութեան մէջ մասնանութիւնները, ճարտար նկարիչներէ պատրաստըւած, ուր հայ գեղարուեստը կենդանի, հմայիչ գեղեցկու-

թեամբ կ'արտացոլայ անցեալի հայ քաղաքակրթութիւնն
և իւր հրաշագործութիւնները։ Արքան աշխատանք, որ-
քան զոհողութիւն արժած է այս հաւաքումը Սրբագանին։

Սքանչանքի բացագանչումները լսելի կ'ըլլան Սրբա-
գանին, որ խանգարուած իւր զրադումներու մէջ կը մօ-
տենայ զուարթերես և կը բացատրէ մեզ իւր աշխատու-
թեան ծրագիրը, ընթացքը, կարեւորութիւնը, Հայ արտես-
տին արժէքը։

— Սրբագան, բաւական է, ինչ հաւաքած էք մինչև
ցայժմ։ գասաւորեցէք, վերջին գոյնը տուէք և հանեցէք
լոյս աշխարհ հայ գեղարուեստի անհամեմատ զանձերդ։
ինչո՞ւ մնան անոնք թագուն ձեր զզրոցներու մէջ, ան-
մառչելի գիտութեան…… Սրբագան, լաւագոյնը լուրին
թնամին է։

Եւ Գարեգին Սրբագան ոգեւորուած մեր հետաքրր-
քըրութենէն, կը տարածէ մեր առաջ իւր այլ անտիպ եր-
կասիրութիւնները։ Պատմութիւն նայ գրչութեան արուեստի,
Նիւրեր նայ սինարաւեստի պատմութեան նամար, Նիւրեր
նայ իշխանական տօնմերու պատմութեան նամար, Խաղբակ-
եանի կամ Պօօւեանի Ա-Դ մասերով, Փողովածոյն նայ ար-
ձանագրութիւններու, Հաւաքածոյն պատմական Յիշատական-
ներու, ևայլն, ևայլն։

Արդեամբք ալ երեսուն և աւելի տարիններու ընթաց-
քին պրատած, հաւաքած է Սրբագանը անսպաս նիւթեր
ձեռագիրներէ, քարեայ յուշարձաններէ՝ արտադրութեամբ
կամ լուսանկարով։ Ինչ հայկական քաղաքակրթութեան կը
հայի, հետաքրքրած է զինքը, գրականութիւն, շինարար-
ուեստ, գեղարուեստ, հնագրութիւն, ազգագրութիւն հաւա-
սարապէս մօտ եղած են իր սրտին։ Բայց վերջին շրջա-
նին ամփոփուած է նա Գեղարուեստի շուրջը։

Հայ քաղաքակրթութեան պատմութեան բառ-
ուերամած շերտերու վրայ նոր լոյս կը սփռեն Սրբ-
ագանի այս աշխատասնիրութիւնները։ անոնք հարա-
զատ զոյներով կը յայտնարիրեն հնամեայ զարերու պատ-
կերը, հայ կենցաղին ներաշխարհն իւր բովանդակ ընդար-

ձակութեամբը, անհատի արտագրութեան ոյժը, ստեղծագործութեան կարողութիւնը: Եթնարարուեստի կոթողական յուշարձանները, մանրարուեստի նուրբ կերտուածքները, վրձինի հրաշագործութիւնները մագաղաթի կամ թուղթի վրայ կը դառնեն իրենց ժամանակը, ստեղծիչը, հովանաւորողը՝ արձանագրութիւններու և յիշաւակարաններու մէջ. անոնք ձեռն՝ ընթան՝ շրջան առ շրջան կը ներկայացնեն Հայ մատի բարձր ի ցած թոփչքները, Հայ կինցաղին ելեւէջները: Եւ Գարեգին Արք. Յավսէփին կը դնէ զանոնք պատմագէտի սեղանի վրայ ոչ պարզապէս իրը հում նիւթ պատմական ատազձ կարօտ քննութեան, այլ ինքնին կը նկրտի վերլուծել, լուսարանել վարժ, հմտութեամբ բանասէրի և գրագէտի:

Եւ ո՛րքան խղճամիտ է Սրբազանը իւր ուսումնասիրութիւններու մէջ: Ոչինչ արագ իր գրչին տակ, բանասէրի խղճամասութեամբ կը կանգնի ժամեներով մէն մի յուշարձանի առաջ, կը զննէ, կը հնաւզօտէ ամենայն ինչ իւր ժամենամասութիւններու մէջ, և այնպէս կ'առնէ զրի. և եթէ մնաց տակաւին զգգոն մէկ կամ միւս կէտի մէջ, կը դիմէ միւս անգամ նոյն տեղը՝ լրացնելու դերին, փարատելու տարակոյաց: Նո չի գիտեր յոզնիլ. անխոնջ և աննրկուն նուիրուած է գործին: Անշուշտ պիտի կարճէր աշխատանքը, պիտի խնայուէր ժամանակը, եթէ օժտուած ըլլար Աշխատասէրը կարեւոր միջոցներով. և ճիշդ աշտեղ է ցաւը, զոր չէ կարող նա ինքնոզնութեամբ բուժել, Տեխնիքական աշխատանքները կը պահանջին ծախք, նիւթական միջոցները: Այս խոչընդուները ստիպուած է նա առաւել ճիգով, առաւել տօկունութեամբ և ինքնամուռցութեամբ յաղթահարել: Ոչ միայն մատենագործաններու փոշեղգած ձեռագիրներու մէջ խորասոյզ կ'աշխատի Սըրբազանը, այլ հարկագրուած է ելլել բարձրաբեր սորեր, իջնալ գարանոս ձորեր, կռուիլ եղանակի անհարթութիւններու գէմ, և ենթարկուի անմարդութեակ, ամայի հնավայրերու մէջ ամենազգի զրկանքներու: Եւ այս ամէնը կապուած են մեծամեծ ծախքներու հետ:

Ես հանչցայ Գարեգին Սրբազնը առաջին անգամ 1912ին կջմիածին, պատահնեցայ իրեն երկրորդ անգամ ի վիճննա 1914ին. բայց մեր անսակցութիւնը եղբայրական նկարագրի ստացաւ մտանաւորապէս 1924 — 1928 տարիներուն, երբ ունեցայ առիթ աւելի թափանցելու իր ամենաբարի նկարագրին, հիմնալու ուսումնասէր ոգևոյն վրայ և յարգելու իր մէջ նկեղեցականը և բանասէրը Քաղցր յուշեր, որոնք պիտի ապրին իմ մէջ միշտ թարմ:

Երբ կը յիշեմ այժմ իմ արհիապատիւ բարեկամս, կը ցցուին առջիս աւելի և աւելի կարկառուն իր այն երկասիրութիւնները, որոնց շուրջը այնպէս յաճախ շրջան կ'առնէին մեր խօսակցութիւնները երբեմն կջմիածնի լուսունկայ երկնքին տակ: Ես կը գրգէի, կը յորդորէի Սրբազն Բարեկամս, որ փութացնէ անոնց հրատարակութիւնը, ու այսպէս տայ վերջապէս բաւականութիւն այն հետաքրքրութեան, զոր կը տածէ գիտական աշխարհը հանդէպ կջմիածնի հնութիւններու, հանդէպ Հայ Գեղարուեստի: Պահանջքո ցանկութիւնն էր նաև աշխատասէր Գործիչին. հրատարակութիւնը իւր գժուարութիւններն ունէր, զորոնք յաղթահարել չէր ներեր Սրբազնին ոյժը: Մեծամեծ գումարներ կը պահանջէին այդ բազմաթիւ նկարներով ծանրաբեռնուած աշխատառութիւնները. իսկ Սրբազնը գուրեկ էր ամէն միջոցներէ: Մեծահարուստ ազգայիններ չկային այն աշխարհին մէջ, գժուարին էր նախ ձայն հասցընել արտասահմանի գիտութիւնը հովանուորող բարեկործներուն: Փորձը հասցնելու այդ ձայնը, թէպէս կատարուեցաւ — տե՛ս «Աղաղրակեանք կամ Պաշեանք Հայոց Պատմութեան մէջ», Յառաջարան, Էջ 2. — բայց դարձեալ չդաւա ունկուի այն ականջներու մէջ, ուր յանկապէս պէտք էր ուժգին դողանջել:

Այժմ, երբ կը գտնուիմ ես արտասահման և ծանօթ իմ ի մերձուստ Գարեգին Արքեպիսկոպոսի պատի ցանկութիւններուն, պիտի առնեմ համարձակութիւն արձագանգելու նոյն ձայնը ի լուր հայ աշխարհի:

Օժանդակեցէ՞ք Սրբազնին առատաձեռն նպաս-

ներով, օգնեցէ՞ք Հայ Գործիչին իւր ձեռնարկութիւններու մէջ. հնարաւոր ըրէք իւր մտքի յղացումներն, հոյակապ աշխատութիւնները շքեղ ապագրութեամբ ի լոյս հանել, վասն զի նախնեաց փառքը՝ յայտնաբերուած Գարեգին Սրբազնի ջանքերով, պարծանքն է հայ անուան:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

Տաթեւ, 1930 Հայեա



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

Նիւթեր և Ռւսումնասիրութիւններ Հայ Արուեստի և Մշակոյթի Պատմութեան

Ա.

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնէ այս ընդհանուր վկրնագրով մեր մէկ աշխատութիւնը երկու մասէ բաղկացած:

Ա. «Պաղավանքը և հայ եկեղեցիներու գմբէթաւորման խնդիրը»:

Բ. «Գերեզմանական կոթողները և անոնց արժէքը հայ արուեստի պատմութեան մէջ»:

Այսոնդ երկու խօսքով կ'ուղէինք գաղափար տալ աւելի պարզ ձեւի տակ, առանց գիտական մանրամանութիւններու քննագատական եղանակներու, ծանօթութիւններու և ազգիւրներու ցուցման։ Պաղավանքը մէկն է մեր ճարատրապետութեան հնագոյն մեացորդներէն, որու ծագման մօտաւոր ժամանակը Զ դարու առաջին կէսը պէտք է համարել։ Ան երկարաձիգ եկեղեցին է, բազիլիկ եկեղեցիները յիշեցնող, բայց և զմբէրի ակնյալնի մնացորդով, որ բազիլիկ շէնքեր առանց գմբէթի, ինչպէս Շոփքն է, Լալ-

վարի հիւսիսային, կողմը Քասախը Արագածի արեւելիան փէշերուն, Գնթունեաց նախարարութեան մէջ կամ Երերոյքը, ինչպէս և նման շէնքեր կան Ասորիք:

Այս շէնքի վրայ կը տեսնենք, թէ ինչպէս հայը իւրացնելով Միջազնեաքի և Ասորիքի բազիլիկան, անոր վրայ կը դնէ զմբէթը և ուրոյն ձեւ ու կերպարանք կուտայ անոր: Հայ ճարտարապետական ստեղծագործութեան ամենակարեւոր երեւոյթն է այս մեր արուեստի պատմութեան մէջ: Ընդհանրապէս արուեստն ու քաղաքակրթութիւնը ոչ մէկ ազգի մէջ բոլորովին անկախ չէ. հելլենական արուեստը ազդուած է եզիպտականէն և հիթիթականէն, Ասորիստանինը՝ հիթիթներէն, պարսիկներունը՝ Ասորիստանին. Հայկականն ալ որոշ ազերս ունի միջազնեական-ասորական և սասաննեան արուեստաներու հետ, որոնց մէջ հելլենական-հռոմէական ազգեցութիւնը շատ ակներեւ է: Ուրիշն ոչ մէկ ազգի մէջ բոլորովին անկախ, առանց արտաքին ազգեցութեան արուեստ չկայ. Խնդիրն այս է, թէ ոյդ փոխազգեցութիւնը կամ փոխառութիւնը կոյր, մեքնական է, առանց նոր ստեղծագործութեան թէ ստացածը անցած է տուեալ ազգի հոգիին պրիստակով, նոր ձեւակերպութիւն և կեանք ստուցած:

Ընթերցողին շփոթութենէն ազատ պահելու համար, պիտի յայտնենք, որ երկու մեծ հոսանքներ կողք կողքի նկատելի են հայ ճարտարապետական-քանդակագործական կամ զարդարական ոներու մէջ Ե-Զ դարերուն. մէկը բազիլիկ կոչուած, երկարածիզ եկեղեցիներու հոսանքն է, որոնց հետ կապուած են նուիւ մեր ուսումնասիրութեան ենթարկուած գերեզմանական կոթողները, միւսը քառանկիւնի պատերու վրայ հաստատուած զմբէթաւորը, որ Զ-է դարերուն կը դառնայ իշխող և ազգային, ես մզելով բազիլիկ ոճը, Միջազնեաքի և Ասորիքի հելլենա-հռոմէական ազգեցութեան հետ:

Պազավանքը մէկն է այս երկու ոներու միացման հնագոյն եկեղեցիներէն; որու ժամանուելը կ'որոշնք Զ դարու առաջին կէսը, շինուած, «Մնուել Ամատանեաց Տէրքի

ձեռքով, համարելով անոր Մանդենի որդի, իսկ չՄանուեղա-ի որդին «Մահակ ի Մանուեղեան» և ատոր որդին կոտիտ Ա-մատունեաց տէր, որ Մամակ Մամիկոնեանի և Մտեփանոս Սիւնիի հետ ապատամ թեցաւ կոսրով Ապրուեզի դէմ մօսա-ւորապէս 590-600 թուականներուն ըստ Սերէոսիւ «Մահակ ի Մանուեղեան» կը յիշուի Դիրք Թզթոցի մէջ և մէջն է Ներսէս Բ-ի օրով 552 թուին Դոգովին մասնակցող-ներէն:

Պաղավանքը իր երկարածիք երեւոյթով հիւսիսային պատի վրայ ներսէն երեւցող որմայեցներու հոնիական կի-սախոյակներով, լայնատերնեւ տկանթով հիւսիսային դրան շուրջը, որ միայն գերեզմանական կոթողներու վրայ կ'ե-րեւի և կ'անհատանոյ յնատպայ գարերու շինութիւններու վրայ բացառութեամբ Զուարթնոսցի, որ նոյնիսկ շատ երե-ւոյթներ ունի զարդարանդակներու մէջ ասորա-հելլեննա-կանի նմանութեամբ, արմաւենի ծառի և տակը կանգնուծ առիւծի գաշտանկարով, շուշանուծավիով արեւմտեան լու-սամուտի պատկի մէջ, կը մատանանշեն ծագման հայրենիքը, որ Միջագետքն ու Ասորիքն է Արմաւենին կ'երեւի նոյն-պէս Քասախսի բազիլիկայի արեւմտեան գրան վրայ, Շոփ-քի բազիլիկայի որմայեցներու կիսախոյակներու վրայ: Ապա հիւսիսային պատի շուստոմուտներու պայտաձեւ պը-սակներու զարդերը բոլորակներու շարքով մէջները թըռ-չուններ կը յիշեցնեն Բարուլոյի 586 թուի աւետարանի խորանազարդերը, ինչպէս և աւելի հսազոյններ Ազցի շա-սորերկրեայ գամբարանի գրան կամ կամարազարդը, կող-քերէն կենդանիներու շարքով և ճակտուին հաւասարակող խաչով: Այս բոլորը յարտարար են ասորա-հելլեննական ա-զերսի, բայց նաև Սասաննեանիւ Միջանկեալ ըսկնք, որ սասաննեան արուենան ոլ ունի ասորա-հելլեննական-հռոմէա-կան շատ ասրբեր, ինչպէս և հայոցը: Սասաննեան ազերս ցոյց կուտան գուրսէն, հարուային պատի լուստոմուտներու պստկազարդերն ու քանդակները յատկապէս աննցմէ կեղ-րոնականի ՀՄանուեղ Ամատունեաց Տէրք-ի ձիւոր քան-դակը և Յիսուսի մետալիքնը, որ աւատանող հրեշտակները

բռնած են երկու կողմէն, ինչպէս Տագ ի Բռատանի դրան
ճակատին սաւառնող ոգիները։ Նոյնը նաև Օձունի հարա-
ւային պատի վերին լուսամուտի հրեշտակները։

Բայց այս բոլորի հետ ունինք և գմբէթի մեացօրդը,
ակներեւ ապացոյց, որ այս շենքը երկու հոսանքներու մի-
ացման երեւոյթ մըն է, ինչպիսին և Գնթունեաց Գրիգոր
իշխանի եկեղեցին Մատայիշէնի մէջ, Քառասիր ձախ ափին,
Նոյն թիֆի աւելի մեծ շենք է Արուճի Ս. Գրիգորը 668
թուի, ուր յաղթահարուած են ասորա-հելլենական հորթա-
րանքները։

Պազավանքի գոյութեան, որպէս կարեւոր վանքե-
րէն մէկը, վկայութիւն ունինք Գիրք Թղթոցի մէջ, «Խա-
րայէլ Պազավանից» վանահայրը մասնակից է Արքանամ
կաթողիկոսին տուած ձեռնարկին 606 թուին Այս և ուրիշ
տուեալներով, քան Ստրչիգովակին և Թօրոմանեանը հայ
ճարտարապետութեան անհման ուսումնասիրոզները կը փոր-
ձենք ապացուցանել, թէ Զ դարու կէսերէն և աւելի վաղ
ունինք բազիլիկ եկեղեցիներու զմբէթաւորման իրական
մեացորդներ Հայաստանի մէջ, և թէ Պազավանքը Օձունը
և ուրիշները այդ միտուորման զործողութեան յուշարձան-
ներ են։ Հինգերորդ դարու մեր գրականութեան մէջ
«զմբէթ, զմբէթեայ, զմբէթահարթ» արտայայտութիւնները
սովորական են, որ դործագրուած կարող են լինել միայն
իրական գաղափարի կամ երեւոյթի գոյութեամբ։

Հելլենական ոզգեցութիւնը Միջագետքի և Ասորիքի
վրայով Հայաստանի մէջ նոր չէր. Արտաշիսեան հարրա-
տութեան ներկայացուցիչներու դրամները, Արտաշէսի, Տիգ-
րան Մեծի, Արտավազդի ժամանակ, անհերքելի ապացոյց
կը բերեն այդ իրազութեան։ Արտավազդը ըստ Պլուտար-
քոսի բանաստեղծ էր և թատերագիր յոյն լիզուալ։ Հելլե-
նական արտեստի սիրոզներ են և Պարթեւները, հետեւարար
և հայ Արշակունիները, յաճախ հռոմէտկան գերիշխանու-
թեան հեթակայ։

Քրիստոնէութեան ընդունելութեամբ այդ կապը առաւել եւս պիտի շեշտուէր ոչ միայն եկեղեցաշինութեան մէջ, ինչպէս անսանք, այլ և քրիստոնէական պաշտաման և հասկացողութեան հետ կապուած այլ երեւոյթներու մէջ, որոնցմէ մէկը հին զերեզմանական կորողիներու զոյութիւնն է նոր կրօնի պահանջներու համեմատ։ Առնց ուսումնախրութեան է նուիրուած աշխատութեանս երկրորդ մասը։

Ազգերու քաղաքականութիւնը և արուեստի ծագումն ու ձեւակերպութիւնը իրենց զարգացման ընթացքին սերտ կապուած են իրենց կրօնի և հաւատալիքներու հետ։ Քրիստոնէական արուեստի նշանառոր պատմաբան Կրաս Խոսք մը ունի, թէ ազգերու արուեստը գերեզմաններէն կ'սկսի. այս ճշմարիս է ոչ միայն նախնական ազգերու համար, որոնց շինարարութիւններն ու սանզնագործական երեւոյթները իրօք գերեզմաններու հետ են կապուած, այլև յետագայ դարերու նոր հասնեքներու ընդունելութեան ժամանակ, համապատասխան նոր արուեստի և մշակոյթի սանզնագործութեան ազգիւր կը դառնայ, հետզհետէ հինէն դէպի նորը փոխակերպութիւն։ Եթէ Եղիպատոսի արուեստն ու մշակոյթը պատմութեան մէջ իրենց բազմաեւակ երեւոյթներով հոգիի անմահութեան հետ կապուած հասկացողութեան մարմնուութեան է, եթէ յունական արուեստն ու գրականութիւնը իրենց բարոր ճիւղերավ կապուած են և հասկնալի յոյն ժաղավրդի կրօնական ըմբանումներով միայն, քրիստոնէական կոչուած արուեստն ալ նոր վարդապետութեան հաստատութեան հետ, երեւոն կը ընթէ նոր սանզնագործութիւն ազգերու մէջ, հինէն հասպհատէ դէպի նորագոյնը և առարեր զարգացումն ընթանալով։ Կատակոմբաններու արուեստը միջին օգակն է հեթանոսականի և քրիստոնէականի ծագման և զարգացման արեւմուտքի մէջ։ Նման երեւոյթ կը նրկատենք և Հայոց մէջ։

Հայ արուեստի նախնական շրջաններու հասկացողութեան համար մեծ նպաստ կը քերեն մեր երկրի այլ և այլ

կողմերը ցրուած գերեզմանական կսթողներու մնացորդները, որոնք թերեւո հարկաւոր ուշադրութեան չեն արժանացած։ Տարաբախտաբար անոնցմէ շատ քիչերը ամբողջութեամբ հասած են մեղ մեծագոյն մասով եղծուած, մասամբ կամ բոլորովին փնտցած, կառոր կառոր եղած, բայց այնպիսի քառնակութեամբ, որ բաւական են գաղափար կազմելու անոնց մասին։ Դեռ եւս մենք լիովին անոնց գոյութեան և տարածման մասին ծանօթութիւն չունինք, բայց ինչ որ վերջին տասնեակ տարիներուն բրոֆեսոր Մատին, թորամանեանի և մեղ յաջողուած է ծանօթանալ և ի մի հաւաքել, հոյլ մըն է, արժանի ընդարձակ և բազմակողմանի ուսումնասիրութեան։

Ինչպէս ձարտարապետութեան նախնական շրջանի հասկացողութեան համար զիտական մեթոս ենք ընտրեր ծանօթին գեպի անծանօթը գունաուլ, անթուուկան երեւոյթները, եթէ ոչ ձշգութեամբ մօտուոր ժամանակով որոշել, այսակ եւս նոյն եղանակին ենք հետեւեր։ Պարզ ուսումնասիրութիւնն իսկ ցոյց կուտայ, որ անոնք չեն պատկանիր հայ ձարտարապետութեան ծաղկման ուկեղարու շրջանին, որ է գորն է։ Այս պատկերազրութիւնը և զարդարանդակները, որ մենք կը անոնենք այդ կոթողներու վրայ, տարբեր ոճ, ձեւակներութիւնն և մօթիքներ ունին, քան մեր և գորու թուականով կամ ժամանակով յայտնի շէնքերը։ Անոնք չեն երեւիր նաև Բագրատունեաց կամ ժդի գորու վերածնութեան շրջաններուն։ Ապա, ուրիմ, կը պատկանիր աւելի հնագոյն դարերուն, տարբեր գեղարուեստական հստանքի, որ արդէն կակսի մեռնիլ եօթներորդ գարուն։

Եւ յիրառի, անոնք ծագումով և տեղով ամենամեծ ազերուը կը ցուցաբերեն մեր բազիլիկ եկեղեցիներու ծագման, անզի և սահի նկատմամբ։ Այս երեւոյթ մըն է, որ ինքնին կը մատանանչեն ունաց հասկացողութեան ուղին և անզը մեր արուեստի պատմութեան մէջ։ Մեղ յայտնի չէ, զբեթէ, որեւէ նման զերեզմանական կոթող, որ կուպուած չըլլայ անզով բազիլիկ շէնքի հետ։ Այսուղ եւս կը նըկա-

տենք զուտ հելլենականէն միջազնական-ասորական և տեղական սասաննեան արուեստներու փոխազդեցութիւնը, ինչպէս ճարտարապեսութեան մէջ տեսանք:

Այս ներածական խօսքերէն յետոյ կու տանք մեզ ծանօթ գերեզմանական կոթողներու փաստագրութիւնն ու տեղազրութիւնը: Այդ վայրերը բազմաթիւ են Վանանդի կամ կարսի, Տաշիրքի կամ Լոռվա շրջաններուն, բայց առաւելապէս Արագածի արեւելեան հարաւային և արեւմըտեան փէշերուն, նաև Դուբինի մէջ: Կը կրկնենք, որ անոնք կը գտնուին, գրեթէ, առանց բացառութեան այն վայրերուն մէջ, ուր բազիլիկ եկեղեցիներ կան, այսինքն անոնք եւս Դ-Զ դարերու երեւյթներ են, որ յետոյ այլևս չեն կրկնուիր յետագայ դարերուն:

Այդպիսի կոթողներէն նշանաւորազոյնն է Օձունի գերեզմանական կոթողը զոյդ քառանկիւն սիւներով, որոնց արեւելեան և արեւմտեան երեսները ծածկուած են պատկերագանգակներով, իսկ կողերը զարդաքանգակներով: Բուն կոթողները հաստատուած են բազմաստիճանն և բարձր պատուանդանի վրայ, կիւրոսի գերեզմանը յիշեցնող, պիլոններու վրայ շինուած պայտաձեւ կամարներու տակ: Աստիճաններու վրայ փորագրուած են հաւասարակող խաչեր բոլորակ պատկի մէջ առնուած, ինչպէս յատուկ է մեր և ասորական հին բազիլիկներուն: Պատկերագանգակներու մէջ անօրինական տեսարաններ, ծնունդ, մկրտութիւն, նաև ննջեցեալներու պատկերները սասանեան շրջանի ըզգեստներով, որ կը տեսնենք սասանեան Ե դարու գրամմերու վրայ: Ուշագրութեան արժանի է խոզազլուխ մարզու մը քանգակը, ինչպէս և զմբէթաւորուած շէնքի մը: Շինուածքի քարերը կարմրաւուն են և նման Օձունի տաճարին, որ Ե գարու վերջերու ամենափառաւոր շէնքերէն մէկն կը համարենք, ամենաառշը Զ-ի սկիզբը: Այդ կոթողը միակն է այժմ այդ ձեւով, բայց զտնուած են նոյն տեղը նման կոթողի երկու զլուխները: Այս կոթողը իր պատկերագանգակներով այժմ Հայաստանի համար ուսւած է, շատ կարեւոր նշանակութեամբ նաև քրիստոնէական ընդ-

հանուը արուեստի պատմութեան համար :

Զարմանալին այն է, որ նման ձեւով միայն առանց կամարներու տակ առնելու, կոթողներ ունինք և Անգլիա Ակկայի Խաչը Ruthwell-ի և Bewcastle-ի արձանները, որ նկատած է Սորչիզովսկին Ատոնք որոշ չափով նմանութեաններ կը բերեն և Բրդանորի կոթողին, որ առելի ուշ չէ քան Զ դարը և շատ մօթիքներով նման սասանեան արուեստին :

Յօդուածի բնոյթը և տեղի սղութիւնը չեն ներեր մանրամասնութիւններ բերել ասոնց և ուրիշ բազմաթիւ կոթողներու վերին աստիճանի հետաքրքրական երեւոյթներու մասին, պատկերապրութեան կամ զարդարութեան կողմէ և կը յիշենք միայն ընդհանունը կերպով։ Օձունի խոզագլուխ մարգու քանդակը կրկնուած կը տեսնենք Թալինի, Ուջունի կոթողներու վրայ։ Այդունդ մենք կը տեսնենք նոյն աւանդութիւնը, ինչ որ Ազաթանգեղոսի պատմութեան մէջ Տրդատի խոզ գառնալու աւանդութիւնն է, այսինքն Դ-ն գարեն։ Պտղավանքի հիւսիսային դրան ականթները։ շուշանածագիկը Պտղավանքի և Օձունի կոթողի, կրկնուած կը տեսնենք և Արագածի Ղարաջալարի կոթողի վրայ պոակի մէջ առնուած հաւասարակող խաչերը, Յիսուսի և Աստուածածնի պատկերաքանդակները պոակուած հրեշտակներու ձեռքով, եթէ մէկ կողմէն նմանութիւն կը բերեն Օձունի կամ Պտղավանքի նման երեւոյթներուն, միւս կողմէն ատոնք նման են ասորակելինական-սասանեան արուեստին, ինաեւ և կոպտականին։

Ասորիքի Ե-Զ գարերու արուեստի աղերսը կոպտականի հետ մատնանշուած է Սորչիզովսկիի (Die Koptische Kunst!) մէծ աշխատութեան մէջ, նաեւ ուրիշներու կողմէն հայ և կոպտական արուեստներու աղերսը կարող է միջնորդարար և անմիջական ըլլալ իրրեւ գաւանութեամբ իրար մօտ եկեղեցիներու, սկսած Դ և Ե գարերէն։ Այդ կ'երեւի հայ մանրանկարչութեան ժ գարու ձեռագիրներու կամարներու կամ խորաններու մէջ, որոնք արտագրուած են աւելի հին որինակներէն։ Քրիստոսարանական ուղղու-

թեան մէջ հայերը հետեւող են Աղեքսանդրիոյ գալրոցի
աստվածաբանութեան Եփեսոսի ժողովէն առաջ և յեսու,
մանաւանդ Զ գարու մէջ Քրիստոսի անուան փակագիրը
(Monogram Christi) խաչի հորիզոնական թեւի վրայ գէմ
առ գէմ երկու ազաւնիներով, կը տեսնենք Ն գարու կոպ-
տական գործուածքներու և Դ և Հ գարու հայ քանդակա-
գործութեան մէջ, ինչպէս կջմիածն է հիւսիսային պատին
կամ Աղջի ստորերկրեայ գամբարանին։ Թալինի կոթողի
մը վրայ թռչունը կոտցին պատկ կը դնէ Յիսուսի գլխուն,
որու գէմ կը բողոքէ Վրդանէս քերթողը՝ Զ գարու վերջե-
րուն և Ե-ի սկիզբը ապրող մտանեազիր մը, երեւոյթը
նեստորական համարելով և գէմ Քրիստոսի մարդեղութեան
գաղափարին, նման երեւոյթ, այսինքն թռչուն կտուցին
պատկ բռնած, կը տեսնենք և կոպտական քանդակիներու
մէջ։

Առարանը, Արագածի արեւելեան կողմը, Քասախի
աջ կողմը, Ափնա գիւղը երկու բաղիլիկ եկեղեցիներու
մօտ ունինք և խոյակ մը, յար և նման Խոսրով Բ-ի կո-
փել տուած Տագի Բուտանի խոյակներուն՝ Անահիտի քան-
դակով, մեր մօտ աստուածուհիի փոխարէն հաւասարակող
խաչ, որ Քրիստոս կը նշանակէ։ Տագի Բուտանի մէջ
թեւաւոր սպիտակը սաւառնելով պատկ կը դնեն արքայի
գլխուն, մեր մօտ թեւաւոր հրեշտակը կամ թռչունը (Հո-
գին) կտուցին պատկ, կը դնէ Քրիստոսի գլխուն, մկրտու-
թեան ժամանակ, ինչպէս տեսանք, կամ Աստուածածնի
գլխուն։ Մեր կոթողներու վրայ բաղմաթիւ դարձաքան-
գակներ ունինք, որոնք կ'երեւին և սասանեան արտեւոտի
մէջ, ինչպէս Բրգաձնորի կոթողի պատուանդանը, Խոժունիի
քեկորները հին շենքի եւլն։

Աստուածածնի պատկերազրութեան պէս պէս ձեւերն
ունինք զերեզմանական կոթողներու և անոնց պատուան-
գաններու վրայ, կանգնած կամ նստած աթոսի վրայ, Յի-
սուս զեկին, որոնք բիւղանցական օլիգիսրիալի թիփի պատ-
կերներու ծաղման հայրենիքը կը մատնանշեն. Ասորիք,
Եղիպտոս, Կառելցնենք, գուցէ և Հայուստան, ուր միա-

Ժամանակ նոյն հոսանքը կը նկատուի: Ռուս երկու ժեծ
գիտնական, կոնդակով և իշխաչելի, յատկապէս կոնդակով,
օգիզիտրիայի նախատիպը արեւելքէն եկած կը համարեն,
Ասորիքէն կամ Եգիպտոսէն, որ ապա Բիւզանդիանի վրայով
Խոտալիա կ'անցնի, Նախավերածնութեան (Vorrenaissance)
և Վերածնութեան (Renaissance) շրջաններու մատոնանե-
րու գարդացման զարկ կուտայ: Ինչ որ ռուս գիտնական-
ները կուակելով կը յայտնեն օգիզիտրիայի նախահայրենի-
քի մասին, հայ հնագոյն արուեստի մասցորդները կ'ապա-
ցացանեն իրական փաստերով: Թալինի մէջ աթոռի վրայ
նատած Աստուածածին մը ունինք Յիսուսը գրկին, երկու
կողմէրէն մէյմէկ հրեշտակ իրենց թեւերու միա-
ցումով հովանի կազմած Աստուածածնի և մանկան զիմուն,
իսկ ձեռ քերով բռնած են պատկերը, նման Եգիպտոսի Թե-
րայի Աստուածածնին: Նոյն մօթիքը կայ նաև կոպտական
զործուած քններուն մէջ: Աստուածածնի կանգնած պատկերը
Յիսուս գրկին, ունինք Մահմուլդաւողը Կօթներորդ գարէն
առաջ: Աստուածածնի ուրիշ թիփի մը քանդակ կը գտնուի
Լուգա շրջանի իզահատ գիւղի եկեղեցւոյ ափսիդի պատի
մէջ գրուած, ձախին մանուկ Յիսուսը, իսկ ազը վեր բարձ-
րացուած ափը գէտի նայողը, որ պաշտամունքի նշան է.
Նոյնը կը տեսնենք կոպտական արուեստի զերեղմանական
քանդակներու մէջ: Ուժանի մօտ Խորարավանքէն իջմիա-
ծին քերուած կոթողի վրայ Աստուածածնի քանդակը կայ,
Յիսուս գրկին, իսկ զիսու վերեւը հառագայթածեւ հովանի
մը (Muschelbaldachin), որ կը կրկնէ նաև կոպտական
արուեստի մէջ: Չենք ուզեր առելի երկարել այս մասին:

Մեր կօթողներու վրայ ունինք և Արբահամի զոհա-
բերութեան քանդակը կողք(ափոր)ի մէջ Զորագետին կից
և Արագածի արեւմտեան փէշերուն Ազիամանի մէջ, նոյն
պատկերագրութեան ամենահին երեւոյթներէն մէկը, որոշ
մասով նման Մելքիոնդի զոհարերութեան Ռավիննայի մէջ:
Կողքի քանդակներու բեկորները փորագրուած և ձեւակեր-
պուած են հելլենական ակնյատնի նշաններով և նըրբու-
թեամբ, և անոնք առելի վաղ են, քան Զ գարու վերջերը,

ԵՐԲ վրացիք խսպառ բաժնուուեցան հայերէն, «րժէ յետոյ հնարաւոր չէր, որ հայերէնն ու վրացերէնը միաժամանակ արձանագրութեան կամ եկեղեցական լեզու ըլլար, ինչպէս էր այդ շրջանին մինչեւ բաժանուումը, «որ կ'երեւի այդ նոյն եկեղեցիին բեկորներու վրայ»: Մեր խօսքը չի վերաբերի ԺԴ գարու վրաց լեզուով արձանագրութիւններուն, երբ հայերն ու վրացիք դաշնակից էին իրար քաղաքական հիմունքներով: Այս բեկորները երեւան կը հանուին միայն պատահական կերպով, այնուևմներ չեն եղած տակաւին: Դուք տեսէք, «բքան ազնիւ են և քանդակները, իսկ խոյակները բիւզանդականի նախընթացները կընան ըլլալ»:

Չեւակերպութեան տեսակէտով ալ մեր կոթողները որոշ չափով աղերս ցոյց կուտան Միջազետքի և Անդր-Յորդանանի կամ հիւսիսային Արարիոյ գերեզմանական համապատասխան արձաններու հետ (Stele): Պաղտատիք թանգարանի սասաննեան բաժնին մէջ տեսած ենք մերիններու նման արձան մը, շատ եղծուած վիճակի մէջ: Հելլենահոոմէական կոթող մը գիտենք նարաթացւոց երկրին մէջ, որուն Պետրա մայրաքաղաքի աւերակները հելլենահրոոմէական արուեստի շատ մնացորդները ունին: Քառանկիւնի մը արձանի վրայ յունահոոմէական ոճով քանդակուած է հիթիթեան կայծակի աստուածը Հատատ, իսկ միւս կողմը Տիւխեն՝ յաղթութեան, արտաքին ձեւով նման մեր քառանկիւնի կոթողներուն ։ Նման երեւոյթ ունինք և աւելի վաղ ժամանակներէն Քրիստոնէն եօթ գար առաջ Հազամի Քալմ (Calm von Hagam) աստուծոյ քանդակը, Ասորեստանեայց զգեստաւորութեամբ և տակը քրմապետը, «որ կանգնած է այս արձանը»: Հաւանական է, որ այս ձեւը անցած ըլլայ հիթիթներէն Միջազետքի կամ Ասորեստանի վրայով գէպի հիւսիսային Արարիու:

Ահա ինչպիսի ծանրակշիռ խնդիր է շօշափուած այս աշխատութեան մէջ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՒ

(«Հայաստանեայց եկեղեցի»)



Աղերձ

(Կարդացուած Գալիֆունիոյ Ա. Յակոբ Եկեղեցւոյն մէջ
1 Մարտ 1944-ին)

Հաւատաւոր ու մեղոււաշան Տիկնայք Հայաստանեայց
Սրբ. Յակոբ Եկեղեցւոյ. ի կոմ Աննէլլս Քալ.

Մեծ բարեբախտութիւն. է ինձ կրկին զալ և նստիլ
մեր մեծ Հայ Գամաղիէլ վարդապետին ստքը. վայելելու
Անոր առինքնող ու հեղիկ ներկայութիւնը. կախուիլ Անոր
մեղրածորան շրթներէն, ունկնդրել նորա երկնառաք իմաս-
տուն յարգուրներ։

Վեհաշնո՞րհ հայր, անցեալ գարուն կարկառուն՝ վեհ
Դէմք մը «Անէինք», որ Հայ ժողովուրդը կ-չեց զԱնի «Հայոց
Հայրիկ», իր զործերէն բղխող Անձնգիր Հովիւի մը ազդա-
սիրական հոգիսով տողորուեցանք. «Հայ Գոյժ, Վան Գոյժ» ի
նման գործերը գոց սորվեցանք. «Ժամանակ և խորհուրդ
իւր» մեր գասազիրքը ըրինք։

Ներկայ գարուն՝ ասնոր աշխարհին մէջ ուրիշ նման
Հայրիկ մը կը գտնենք, յանձին Յովսկիին Հայրիկին. Հայ
ժողովուրդին հմայիւը զայն զերողը։ Այն ուսումնառենչ
պատանին որ էջմիածնի ձեմարանը մտնելու համար բո-
ղոքեց թէ «Խնչի պիտի չընդունուիմ», չէ՞ որ փափաքում
եմ ուսանելու» այժմ կուգայ մեզի բաղմարեղուն գրա-
կան-գիտական, բանասիրական և հնագիտական երկասի-
րութիւննեցով. և հնագարեան Հայ Ազգային Եկեղեցւոյ
հազուաղիւտ զումարներով զարդարուն կրօնական զործե-
րու հատորներով, որ յետ այսու անոնք պիտի ըլլան մեր
վերծանութեան և պրալտումի առարկան ու առօրեայ ներ-
շլնչումը։

Յովսէփեան Հայրիկ, վստահ ենք թէ Զեր երկրորդ
այցելութիւնը ի Քալիֆուրնեայ պիտի փութացնէ համերաշ-
խութեան և համազործակցութեան հողին մեր Ազգային

եկեղեցեաց մէջ, Սէր և Միութիւն յառաջ բերէ Հայ համայնքին մէջ:

Կ'ուրախակցինք Զեղի խոնարհաբար և կը մաղթենք երկնաւոր Հօրմէն՝ Զեր ապահով ժամանումը բազմելու Վկայաւերի, Շնորհալիի, Մեծն Սահակ և Բարդէն Հայրապետներու նստած Մեծի Տաճն կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին վրայ, որուն ընտրեալ և արժանի Տէրն էք, հոգւելու հոն աքսորուած ցրուած անմշտիմար հայ բնիորները. ուր ես ալ ունիմ երկու քոյրեր, ազգականներ:

Ցոյժ մէծ է մէր ակնկալութիւնն՝ որ կաթողիկոսական վեհ և բազմակողմանի խմաստուն կարգադրութեամբ և վեհաշուաք հայ եկեղեցեոյ լոյսին տակ պիտի ծլին ու ծաղկին արժեքաւոր բաղրաջներ որպէս Զեղ նման նուրիքեալ և անձնղիր Հովհեններ, հովուելու անմշտիմար, անօղնական, բնազուրկ հայ ժաղավուրպէլ, նոյննետայն վեր բռնելու Զեր յոզնարեկ բաղուկներ. մէր սիրելի Հայաստանին բարդաւաճամանն, Սփիւռքի Հայութեան բարելութեամ և ազդիս Հայոց հոգեւոր և մտաւոր ազատութեանը համար Զեր Զեր մաղին ազերսներուն տանեն:

Եկեանքիս ամենաքաղցրիկ բռպէներէն մին էք երբ առջի Քայեֆօրնիս այցելութեանդ՝ համբռւրեցի Զեր Սրբ. Աջը Սքըլլի ճաշասրահին մէջ, անցեալ կիրակի նոյն ուրախ առիթը կրկին ներկայացաւ, և այժմ եւս համարձակութիւնը կ'ունենամ հոգեւու Զեր Աջին իմ բոլորանուեր յարգանքով, խնդրեմ օրհնէ հայրական օրհնութեամբ այս ծերուկ հայորդին: Տուր յորդաբուղիս օրհնութիւնդ այս Սրբ. Յակոր՝ անուանակիցս եկեղեցիին: Քրիստոսի Տիեղերական ընդհանուր եկեղեցիին և հանուր Սփիւռքի հայութեան:

Տէրը օրհնէ ու պահէ և իր երեսը փայլեցնէ մէր վեհաշնորհ Յովուէփեան Հայրիկին վրայ. ամէն:

ՅԱԿՈՐ Պ. ՄԱՍՈՅՑԵԱՆ

ՅԱ. Զ Ա Բ Դ Ա Խ Թ Ի Ն Ի Ւ
Հայրապետութեան Կիլիկիոյ
Կարողիկոսաց

1.— Գրիգոր Մուաբէկեան	1439—1451(“)
2.— Կաբազեա Եւգոկացի	1446—1478
3.— Սուեփանոս Մարամորեցի	1477/8—1488
4.— Յովհաննէս Ա. Յնոտիոքացի	1488—1489
5.— Յովհաննէս Բ. Թուշկուրանցի	1489—1525
6.— Յովհաննէս Գ. Քիլիոցի, Կայձակն,	1525—1539
7.— Միմէս Ա. Ջեյթունցի	1539—1545
8.— Ղազար Ջեյթունցի	1545—1547
9.— Թորոս Ա. Սուեցի	1548—1550
10.— Խաչառուր Ա. Զորիկ	1550—1560
11.— Խաչառուր Բ. Ջեյթունցի	1560—1584
12.— Աղաբիս Զուզայեցի	1584—1601
13.— Յովհաննէս Գ. Այնթէզցի	1602—1621
14.— Պետրոս Ա. Կարկառեցի (Արուակից)	1601—1608
15.— Մինաս Քացախ Սուեցի	1621—1632
16.— Միմէս Բ. Ակրասացի	1633—1648
17.— Ներսէս Ակրասացի	1648—1654
18.— Թորոս Բ. Ակրասացի	1654—1657
19.— Խաչառուր Գ. Գաղատացի (Միներնի)	1657—1674
20.— Մահակ Ա. Քիլիոցի (Մելիսաննեան)	1674—1686
21.— Գրիգոր Բ. Ատանացի (Պիծակնի)	1686—1693(“)
22.— Աստուածատուր Մասունցի (Նարին)	1693—1693(“) 1694(“)
23.— Մատթէս Կեսարացի (Սարի)	1694—1705
24.— Յովհաննէս Ե. Հաճընցի	1703—1721
25.— Պետրոս Բ. Բերիացի Աթոկց. Յովհ. Ե. կ. 1708—1710	
26.— Գրիգոր Գ. Կեսարացի (Խովուրլու)	1721/22—1729
27.— Յովհաննէս Զ. Հաճընցի (Տեր Աղամ)	1729—1733 -

28.— Դուկաս Աջապահեան Ա.	1733—1737
29.— Միքայէլ Ա. Աջապահեան Բ.	1737—1758
30.— Գաբրիէլ Աջապահեան Գ.	1758—1770
31.— Եփրեմ Ա. Աջապահեան Դ.	1771—1784
32.— Թէոդորոս Աջապահեան Ե.	1784—1796
33.— Կիրակոս Ա. Աջապահեան (Մէծն) Զ.	1797—1822
34.— Եփրեմ Բ. Աջապահեան Լ.	1823—1831
35.— Միքայէլ Բ. Աջապահեան Ը.	1832—1855
36.— Կիրակոս Բ. Աջապահեան Թ.	1855—1865
37.— Մկրտիչ Քէֆսիղեան Մարտոցի	1871—1894
38.— Սահակ Բ. Խապայեան	1903—1939
39.— Բարգէն Ա. Կիւլէսէրեան (Արուակից)	1931—1936
40.— Գևորգ Գ. Մարտաճեան	1940 Հոբս ամիս
41.— Գաբրեղին Ա. Յովսէփեան	1943ին ընտրութեած





Մաշրուց Քիլիյ. Ասկերիչինան (ԱՄՓՈՓՈՂ.Ը)

Մատած է 1888ին Զէյթուն, ուստումը առած է ծննդաւայրին բարձր. նախակրթաբանին մէջ, ուսած է Սոսյ Ժառանգաւորաց վարժարանը և մէկ տարի ալ Տարասոնի Ամերիկեան Գուլբճը: Սոսյ Ժառանգաւորացին մէջ իրեն տեսուչչներն ու ուսուցչները եղած են. — Ներսէս Ռ. Վրդ. Դանիիլեան (վերջէն եպիսկոպոս), Գարեգին Ռ. Վրդ. Կաչառուքեան (վերջէն եպիսկոպոս Տրապիզոնի) Հրանդ Ռ. Վրդ. Կարոյեան (վերջէն եպիսկոպոս) Եղիշէ անունը ստացած: Շնորհազարդ Տ. Տ. Մահակ Բ. Կաթողիկոսի հովանաւորութեան տակ, Ժառանգաւորացը տիպար հաստատութիւն մը եղած էր:

1910-1930, ուսուցչական պաշտօն վարած է, Զէյ-

թունի, Հիսարլըգի (Պիմէճիկ), Էտիրնէի, Բոր-Այիլտի, Մերսինի Հ. Բ. Բ. Միութեան որբանոցի և Հալէպի Հայ Ազգ. Վարժարանին մէջ վկայուած է ի. Պոլսոյ Ազդ. Կեդր. Վարչութեան Ռեսումեական Խորհուրդին ռեսուցչական ձեռնհասութեան վկայականով:

Բուն անունով, Եղուարդ Ա. Ո. կեցիչեան, Զգօն-Սեպուհ, Սուր-Գրիչ. Ե. Ռոկի, Ե. Վրոյր, Գրիշ ծածկանուներով աշխատակցած է «կոհակ»ի, «Երիտասարդ Հայաստան»ի, «Հայաստանի կոչնակ»ի, «կուան»ի, «Արեւ»ի, «Առքիական Մամուլ»ի, «Տաւրոս»ի, «Նոր Սերունդ»ի, «Առքիական Մամուլ» ամսաթերթի, «Պալքանեան Մամուլ»ի, «Երկիր»ի, «Լիրանան»ի, «Կրթադրաց»ի, «Հայ Ականութ»ի, «Ժամանակ»ի, «Մ. Ֆ. Ռենեցի» ստորագրութիւնով «Զարթօնք»ի Ռենի շատ մը գրութիւններ եւս տարեցոյներու և այլ զրքերու մէջ:

1923ին հրատարակած է «Տառապանքի օրերէն» անունով հայրենասիրական երկասիրութիւնը: 1924—1925, տարուան պատկերազարդ և բազմաէջ «Սուրբահայ Տարեցոյց»ները, ընթերակցութեամբ Պ. Պ. Աճէմեանի և Մ. Սիսեռեանի: 1924—1925 տարուան Երեք լեզուաւ պատրիօրացոյները՝ պատկերազարդ, ի նպաստ Հալէպի Ազգ. Վարժարանի Հրատարակած է, 1927, 1928, 1929 տարուանն «Առքիական Ալորմ»ները: «Կիլիկեան Յուշեր», «Անրուսիր և հայրենասիր եկեղեցականը»: Ռենի նաեւ անտիպ երկեր, «Փախուստի համբուն վրայ, հրացանազարկ ըլլալու մէկ ժամ մնացած» իրական կեանքէ, զգայացունց զործը՝ պատկերազարդ: «Կիլիկեցականներու ալպում»ը կը մնայ Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ:

Երեք ամիս, Երուսաղէմի Արքոց Յակոբեանց վանքին մէջ փորձի արջան մը անցընելէ վերջ. 1930 Աեպու. 14ին, Խաչվերացի տօնին, Հալէպի Ս. Բառասուն Մանկանց կաթողիկոսանիքատ Մայր եկեղեցւոյ մէջ Քահանայական աստիճան ստացած է, ձեռամբ Հալէպի բարեջան Ա-

ռաշնորդ Գեր. Տ. Աբովյաղբ Ս. Եղիսկոպոս Արքունի-
կանէն, ներկայութեամբ Տ. Տ. Մահակ Բ. Կաթողիկոսի
Աւթը տարի, 1930-1938, վարած է Հօմակ Առաջ-
նոր ական փոխանորդի պաշտօնը:

1938ին, բանջախաչով պատուած է Տ. Տ. Մահակ
Բ. Կաթողիկոսէն:

1938էն ակնեալ կը վարէ Զահէէի և Պէքաայի ըր-
ջանի Հոգ. Հովիւի պաշտօնը:



Ա. Ե. Պ. Հ.

Սոյն գրքի հրատարակութեան համար

Ազգային մը 500 լ. Ռուկի նուիրեց:

5 n.

A-
79082